# ԷՋՄԻԱԾԻՆ



Ժ–ԺԱ
2003

АЖ – 146

ԾԹ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Հոկտեմբեր – Նոյեմբեր
2003

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եպիսկոպոսաց հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . 3
Թեմական-ներկայացուցչական խորհրդակցական հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . 5
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը թեմական-ներկայացուցչական հավաքին . . . . . . . 8
**ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** - Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումը . . . . . . 18
Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կրոնապետերի խաղաղարարական հանդիպման Ուղերձը . . . . . . . 25

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . 28
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 30
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Հռիփսիմե սարկավագուհի Սասունյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 32
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Միքայել Միքայելյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 34
**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Պատրիկ Տեննյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 36
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Վարուժան Բուրմայանին . . . . . . . 38
Հայրապետական գնահատություն . . . . . . . 40
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հոգելույս Ռոբերտ Մավիսակալյանի սգակիր ընտանիքին . . . . . . . 41
Հայոց Բանակի Ուխտի Ս. Պատարագը . . . . . . . 42
Հանդիսություն՝ նվիրված Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի ծննդաբերության 50-ամյակին . . . . . . . 44
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղանն այսուհետ կգործի որպես բարեգործական հիմնադրամ . . . . . . . 45

## ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորեանի քարոզը՝ խօսուած
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցուած Ուխտի Ս. Պատարագին . . 46
Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 49
Տ. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված Օշականի
Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցված անդրանիկ Պատարագին . . 52
Տ. Արշեն աբեղա Սանոսյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 57
Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 60
Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . . 63
Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված
Հրեշտակապետաց փոնին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի
զանգակատան խորանում մատուցված Ս. Պատարագին . . . . . . . . . 65
Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբեանի քարոզը՝ խօսուած
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցուած Ուխտի Ս. Պատարագին . . 67
Տ. Արամ եպիսկոպոս Աթեշյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . 70
Տ. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին . . . . . . 73
Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . . 76
Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին . . . . . . . 78

## ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

**ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ** - Եպիսկոպոսական ժողովի
անհրաժեշտութիւնը ներկայ իրականութեան մէջ
եւ անոր իրաւասութեան սահմանները . . . . . . . . . . . . . . . . . . . 80

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

**Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ** - Հոգի և կյանք . . . . . . . . . . . . . . 85

## ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ** - «Բանք իմաստասիրաց» ժողովածուները հայ միջնադարյան մատենագրության մեջ . . . . . . 91
**ԱՆԱՀԻՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - Հարսանեկան ծեսի մի դրվագ . . . . . . . 99
**Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ** - Կրոնա-եկեղեցական և ծիսական բառերը արեմտահայերենում . . . . . . 102
**ՄԱՐԻ-ԱՆՆԱ ՇԵՎԱԼԻԵ** - Լևոն Մեծագործի գերմանական ռազմավարությունը. Տևտոնականների՝ Կիլիկիայում հաստատվելու հանգամանքները . . . . . . 108
**ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ** - Մշտապես ուսանելի առաքելություն . . . . . . 118
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ** - Եսասիրության և խղճի բախման հանգուցակետում . . . . . . 128

Արվեստագիտական

**ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ** - Արշակ Ֆեթվաճյան. հայ նկարիչը Արևմուտքի և Արևելքի միջև . . . . . . 134

Խոսք հիշատակի

**ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ** - Պրոֆ. Միշել վան Էսբրուկ (նաև աշխատությունների մատենագիտությունը) . . . . . . 147
**ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ** - Մկրտիչ Պօղոսեանի խփացեալ սալիկը . . . . . . 162

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն և օծում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . 165
Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյան . . . . . . 166
Տ. Տիրան աբեղա Պետրոսյան . . . . . . 167
Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյան . . . . . . 168
Տ. Հովնան աբեղա Հակոբյան . . . . . . 169
Տ. Հակոբ քահանա Հակոբյան . . . . . . 170
**ԱՐԱՄ ՍՐԿ. ՍԻՄՈՆՅԱՆ** - Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերամուտի հանդիսությունը . . . . . . 171
«Հայոց Եկեղեցու պատմություն» դասագրքերի շնորհանդես Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . 176
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Գիտաժողով Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում . . . . . . 178
Ավարտաճառերի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . 182
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցու հիմքերի օրհնությունը . . . . . . 183
Օծվեց Վարդենիկ գյուղի Ս. Հրեշտակապետաց նորակառույց եկեղեցին . . 184
Սամարայում օծվեց Ս. Խաչ նորակառույց հայոց եկեղեցին . . . . . . 185

Մայր Աթոռը հյուրընկալեց Կենտրոնական Եվրոպայի ուխտավորներին՝ առաջնորդությամբ Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի . . . . . 186
Մայր Աթոռը հյուրընկալեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի ուխտավորներին . . . . . 186
Մայր Աթոռը հյուրընկալեց Կանադայի հայոց թեմի ուխտավորներին . . . . 187
Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանը . . . . . 187
Մայր Աթոռը հյուրընկալեց Բրազիլիայի հայոց թեմի ուխտավորներին . . . 188
Մայր Տաճարում Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Կ. Պոլսի հայոց Պատրիարքության միաբան Տ. Արամ եպիսկոպոս Աթեշյանը . . . 188
Վիրահայոց թեմի առաջնորդի հովվական այցը Ախալցխա . . . . . 190
Վիրահայոց թեմի առաջնորդի հովվական այցը Ջավախք . . . . . 191
Վիրահայոց թեմի առաջնորդի հովվական այցը Բաթումի . . . . . 192
**ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ** - Հայրենանվեր աշխատանքի գնահատման մի փոքրիկ արտահայտություն . . . . . 194

**Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս**
Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան կը հիւրընկալէ Քիրիլ Մետրոպոլիտը . . . . . 195
Առաջնորդանիստ Սուրբ Վարդան Մայր Տաճարի օծման 35-ամեակը նշուեցաւ արժանավայել շուքով . . . . . 197
Շնորհանդէս Արժ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեանի «Ազգապատում»-ի Դ. հատորի Գ. գիրքի հրատարակութեան առիթով . . . . . 202

**Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս**
Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Պոլսահայ Միութեան Հիմնարկութեան 27-րդ փարեդարձին . . . . . 205
Դատաւոր Արմանտ Արապեան եւ անոր փիկին հարիւր հազար տոլար կը նուիրեն Ս. Գայանէ վանքի նորոգութեան համար . . . . . 206
Շքանշաններու շնորհում եւ ձեռնադրութիւն Իսթ Լոս Անջելըսի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ . . . . . 207
«Կոմիտաս» երգչախումբի անդամական փարեկան հաւաքոյթը . . . . . 208
Ընդունելութիւն ի պատիւ Արցախի Հանրապետութեան նախագահի . . . . . 209
Առաջնորդ Սրբազան Հայրը կը մասնակցի Ամերիկայի Հայկական Համագումարի փարեկան յայտագրին . . . . . 210
Հովուական այցելութիւն եւ Ս. Պատարագ Սան Լուիս Օպիսպօ Գալիֆորնիա . . . . . 211
Յարգանքի երեկոյ ի պատիւ գրող Փիթըր Պալաքեանի . . . . . 211
Առաջնորդ Սրբազան Հօր չորս օրուան այցելութիւնը Կեդրոնական Գալիֆորնիա . . . . . 212

ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՊՋՏԻԿԵԱՆ - Ս. Ղազար մեծ շուքով փոնեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամեակը . . . . . . . . . . . . . . . 214

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Իսպանիայի նորանշանակ դեսպանին . . . . . . . . . . . . . . 217
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Լիբանանի նորանշանակ դեսպանին . . . . . . . . . . . . . . . . 218
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Բարոնուհի Քերոլայն Քոքսի գլխավորած պատվիրակությանը . . . . . . 218
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանին . . . . . . . . 219
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց մի խումբ ճարտարագետների . . . . . . . . . . . . . . . . . . 219
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սեգեյ Մարտինովին . 220
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Եվրախորհրդի պատվիրակությանը . . . . . . . . . . . . . . . . . 220
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարին . . . . . . . . . . . . . 221
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի քարտուղարին . 221
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Ֆրանսիայի Բուշ Դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությանը . . . 222
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանին . . . . . . . . 223

Հանգիստ Տ. Եղիշե քահանա Աբրահամյանի . . . . . . . . . . 224

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . 225

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 228
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . . 233
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . . . 239

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական ձեռնարկումների շրջանակներում հոկտեմբերի 28-ից 29-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ իր աշխատանքն սկսեց Եպիսկոպոսաց խորհրդակցական հավաքը: Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով Հայաստանից և Սփյուռքից հավաքին մասնակցեցին 37 եպիսկոպոսներ:

Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ Սրբազան Հայրերը, նորոգելով իրենց ուխտը հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, աղոթք մատուցեցին Մայր Տաճարում մասնակցելով Ճաշու պաշտոնի: Արարողությունից հետո Վեհարանի հանդիսությունների սրահում հավաքի կազմակերպման հանձնախմբի ատենապետ, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի բացման խոսքով եպիսկոպոսաց հավաքն սկսեց իր աշխատանքը:

Հավաքի մասնակիցներին իր ողջույնի և օրհնության խոսքը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը կարևորությամբ շեշտեց եպիսկոպոսաց դասի առաքելությունը Եկեղեցու կյանքում:

«Առաքելական հաստատությամբ եպիսկոպոսը բարձրաստիճան սպասավորն է, տեսուչն ու վերակացուն Եկեղեցու՝ կոչված նախանձավորը լինելու Հայաստանյայց Եկեղեցու վարդապետության, հետևորդը՝ ուղիղ ընթացքին ու գործերին մեր սուրբ հայրերի, Ավետարանական պատվիրանների ու պատգամների շավիղներում առաջնորդելու և անկորուստ պահելու իր խնամքին հանձնված հոտը բանավոր: Մեր եպիսկոպոսները կոչված են նաև պատվիրակն ու դեսպանը լինելու Սուրբ Էջմիածնի»:

Վեհափառ Հայրապետն էական նկատեց եպիսկոպոսական հավաքների պարբերական գումարումը՝ ներկա ժամանակներում Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին ու կուտակված խնդիրներին համարժեքորեն արձագանքելու և պատասխաններ գտնելու համար:

Այնուհետև հավաքի մասնակիցներին ներկայացվեցին Նորվան եպս. Զաքարյանի և Եզնիկ եպս. Պետրոսյանի զեկուցումները եպիսկոպոսների և եպիսկոպոսաց դասի առաքելության, ինչպես նաև Հայ Եկեղեցուն ու հավատացյալ ժողովրդին հուզող խնդիրների առնչությամբ: Զեկուցումների շուրջ ծավալվեցին քննարկումներ:

Ընդգծվեց նաև, որ այսօր Հայ Եկեղեցու առջև ծառացել են ծիսական, կանոնական, ընկերային, բարոյական, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունների ընթացքում արծարծվող դավանաբանական բազմաթիվ հարցեր:

Երկօրյա խորհրդակցության արդյունքում եպիսկոպոսաց հավաքը, անհրաժեշտ համարելով նման հարցերի հանգամանալից քննարկումը եպիսկոպոսական ժողովների ընթացքում, դիմեց Նորին Սրբությանը՝ խնդրելով երկամյա պարբերականությամբ եպիսկոպոսա-

կան ժողովներ հրավիրել՝ քննության առնելու Հայ Եկեղեցուն հուզող առկա խնդիրները և ճշտակեցնելու դիրքորոշումները դրանց վերաբերյալ. ինչպես նաև Մայր Աթոռում ստեղծելու եպիսկոպոսական ժողովի աշխատանքները համակարգող գրասենյակ:

Վեհափառ Հայրապետը եզրափակման խոսքում իր գնահատանքը բոլոր եպիսկոպոսաց հավաքի կազմակերպիչ հանձնախմբին՝ գոհունակություն հայտնելով հավաքի աշխատանքների արդյունավետ անցկացման համար. և տվեց Հայրապետական իր օրհնությունը՝ եպիսկոպոսական ժողովներ գումարելու և Մայր Աթոռում համապատասխան գրասենյակ ստեղծելու առաջարկին:

Գրասենյակի վարիչ-տնօրեն նշանակվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վահագն եպս. Միրզախանյանը:

Եպիսկոպոսաց երկօրյա հավաքն ավարտվեց միասնական աղոթքով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԹԱՓՈՐՈՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՑ ՈՒՂՂՎՈՒՄ ԵՆ ՎԵՀԱՐԱՆ




ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ
ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

# ԹԵՄԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 31-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ սկսվեց Թեմական-Ներկայացուցչական խորհրդակցական հավաքը՝ նվիրված Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանին:

Վեհափառ Հայրապետի հրավերին ընդառաջ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդներն ու տվյալ թեմերի աշխարհական ներկայացուցիչները հավաքվեցին Ս. Էջմիածնում՝ միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված և իրենց սերն ու հավատարմությունը վերստին հաստատելու հանդեպ համայն հայության հոգևոր կենտրոն Ս. Էջմիածինը: 1700-ամյա հոբելյանի խորհրդով համախմբված ժողովականները երկօրյա հավաքի ընթացքում քննարկեցին նաև Հայ Եկեղեցու առջև ծառացած զանազան խնդիրներ: Հավաքի բացմանն իրենց մասնակցությունը բերեցին նաև ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն իր բացման խոսքում կարևորեց հավաքի գումարումը և բարձր գնահատեց կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և փոխատենապետ, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի ջանքերը:

Այնուհետև ներկաներին ողջունեցին ՀՀ ԱԺ նախագահն ու ՀՀ վարչապետը:

«21-րդ դարում մեր ազգը, երկիրն ու պետությունը բազմաթիվ փորձությունների առաջ են գտնվում: Այսօր, առավել քան երբևէ, չափազանց կարևոր է համախմբված հանդես գալը և համախմբված հանդես գալը նաև մեր Մայր Եկեղեցու շուրջ: ...Մենք, իրոք, պետք է ջանքեր գործադրենք, որ պետությունը, ազգը և Եկեղեցին լինեն միասնական: Որովհետև միայն միասնությամբ կարող ենք լուծել այն համազգային խնդիրները, որ դրված են մեր ժողովրդի ու ազգի առջև»,- ասաց Արթուր Բաղդասարյանը:

Ողջույնի իր խոսքում Անդրանիկ Մարգարյանը, ներկայացուցչական հավաքը բնութագրելով իբրև եկեղեցական կյանքի նշանակալից երևույթ, մասնավորապես նշեց.

«Հաշվի առնելով աշխարհում և մեզ մոտ կատարվող հասարակական ու քաղաքական տեղաշարժերը և հոգևոր կյանքի զարգացումները, մենք պետք է պատրաստ լինենք միասնաբար դիմագրավելու արդի բոլոր մարտահրավերները, ազգային մեր յուրահատկությամբ ու ավանդույթներով գտնելու դրանց հետ հարաբերվելու նոր ձևեր և ուղիներ: Հոգևոր ոլորտում այս խնդրի լուծման մեջ, անշուշտ, անփոխարինելի է 1700-ամյա Հայոց ազգային Եկեղեցու առաքելությունը»:

Վարչապետը հույս հայտնեց, որ ներկայացուցչական այս հավաքը «ազգային-եկեղեցական կյանքի զարգացման կարևոր հանգրվան կդառնա, կնպաստի մեր ազգային ինքնության ամրապնդմանն ու համազգային միաբանությանը, պայմաններ կստեղծի բարոյա-

կան և օրինակելի քաղաքացու նկարագրի կերտման համար. ինչը էական նշանակություն ունի հայոց նորանկախ պետության զորացման գործում»:

Այս հավաքի մասնակիցներին իր պատգամը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը (տե՛ս էջ 8):

Նորին Սրբությունը հանգամանորեն անդրադարձավ Հայ Եկեղեցու առաքելությանն ու ներկայիս մարտահրավերներին՝ կարևորելով թեմական ներկայացուցչական, ինչպես նաև ազ-գային-եկեղեցական կյանքի կանոնական, ծիսական, վարչական, բարոյա-կրթական ու բազմաթիվ այլ հարցերի և կիսվեց Եկեղեցու դիրքորոշումը մերօրյա երևույթների նկատմամբ:

«Մեր դիրքորոշումները առավել ներկա պիտի դարձնենք մեր ժողովրդի կյանքում մեր Ե-կեղեցին, որի դարավոր հարուստ գանձարանից բաշխվող քրիստոնեական արժեքներն ու համա-հայրենական ավանդները պիտի դառնան հասարակական մեր կյանքի արժեքային համա-կարգի հիմքը և առաջնորդող ուժը և զորացնեն ու ամրապնդեն մեր պետականության հի-մերը»,- ասաց Հայոց Հայրապետը: Հավաքի մասնակիցներին Նորին Սրբությունը նաև ներկայացրեց Հայ Եկեղեցու ծառայությունը կրթության, քրիստոնեական դաստիարակու-թյան, եկեղեցականաց նոր սերնդի պատրաստության, եկեղեցաշինության, սոցիալական, հրապարակչական և այլ ոլորտներում:

Բացման արարողությունից հետո ներկայացուցչական հավաքն սկսեց իր աշխատանք-ները: Այնուհետև ստեղծվեցին աշխատանքային չորս խմբեր, որոնք հաջորդ օրն իրենց քննարկումների ընթացքում անդրադարձան Եկեղեցի-հասարակություն, Եկեղեցի-անհատ, Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

Քննարկումների ավարտին հավաքի աշխատանքներն ամփոփեց և ամենքին իր Հայ-րապետական գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

«Վերստին փառք ենք տա Աստված բարձրացնում, որ այս առիթը, այս շնորհն ամենքիս պարգևեց՝ Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական փառքում գտնվելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որին մեր հայացքը հառած ապրում ենք և գործում, ուր էլ որ լի-նենք: Ս. Էջմիածնով ոգեշնչվում ենք, Ս. Էջմիածնով խտակորեն փեսնում ենք մեր առաքե-լության ճանապարհը, մեր կյանքի ուղին»,- նշեց Նորին Ս.-բությունն իր խոսքում: Վեհա-փառ Հայրապետը նաև անդրադարձավ ապագա ծրագրերին, նմանապես հավաքների անհրաժեշտությանը, Եկեղեցու առաջ ծառացած խնդիրներին ու դրանց հաղթահարման ուղիները գտնելուն՝ հորդորելով հավաքի մասնակիցներին առավել ջանասիրությամբ ու նվիրումով լծվել մեր Եկեղեցու զորացման ու պայծառացման նվիրական գործին:

Թեմական-ներկայացուցչական հավաքի ավարտից հետո եկեղեցականների մեծաշուք թափորով Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Նորին Սրբության գահակալության չորրորդ փարեդարձի նախատոնակին կատարվեց կիրակնամտի երեկո-յան հանդիսավոր ժամերգություն:



ԹԵՄԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ




ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հաջորդ օրը, նոյեմբերի 2-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Մայր Տաճարում հոգևոր երաժշտության կատարմամբ հանդես եկավ «Հիլիարդ» (Hilliard) համույթը (Դեյվիդ Ջեյմս, Ռոջերս Քովեյ-Քրամփ, Սթիվեն Հարոլդ, Գորդոն Ջոնս)։ Այն այսօրվա ճանաչված խմբերից մեկն է, որ հանդես է գալիս թե՛ եվրոպական հոգևոր երաժշտության և թե՛ ժամանակակից կոմպոզիտորների կողմից հատուկ իրենց համար գրված գործերի բարձրարվեստ կատարումներով։

«Հիլիարդի» հայաստանյան համերգների ծրագրի մի զգալի մասը կազմում էին հայ հոգևոր երգերը։ V-XV դարերի հայ երաժշտության այդ գոհարները համույթի համար խնամքով ընտրել և ներկայացրել էր «Վեմ» ռադիոկայանը՝ այսպիսով նպաստելով հայ հոգևոր երգի միջազգային տարածմանը։ Նույն այս նպատակն էր հետապնդում Սաղմոսավանքում այս համույթի կատարմամբ շարականների ձայնագրությունը։

Թե՛ նոյեմբերի 1-ին Երևանի ֆիլհարմոնիայում և թե՛ նոյեմբերի 2-ին Մայր Տաճարում տրված համերգների ծրագրում հայ միջնադարյան երաժշտությունից բացի ընդգրկված էին նաև եվրոպական հոգևոր երաժշտության վաղ շրջանի մեծանուն կոմպոզիտորներ Թոմաս Թալիսի (վխճ. 1585 թ.), Ջովաննի Պիեռլուիջի դա Պալեստրինայի (1525-1594 թթ.) Օռլանդո Դի Լասոյի (1532-1594 թթ.) ստեղծագործությունները։

Համույթի հայաստանյան համերգների գլխավոր հովանավորն էր Թուֆենկյան ընկերությունը։

Մայր Տաճարի 1700-ամյակին նվիրված այս համերգը դարձավ նաև վերջին ակորդը եպիսկոպոսաց և թեմական-ներկայացուցչական ժողովների՝ յուրօրինակ մի նվեր դառնալով նաև Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ փարեդարձին։

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԹԵՄԱԿԱՆ - ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 31 հոկտեմբերի)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ Տիար Արթուր Բաղդասարյան, մեծարգո Վարչապետ Հայաստանի Հանրապետության՝ Տիար Անդրանիկ Մարգարյան, Գերաշնորհ և Հոգեշնորհ սիրելի Հայրեր, պատվարժան ներկայացուցիչներ թեմերի և Թեմական Խորհուրդների.

Սրտի ջերմ ողջույնով բարի գալուստ ենք մաղթում ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Բերում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը և գնահատանքը, որ արձագանքելով Մեր հրավերին՝ եկել եք 1700-ամյա Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված և ձեր սերն ու հավատարմությունը վկայելու հանդեպ հայոց եկեղեցյաց մայր Սուրբ Էջմիածինը: Գոհության աղոթք ու փառք ենք մատուցում Տիրոջը, որ Հայրենիքի ազատ հողում Իր կամքի շնորհով համախմբվել ենք հոգևոր նորոգության, նաև՝ քննության առնելու մեր Եկեղեցին ու ազգային կյանքը հուզող էական հարցերը և հստակեցնելու մեր անելիքները:

Ուրախությամբ ողջունում ենք այստեղ ներկայությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Նախագահ Տիար Արթուր Բաղդասարյանի և Հայաստանի Հանրապետության Վարչապետ Տիար Անդրանիկ Մարգարյանի՝ մաղթելով, որ Աստված զորակից լինի իրենց և պարգևի արգասավոր ծառայություն մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Եղբայրական սիրո Մեր ողջույնն ենք հղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին և հայցում Բարձրյալի Ամենախնամ Աջի օրհնությունն ու պահպանությունը Նվիրապետական մեր Աթոռների Գահակալներին և ուխտյալ միաբանությանց:

Այս առիթով վերստին Մեր գնահատանքն ենք բերում մեր Եկեղեցու հոգևորական ու աշխարհական նվիրյալ այն զավակներին, որոնց ազնիվ ջանքերով մեծահանդես շուքով կազմակերպվեցին Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման և Մայր Տաճարի հոբելյանական տոնակատարությունները, ինչպես նաև՝ Թեմական-ներկայացուցչական այս հավաքի նախապատրաստական աշխատանքները իրականացնողներին: Մեր գնահատանքն ենք բերում մեր Եկեղեցու մեծազնիվ բարերարներին, որոնց հովանավորությամբ և իշխանական նվիրատվություններով կյանքի կոչվեցին հոբելյաններին նվիրված ծրագրերն ու նախաձեռնությունները և կառուցվեց տոնակատարությունների պսակը հանդիսացող Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին:

Այս պահին արժանին արժանավորաց մատուցելու գիտակցությամբ ու զգացումով, աղոթքով հիշենք երջանկահիշատակ Մեր նախորդներին՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայ-

րապետներին, ովքեր երազն ունեցան համազգային միասնությամբ փոնախմբելու Հայոց Մեծ Դարձի 1700-ամյան և ամեն ջանք ներդրեցին, որպեսզի տոնակատարությունները մեր կյանքում հավատքի կենդանությամբ վերածվեն հոգևոր պայծառակերպության:

Գոհության աղոթք ենք բարձրացնում Երկնավորին, որ աստվածային առաջնորդությունն է պարգևում մեր Սուրբ Եկեղեցուն, զորացնում հավատքով ու տեսլականով Նվիրապետական Աթոռների Գահակալներին, թեմակալ Առաջնորդներին, ողջ հոգևոր դասը, եկեղեցական վարչության անդամներին, ովքեր սիրո ու նվիրումի մեջ նախանձախնդիր՝ իրենց ծառայությունն են բերում հավատավոր մեր ժողովրդին: Նույն սերն ու նվիրումը, նույն նախանձախնդրությունն է այսօր հավաքել մեզ ամենայն հայոց Մայր Աթոռում:

Ունենք անցյալից ժառանգած դժվարություններ ու խնդիրներ: Հատկապես վերջին մեկ ու կես հարյուրամյակի անցուդարձերը, մեր ժողովրդի կրած բազմաթիվ նեղությունները, եղեռնի ոճիրը, աթեիզմի պարտադրանքը խաթարեցին ավանդական կապերը մեր Եկեղեցու, խափանվեց բնականոն ընթացքն ու առաջընթացը եկեղեցական մեր կյանքի: Մեծ ջանքերի գնով, մաքառումով ու անձնազոհությամբ Հայոց Եկեղեցին դիմագրավեց իրեն բաժին ընկած փորձությունները, իր թևերի ներքո հավաքեց պարագրյալ ժողովրդին, հույսը Աստված՝ պահպանեց, զորացրեց իր Միածնաէջ Մայր Աթոռը, որպեսզի նրանով զորացյալ շարունակի իր սրբազան առաքելությունը:

Այսօր կանգնած ենք ներկա դարի բերած փոփոխությունների ու առաջադրած պահանջների առջև: Մի կողմից ազատորեն գործելու նոր հնարավորություններ ու ասպարեզներ են բացվել ազգային-եկեղեցական մեր կյանքում, իրավիճակներ վերանայելու ու կարգավորելու առիթներ, մյուս կողմից ժամանակի նոր դրսևորումներում և ընթացքներում առկա են երևույթներ, որ սպառնում են աղավաղել քրիստոնեական ու ազգային մեր նկարագիրը, մեր արժեքները, մեր դարավոր ավանդույթները:

Երեկ, այսօր և հավիտյան, միշտ նույնն է առաքելությունը Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու՝ ուսուցանել Ավետարանը մեր ժողովրդին, հայրենական ավանդներին հավատարիմ պահել աշխարհասփյուռ հայությանը, որ միշտ փեսնի հայրենի իր հողում կատարված հրաշքը՝ Էջքը Քրիստոսի և ապրի Աստծո հետ ու Աստծո օրհնության ներքո:

Մեր Եկեղեցին այս առաքելությունը հավատարմորեն իրականացրել է իր սկզբնավորման օրից, և՛ այն ժամանակներում, երբ կանգուն է եղել հայկական պետականությունը, և՛ այն ժամանակներում, երբ միայնակ է մնացել մեր ժողովրդի պապպախանատվությունը կրելու ծանր բեռի ներքո: Միշտ չէ, որ նույնն են եղել իրավիճակները, միշտ չէ, որ նույնն են եղել մեր Եկեղեցու հնարավորությունները: Փառք Տիրոջ, վերստին անկախ պետություն է Հայաստանը, և Մայր Աթոռը Հայաստանյայց Եկեղեցու ազատ է գործելու, հոգևոր կյանքը զորացնելու և իր հովանու ներքո խնդությամբ ընդունելու աշխարհասփյուռ իր զավակներին:

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններով է լուսավորված ազգային-եկեղեցական մեր կյանքը: Այս տարի Մայր Տաճարի և Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» անմահ Աղոթագրքի հոբելյաններն են հավատաշեն առաջնորդում մեր ուղին: Հոբելյանական լույսերի ներքո ա-

վելի պարզորոշ պիտի տեսնենք մեր ձեռքբերումները, առկա իրավիճակը, անհրաժեշտությունններն ու հրամայականները և ճշտենք ու որոշ դարձնենք դրանց ընդառաջ մեր քայլերը:

Այսօր Հայ Եկեղեցու առաջնային խնդիրներից մեկը շարունակում է մնալ Կանոնադրության մշակումը: Հոգելույս Մեր նախորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ստեղծված և Մեր կողմից վերահաստատված հանձնախումբը կատարել է Կանոնադրության վերջնական խմբագրությունը: Ներկայիս, փարատելու համար ամեն տարակույս, ձեռնամուխ ենք առանձին հավելվածի կազմությանը, որով կանոնադրական յուրաքանչյուր հոդված հիմնավորվելու ու լուսաբանվելու է Հայ Եկեղեցու ավանդական կանոններով և կամ ներկա ժամանակի պահանջներից բխող անհրաժեշտությամբ: Առաջիկա տարի Մեր հիմնական խնդիրը պիտի լինի Կանոնադրության և հավելվածի ամբողջացումը: Այդ նպատակով խորհրդակցություններ ենք ունեցել խնդրին գիտակ մեր եկեղեցականների, ինչպես նաև՝ Երևանի Պետական Համալսարանի և Ազգային Ակադեմիայի մի շարք գիտնականների հետ, ովքեր և ընդգրկվելու են աշխատանքային խմբի կազմում: Կանոնադրության և հավելվածի ավարտված աշխատանքը քննության կառնվի եկեղեցական համապատասխան մարմիններում և դրական կարծիքից հետո հաստատման կդրվի Ազգային-Եկեղեցական Ժողովում:

Արդեն մեկ հարյուրամյակ եկեղեցական մեր կյանքում առկախ է բարենորոգությունների խնդիրը, որ, բարձրացվելով մի շարք անգամներ, ժամանակի հանգամանքներով թելադրված՝ մնացել է անավարտ: Կուտակված խնդիրներին այսօր հավելվում են նոր ծագող հարցեր, որոնք պահանջում են հրատապ արձագանքներ: Այս իմաստով Թեմական-ներկայացուցչական այսօրինակ հանդիպումների պարբերական անցկացումը, ինչպես նաև Եպիսկոպոսաց հավաքների հրավիրումը Մայր Աթոռում էական է և անհրաժեշտ: Պատասխանների են սպասում ազգային-եկեղեցական կյանքի կանոնական, ծիսական, վարչական, բարոյա-կրթական ու տնտեսական և բազմաթիվ այլ կարևոր խնդիրներ: Այսպես՝ քրիստոնեական դաստիարակության, սրբադասման, խորհրդապաշտությանց կարգի, ծիսական լեզվի, եկեղեցական կառույցների ձևավորման և վերակազմակերպման, եկեղեցապատկան կալվածքների գույքագրման և այլն: Եպիսկոպոսաց հավաքների պարբերական գումարումը հնարավոր պիտի դարձնի նաև մեր Եկեղեցու դիրքորոշումները հստակեցնելու նորընթաց երևույթների շուրջ, ինչպես, օրինակ, կլոնավորումը, մարդկային օրգանների փոխպատվաստումը, սեռերի փոփոխումը, համասեռ ամուսնությունները և այլն: Մեր դիրքորոշումներն առավել ներկա պիտի դարձնեն մեր ժողովրդի կյանքում մեր Եկեղեցին, որի դարավոր հարուստ գանձարանից բաշխվող քրիստոնեական արժեքներն ու հայրենական ավանդները պիտի դառնան հասարակական մեր կյանքի արժեքային համակարգի հիմքը և առաջնորդող ուժը և զորացնեն ու ամրապնդեն մեր պետականության հիմքը:

Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ մեր պետության կողմից արժևորվում է Հայ Եկեղեցու՝ պատմությամբ վկայված մեծ առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Պետության հետ Եկեղեցու բնականոն ու առաջացնաց հարաբերությունների արտահայտություն պետք է նկատել մեր կողմից բարձրացված հարցերի նկատմամբ բարյացակամ ընդառաջումները, ինչպես նաև՝ պատրաստակամությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ճանաչելու և ամրագրելու Հայ Եկեղեցու պատմական բացառիկ առաքելությու-

նը հայ ժողովրդի կյանքում: Արդարև, առաքելահաստատ Հայ Եկեղեցին, ուր հոգին է, պատմությունն ու ժառանգությունը հայի՝ հայոց պետության օրենսդրությամբ համարժեքորն ներկայացված պիտի լինի իբրև համազգային հոգևոր հաստատություն:

Հայաստանի անկախության առաջին իսկ օրից Մեր Եկեղեցին զորավիգ է եղել հայոց պետությանը, և պերճին է հիշել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Հերոսի կոչումը առաջինը շնորհվեց երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հայրենիքին ու ժողովրդին ծառայելու պատասխանատվության ու պարտքի զգացումով երանաշնորհ Մեր նախորդ երկու Հայրապետերը նվիրյալները եղան «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի առաքելության՝ կանգնած Հանրապետության Նախագահի հետ հիմնադրամի հաստատման ակունքներում: Կարևորելով հիմնադրամի դերակատարությունը ազգային-պետական մեր կյանքում և միշտ լինելով հայոց պետության ամրության ու հզորության նախանձախնդիր պաշտպանը, այսօր ևս մեր Եկեղեցին իր բոլոր կառույցներով պիտի շարունակի սատարել մեր պետության հայրենաշեն ծրագրերին, ազատ Արցախին ու մեր հաղթական բանակին: Սերտ համագործակցության այդ ոգին պիտի դրսևորվի եկեղեցական ու պետական բոլոր կառույցների հարաբերություններում ինչպես Հայրենիքում, այնպես և Սփյուռքում, քանզի Հայոց պետության ու Հայ Եկեղեցու միասնականությունը շենություն է, կյանք և հարատևություն Հայրենիքին և ազգիս հայոց:

Մեր Եկեղեցու զորացման կարևոր գործոն է Ամենայն Հայոց Հայրապետության և Նվիրապետական Աթոռների ու եկեղեցական բոլոր կառույցների համակարգված գործունեությունը: Միշտ կարևորել ենք ջերմ հարաբերությունները Նվիրապետական մեր Աթոռների ու թեմերի միջև: Բնական ու հարազատ այդ հարաբերությունների կարևորագույն արտահայտություններից են արդյունավետ համագործակցությունը, հաճախակի փոխայցելությունները, տեղեկատվության ժամանակին և լիարժեք փոխանակումը, որն այսօր առավելագույնս հնարավոր է դարձել հեռահաղորդակցային կապի միջոցներով: Այսուհանդերձ, տեղ են գտել և տարակարծություններ ու թյուրըմբռնողություններ, նաև՝ լարվածություն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից Կանադայում հակականոնական թեմ հռչակելու առիթով: Ներկա աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, երբ ազգովին լծված ենք հայրենի պետականության ամրապնդման նվիրական գործին, պարտք ի վերա մեր կա առաջնորդվել հայոց միաբանությունը չվտանգելու, մեր ժողովրդին նոր հուզումներից հեռու պահելու համակ պատասխանատվության գիտակցությամբ:

Այսօր, երբ Հայաստանի անկախությամբ իրողություն են դարձել մեր ժողովրդի դարերով փայփայած երազները, և առաջ են եկել նոր իրավիճակներ, հավատում ենք, որ պիտի հաղթահարվեն 1956 թ. երկփեղկումից ի վեր մեր Եկեղեցում առկա խնդիրները: Երանաշնորհ Վազգեն Ա Ամենայն Հայոց և Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո (ապա՝ Ամենայն Հայոց) Կաթողիկոսներն այս ուղղությամբ բավական աշխատանք են իրականացրել և արդյունքներ արձանագրել: Մնում է մեզ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ նույն ոգով շարունակել և բարի ավարտի հասցնել անավարտ գործընթացը: Ներեկեղեցական մեր կյանքում կանոնականության վերականգնումով առավել պիտի բազմապատկվի մեր Եկեղեցու ուժը, հնարավորությունները, մեր Եկեղեցու հեղինակությունը:

Հայ Եկեղեցու գործունեության ընդարձակմանը և զորացմանը ալիքի ծառայի թեմական և համայնքային կյանքի լավագույնս կազմակերպումը, որը մեր առջև այսօր կանգնած կարևոր խնդիրներից է: Թեմական մեր Առաջնորդների նվիրյալ ծառայությամբ ու ջանադիր գործունեությամբ հանդերձ, թեմական վերակազմավորումների անհրաժեշտությունն առկա է ինչպես Հայրենիքում, այնպես և՝ Սփյուռքում: Եվրոպական երկրների գերակշիռ մասում է Հայրապետական փասնամյակներ շարունակ եկեղեցական մեր կյանքը ղեկավարվում է Հայրապետական Պատվիրակությունների դրությամբ: Եվրոպայի այլ երկրներում, ուր սփվար հայություն է ապրում, փակավին կազմակերպված չէ եկեղեցական կյանքը, գոյություն չունեն համայնքներ և չկան հոգևոր հովիվներ: Թեև օր օրի վերաբացվում են նոր աղոթքի փներ, կազմավորվում նոր համայնքներ, սակայն նույնն է պարագան Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի իշխանության ներքո համախմբված նախկին Խորհրդային Միության երկրներում, ինչպես նաև՝ Հայաստանում և Արցախում, ուր եկեղեցական կառույցի շինվածքը կազմող համայնքները քայքայվեցին ու փլվեցին խորհրդային ժամանակներում:

Հայրենիքում պահպանված եկեղեցիների մեծ մասը խոնարհված են, նոր կառուցված բնակավայրերը, կամ քաղաքների նոր թաղամասերը, բնականաբար, չունեն եկեղեցիներ: Ճիշտ է, մեր ժողովուրդը վերադառնում է դեպի իր արմատները, իր հայրերի սուրբ հավատքը, հաճախում է եկեղեցիներ, ավելանում են մկրտությունները, մեծահասակներ ու երիտասարդներ հետաքրքրվում են հոգևոր գրականությամբ ու հաղորդումներով, սակայն մեծ է բացը քրիստոնեական ճանաչողության, մեր Եկեղեցու պատմության, դավանաբանության ու ծեսի իմացության մեջ: Հոգևոր ճանաչողության նման պարապության պայմաններում և մեր ժողովրդի նյութական անապահով վիճակից օգտվելով գործում են աղանդները, և հաճախ ենք տեսնում նրանց քարոզչության ցավալի հետևանքները: Գտնվեցին մայրեր, որ արգելեցին ներարկում կատարել իրենց մահամերձ զավակին, եղան անձնասպանության դեպքեր, ընտանիքներում բաժանություններ: Չափազանց մեծ դժգոհության տեղիք են տալիս զինվորական ծառայությունից խուսափելու հաճախացող դեպքերը, երբ երիտասարդները նախընտրում են բանտ ընկնել, բայց ոչ՝ զինալ ծառայության: Աղանդների օտարամուտ, մեր ժողովրդի նկարագրին ու արժեքներին անհարազատ ու անհարիր գաղափարները Հայաստանից արտագաղթողների հետ թափանցում են նաև Սփյուռքի հայ իրականություն:

Ինչպես Սփյուռքում, այնպես և Հայրենիքում մեր Եկեղեցին ապահով ու կենսունակ կլինի հավատավոր և հավատարիմ ժողովրդով, իր հոգևոր հովիվներով, ովքեր քաջ գործով և քաջ խոսքով շարունակ կվերապրեցնեն հավատը հայորդյաց հոգիներում: Ուստի, հավատավոր ու ծառայասեր եկեղեցականն է, որ կարող է համախմբել ժողովրդին ու պահել Եկեղեցու շուրջ, որ կարող է առաջնորդ լինել ժողովրդին:

Ներկայիս թեև շուրջ երկու և կես հազար հոգևոր սպասավորների կարիքն ունենք, սակայն հոգևորականների զգալի այս պակասը երբեք չպետք է պատճառ դառնա հրաժարվելու հիշյալ չափանիշներից ու պահանջներից: Մայր Աթոռիս հոգևոր կրթական հաստատություններում այսօր սովորում են շուրջ 300 ուսանողներ: Մեկ տարուց ի վեր գործում է նաև քահանայից լսարանը, ուր սովորում են բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Նախապատվություն տրվում է Հայաստանի մարզերում բնակվողներին, որպեսզի դասընթացն

ավարտելուց հետո ծառայության կոչվեն իրենց թեմերում: Մեր գահակալության տարիներին ձեռնադրվել են 63 քահանաներ՝ կուսակրոն և ամուսնացյալ: Ուրախություն է Մեզ համար ծանուցել, որ այսուհետ յուրաքանչյուր տարի շուրջ 40 նորընծաներ կգան լրացնելու եկեղեցականաց մեր շարքերը:

Առանձնաբար կարևորում ենք, որ ձեռնադրվող հոգևորականները լինեն շրջանավարտներ Հայ Եկեղեցու հոգևոր կրթական հաստատությունների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Նվիրապետական մեր Աթոռների և ԱՄՆ Արևելյան թեմի: Արևելյան թեմի Սուրբ Ներսես Ընծայարանի ուսանողները, ովքեր հիմնականում ծնվել են Ամերիկայում և կատարյալ չեն տիրապետում հայերենին, հարկ է, որ առնվազն մեկ տարի իրենց հայագիտական կրթությունը խորացնեն մեր հոգևոր կրթական հաստատությանց վանական հայաշունչ ու աղոթաբույր հարկերից ներս: Հայ եկեղեցականի հայերենի փկար իմացությունը դժվարություններ է ստեղծում ոչ միայն ծիսապաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում, այլև վտանգում է մեր Եկեղեցու հայապահպանության առաքելությունը:

Որպես կարևոր ձեռքբերում հիշենք, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը Հայաստանի Կառավարության կողմից ճանաչվել է բարձրագույն ուսումնական հաստատություն, և այսօր աշխատանքներ են տարվում Մայր Աթոռի կրթական բոլոր հաստատությունների ուսումնական ծրագրերի նույնականացման և ուսումնական գործընթացի բարելավման ուղղությամբ: Եկեղեցագիտական առարկաների դասավանդության ներկա անբավարար վիճակը պիտի բարվոքվի այսօր արտերկրի տարբեր հոգևոր-կրթական հաստատություններում ասպվածաբանական իրենց կրթությունը կատարելագործող 30 ճեմարանավարտների Մայր Աթոռ վերադարձով: Բարձր գնահատելով մեր թեմակալ Առաջնորդների՝ արտերկրում երիտասարդ մեր միաբանների ուսումնառությանը բերած աջակցությունը, վերստին դիմում ենք նախաձեռնողություն հանդես բերելու այս անչափ կարևոր գործում, որպեսզի գիտելիքի, ճանաչողության ու փորձառության իրենց պաշարով երիտասարդ մեր միաբանները կարող լինեն իրենց շոշափելի ներդրումը բերել մեր Եկեղեցու անդաստանում, հայորդյաց հավատքի կերտման, քրիստոնեական կրթության ու դաստիարակության գործում:

Գոհություն Աստծո, ուսումնական այս տարվանից Հայ Եկեղեցու և Հայաստանի Կառավարության միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա հանրակրթական դպրոցներում դասավանդվում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան: Գիտության և Կրթության Նախարարության հետ համատեղ կազմված հանձնախմբի կողմից արդեն իսկ պատրաստվել են 4-րդից 8-րդ դասարանների դասագրքերը և ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկներ: Դասագրքերը տրամադրելի պիտի դարձնենք Սփյուռքի մեր գաղթօջախներին՝ անհրաժեշտության դեպքում թարգմանելով և պատշաճեցնելով տվյալ գաղութի պահանջներին: Մեր ձգտումն ու ջանքն է, որ Հայրենիքի և Սփյուռքի դպրոցներում ու վարժարաններում հայ երեխաներն ու երիտասարդները ճանաչեն հայրերի հավատքը, մեր Եկեղեցին, մեր մշակույթը, ավանդներն ու բարոյական արժեքները և տերը լինեն հայրենի ժառանգության: Դպրոցներում է մեր ապագան: Միշտ պիտի հոգալ դպրոցների ու վարժարանների գործունեության զորացման մասին, հաճախակի կազմակերպել երիտասարդական ուխտագնացություններ հայրենական սրբավայրեր և Սուրբ Էջմիածին, որպեսզի մեր զավակները կրթվեն հայեցի ու քրիստոնեական ոգով:

Քրիստոնեական դաստիարակության և կրթության ուղղությամբ Հայաստանում ուրա-
խություն պարգևող արգասավոր գործունեություն են իրականացնում նաև կիրակնօրյա
դպրոցները և Հայորդյաց Տները: Այս տարի նոր Հայորդյաց Տներ բացվեցին Վանաձոր և
Էջմիածին քաղաքներում: Ստեղծագործական այս տներում երեխաները հաճախում են ար-
հեստագործության, երաժշտության, գեղանկարչության, մարմնամարզության, կրկեսի և
այլ տարբեր խմբակներ՝ միաժամանակ մասնակցելով քրիստոնեական դաստիարակութ-
յան դասընթացների: Վերջին տարիներին հոգևոր սպասավորություն է իրականացվում և
քրիստոնեական ուսուցում կազմակերպվում Հայոց բանակում: Բանակի հոգևոր Առաջնոր-
դի ղեկավարության ներքո այսօր 24 եկեղեցականներ՝ քահանա և սարկավագ, ծառայութ-
յուն են մատուցում բանակում: Քարոզչություն և հոգևոր ծառայություն է իրականացվում
նաև բանտերում և հիվանդանոցներում, ինչպես և՝ խուլ ու համրերի համար: Երիտասարդ-
ների քրիստոնեական կրթության ու դաստիարակության ասպարեզում արդեն ութ տարի
իր ավանդն է բերում Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտե-
տը: Քրիստոնեական ճանաչողության, Հայ Եկեղեցու պատմության, դավանաբանության
ու ծեսի մասին գիտելիքների մատուցման ուղղությամբ էական դերակատարություն ունի
մեր հոգևորականների համատեղ աշխատանքը «Շողակաթ» հեռուստաստուդիայի և Ազ-
գային ռադիոյի հետ: Այս ամենով Եկեղեցին վերստին մերձենում է ժողովրդին, լուսավոր-
վում է հավատը հայորդիների, և կյանք են մտնում, ապրելակերպ դառնում ազգային-եկե-
ղեցական տոներն ու սովորությունները:

Քրիստոնեական քարոզչության շրջագծում առանձնակի կարևորություն ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական գործունեությունը: Հրատարակվել են եկեղեցագիտական ու հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններ, որոնց շարքում մասնավորաբար կցանկանայինք առանձնացնել Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի «Ազգապատում»-ը, Պողոս Ադրիանապոլսեցու «Խրատի Թանգարան»-ի արևելահայերենը, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը, «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության», «Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում», «Արդի իրավունքի քրիստոնեական հիմունքները» աշխատությունները, հայ մեկնողական գրականության 60 հատորյա մատենաշարի լույս ընծայված հատորները, պատրաստվում են Մելիք-Թանգյանի «Հայ եկեղեցական իրավունքը»՝ լրացված հետագա իրավական փաստաթղթերով, Արշակ Տեր-Միքելյանի «Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ քրիստոնէականը» գրքերի վերահրատարակությունները: Տիրան արքեպս. Ներսոյանի ժառանգությունը ներկայացնող ուսումնասիրության և այլ գրքերի հրատարակություններ: Մեր Եկեղեցու քարոզչությունն ընդարձակվում է նաև շնորհիվ հայաստանյան և Սփյուռքի թեմերում հրատարակվող բազմաթիվ պարբերականների ու առանձին հրապարակումների, որոնք միաժամանակ ներկայացնում և ճանաչելի են դարձնում Հայ Եկեղեցին իր անցյալով ու առօրյա կյանքով: Այս բոլոր ձեռքբերումները իրական են շնորհիվ նվիրումի ու ջանքերի մեր թեմակալ Առաջնորդների, մեր բոլոր հոգևորականների, որոնց բերում ենք Հայրապետական Մեր սերը և գնահատանքը:

Հայ Եկեղեցու և Հայրապետիս համար տարիների հիմնական մտահոգություն պիտի շարունակի մնալ եկեղեցաշինությունը, հարյուրավոր պատմական վանքերի ու եկեղեցիների նորոգությունը և նորերի կառուցումը:

2001 թ. Հայաստանի Կառավարության կողմից Եկեղեցուն են վերադարձվել շուրջ 150 վանքեր ու եկեղեցիներ, եկեղեցապատկան կալվածներ: Վերջին տարիներին սփյուռքահայ մեր բարերարների, նաև հայրենաքնակ հայորդյաց ազնիվ նվիրատվություններով վերանորոգվել են խոնարհված մի շարք եկեղեցիներ, կից շինություններ, կառուցվել են նոր եկեղեցիներ: Կառուցումների հպանցիկ թվարկումն անգամ պիտի տա այն ընդարձակ քարտեզագրությունը, որ ընդգրկում է Հայաստանն ու Արցախը՝ նշանավոր վանքերով ու ավելի քան 35 նորակառույց եկեղեցիներով: Այսպես՝ վերանորոգվել են Սաղմոսավանքը, Կեչառիսի վանական համալիրը, Ամարասի վանքը, Մուղնու Սուրբ Գևորգ, Ապարանի Սուրբ Խաչ, Քաշաթաղի Սուրբ Խաչ եկեղեցիները, նոր եկեղեցիներ են օծվել Երևանում, Գյումրիում, Սպիտակում, Ներքին Դվինում, Մասիսում, Վայքում, Մալիշկայում, Վանաձորում, Նաալյանում և այլուր, որոնց շարքում՝ Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին: Այս առիթով Մեր մասնավոր գնահատանքն ենք բերում Եկեղեցու մեծ բարերարներ Տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին, Տիարք և Տիկնայք Նազար և Արտեմիս Նազարյաններին, Վաչե և Թամար Մանուկյաններին, Սարգիս և Բաբի Հակոբյաններին, Սարգիս և Ռութ Բեդոյաններին, Գառնիկ և Անի Յակոբյաններին, Գևորգ և Սիրվարդ Հովնանյաններին, Նորայր և Լինդա Գևորգյաններին, Տիարք Ռիչարդ Մանուկյանին, Էդուարդ Էռնեկյանին, Քըրք Քըրքորյանին, Ջորջ և Հովհաննես Քյուրքչյան եղբայրներին, լուսահոգի Սարգիս Գարրինսյանին, իր ազնիվ փիկնոջն ու զավակին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնադրամին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազնվասիրտ մյուս բոլոր բարերարներին: Թեև ծավալուն աշխատանքներ են կատարվել, սակայն այս ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան, որոնք մեծ ջանքեր պիտի պահանջեն: Պիտի խոստովանենք, որ Հայ Եկեղեցին իր ներկա հնարավորություններով անկարող է իրականացնել նորոգությունները վերադարձված 150 պատմական վանքերի ու եկեղեցիների: Պետական հոգածությամբ ու հովանավորությամբ միայն և մեր բարերարների ազնիվ օժանդակությամբ հնարավոր պիտի լինի վերանորոգված և իրենց առաքելության մեջ վերականգնված տեսնել մեր խոնարհված վանքերը, ուր պիտի հաստատվեն միաբանություններ ու վերականգնվի վանական կյանքը: Ուրախ ենք ասելու, որ երեք տարի է, ինչ Սուրբ Հռիփսիմե վանքում ապրում են միանձնուհիներ: Ապագային միանձնուհիների շարքերը համալրվելու դեպքում մեր վանքերից մեկում կհաստատվի կուսանոց՝ իր աղոթական ու ծառայական լիարժեք կյանքով:

Եկեղեցաշինությունը տեղ ունի և իրական է նաև Սփյուռքում: Եկեղեցիներ են կառուցվել Ռուսաստանի Դաշնությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես նաև՝ Եվրոպայի տարբեր երկրներում: Մասնավորաբար նշենք հայկական եկեղեցիների վերաբացումը Սանկտ Պետերբուրգում (ՌԴ), Լվովում (Ուկրաինա), Լոնդոնում, Տալլինում (Էստոնիա), նոր եկեղեցիների կառուցումը Մետրո Վեստում, Սենթ Պոլ Մինեսոտայում (ԱՄՆ), Կրասնոյարսկում, Վոլգոգրադում, Վսեվոլոժսկում, Սամարայում, Կիրովում, Վլադիվոստոկում, Աստրախանում (ՌԴ), Օդեսայում (Ուկրաինա), Ալմելոյում (Հոլանդիա), ընթացքի մեջ է նոր եկեղեցու շինարարությունը Մոսկվայում: Այնուամենայնիվ, ներկայացվածը մասն է այն գործի, որը դեռ պետք է ավարտել՝ նպատակ ունենալով, որ մեր բոլոր բնակավայրերը, քաղաքների թաղամասերը, Սփյուռքում գտնվող հայկական համայնքերն ունենան իրենց

աղոթքի տները և հնարավոր լինի լիարժեքորեն կազմակերպել հոգևոր կյանքը: Եկեղեցու
օրհնության ներքո, համայնքային կյանքից ներս է, որ հայորդին պիտի կրթվի հայրենա-
կան ավանդներով, սիրի մայրենին, արժեվորի այն պտուղն առաքինությունները, որ մեր ժո-
ղովուրդը դարձրել է իր ազգային կյանքի անբաժան մասը, հայ ընտանիքի հիմքը: Այսպես
պիտի շարունակենք ապրել և հեռու պահել մեր զավակներին մոլորեցնող ճանապարհնե-
րից, մեր սերունդներին՝ ուծացումից: Այսպես պիտի ապրենք և միշտ ամուր պահենք ու շա-
րունակ զորացնենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ մեր թեմերի կապը, ջերմ ու հարա-
զատ հաղորդակցությունը:

Այս առումով կցանկայինք ընդգծել նաև ոչ երկրորդական մի խնդիր: Վերջին տարինե-
րին հաճախ ենք տեղեկանում հայությունից պարպված նախկին գաղթօջախներում եկեղե-
ցապատկան կալվածքների կորուստների մասին, որոնք կանխել, փաստորեն, չի հաջող-
վում, երբեմն քաղաքական հանգամանքներով պայմանավորված, իսկ երբեմն՝ Մայր Աթո-
ռում անհրաժեշտ փաստաթղթերը՝ կալվածագրերը չունենալու հետևանքով, ինչպես, օրի-
նակ՝ Ծայրագույն Արևելքի և աֆրիկյան գաղթօջախների որոշ կալվածների պարագայում:
Որպեսզի Եկեղեցին չկանգնի նման իրավիճակների առջև, այլ ընդհակառակը՝ միշտ կա-
րողանա տնօրինել իր ունեցվածքը, հարկ է, որ թեմերի կողմից, եթե չկա անպատեհություն,
առանձին գրքույկով հրապարակվեն եկեղեցապատկան բոլոր կալվածների իրավական
փաստաթղթերը, և Մայր Աթոռում ստեղծվի արխիվ եկեղեցապատկան կալվածքների վե-
րաբերյալ՝ շարունակաբար լրացվելով ամենամյա փոփոխություններով:

Հայրապետիս համար տարիների մտահոգություն պիտի լինեն նաև Մայր Աթոռիս
վարչակազմակերպական ու տնտեսական բարեփոխումները և շինարարական ծրագրերը:
Լավատես ենք, որ Աստծո օգնականությամբ և հոգևորական մեր դասի ու աշխարհական
զավակների աջակցությամբ կարող պիտի լինենք արդյունքների առաջնորդել ծրագրյալ
մեր գործունեությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղե-
ցու:

Այսօր կարիքն ունենք զորացնելու Հայ Եկեղեցու ավանդական գործունեությունը սո-
ցիալական ոլորտում, որը մերձավորին օգնելու մեր Տիրոջ պատվիրանի իրագործումն է մեր
կյանքում:

Արդեն մի քանի տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո Հայաստանի տար-
բեր քաղաքներում գործում են բարեգործական ճաշարաններ, ամենամյա օգնություններ
են տրամադրվում ծնողազուրկ երեխաներին, նաև պարբերաբար դրամական օգնություն-
ներ՝ դիմող կարիքավորներին: «Հուսկիս» ծրագրի շրջագծում իրականացվում է հիվանդնե-
րի խնամատարություն, բարեգործական ձեռնարկներ է իրականացնում նաև «Սուրբ Ներ-
սես Մեծ» հիվանդանոցը: Մայր Աթոռի հետ համագործակցաբար բարեգործական ծրա-
գրեր է իրականացնում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կլոր Սեղանը և վարկա-
յին ծրագրեր՝ «Էկլոֆ»-ի գրասենյակը՝ աջակցելով Հայաստանում և Արցախում տնտե-
սության ու ընկերային կյանքի առաջընթացին:

Միջեկեղեցական հարաբերություններում միշտ ջանացել ենք ամուր պահել եղբայրութ-
յան ու գործակցության ոգին քույր Եկեղեցիների հետ, որի վկայություններից են նաև ներ-
կայացուցչական պատվիրակությունների բազմաթիվ փոխայցելությունները, իրականաց-

ված համատեղ ծրագրերը, կրթական հաստատություններում ուսանողների փոխանակումը: Գոհունակությամբ ենք ցանկանում ընդգծել, որ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ Սուրբ Էջմիածնում մեզ ուրախակից եղան շուրջ 25 քրիստոնեական Եկեղեցիների պետեր ու ներկայացուցիչներ: Մենք նույնպես այցելություններ կատարեցինք քույր Եկեղեցիների պետերին Մոսկվայում, Վատիկանում, Թբիլիսիում, Բուխարեստում, Ադիս Աբեբայում, Կահիրեում՝ հավաստելով մեր եղբայրությունը և գործակցելու պատրաստակամությունը: Հայ Եկեղեցին շարունակում է իր մասնակցությունը բերել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործունեությանը՝ հանուն աշխարհում խաղաղության ամրապնդման, հոգևոր արժեքների կարևորման, ժողովուրդների բարի կամքի ու համագործակցության զորացման:

Այս բոլոր ձեռքբերումները, Գերաշնորհ և Հոգեշնորհ սիրելի Հայրեր և թեմական ներկայացուցիչներ, ունենք Նվիրապետական մեր Աթոռների, ձեր և հավատավոր մեր ժողովրդի շնորհիվ, շնորհիվ մեր պետության բարյացակամ աջակցության: Մենք լիահույս ենք, որ այսօր, երբ հոգևոր-ազգային զարթոնքի նոր այգաբաց է հայոց երկնքում, երբ գործելու նոր հնարավորություններ են բացվել, հավատն ու սերը մեր հոգում, միաբան ու միախորհուրդ պիտի ձեռնամուխ լինենք նոր իրագործումների և մեր Եկեղեցու առջև կանգնած հրամայականների վճռմանը: Եվ թող Բարձրյալն Աստված զորակից լինի մեզ ու առաջնորդի մեր քայլերը:

Վերստին ուրախությամբ ողջունում ենք ձեզ և աղոթք վերառաքում առ Աստված Հայաստանի և Արցախի հայոց անկախ պետությունների, Նվիրապետական մեր Աթոռների՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությանց անսասանության, շինության ու պայծառության համար: Երանաշնորհ մեր Հայրապետներից Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի խոսքով աղոթում ենք վասն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռիս հայոց. «Աղաչեմ զՔեզ, ո՛վ բարերար եւ ողորմած Աստուած, զքոյահաստատ Աթոռն եւ զմայրն մեր Սուրբ Էջմիածին, զոր իբր յատուկ փառք, պարծանք եւ մխիթարութիւն մեզ հայազնէիցս եւ լուսաւորչակրօն հօտիս շնորհեցեր, հաստատուն եւ անշարժ պահեա զնա ի վերայ անխախտելի վիմին՝ յոյս անսուտ խոստմանդ Քո: Անպակա՛ս արա ի նմանէ զմշտագեղ եւ զհոգեպայծառ շնորհս Հոգւոյդ Սրբոյ մինչեւ ի կատարած աշխարհիս՝ ի մխիթարութիւն եւ ի զուարճութիւն մեզ եւ եկեղեցեացս մերոց»: Ամեն:

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(26 նոյեմբերի 2003 թ., Մոսկվա)

Նոյեմբերի 26-ին Սուրբ Դանիելյան մենաստանում տեղի ունեցավ Կովկասի հիմնախնդիրների կարգավորմանը նվիրված քառակողմ հանդիպում մասնակցությամբ Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Ալեքսի Երկրորդի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի:

Հանդիպումը բացեց և երեք երկրների հոգևոր առաջնորդներին ողջույնի խոսքով դիմեց Մոսկվայի և Համայն Ռուսիայի առաջնորդ Ալեքսի Բ Պատրիարքը:

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ Բ-Ի ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Ձերդ Սրբություն, Կաթողիկոս-Պատրիարք Համայն Վրաստանի Իլիա Բ. Ձերդ Սրբություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կովկասյան ժողովուրդների կրոնական բարձրագույն խորհրդի մեծարգո նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների կրոնական առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադե, Ձերդ Սրբազնություններ, մեծարգո պարոն դեսպան, հարգելի եղբայրներ.*

*Բարձրյալն Աստծու ողորմությամբ մենք հավաքվել ենք այստեղ. Սուրբ Դանիելյան վանքում՝ չորս կրոնապետերի հերթական խաղաղարարական հավաքին մասնակցելու համար: Ես ի սրտե շնորհակալություն եմ հայտնում մեծարգո Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեին, Նորին Սրբություն, Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին և Նորին Սրբություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գարեգին Բ-ին, որ դուք, սիրելի եղբայրներ, ժամանել եք Մոսկվա՝ այս հանդիպմանը մասնակցելու համար: Մեզ միավորում է բազմամյա բարեկամությունը և փոխադարձաբար օգտավետ համագործակցությունը: Ուրախալի է տեսնել, որ Կովկասում խաղաղության կարգավորմանը նպաստող եռակողմ հանդիպումները, որ տեղի են ունենում 1989 թվականից ի վեր, այժմ դառնում են քառակողմ: Մենք ողջունում ենք Վրաց Ուղղափառ Եկեղեցու մուտքը մեր քննարկումներ, որի փորձառությունը՝ հաջողությամբ աշխատելու հետխորհրդային շրջանի ծանր պայմաններում, միանգամայն օգտավետ կլինի մեզ բոլորիս համար: Մենք բոլորս աղոթում ենք վրաց ժողովրդի խաղաղության համար և նրա հոգևոր առաջ-*

*նորդին ցանկանում ենք հոգեկան և մարմնավոր ամրության այսքան դժվարին ժամանակաշրջանում:*

*Քաջ հայտնի է, որ կրոնական կյանքը, հոգևորականների և հավատացյալների ջանքերն ի զորու են ուղղակիորեն բարենպաստ ազդեցություն գործելու մեր երկրներում տիրող իրադրության վրա: Ահա թե ինչու այնքան կարևոր է, որ մենք՝ հոգևոր առաջնորդներս, միասնաբար մեր հավատացյալներին խաղաղության և համերաշխության կոչ անենք՝ փորձելով ընդհանուր դիրքորոշում որդեգրել Կովկասի իրադրության վերաբերյալ: Այո, տարածաշրջանի ժողովուրդները դեռ բաժանված են թշնամանքի և անվստահության պատճառով: Այո, մենք բոլորս կրում ենք դեռ վերջնականապես չկարգավորված կոնֆլիկտների հետևանքները: Բայց այս ամենը գիտակցելով՝ մենք պետք է հատուկ ջանքեր գործադրելով փորձենք միաձայն խոսել մեր հավատացյալների, ինչպես նաև քաղաքական գործիչների և հասարակության հետ: Ինձ թվում է, որ մեր հանդիպման արդյունքը կարող է դառնալ մի ուղերձ, որտեղ անհրաժեշտ է նշել Կովկասում հակամարտությունների խաղաղ և արդարացի կարգավորման հիմնական սկզբունքները:*

*Որպես հակակշիռ ամեն տեսակի արմատականների և ծայրահեղականների, որոնք ձգտում են տարածքների և իշխանության նոր ուժային վերաբաժանումների, մենք կարող ենք հասարակականորեն արտահայտվել հօգուտ առկա հիմնախնդիրների՝ բացառապես խաղաղ և օրինական միջոցներով լուծման: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ այդ հիմնախնդիրներից շատերն առաջ են գալիս ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակումից: Կովկասը հնուց բնակեցված է եղել բազմաթիվ ժողովուրդներով, և տարածաշրջանի պետությունները միշտ աչքի են ընկել բարեդրացիությամբ: Այսօր նախ և առաջ պետք է միջոցներ ձեռնարկել այն վերականգնելու համար: Մասնավորապես, պետք է աջակցել ազգային փոքրամասնությունների ներգրավմանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, նրանց տալ հավատքի դավանության և կրոնական գործունեության ազատություն, հնարավորություն՝ զարգացնելու իրենց մշակույթը, լեզուն: Չի կարելի մոռանալ փախստականների և բռնի տեղահանվածների մասին, որոնք ցանկանում են իրենց տները վերադառնալ:*

*Անհրաժեշտ է վճռականորեն դիմակայել ազգամիջյան թշնամանքին: Մենք կրկին պետք է հիշեցնենք իշխանություն ունեցողներին, քաղաքական գործիչներին, գիտնականներին, հասարակական գործիչներին, մշակույթի գործիչներին և զանգվածային լրատվության միջոցներին, որ չի կարելի բարձրացնել կամ նվաստացնել մարդուն՝ ելնելով նրա ազգությունից կամ դավանանքից:*

*Կարծում եմ, որ մենք պետք է խաղաղության ուղերձով դիմենք մեր կրոնների հավատացյալներին, նրանց աղոթքի, հանդուրժողականության և համբերատար աշխատանքի կոչ անենք: Մեր հովվական պարտքն է չթողնել նրանց՝ մասնակցելու ատելության և թշնամանքի գործերին, որոնք անխուսափելիորեն պատուհաս են դառնում հենց իրենց համար:*

*Այսօր շարքը Կովկասի կրոնական համայնքներից ակնկալում են գործուն մասնակցություն՝ հակամարտությունների խաղաղ ճանապարհով լուծման և բնականոն կյանքի հաստատման գործում: Իշխանության և հասարակության ներկայացուցիչները հույսով են, որ մեր խաղաղարարական ջանքերը կօգնեն բուժելու մարդկանց հոգու վերքերը՝ այդպիսով հող նախապատրաստելով համապարփակ խաղաղ կարգավորման համար:*

*Վստահ եմ, որ կարող ենք արդարացնել այդ հույսերը: Կրկին ողջունում եմ Մոսկվայում Նորին Սրբություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գարեգին Բ-ին, Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեին և Նորին Սրբություն, Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին: Սիրելի եղբայրներ, խնդրում եմ արտահայտվեք մեր կողմից բարձրացված հիմնախնդիրների վերաբերյալ ունեցած ձեր տեսակետների մասին:*

Պատասխան խոսքով հանդես եկան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Գոհություն և փառք ենք մատուցում Տիրոջը, որ այսօր Մոսկվայում կայանում է հոգևոր Առաջնորդներիս այս հանդիպումը՝ իբրև շարունակություն Կովկասյան ողջ տարածաշրջանում խաղաղությունն ամրապնդելու նպատակով մինչ այս եղած հանդիպումների:*

*Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին՝ մեր սիրեցյալ ավագ եղբորը՝ ընձեռնված հնարավորության համար, որպեսզի քառակողմ այս հանդիպման ընթացքում խորհրդակցենք մեր ժողովուրդներին հուզող խնդիրների շուրջ և մեր հոգևոր առաքելության շրջանակներում աջակցենք պետական ու քաղաքական գործիչներին, միջազգային կազմակերպություններին՝ գտնելու աստվածահաճո ուղիները հակամարտությունները հարթելու, որպեսզի մեր ժողովուրդներն ապրեն ապահով ու առաջընթաց կյանքով:*

*Ձերդ Սրբություն, առաջին անգամ չէ, որ Դուք կազմակերպում եք նման հանդիպում՝ Ձեր հոգածու, բարեխնամ վերաբերմունքը դրսևորելով բազմազգ մեր տարածաշրջանում խաղաղության պահպանման ու բարեկամական հարաբերությունների զարգացման հարցում: Արևշատ կյանքի երկար օրեր ենք հայցում Ձեզ և Տիրոջ զորակցությունը՝ Ձեր աստվածահաճո գործերին, Ձեր առաքելության մեջ:*

*Եղբայրական սիրով ի Քրիստոս ողջունում ենք Համայն Վրաստանի Պատրիարք Իլիա Երկրորդին: Նորին Սրբության մասնակցությամբ տարածաշրջանի*

*հիմնահարցերին նվիրված մեր երկխոսությունն առավել բովանդակային է դառնում: Այսօր մենք բոլորս մտահոգ ենք Վրաստանի իրադարձություններով և աղոթք ենք առաքում, որ եղբայրական այդ երկրում արագ և սահուն կերպով հաղթահարվեն լարվածությունը, քաղաքական ուժերի հակամարտությունը և վերականգնվի կայունությունը:*

*Ուրախ ենք ողջունելու Կովկասի մահմեդականների վարչության Նախագահ հարգարժան Շեյխ-ուլ-Իսլամ Փաշա-զադեհին: Առ Աստված աղոթքով Մեր մաղթանքն է, որ մեր հանդիպման բարեկամական մթնոլորտը արձագանք գտնի և փոխանցվի մեր ժողովուրդների կյանքում և հարաբերություններում:*

*Դարավոր բարեկամության ավանդույթներ ունեն մեր ժողովուրդները, որոնք իրենց լավագույն դրսևորումները գտան խորհրդային պետության մեջ համատեղ կյանքի յոթանասուն տարիներին՝ հակառակ նաև խորհրդային կարգերի ու իշխանության ստեղծած բազմապիսի բարդությունների:*

*Այսօր մեր ժողովուրդների ձգտումն է կառուցել օրինահարգ հասարակություն և բարօր կյանք, որը հնարավոր. իրական կարող է լինել նախ և առաջ խաղաղության պայմաններում հոգևոր արժեքների կարևորումով: Սա է մեր հանդիպումների առաջնային նպատակը և մեր առաքելությունը մեր ժողովուրդների կյանքից ներս: Խաղաղությունը կպահպանվի այն ժամանակ, երբ նրա հիմքում ընկած կլինի մեր ընդհանուր ձգտումը ստեղծարար կյանքի և վստահությունը ապագայի հանդեպ:*

*1993 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետը հարգարժան Շեյխի հետ Մոնթրեոյի (Շվեյցարիա) հանդիպման ժամանակ ասում էր, թե հրաշք պիտի լինի, եթե հաջողվի զինադադար հաստատել Լեռնային Ղարաբաղում: «Մենք հավատում ենք նաև հրաշքներին, որովհետև հավատացյալներ ենք, և Աստված նույն Աստված է, հրաշքների Աստված է».- ասում էր լուսահոգի Հայրապետը: Հույսն առ Աստված, նա հավատում էր այդ հրաշքին՝ խաղաղության բարի առավոտի բացվելուն: Մեկ տարի անց հրաշքը կատարվեց, հաստատվեց զինադադարը, որ շարունակվում է մինչ օրս, և, փառք Տիրոջը, մեր հանդիպումը կայանում է, երբ հարաբերական խաղաղություն է մեր սահմաններում, երբ մեր ջանքերը գերիների փոխանակման, լարվածության հաղթահարման ուղղությամբ պսակվում են որոշակի հաջողությամբ:*

*Մեր նպատակը պիտի լինի միայն պահպանել ու զարգացնել այդ ուղղությամբ մեր ձեռքբերումները և ոչ՝ հակառակը: Որքան ուրախալի էր, հարգարժան Շեյխ, որ Ձեր դիմումից հետո Մեր միջնորդությամբ Արցախի իշխանություններն ազատ արձակեցին երկու ադրբեջանցի գերիների: Ցավալին հայ գերիներ կան բանտարգելված, և հայ մայրեր են սպասում իրենց որդիներին: Ցավալին մեր սահմաններում ժամանակ առ ժամանակ կրակոցներ են հնչում և մարդիկ են զոհվում: Արդարև, դեպի ո՞ւր պիտի առաջնորդեն սպառնալի ու մարտաշունչ կոչերը, որ հնչում են այսօր Ադրբեջանի իշխանությունների ու քաղաքական շրջանակների կողմից և ցավոք, նաև՝ հարգարժան Շեյխի, ինչպես Կովկասի մահմեդականնե-*

*րի երկրորդ համագումարում: «Եթե հայերը մտահոգ են իրենց ապագայով. եթե նրանք ցանկանում են մասնակից դառնալ առաջընթացին, զարգացմանը, բարեկեցության հասնել, ապա նրանք պետք է մտածեն նվաճելու իրենց հարևանների վստահությունը և ոչ թե նրանց հողերը»: Մեկնաբանություններն ավելորդ են:*

*Արցախը իրականացնում է ինքնորոշման իր իրավունքը, որը աստվածատուր շնորհ է, որն իրավական հարաբերությունների կանոնակարգից ամրագրված է ՄԱԿ-ի մարդու իրավունքների երկու հիմնարար փաստաթղթերում՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրում» և «Սոցիալական ու մշակութային իրավունքների համաձայնագրում»: Եվ եթե Դուք, հարգարժան Շեյխ, բնորոշում եք Ադրբեջանն «օրենք ու մարդու իրավունքներ հարգող երկիր», ապա պիտի ընդունեք, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր նախնիների հողի վրա ազատ ապրելու աստվածաշնորհ իր իրավունքի տերն է:*

*Իր ազատությունը վերագտած Ղարաբաղն այսօր ձեռնամուխ է վերականգնելու պատերազմական ավերները, վերակառուցելու այրված ու քանդված տներն ու բնակավայրերը, հայրենական իր սրբավայրերը: Ձեռնամուխ է ժողովրդավարական սկզբունքների վրա կառուցելու իր նոր կյանքը: Հայաստանում էլ պակասին պահպանվում են դժվարությունները փախստականների տեղավորման, սեփական հարկերով ապահովման հետ կապված՝ չնայած այն բոլոր ջանքերին, որ գործադրում են Հանրապետության իշխանությունները:*

*Մեր՝ հոգևոր առաջնորդներիս համար առաջնայինը մարդը և ժողովուրդն են, քանի որ, համաձայն մեր հավատի, մարդը կրում է Աստծո շունչը և մարդը ստեղծված է «ի պատկերի Իւրում»: Համաձայն արժեքային մեր համակարգի չկա որևէ նպատակ, որն արդարացնի մարդու ստրկացումը:*

*Արդարև, Մեր հորդորները պիտի շարունակեն մնալ խաղաղասիրությունն ու համաձայնությունը, հարցերի կարգավորման բանակցային ընթացքների պաշտպանությունը: Մենք հավատում ենք, որ խաղաղ բանակցային ճանապարհով, ինքնիշխանության իր իրավունքի, ապահովության ու անվտանգության երաշխավորման սկզբունքների ամուր հիմքով իր լուծումը պիտի գտնի նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարցը, որով առավել պիտի ամրապնդվի խաղաղությունը տարածաշրջանում:*

*Վերջին շրջանում, ցավոք, տեղ գտան երևույթներ, որոնք վտանգում են փոխվստահությունը և փխրուն խաղաղությունը տարածաշրջանում: Իբրև Հայոց Հայրապետ, ցավով կուզենք անդրադառնալ, որ քանդվել ու ոչնչացվել են ներկայիս Ադրբեջանի՝ Նախիջևանի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող հայկական Ջուղա քաղաքի գերեզմանատան հազարավոր հուշարձանները՝ վաղ քրիստոնեական մշակույթի հնագույն եզակի արժեքներ: Մենք հեռու ենք այն մտքից, որ այս և նմանատիպ այլ քայլերը արտահայտում են ադրբեջանական ժողովրդի ձգտումները, որը վերջին դժվարին տասնամյակից հետո նույնպես ջանում է խա-*

ղաղության մեջ վերադառնալ իր նոր կյանքի բնականոն զարգացումն ու առաջընթացը:

Հետևաբար, մշակութային արժեքների հանդեպ վանդալիզմի այս դրսևորումները պիտի գնահատվեն իբրև անհեռատես քաղաքականություն կամ անպատասխանատու թողտվություն, ինչը միայն վնաս կարող է բերել հարևանությամբ ապրող մեր ժողովուրդների փոխհասկացողությանն ու բարեկամության հաստատու առանց այն էլ դժվարին ճանապարհին: Մեծ էր մեր տարակուսանքը, երբ, ի պատասխան Մեր ահազանգի, հարգարժան Շեյխի պատասխան գրությամբ կասկած հայտնվեց այդ հուշարձանների պատկանելիության մասին, իսկ դրանց նկատմամբ բարբարոս վերաբերմունքը համարվեց լրագրական անճշտություն: Ցանկանայինք, որ իրապես անճշտություն լինեին այդ տեղեկությունները, բայց ունենք հակառակը վկայող ցավալի և անհերքելի փաստեր:

Մշակութային եղեռնի նման երևույթը, նաև հայոց գերեզմանների պղծումը երբեք չի կարող նպաստել մեր ժողովուրդների բարի կամեցողության ու խաղաղասիրության ոգու զորացմանը: Որտեղ էլ լինի՝ Ադրբեջանում կամ այլուր, երբ չկա հարգանքը միմյանց մշակութային արժեքների ու սրբությունների հանդեպ, ինչպե՞ս կարող ենք հուսալ խաղաղ կյանքի, բարի հարաբերությունների մասին, որ պիտի կառուցվեն ոչ թե վիրավորանքների ու սպառնալիքների, այլ նախ և առաջ փոխադարձ հարգանքի ու փոխհասկացողության վրա: Իբրև հոգևոր Առաջնորդներ մեր ժողովուրդների՝ անչափ մեծ է մեր պատասխանատվությունն ու դերակատարությունն այս հարցում:

Այսօր ընդհանուր տարածաշրջանային անկայունությունը, առկա քաղաքական բարդ իրավիճակները, բարոյական արժեքների նահանջը հասարակական կյանքում և անցումային շրջանի բազմաթիվ դժվարություններն առաջադրում են հրամայականներ, որոնց պետք է արձագանքեն նաև հոգևոր մեր հաստատությունները: Իհարկե, յուրաքանչյուրս առանձնաբար մեր կարելին ի գործ ենք դնում դիմակայելու ներկա ժամանակների առաջադրած մարտահրավերներին, սակայն առանձին երևույթների պարագային, ինչպես՝ ահաբեկչության, թմրամոլության և այլ դեպքում, անհրաժեշտ են մեր համատեղ ջանքերը, որպեսզի խուսափենք աստվածընդդեմ բոլոր այն երևույթներից, որոնք վտանգում են մեր ժողովուրդների խաղաղ այսօրն ու վաղվա օրը, մեր զավակների առողջությունը և ընտանիքների երջանկությունը::

Հավատում ենք, որ որքան էլ բազմաթիվ են խնդիրները, այնուամենայնիվ մեր ժողովուրդները և մեր պետություններն իրենց մեջ կգտնեն դրանք հաղթահարելու ուժն ու կգտնեն հարևանությամբ խաղաղ ապրելու ճանապարհները: «Խաղաղութիւն արարէք եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11):

Մենք աղոթում ենք աշխարհում խաղաղության և մեր տարածաշրջանում բնականոն խաղաղ կյանքի առաջընթացի համար: Թող Աստված օրհնի խաղաղության բոլոր ճանապարհները և առաջնորդի մեզ: Ամեն:

2003 թ. նոյեմբերի 26-ին նախագահական իր նստավայրում հանդիպման մասնակիցներին ընդունեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը:

Ողջունելով չորս երկրների հոգևոր առաջնորդներին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահն ի մասնավորի նշեց, որ առաջին անգամ է իրեն հնարավորություն ընձեռնվել հանդիպել միաժամանակ Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի հոգևոր առաջնորդների հետ: Վլադիմիր Պուտինը նշեց նաև, որ անցնող տարիները կովկասյան մի շարք ժողովուրդների համար եղել են լուրջ փորձությունների ժամանակաշրջան, ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական իմաստով: «Կրոնական առաջնորդների խաղաղարարական ջանքերն արժանի են հարգանքի, քանի որ ստեղծում են հոգևոր հիմք, որով է միայն հնարավոր տարածաշրջանի հիմնախնդիրների քաղաքական լուծումը»,- ընդգծեց Ռուսաստանի նախագահը:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, խոսելով Մոսկվայում տեղի ունեցած միջկրոնական այս խաղաղարարական հանդիպման մասին, նշեց. «Հուսով ենք, որ մեր ձայնը լսելի կլինի, որ այն արձագանք կգտնի մեր ժողովուրդների զավակաց սրտերում, կնպաստի քաղաքական հիմնախնդիրների լուծման խաղաղ ճանապարհների ձեռքբերմանը»: Վեհափառ Հայրապետը հայ հավատացյալների անունից ջերմագին ողջունեց Վլադիմիր Պուտինին՝ ի մասնավորի նշելով, որ հայ և ռուս ժողովուրդների եղբայրական հարաբերությունները դիտարկում է որպես գրավական՝ բանակցությունների սեղանի շուրջ Կովկասյան տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման համար:

Ռուսաստանի նախագահը վստահեցրեց հանդիպման մասնակիցներին, որ իր հերթին «Ռուսաստանը գործադրել է և շարունակելու է գործադրել բոլոր ջանքերը՝ անելու ամեն հնարավորը, որպեսզի Կովկասի ժողովուրդներն ապրեն խաղաղության, համաձայնության և տնտեսական բարգավաճման պայմաններում»:

Քառակողմ հանդիպման ավարտին Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդները ստորագրեցին համատեղ Ուղերձ՝ ուղղված իրենց երկրների հավատացյալներին:

***ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***

# ՈՒՂԵՐՁ
# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՐՈՆԱՊԵՏԵՐԻ ԽԱՂԱՂԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ

(26 նոյեմբերի, Մոսկվա, Սուրբ Դանիելյան Մենաստան)

Առաջին անգամ չէ, որ հոգևոր առաջնորդները հավաքվում են Մոսկվայում, որպեսզի միասին համագործակցության միջոցներ գտնեն՝ Կովկասում հակամարտությունների լուծման, խաղաղության և համերաշխության հաստատման համար: Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիները, Ադրբեջանի իսլամական համայնքն ունեն բարձր մակարդակով փեղի ունեցող հանդիպումների բազմամյա ավանդույթ, որոնք իրենց լուման են բերել Կովկասում ազգամիջյան հակամարտությունների կարգավորմանը: Այսօր մենք ողջունում ենք այդ գործընթացի մեջ մուտքը Վրաց Ուղղափառ Եկեղեցու, որը հայտնի է իր բազմամյա խաղաղարարական ավանդույթներով: Հուսով սպասում ենք 2004 թ. մարտի 2-4-ը Մոսկվայում կայանալիք ԱՊՀ երկրների երկրորդ Միջկրոնական խաղաղարարական համաժողովին և կոչ ենք անում այդ երկրների բոլոր հոգևոր առաջնորդներին մասնակցել այդ համաժողովին:

Կովկասի մուսուլման և քրիստոնյա կրոնական գործիչների խելամիտ դիրքորոշումը, փարածաշրջանում քրիստոնյա-մուսուլմանական երկխոսության առկայությունը թույլ չփրվեցին, որ ազգամիջյան հակասությունները վերածվեն համընդհանուր քրիստոնեա-մուսուլմանական կոնֆլիկտի: Կովկասում, սակայն, մինչ այսօր պահպանվում է լարվածությունը. Աբխազիան, Ղարաբաղը, Չեչնիան, Հարավային Օսիան (Ցխինվալիի շրջան) շարունակում են հանդիսանալ մեր ժողովուրդների արյունահոսող վերքերը: Գոհություն ենք հայտնում Բարձրյալին, որ այսօր այդ շրջաններում մեծամասշտաբ ռազմական գործողություններ փեղի չեն ունենում: Սակայն դեռ գործում են այնպիսի ուժեր, որոնք մահ և ավերածություն են սփռում, արյուն է թափվում ահաբեկչական գործողությունների և ավազակային հարձակումների հետևանքով: Հազարավոր մարդիկ փառապում են անօրինությունից և անկարգությունից: Դժվարացել է ամբողջական ժողովուրդների վերադարձը բնականոն կրոնական, հասարակական, փնտեսական և քաղաքական կյանք:

Ահաբեկիչները, ծայրահեղականները և քաղաքական արմատականները փորձում են օգտագործել ազգային և կրոնական փարբերությունները իրենց նպատակները հիմնավորելու համար, որոնք անհարիր են ճշմարիտ կրոններին: Այլ ազգի կամ կրոնի ներկայացուցիչներից թշնամու կերպար է սփեղծվում: Այլազգին կամ այլադավանը համարվում է գլխավոր մեղավորը քաղաքական անկայունության, փնտեսական քայքայման, հոգևոր անկման, այսինքն՝ բոլոր այն դժբախտությունների, որոնք բաժին են ընկել այս կամ այն ժողովրդին: Այդ իսկ պատճառով «թշնամու» դեմ պայքարը ցանկացած միջոցներով մերթ ընդ մերթ ներկայացվում է որպես «սուրբ» գործ:

Ազգային և կրոնական իդեալների այսպիսի շահագործումը հաստատում է ամբողջափիրական-ազգայնամոլական գաղափարախոսության ոչ կրոնական էությունը: Այն ծառա-

յում է բոլոր այն ուժերի օգտին, որոնք փորձում են նրանց դուրս մղել հասարակության կյանքից և անվստահություն սերմանել: Հավատքի ճշմարիտ խոստովանությունը պտնում է ոչ թե թշնամության, ոչ թե կրոնական կամ ազգային հպարտության, այլ անձնազոհ սիրո, խաղաղարարության և բարիդրացիության:

Վերստին հայտարարում ենք, որ ահաբեկչությունը չի կարող կրոնական արդարացում ունենալ: Այդ քայլին դիմում են այն մարդիկ, որոնք իրենց հոգում մթագնել են Արարչի պատկերը: Պետությունները պետք է անեն ամեն ինչ, որպեսզի դադարեցնեն ծայրահեղական խմբերի գործունեությունը, հատկապես որոնք ղեկավարվում են Կովկասյան տարածաշրջանից դուրս գտնվող ուժերի կողմից: Ի մասնավորի, անհրաժեշտ է հսկողության սահմանել տարածաշրջանում գտնվող զենքի վրա և դադարեցնել ահաբեկչությունը սնող ֆինանսական հոսքերը:

Մենք պնդում ենք, որ առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն միջազգային իրավունքի չափանիշների հիման վրա: Կոչ ենք անում քաղաքական գործիչներին՝ նոր թափ հաղորդել բոլոր տարաձայնությունների կարգավորմանն ուղղված երկխոսությանը, որոնք խոչընդոտում են Կովկասում կայուն խաղաղության հաստատմանը: Հայտարարում ենք, որ հոգևոր առաջնորդները պատրաստ են այդ երկխոսությանը բերել շատ լուրջ մասնակցություն:

Կովկասում կոնֆլիկտներին վերջ դնելու և ժողովուրդների զարգացումը խաղաղ հունով ուղղորդելու համար անհրաժեշտ է վերականգնել մարդկանց փոխադարձ վստահությունը: Դրա համար, մասնավորապես, կարևոր է աջակցել ազգային փոքրամասնությունների ներգրավմանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, նրանց տալ հավատքի դավանության և կրոնական գործունեության ազատություն, հնարավորություն՝ զարգացնելու իրենց մշակույթը, լեզուն: Չի կարելի մոռանալ փախստականների և բռնի տեղահանվածների մասին, որոնք ցանկանում են տուն վերադառնալ: Նրանք, ովքեր մեղավոր են խաղաղ բնակչության զանգվածային սպանությունների մեջ, պետք է պատժվեն օրենքի համաձայն: Սակայն ոչ ոք չպետք է անարդար պատժվի կամ հալածանքի ենթարկվի: Չէ՞ որ նույնիսկ օրինախախտ մարդը, և առավել ևս նրա հարազատները, իրավունք ունեն իրենց հանդեպ մարդասիրական վերաբերմունքի:

Անհրաժեշտ է ձգտել վերականգնելու ազգամիջյան համակեցության մշակույթը, որով այնքան հարուստ էր Կովկասը: Այս կապակցությամբ կրկին ցանկանում ենք հիշեցնել իշխանություն ունեցողներին, քաղաքական գործիչներին, գիտնականներին, հասարակական գործիչներին, մշակույթի գործիչներին և զանգվածային լրատվամիջոցներին, որ չի կարելի բարձրացնել կամ նվաստացնել մարդուն՝ ելնելով նրա ազգությունից կամ դավանանքից: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է Արարչի և մարդկանց առջև յուրաքանչյուր ասված կամ տպագրված խոսքի համար:

Կարծում ենք, որ զանգվածային լրատվամիջոցները, հատկապես էլեկտրոնայինները, քիչ բան են անում ազգամիջյան և միջկրոնական համագործակցությանը նպաստելու համար: Անհրաժեշտ է մեծ լսարան տրամադրել ոչ թե ծայրահեղականներին, որոնք բաժանում և թշնամություն են սերմանում, այլ այն կրոնական և հասարակական առաջնորդներին, որոնք խաղաղություն են քարոզում և պատրաստ են միմյանց հետ երկխոսություն սկսելու:

Ուրախալի է տեսնել, որ Վրաստանում դրամատիկ իրադարձություններն արյունահեղության պատճառ չդարձան: Դրան նպաստեց նաև Վրաց Եկեղեցու սկզբունքային խաղաղարարական դիրքորոշումը: Վերջին իրադարձությունների խաղաղ լուծման մեջ տեսնում ենք Կովկասում այլ կոնֆլիկտային իրադրությունների արժանապատիվ լուծման գրավականը և շարունակում ենք աղոթք վերառաքել վրաց ժողովրդի բարօր և խաղաղ կյանքի համար:

Ցանկանում ենք յուրաքանչյուրին հիշեցնել, որ ներդաշնակ և արժանավայել կյանքն անմտածելի է առանց բարոյական հաստատուն հիմքի: Մեր ժողովուրդները միշտ ուժեղ են եղել Արարչի կողմից մեզ տրված անանց բարոյական արժեքների նկատմամբ ունեցած հավատարմությամբ: Այդ արժեքները ձևավորել են մեր մշակույթը, մեր կենսաձևը: Ահա թե ինչու այսօր անհրաժեշտ է վերականգնել անհատի և հասարակության կյանքի բարոյական հիմքերը, վճռականորեն դիմակայել այնպիսի արատների դեմ, ինչպիսիք են հարբեցողությունը, թմրամոլությունը, սեռական սանձարձակությունը, հանցագործությունը, բռնության պաշտամունքը և ամենաթողությունը: Հավատքն ու բարոյականությունն անբաժանելիորեն կապված են մշակույթի հետ: Մենք պետք է բոլոր ջանքերն ի գործ դնենք՝ ազգային մշակութային ժառանգությունը, հատկապես աստվածպաշտության վայրերը, սրբավայրերը և գերեզմանները պահպանելու համար: Հոգևոր, բարոյական, կիրթ մարդն իր ազգին միայն բարիք կբերի և խաղաղ կապրի հարևանների հետ:

Այսօր մենք դիմում ենք մեր կրոնների հավատացյալներին: Թույլ մի տվեք, որ ձեր հոգիներում թշնամության սերմեր ցանեն այլ դավանանք կամ ազգություն ունեցող մարդկանց հանդեպ: Աղոթքի, հաղորդակցության և համատեղ աշխատանքի միջոցով բուժեք հակամարտությունների հասցրած վերքերը: Հիշեք, որ մեր ժողովուրդները համատեղ կյանքի բազմադարյա փորձ ունեն: Մի լսեք նրանց, ովքեր ատելություն են բորբոքում: Նրանք իրենց նպատակն են հետապնդում, իսկ դուք կտառապեք, եթե նրանց հետևեք:

Մեր աղոթքներում մենք խնդրում ենք Ամենաբարձրյալին, որ մեր ղեկավարներին ու առաջնորդներին առաջնորդի խաղաղության և բարիդրացիության ճանապարհով:

***ԱԼԵՔՍԻ Բ***
***ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ***

***ԳԱՐԵԳԻՆ Բ***
***ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ***

***ԻԼԻԱ Բ***
***ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ***

***ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ԱԼԼԱՀՇՈՒԿՅՈՒՐ ՓԱՇԱ-ԶԱԴԵ***
***ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ***

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՆՈՒԻՐԵԱԼ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ԱՒՍՏՐԻԱ

Հոգու խնդութեամբ տեղեկացանք, որ յոբելեանազարդ այս տարի լրանում է քահանայական Ձեր ծառայութեան 50-ամեայ յոբելեանը: Այս յիշարժան առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրոյ ջերմ ողջոյնով Մեր սրտագին շնորհաւորանքներն ու օրհնութիւնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ, քաջիմաց ու քաջակորով սպասաւորիդ:

Սիրելի Սրբազան,

Կէս դար առաջ Դուք ծառայական ուխտով ծնրադրեցիք Տիրոջ Սուրբ Սեղանի առջեւ՝ Ձեր ուսերին առնելով կուսակրօն քահանայի քաղցր լուծը եւ նուիրական այդ օրուանից ի վեր, հաւատարիմ հոգեւորականի կոչմանը, պատրաստակամ յօժարութեամբ Ձեր անձն ու կարողութիւններն ի սպաս էք դնում ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի շինութիւն ազգային մեր կեանքի:

Նախախնամութեան առաջնորդութեամբ հովուական ծառայութեան կոչուելով Վիեննայում, աւելի քան 40 տարիներ Դուք Աւետարանի կենաց խօսքն էք ջամբում հաւատաւոր մեր զաւակներին՝ նրանց հոգիներում լուսաւոր պահելով սէրն առ Եկեղեցին Հայաստանեայց եւ նախնեաց մեր սրբազան արժէքները: Հովուական Ձեր նախանձախնդիր գործունէութեան շնորհիւ նաեւ մեր Եկեղեցին ճանաչելի դարձրեցիք Աւստրիոյ պետութեանն ու

ժողովրդին եւ միջեկեղեցական ու միջկրօնական շրջանակներում: Բարձրօրէն գնահատելով Ձեր ծառայութիւնները, յուսահոգի Վազգէն Ա Հայրապետը իր բարեհաճ կոնդակում Ձեզ կոչեց Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակի պատասխանատու պաշտօնին ու Իր միւռոնաբոյր Աջով Ձեզ շնորհեց եպիսկոպոսական Սուրբ Օծում առանց մեծացնելով Ձեր պատասխանատուութիւնը Աստուծոյ եւ ժողովրդի առջեւ:

Ուրախութիւն է Մեզ համար հաստատել, որ հովուական գաւազանի հետ միասին Ձեր ձեռքում ծաղկել է նաեւ հայոց վարդապետի յուսաբարձ առաքելութեանը մշտապէս ուղեկցած գիտնական-մտաւորականի գրիչը: Ձեր ուսումնասիրութիւններով Դուք երախտարժան ծառայութիւն էք բերում հայագիտութեանը: Մեր ժողովրդի անցեալն ու մշակոյթը ճանաչելի էք դարձնում նաեւ՝ իբրեւ բանիբուն ուսուցիչ երկար տարիներ հայոց պատմութիւն դասաւանդելով Վիեննայի Պետական Համալսարանում:

Հայրական հոգածութեամբ ու եղբայրական սիրոյ խանդութեամբ, սիրելի Սրբազան, եղել ու մնում էք բաջալերող ու աջակից շատ ու շատ երիտասարդ եկեղեցականների կրթութեան անչափ կարեւոր գործի: Մենք էլ միշտ հաճոյքով ենք յիշում Աւստրիայում Մեր ուսանելու տարիները, երբ վայելում էինք Ձեր ազնիւ եւ հոգատար վերաբերմունքը:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում յիսնամեայ ուխտապահ քահանայագործութեան Ձեր յոբելեանի առիթով Հայրապետական Օրհնութեամբ Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ՝ հոգեւոր, ազգային ու կրթական Ձեր բազմարդիւն ծառայութեանը, Սրբութիւն Սրբոց Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան նկատմամբ Ձեր նախանձախնդիր սիրոյն ու հաւատարմութեանը եւ շնորհում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ–ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ Հայրապետիս աղօթքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ կենաց արեւշատութիւն եւ օգնական ու զօրավիգ լինի, որպէսզի նոյն քաջնռանդութեամբ շարունակէք կենսագործել Ձեր յուսատու նպազանքներն ու պայծառ տեսիլքները՝ ի շինութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Արդ, «... զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ կալ» (*Բ Տիմոթ. Դ 5*), եւ «գիտասջիք զի ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ, քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք» (*Կող. Գ 24*):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 193

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՐԳՍԵԱՆ

Փառք ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած, որ պարգեւում է Մեզ շնորհը արդար ուրախութեամբ գնահատանքի արժանացնելու գովելի վաստակը մեր հոգեւորականների:

Սիրելի Տէր Հայր, մանկութեան տարիներից Ձեր մէջ ունենալով Եկեղեցու եւ հոգեւորի հանդէպ սէրն ու նուիրումը՝ դպրոցական ուսումնառութիւնից յետոյ մուտք գործեցիք Սուրբ Էջմիածնի վերաբացուած Հոգեւոր Ճեմարանի նուիրական յարկից ներս՝ ապագայում բոլորանուէր սիրով ստանձնելու հոգեւորականի քաղցր լուծն ու ծառայութիւնը:

Երիտասարդ տարիքից հովուական առաքելութեան կոչուելով Շիրակի, Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի հայոց թեմերում՝ ժրաջան ու քաջեռանդ ծառայութեամբ մեծապէս նպաստել էք մեր ժողովրդի հաւատաւոր զաւակների հոգեւոր վերարթնութեանը՝ Ձեր աւանդը բերելով հայ համայնքների զօրացմանն ու ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը:

Սիրելի Տէր Հայր, ուրախ ենք, որ ներկայիս, որպէս Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի տեսուչ, Ձեր ողջ ջանքերն ու փորձառութիւնն ի սպաս էք դնում ապագայ հոգեւորականների պատրաստման ու դաստիարակութեան յոյժ պատասխանատու եւ կարեւոր գործում՝ նրանց հոգիներում նաեւ Ձեր օրինակով զօրացնելով նախանձախնդրութիւնը առ հոգեւորականի սրբազան առաքելութիւնը:

Հայրապետական այսու Կոնդակով, բարձր գնահատելով հոգեւոր սպասաւորութեան իրականացման գործում տասնամեակների Ձեր բազմարդիւն ծառայութիւնը եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապէս դրսեւորած սէրն ու հաւատարմութիւնը, շնորհում ենք Ձեզ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ**

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ եւ պարգեւի երջանկութեամբ ու ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

*«Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե 16):*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Կոնդակս ի 1-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 212**

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՌԻՓՍԻՄԵ ՍԱՐԿԱՎԱԳՈՒՀԻ ՍԱՍՈՒՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՄԱՅՐ ՀՌԻՓՍԻՄԷ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ ՍԱՍՈՒՆԵԱՆ, ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամեայ Լոյս Խորանից Հայրապետական ողջոյն եւ օրհնութիւն ենք յղում Ձեզ Քրիստոսասէր ու բարեգործ Ձեր կեանքի յիշարժան փարեղարձի՝ կրօնաւորուհեաց յատուկ քօղ ստանալու 50-ամեակի առիթով, որի մասին տեղեակ դարձանք Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջոցով:

Ուրախութիւն է Մեզ համար գնահատանքի գիր ուղղել Ձեզ՝ հաւաստելով, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում հայուհու ծառայանուէր առաքելութեան պայծառ օրինակ են Ձեր ապրած 50 տարիները, այն օրից ի վեր, երբ խորին խոնարհումով, Աստուծոյ առաջ սուրբ ուխտով ստացաք կրօնաւորութեան յատուկ քօղը՝ ձեռամբ երանաշնորհ Գարեգին Ա Պատրիարքի:

Գալֆայեան Տան յարկից ներս Դուք նուիրուեցիք երեխաների խնամքի եւ կրթութեան ազնուագոյն կոչմանը, դառնալով շարունակողներից մէկը հոգելոյս Սրբուհի Մայրապետի մարդասիրական մեծ աւանդի եւ հաւատով զօրացեալ առաքինազարդ ու արի ոգու: Ցանձնառած բոլոր պաշտօնները Դուք իրականացրել էք առ Տէրը եւ մեր Սուրբ Եկեղեցին անմնացորդ սիրով ու նախանձախնդրութեամբ՝ բարի պտուղներ բերելով եկեղեցական մեր կեանքում: Ձեր հաւատաւոր հոգու եւ հոսաառատ ջանքերի արգասիքն է նաեւ «Թռչնոց Բոյն» մանկատանը Գայանեաց ուխտի հաստատումը: Ձեր ծառայութիւնների արդար գնահատանքով արժանացել էք լանջախաչ կրելու շնորհի եւ «Մայր»ութեան տիտղոսի, սակայն մեծագոյն պարգեւը, որ ունէք, Ձեր հոգածութիւնը վայելած, Ձեր մայրական սրտի համակ ջերմութիւնը զգացած հարիւրաւոր սան-սանուհիների՝ Ձեր զաւակների երախտագիտութիւնն է:

Բարեշնորհ սիրելի Սարկաւագուհի, բարձրօրէն գնահատելով Ձեր վաստակն ու ծառայութիւնները եւ սիրով ընդառաջելով Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մես-

բուպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Թող շնորհեալ պարգեւը Ձեզ համար լինի հաւաստի ու յոյսի նոր խրախոյս՝ զօրացեալ հոգով ու զօրեղինդ շարունակելու Ձեր ծառայութիւնը՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Կ. Պոլսի հայոց Պատրիարքութեան եւ Հայ Եկեղեցու:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ կեանքի երկար տարիներ եւ գործոց յաջողութիւններ:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 198

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ եւ առանձնակի գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը:

Բարձրօրէն գնահատում ենք որդիական Ձեր սէրն ու նուիրումը հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որը գիտէք արտայայտել աստուածահաճոյ բարի գործերով ու նախաձեռնութիւններով: Այսօր Դուք արժանիօրէն հպարտ լինելու առիթն ունէք, քանզի Ձեր ազնիւ հովանաւորութեան շնորհիւ վերանորոգուել ու նոր կեանք է ստացել միջնադարեան մեր հնագոյն սրբավայրերից մէկը՝ Գեղարքունեաց թեմի Վարդենիկ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցին, իբրեւ վկայութիւն առ Աստուած Ձեր հաւատի եւ առ հայրենին Ձեր որդիական սիրոյ: Ձեր անունը այսուհետ մշտապէս աղօթքով ու բարեմաղթութիւններով պիտի յիշուի Սուրբ Աստուածածին եկեղեցու լուսաւոր կամարների ներքոյ՝ որպէս երախտաւոր ու եկեղեցաշէն զաւակ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ուրախ է հոգին Հայրապետիս, ուրախ են եւ հոգիները Վարդենիկի հաւատաւոր մեր զաւակների, քանզի վերստին իր շնորհաբաշխ դռներն է բացել Սուրբ Աստուածածին եկեղեցին, ուր բարեպաշտ հայորդիք իրենց փառաբանական աղօթքը պիտի բարձրացնեն առ Աստուած, մխիթարուեն հոգեպէս եւ շնորհընկալը դառնան Տիրոջ առատ ողորմութեան:

Յարգարժան պրն Միքայելեան,

Ի գնահատութիւն Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց, սիրով ընդառաջում ենք Գեղարքունեաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Դերենիկ վարդապետ Դաւթեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սուրբ Աստուածածին եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւատացեալներին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարա 200

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԱՏՐԻԿ ՏԵՎԵՃՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԲԱԹՐԻՔ ՏԷՎԷՃԵԱՆ, ՈՐ Ի ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ

Յարգարժան պրն Տէվէճեան,

Հոգու բերկրանքով տեղեկացանք, որ առաջիկայ նոյեմբեր 15-ին Փարիզի Առաջնորդարանի եւ ՀԲԸ Միութեան համատեղ նախաձեռնութեամբ ի պատիւ Ձեզ կազմակերպւում է մեծարման հանդիսութիւն:

Հայրապետիս համար ուրախալի է, որ Դուք՝ արժանաւոր զաւակը մեր ժողովրդի. հաւատաւոր գործերով, ազնիւ ծառայութիւններով ու վաստակով բարի համբաւ ու ճանաչում էք վայելում Ֆրանսիայում: Տարիներ շարունակ զբաղեցնելով բարձր ու պատասխանատու պաշտօններ քաղաքապետից մինչեւ պետական հրեսփոխան ու պետական նախարար՝ Դուք Ձեր սէրն ու նուիրումը եւ իրաւաբանի Ձեր գիտելիքներն ու կարողութիւնները ի սպաս էք դնում Ֆրանսիայի պետական-հասարակական կեանքի առաջընթացին եւ հայ կեանքի զօրացմանն ու պայծառացմանը:

Այսօր բարեպատեհ առիթն ունենք Մեր մասնաւոր գնահատանքը բերելու Ձեզ Ֆրանսիայում Ձեր բազմաբեղուն գործունէութեան համար, որն իրաւամբ արժանացրել է Ձեզ հայորդեաց անկեղծ սիրուն ու յարգանքին: Քաղաքական ասպարէզում վաստակեալ հեղինակութեամբ Դուք կարեւոր աւանդ էք բերել Ֆրանսիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը, հայրենապաշտ ու ծառայասէր ոգով Ձեր ջանքերն ու կարողութիւնները ի սպաս էք դրել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունէութեանը՝ նախանձախնդրօրէն ծառայելով Միութեան կողմից կեանքի կոչուող եկեղեցանուէր ու ազգաշէն ծրագրերի իրականացմանը: Մեր Սուրբ Եկեղեցու, ՀԲԸ Միութեան Վարչութեան եւ Ֆրանսիայի մեր բարեպաշտ ժողովրդի բաղձանքն է արժանաւորս գնահատուած տեսնել Ձեզ եւ Ձեր վաստակը:

Յարգարժան պրն Տէվէճեան, սիրով ընդառաջելով Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանի ազնիւ խնդրանքին եւ բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները ֆրանսիայի պետութեան եւ ազգային մեր կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

# ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը։

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը մեր սուրբ հարց բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց յաջողութիւններ՝ ի բարօրութիւն Ֆրանսիայի եւ ի շինութիւն ազգիս հայոց։

Թող Բարին Աստուած հանապազ Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի եւ բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի Ձեզ եւ Ձեր ընտանեաց սիրեցեալ անդամներին։

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն։*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Հոկտեմբերի
Ցամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 201

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՎԱՐՈՒԺԱՆ ԲՈՒՐՄԱՅԱՆԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՒՐՄԱՅԵԱՆ, ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՈՒԼՕ, ԲՐԱԶԻԼԻԱ

Համազգային մեր հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեզ եւ քաջատեղեակ լինելու ազնիւ հայորդուդ եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեանը, որի շնորհիւ այսօր Ձեր անունն արժանիօրէն քանդակուած է Վեհարանի սիւներին արձանագրուած Մայր Եկեղեցու բարերարների անուանաշարքում:

Առ Աստուած հաւատով եւ առ հայրենի ժողովուրդը սիրով Դուք Ձեր բարի աւանդը բերեցիք Սան Փաուլոյի հայկական եկեղեցու կեանքում, որի նորոգութեան եւ բարեզարդման աշխատանքները փարիններ առաջ կատարուեցին Ձեր հովանաւորութեամբ: Նորոգուած սրբավայրի լուսաւոր կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում՝ մշտապէս երախտագիտութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով Ձեր բարի գործերին:

Եկեղեցանուէր ու ազգասէր ոգով եւ ազնիւ նուիրատուութիւններով Դուք Ձեր ծառայութիւնը բերեցիք նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը, որով արժանացաք Երջանկայիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարձր գնահատանքին, ով Ձեր կուրծքը զարդարեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատուոյ բարձրագոյն՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Մեծարգոյ պրն Պուրմայեան, Երկնաւորի անիմանալի եւ անքննելի կամքով Մեզ է վերապահուել ուրախութիւնը Հայրապետական Սրբազան այս Կոնդակով Մեր օրհնութիւնը բերել Ձեզ՝ հաստատելով «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանի պարգեւը Ձեզ:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւատացեալներին:

*Որք յերրուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 197

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Միքայել Գրիգորյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Մանվել Գրիգորյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Յուրի Խաչատուրով (Արարատյան Հայրապետական թեմ)
Արա սարկավագ Ճգնավորյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Բարսեղ Գարթալյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր է տրվել.**
Պերճ Կյուլպեն (Ավստրալիայի հայոց թեմ)
Կարո Մեթյան (Ավստրալիայի հայոց թեմ)
Սարգիս Ղազարյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն)
Գուրգեն քահանա Մուրադյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Նշան սարկավագ Չափրճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Ամերիկայի Հայկական Համագումարին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Մեթրո Ուեսթի հայ համայնքին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Սուրբ Վարդան եկեղեցու համայնքին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
ՀԲԸՄ Լոնդոնի մասնաճյուղին (Անգլիայի հայոց թեմ)
«Նոր սերունդի ձայն» ամսագրի խմբագրությանը (Անգլիայի հայոց թեմ)
Սուրբ Երրորդություն եկեղեցու համայնքին (Կանադահայոց թեմ)

**Ավագության պատիվ է տրվել.**
Ստեփան քահանա Տեր-Գևորգյանին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՈԳԵԼՈՒՅՍ ՌՈԲԵՐՏ ՄԱՎԻՍԱԿԱԼՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Սրտի խոր ցավով տեղեկացանք մեր Եկեղեցու արժանավոր զավակ Ռոբերտ Մավիսակալյանի անժամանակ մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության Մեր անկեղծ վշտակցությունն ենք բերում հանգուցյալի այրուն, ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Շնորհաշատ լրագրողի անունը թանկ ու սիրելի է մեր ժողովրդին, որ երկար տարիներ առիթն ունեցավ հեռուստաեթերից լսել նրա խոսքը՝ մտահոգված հասարակական խնդիրներով, նախանձախնդիր Հայաստանի անկախության վերականգնմամբ ու առաջընթացով: Մեր լրագրողական պատմության մեջ նա միշտ պիտի հիշվի մտավորական իր նկարագրով, ով իր հայրենասեր ու ազնիվ հոգու ողջ նվիրումը ներդրեց իր գործունեության մեջ՝ իբրև ծառայություն Հայրենիքին ու իր ժողովրդին:

Առ Աստված սրտաբուխ աղոթքով հայցում ենք, որ Տերն Իր արարչական սիրով երկնային բարձունքներում ընդունի իր հավատավոր ծառայի լույս հոգին և հավիտենական հանգստություն պարգևի երանական խաղաղության մեջ: Թող Տերը Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Ձեզ և Ձեր բոլոր հարազատներին:

Խունկ և Աստվածային օրհնություն Ռոբերտ Մավիսակալյանի բարի հիշատակին:

Վշտակից սիրով և
Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 հոկտեմբերի 2003 թ.

# ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

Հոկտեմբերի 19-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոբելյանական տարվա հերթական կի-րակի օրը, Ս. Էջմիածինը հյուրընկալել էր հայոց ազգային բանակի ուխտավոր բարձրաս-տիճան զինվորականների՝ առաջնորդությամբ ՀՀ պաշտպանության նախարար փիար Սերժ Սարգսյանի: Ուխտավորների մեջ էին ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ պաշտպանության փոխնախարարները և բանակի բարձրաստիճան սպա-յական կազմը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց հայոց բանակի հոգևոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբղ. Սա-նոսյանը:

Ս. Պատարագի ընթացքում հանուն Վեհափառ Հայրապետի հայոց բանակի ուխտա-վորներին և հյուրերին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Ապա ուխտավորներին իր պատգամը հղեց պատարագիչ Հայր Սուրբը (տե՛ս էջ 57):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կա-տարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ արցախյան ազատամարտում զոհված հայ զորական-ների հոգու հանգստության համար:

Ս. Պատարագից հետո Վեհարանում ուխտավորներին ընդունեց Ամենայն Հայոց Հայ-րապետը: Հանդիպության ժամանակ ներկաներին ողջունեց Սերժ Սարգսյանը:

«Այնպես է ստացվել մեր պատմության ընթացքում, որ զինվորը, զորավարը հավատ է քարոզել, իսկ եկեղեցականը սուրը ձեռքին առաջնորդել է մեր ժողովրդին ազատագրական պայքարազմի: Եվ ես շատ ուրախ եմ, որ այսօր մեր բանակի մեջ կա անսասան հավատ, մեր բանակի մեջ կա մեծագույն հարգանք Հայոց Եկեղեցու, նրա Հայրապետի նկատմամբ: Ուրախ եմ նաև այսօր մեկ անգամ ևս հավաստիացնելու, որ հայկական բանակն այսօր քան երբեք ամուր է, այսօր քան երբեք ի վիճակի է պաշտպանելու մեր Հայրենիքի սահման-ները, ինչու չէ՝ նաև կյանքով կանգնելու հանուն մեր հավատի»,- իր խոսքում նշեց նախա-րարը:

Այնուհետև հայոց բանակի բարձրաստիճան սպայական կազմին իր օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը:

«Հայոց բանակի ուխտի այս օրը աղոթք և մեկ պատգամ ունենք, որպեսզի չմոռանա՛ք ձեր նվիրումի և ձեր սիրո մեջ՝ առ Հայրենին և առ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպեսզի արիությամբ շարունակե՛ք ձեր ընթացքը հայրենակերտումի, իրակա-նությո՛ւն դարձնենք երազները մեր ժողովրդի զավակաց, իրականությո՛ւն դարձնենք Հայրե-նիքի համար իրենց կյանքը նվիրաբերած և այժմ Եռաբլուրում հանգչող ձեր մարտակից ըն-կերների: Պարտք ունենք ձեր ուսերին և փառք ունենք ձեր ուսերին՝ ծառայությամբ ապահո-վելու խաղաղությունը ինչպես Հայոց երկրի, այնպես էլ Հայոց հողում հանգչող ձեր եղբայրների մարտակից եղբայրների»,- ասաց Նորին Սրբությունը:


ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ
ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԻՐ ԽՈՍՔՆ Է ՈՒՂՂՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ի գնահատություն իրենց ծառայության՝ Գարեգին Բ Հայրապետը պաշտպանության նախարարի առաջադրությամբ և հայոց բանակի հոգևոր առաջնորդի միջնորդությամբ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշան հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին, գեներալ-լեյտենանտ Յուրի Խաչատուրովին, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանին:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկավ ՀՀ պաշտպանության նախարարության Սպայի տան «Զորական» համույթը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի քահանայական ձեռնադրության 50-ամյակին: Հանդիսությանը ներկա էին այս օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվող թեմակալ առաջնորդներ, ինչպես նաև Հայաստանի գիտական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

1953 թ. ավարտելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի դպրեվանքը՝ Մեսրոպ Սրբազանը ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Հոգևոր ծառայությանը զուգահեռ Սրբազան Հայրն այս բոլոր տարիների ընթացքում զբաղվում է նաև գիտական գործունեությամբ: Մեսրոպ Սրբազանը բազմաթիվ կրոնական դասագրքերի և ուսումնասիրությունների հեղինակ է: Ուշագրավ են նրա՝ Ստեփանոս Սյունեցուն, Սեբեոսին և Վանանդեցուն նվիրված ուսումնասիրությունները: 1982 թվականից ի վեր Մեսրոպ Սրբազանը հայոց պատմություն և գրաբար է դասավանդում նաև Վիեննայի Բյուզանդագիտական համալսարանում:

Հանդիսության նախաձեռնողները՝ ակադեմիական ինստիտուտների գիտնականներ Պարույր Մուրադյանը, Բաբկեն Հարությունյանը, Պավել Չոբանյանը և Գևորգ Տեր-Վարդանյանը, ըստ արժանվույն գնահատեցին Մեսրոպ Սրբազանի ներդրումը հայագիտության ասպարեզում: Գիտնականները յուրօրինակ նվեր մատուցեցին գիտնական Սրբազանին՝ ներկայացնելով արժեքավոր զեկուցումներ հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմությունից:

Հանդիսության ավարտին Մեսրոպ Սրբազանի՝ նվիրյալ հոգևորականի ու գիտության մշակի գործունեությունը բարձր գնահատեց և Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով Մեսրոպ Սրբազանը վերջերս պարգևատրվել է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով (տե՛ս էջ 28):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԳԵՎՈՐԳ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՀԵՏ



ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԳՈՐԾԻ ՈՐՊԵՍ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոկտեմբերի 6-8-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) Հայաստանի Կլոր Սեղանի կենտրոնական ղեկավար խմբի տարեկան հաշվետու ժողովը:

Ժողովի բացմանը ներկաներին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Կլոր Սեղանի գործունեությունը՝ ընդգծելով նրա բերած նպաստը Հայաստանի բարգավաճմանը: Հայաստանի ներկա քաղաքական-տնտեսական վիճակի մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԱԳՆ փոխնախարար Ռուբեն Շուգարյանը:

ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղանը Մայր Աթոռի հովանու ներքո ստեղծվել է դեռևս 1997 թ.՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այս տարիների ընթացքում ԵՀԽ հայաստանյան ներկայացուցչությունն իրականացրել է գյուղատնտեսական, կրթական, եկեղեցաշինական, սոցիալական և վարկային բազմաթիվ ծրագրեր:

Եռօրյա նիստերի ընթացքում ժողովականները՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիների, ԵՀԽ-ի, եվրոպական էկումենիկ կազմակերպությունների (Շվեյցարիա, Գերմանիա, Նորվեգիա և այլն), ինչպես նաև հայաստանյան բարեգործական հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, քննարկեցին Կլոր սեղանի կողմից իրականացված ծրագրերն ու դրանց արդյունավետությունը:

Ժողովի ավարտին ստորագրվեց մի փաստաթուղթ, ըստ որի ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղանն այսուհետ կգործի իբրև բարեգործական հիմնադրամ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամ» անվամբ: Տեղի ունեցավ նաև նորաստեղծ կազմակերպության հիմնադիր ժողովը, որի որոշմամբ կազմակերպության հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկվեցին ներկայացուցիչներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց (ի դեմս Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի և Տ. Վահրամ քհն. Մելիքյանի), Հայ Ավետարանական և Հայ Կաթոլիկե Եկեղեցիներից, ինչպես նաև «Շեն» և World Vision բարեգործական կազմակերպություններից: Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրվեց Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, գործադիր տնօրեն նշանակվեց Կարեն Նազարյանը:

Միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամը կշարունակի գործել Ս. Էջմիածնի տարածքում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

## Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հոկտեմբերի 2003 թ.)

*«Էջմիածին նաւ փրկութեան,*
*քան զՆոյի մեծին տապան»:*
(Ղազար Կաթողիկոս Ջահկեցի)

Ձերդ Սրբութիւն,

Սիրելի հաւատացեալք եւ ուխտաւորներ,

Այսօր ուխտի օր է՝ յատկապէս Ասորիոյ Հայ Եկեղեցական համայնքի համար: Եկած են մի խումբ ուխտաւորներ՝ հոգեպէս վերանորոգուելու, հոգեկան պայծառակերպութիւն ապրելու բազմադարեան այս սուրբ Տաճարի մէջ, որու կառուցման 1700-ամեակը կը տօնէ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Այս պահուն Ս. Էջմիածնայ hնամենի Տաճարի մէջ՝ մենք կը զգանք հոգին մեր նախահայրերի, որոնք ապրած են եւ գործած Մայր Աթոռում: Այստեղ առաջին առթիւ ներկայ է Սուրբ Գրիգոր, Լուսաւորիչն Հայաստան աշխարհի՝ իր ամբողջ բազմավաստակ սերունդով, Արիստակէսից մինչեւ Ներսէս Մեծ Հայրապետ եւ մինչեւ Հայութեան մտքի Լուսաւորիչ Սահակ Պարթեւ Կաթողիկոս: Այստեղ ներկայ է Թարգմանչաց հոյլը՝ հայկական Այբուբենի արարող Մեսրոպ Մաշտոց վարդապետն իր աշակերտներով, որոնք թարգմանական բարձր արուեստով ծայացուցին Սուրբ Գիրքը եւ, ինչպէս Կորիւն Աքանչելին կը բանաձեւէ, Մարգարէները՝ առաջնորդութեամբ Մովսէսի, Առաքեալները՝ գլխաւորութեամբ Պօղոսի, եւ լոյսի աղբիւր չորս Աւետարանները սկսան հայերէն խօսիլ եւ Հայաստան աշխարհն իր քրիստոնէական եւ հոգեւոր նկարագրով դարձաւ պայծառափայլ եւ նախանձելի:

Որքան սքանչելի է եւ հոգեթով այս պահը, երբ Ս. Պատարագի մատուցմամբ եւ հոգեպարար երգեցողութեամբ կը հաղորդուինք Յիսուս Քրիստոսով եւ մեր հայրերի ժառանգութեամբ: Մեր Տիրոջ մարմինն ու արիւնը եւ մեր հայրերու հոգին կը սրբացնեն ու կը պայծառացնեն մեր ներաշխարհը, եւ մենք Աստուծոյ օրհնութեամբ կը դառնանք նոր արարածներ, նոր քրիստոնեաներ, Լուսաւորչի նոր զաւակներ, որոնք կը սիրեն ազնուութիւնն ու բարութիւնը, իրաւօգնութիւնը, արդարութիւնն ու խաղաղութիւնը:

ԺԸ դարու մեր Հայրապետներէն Ղազար Ջահկեցի (1737-1751 թթ.), որ ապրած եւ գործած է Մայր Աթոռոյ մէջ եւ աղօթած Ս. Էջմիածնի սրբախորհուրդ Տաճարում, զովաբանական տաղի մը մէջ կը գրէ.

*Էջմիածին նաւ փրկութեան*
*քան զՆոյի մեծին տապան*
*ծովահեղձող իշխանութեան,*
*եւ նաւաբեկող զնորոց արեան:*

Բնականօրէն բազմարդիւն մատենագիր Ղազար Ջահկեցի Կաթողիկոս Էջմիածին անուան տակ կը հասկանայ ոչ միայն Մայր Տաճարը, այլեւ Մայր Աթոռ եւ առհասարակ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին: Այս մտամերձեցմամբ՝ յստակօրէն եւ ամբողջական բովանդակութեամբ հասկանալի կը դառնայ Հայրապետին խօսքը, որ նկատի ունի Հայաստան աշխարհի երկհազարամեայ քրիստոնէական պատմութիւնը: Դժբախտաբար հայ ժողովրդի պատմութիւնը լի է ոլորքերով եւ դրուագներով «գետոց արեան»:

Ծաւալիօրէն հայ ժողովուրդը յաճախ ինկած է եւ տառապած օտար ճնշիչ եւ հեղձուցիչ իշխանութեանց լուծի ներքոյ եւ այդ երկարատեւ շրջաններուն Ս. Էջմիածինն է եւ կամ Էջմիածնով խորհրդանշուող Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին է, որ իբր «ծովահերձող իշխանութեան եւ նախանցող գետոց արեան», պաշտպանած, մխիթարած եւ առաջնորդած է տառապակոծ մեր ազգը: Բաւ է նշել օրինակի, որ Անիի կամ Բագրատունեաց թագաւորութեան 1045 թուին բռնագրաւումէ եւ Կիլիկիոյ հայկական արքայութեան 1375 թուին անկումէն ետք՝ մինչեւ 1918 թ. Հանրապետութեան գոյառումը, Հայութիւնը զուրկ եղած է պետականութենէ:

Պատկերը ամբողջացնելու նպատակաւ՝ բաւ է նշել 1915 մինչեւ 1917 տարին տեւող Ցեղասպանութիւնը, որ ոչ միայն մէկուկէս միլիոն նահատակներ խլեց, այլեւ պատճառ դարձաւ Արեւմտեան Հայաստանի կորստեան եւ առիթ հանդիսացաւ հայ մշակութային հազարաւոր կոթողներու եւ իրերու ոչնչացման՝ կազմակերպմամբ եւ ձեռամբ օսմանեան երիտթուրքերու: Ջարդի եւ աքսորի ահաւոր օրերուն Հայ Եկեղեցին էր, որ իր բազմահարիւր սպասաւորներու զոհողութեամբ, նահատակութեամբ եւ առաջնորդութեամբ հանդիսացաւ «նաւ փրկութեան», աւելի փրկարար՝ ինչպէս Ջահկեցի կ'ըսէ, «քան զՆոյի մեծի տապան»:

Ս. Գրոց պատմութենէն գիտենք, թէ Նոյ Նահապետ իր հսկայածաւալ տապանով փրկեց մարդկային ցեղն ու կենդանական աշխարհը եւ կայք հաստատեց Արարատեան Երկրի բարձրաբերձ լերան վրայ: Նմանապէս Հայոց պատմութենէն գիտենք, թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի տպաղացած եւ կառուցած Ս. Էջմիածինը, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Արարատի փառքին եւ օրհնութեան ներքոյ, կորուստէ փրկեց հայ ազգը եւ ազգային հոգեւոր-մշակութային արժէքներն ու ստեղծագործութիւնները:

Այսօր, բազմաչարչար Ազգդ իմ, հակառակ բազում կոտորածոց եւ տառապանաց, կա՛ս, գոյութի՛ւն ունիս եւ կ'ապրի՛ս քու հայրերու պատմական հողին վրայ եւ կարող ես հպարտ լինել եւ բարձրագլուխ յառաջանալ դէպի պայծառ ապագայ: Դու կարող ես հպարտ լինել քո պետական անկախութեամբ եւ անկախացեալ Արցախով. դու կարող ես հպարտ լինել քո ազգային Լուսաւորչեան Եկեղեցիով եւ բազմահամար հնադարեան եկեղեցական կառոյցներով. դու կարող ես հպարտանալ քո Մատենադարանով եւ հազարաւոր ձեռագրերով, արուեստի եւ մշակոյթի անհամար ստեղծագործութիւններով, Մաշտոցեան գրով եւ գրականութեամբ եւ ի վերջոյ՝ հրաշագեղ Սեւանայ ծովով եւ սիգապանծ Արարատի փառքով:

Այս տարի սուրբ տօնն է Էջմիածնի կառուցման եւ շքեղութեան 1700-ամեակի: Դ դարու սկիզբը Միածին Որդին Աստուծոյ իջաւ ի Հայաստան աշխարհ, Ս. Գրիգորի միջոցաւ լուսաւորեց հայ ժողովրդի հոգին եւ նրա տեսիլքի ընդմէջէն գծեց պատկերը այս փառաւոր Տաճարի. «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»: Միածնի փառաց լոյսը անմար

մնաց Հայոց հոգւոյն մէջ եւ դարեր շարունակ հայ ազգը, ի գին մեծամեծ զոհաբերութեանց, հաւատարիմ մնաց Սուրբ Աւետարանին եւ աւետարանական պատգամներուն:

Այսօր եւս Ս. Էջմիածինը եւ Ս. Էջմիածնի գլխաւորութեամբ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին կը շարունակեն հզօր թափով իրենց կրօնական-մշակութային-ազգային առաքելութիւնը եւ ճակատագրական դեր կը կատարեն հայ ժողովրդի կեանքին մէջ՝ թէ՛ ի սփիւռս աշխարհի եւ թէ՛ ի Հայաստան: Այսօր եւս Հայ Եկեղեցին, կեդրոն ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, կը հանդիսանայ «նաւ փրկութեան քան զՆոյի մեծի տապան» բոլոր անոնց համար, որոնք կը համախմբուին իր մէջ: Մասնաւորաբար օտար երկնքի տակ եւ օտար հողերու վրայ ապրող հայորդիք՝ Նոյն նոր Տապանի մէջ կարող են ընդունիլ իրենց կրօնական-հոգեւոր եւ ազգային փրկութիւնը: Այս առնչութեամբ վստահ ենք, թէ Ս. Էջմիածնի զօրութիւնը յընթացս ժամանակի պիտի տարածուէ եւ Հայոց աշխարհէն վանէ նորաբոյս, վարձկան եւ աղանդաւորական քարոզիչներն ու յափշտակիչ գայլերը:

Այսօր նաեւ օր է փառաբանութեան, փառք կու տանք Աստուծոյ՝ մեր ժողովրդին տուած իր բոլոր բարեաց եւ շնորհաց համար: Փառք Աստուածային Նախախնամութեան, որ վերջին հարիւրամեակին մեզ շնորհեց կարող Հայրապետներ, ինչպէս Գէորգ Դ. հայրենասէր Կաթողիկոսը, կամ Վազգէն Ա. շինարար Կաթողիկոսը եւ կամ մատենագիր եւ հռետոր Գարեգին Ա. Կաթողիկոսը: Մենք փառք կու տանք Աստուծոյ, որ Տէրն այս դժուարին եւ ճակատագրական օրերուն Իր Միածին Որդւոյն Ճարտարապետած Աթոռին կոչեց արի եւ քաջ, աշխոյժ եւ եռանդուն, արթուն եւ իմաստուն հովուապետ մը՝ յանձին Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի:

Այսօր, ոսկեայ աշնան փառաւոր առաւօտուն, ի ժամ Ս. Պատարագի, աղաչեմք զբարեխնամողն Աստուած եւ խնդրեմք ի նմանէ, որպէսզի չըէ հայ ժողովուրդը, չըէ իր փոքրիկ հօտը, որ վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց՝ միշտ պատարագուած է պատմութեան զոհասեղանին վրայ:

Այսօր, ոսկեայ աշնան արեւաշող առաւօտեան, ի ժամ Ս. Պատարագի, կը դիմենք առ Աստուած եւ բոլորս միաբանաբար կ'երգենք եւ կ'ըսենք.

*Բարեխօսութեամբ վերին քո զօրաց,*
*Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազանց:*

# Տ. ԵԶՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 հոկտեմբերի 2003 թ.)

*«Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն... Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան»:*
(Հովհ. Ա 1-2, 4)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Բերկրանքով անհուն առլեցուն հոգիս, երկնապարգև շնորհով պարփակված անձս մղում են ինձ Բարձրյալից շնորհատու բարյաց հայցելու համարձակություն բանալ գթերանս մեր գոհություն և փառք օրհներգելու երկնային Հորը մեր, Որի կամոք մեծն Ռուսիայի հայոց թեմի ազնվասիրտ, բարեպաշտ հայորդիք՝ եկեղեցական, ազգային, հասարակական, մշակութային կառույցի ներկայացուցիչներ, եկել են սիրո կարոտը ծրարած իրենց սրտերում, իրենց հոգևոր մոր՝ Ս. Էջմիածնի սիրառատ գրկում, համախմբված ո՛չ միայն հագեցնելու պապակը, ծարավն իրենց որդիական սիրո, ո՛չ միայն վերահաստատելու հավատքն իրենց ինքնանվիրումի, ո՛չ միայն վերանորոգելու ուխտն իրենց հավատքի, այլ նաև որդիական սիրով, որդիական խոնարհությամբ բերելու իրենց անմնացորդ սերը, ամբողջական նվիրումը և հավատարմությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և երկրավոր Հոր՝ Հայրապետիս ազգիս Հայոց՝ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդին, միևնույն ժամանակ սրտագին, այն ազնիվ բարեմաղթանքներն ու ցանկությունները, որ ունենք մենք այս հոբելյանական տարվա ուրախ առիթով:

Սիրելի բարեպաշտ հայորդիք. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն:... Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան»: Թող ներվի ինձ սուրբգրական այս խոսքերի վերաձևակերպմամբ ասելու համար. «Ի սկզբանն էր Էջմիածինը, Էջմիածինն էր առ Աստված, Էջմիածինն է կյանքը և Նրանով է լույսը մարդկանց»: Թող այս խոսքերը մեղանչում չընկալվեն, որովհետև մենք եկել ենք ուխտի այն գիտակցությամբ, որ Հայոց երկրում Աստծո կամքով սուրբ լեռան վրա իջավ Նոյյան տապանը, և այս օրհնյալ երկիրը դարձավ նախահայրենիքը մարդկության: Տարիներ անց Հայոց հողում բարձրացավ երկրորդ Արարատը, ուր իջավ Միածինը Իր տապանով և կանգնեցրեց Ս. Էջմիածինը: Էջմիածին, որը ո՛չ թե քարեղեն կառույցն է, այլ խորհուրդը մեր հայության, խորհուրդը մեր հավատքի և հոգու, որ 17 դար մաքառել է, որը 17 դար մարտնչել է, որը 17 դար արարել է ու կերտել ի փառս Աստծո, ի պայծառություն հայոց ազգի ու երկրի:

Մենք գիտակցում ենք նաև, որ մեր համազգային մարմինը, որ ժողովուրդն է հայոց, ունի իր սիրտը՝ Հայրենիքը մեր, ազատ Հայրենիքը, իսկ այդ սրտի, այդ համազգային մարմնի

կենդանարար հոգին դա Աթոռն է այս սուրբ. Էջմիածինն է 1700-ամյա. առանց որի բարախ-
ման՝ վտանգված է կյանքը հայության: Եվ տարագիր զավակունք մեր ժողովրդի այս գի-
փակցությամբ. այս համոզումով ուր որ կայք են հաստատել. ապրել են այս հավատար-
մության մեջ. այս նվիրումի մեջ. որովհետև գիտակցել են, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. որ-
պես հոգևոր ծնող մեր ժողովրդի. չի՛ հանդուրժի այն զավակների օտարացումը. որոնք կա-
րող են ինչ-ինչ շահերից դրդված, ցանկություններից մղված մոռանալ, ուրանալ իրենց մո-
րը: Եվ այս խորհրդի մեջ է մեր հարատևության երաշխիքը որպես Առաքելահաստատ. Լու-
սավորչատեսիլ, Աստվածահիմն Եկեղեցի՝ Ս. Էջմիածին Տաճարով:

Մենք գիտակցում ենք նաև, որ մեր ներկայիս կյանքը միահյուսված է Էջմիածնով, 1700-ամյա պատմությամբ մեր անցյալի բոլոր դրվագների ու ժամանակների հետ, որ այս սրբավայրից է մեր ազգին տրվել գիրը հայոց, որ այս սրբավայրով է Աստված հայերեն խոսել Աստվածաշունչ մատյանով, որ այս հավատքի լույս, կենարար աղբյուրից է ծնվել հայոց երգը, մշակույթը, պատմությունն այնպիսի անձերով, ինչպիսիք են Նարեկացի, Շնորհալի, Տաթևացի, Թորոս Ռոսլին, Մոմիկ և, ինչու չէ, մեր այսօրվա մեծագույն գործիչներ, ազգային բարերարներ ու հերոսներ, որոնք իրենց նվիրումով ու հավատքով դարձել են մեր արժանապատվությունը, դարձել են ուղենիշը մեր կյանքի, որ ներդաշնակ հաջորդականությունն է, շարունակությունն է Ս. Էջմիածնի առաքելության:

Սիրելի հայորդիք. Էջմիածինը մեր ազգային ինքնության կերպարն է, Էջմիածինը խորհուրդն է մեր հարատևության ու երաշխիքը մեր գոյության: Եվ այս ամենը, սիրելիներս, միայն անցյալին ուղղված չէ, որ քրիստոնեական հավատքով այդ ոգին հայկյան շաղախված այսօր բերել է մեզ այստեղ ոգեկոչելու, պանծացնելու, որովհետև մենք ենք այսօր մարմնավորողներն այդ ոգու, շարունակողները նրանց գործի և այսօրն է կանչում մեզ պատասխանատվության՝ մեր վերաբերմունքն ինչպիսին է լինելու հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, նրա կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որքանո՞վ ենք մենք հետևելու այս Ս. Սեղանից պատգամվող, քարոզվող ավետարանական ճշմարտություններին, որ 1700 տարիներ ի վեր պատգամում է մեզ Ս. Սեղանն այս: Որքանո՞վ ենք մենք հավատարիմ մնալու այս ուխտին, որովհետև այս Սեղանը չի՛ քարոզել միայն այդ հավատարմությունը, այստեղ պատգամվել է մշտապես սեր առ հայրենին, որովհետև այդ սիրո մեջ է երաշխիքը մեր հայրենիքի շենության և այդ սերը, որպես հայրենասիրություն, քրիստոնեական ընկալումով փոխանցվում է նաև որպես մարդասիրություն, եղբայրսիրություն:

Ահա այս պատճառով մենք ունենալով առանձնակի ուրախությունը, որ այդ եղբայրսիրության, այդ մարդասիրության ոգին հարազատացրել է մեզ մեր քրիստոնյա հավատակից եղբայր ռուս ժողովրդի հետ, ուր մենք 100-ամյակներ ապրելով իբրև հավատարիմ զավակները Ս. Էջմիածնի, իբրև նվիրյալ զավակները մեր ազատ հայրենիքի, համարվելով ազնիվ քաղաքացիներն ու զավակները մեր երկրորդ հայրենիքի՝ կառուցում ենք, զորացնում ենք, շենացնում ենք եղբայրությունը մեր ժողովուրդների և հայրենիքները մեր երկու:

Զինված ենք Ս. Էջմիածնի հավատքով ու սիրով, որը 1700 տարիներ ի վեր ցրել է խավարը մեր կյանքից, փարատել է մութն ու մշուշը մեր հոգիների և քանիցս նպաստել մեր հոգու պայծառակերպությանը: Եվ այդպիսի պայծառակերպության պահ է այսօր մեզ՝ Ռուսահայոց թեմիս հավատացյալների համար, որ մղում է մեզ կրկին անգամ ասելու Թաբոր

լեռան վրա Պայծառակերպության ժամանակ հնչած ավետարանական խոսքը. «Բարուոք է մեզ աստ լինել». փնտռել, զորանալ, լիցքավորվել, ներշնչվել Հայոց Հայրապետի սիրուց ու նվիրումից, մեր հոգևոր նախնիների ծառայասիրությունից ու հավատարմությունից, որպեսզի մենք կարողանանք արժանի ժառանգներն ու հետնորդները կոչվելու մեր օրհնյալ ազգի, մեր շնորհընկալ ազգի, մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Եվ այս առումով, սիրելի բարեպաշտ հայորդիք, աղոթք ենք վերառաքում առ Բարձրյալ Տերը մեր, որ ամուր ու անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որովհետև կյանքն է նա մեր հայության, հոգին է մեր ժողովրդի և խավարացրիչ լույսն է մեր կյանքի:

Թող Աստված այս հավատարմության մեջ, այս գիտակցության մեջ օրհնի, զորացնի մեզ ամենքիս այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

# Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 հոկտեմբերի 2003 թ.)

Սիրելի հավատավոր ժողովուրդ. սրանից 40 օրեր առաջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սրբազան և խնկաբույր Տաճարում ես և իմ օծակից եղբայրը ծնրադիր ուխտեցինք և քահանայության չափազանց պատասխանատու այս աստիճանին կոչվեցինք. որի համար Օշականի այս ամենասուրբ մաշտոցավայրից մեր զգացմունքներն աղոթք դարձրած միախառնելով խունկի այս անուշահոտությանը վերառաքում ենք Բարձրյալն Աստծուն՝ հայցելով Իր մշտառատ շնորհները մշտարթուն կերպով կրելու Իր ծանր և միաժամանակ քաղցր լուծը: Մեր որդիական խորին երախտագիտությունը ազգիս Վեհափառ Հայրապետին, իր հայրական հոգածության և վստահության համար: Խոնարհ սրտի անկեղծ շնորհակալություններս Պոլսի միաբան Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանին, ով հանձն առավ մեզ քահանայության կոչել և մեր հոգևոր ծնողը լինելու: Մասնահատուկ շնորհակալություն Արագածոտնի առաջին թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին, ում հայրական հոգածու աչքի ներքո առաջին անգամ ոտք դրեցինք հոգևոր ասպարեզ: Շնորհակալություններս նաև վիճակիս Հայրապետական պատվիրակ Տ. Թորգոմ արք. Տոնիկյանին, մեր այսօրվա այս Ս. Պատարագի արտոնության համար:

«Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ,
Բերելով ըզգիր օրինաց ի Հայաստան աշխարհ,
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ»:
(Շարական)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ:

Ամեն տարի, առանձնակի հուզմունքով, սրտագին աղոթքներով և ազգային արժանապատվության ջինջ զգացմունքների ամբողջ ջերմությամբ են դիմավորում Սրբոց Թարգմանչաց տոնը մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը, քանի որ այդ տոնը միմիայն Ս. Մեսրոպի ու Թարգմանիչ վարդապետների տոնը չէ, այլ նաև հայ գրի ու գրականության, հայ դպրության տոնն է:

Որտեղի՞ց և ինչո՞ւ է սկիզբ առել այդ խորունկ երախտագիտությունն ու հարգանքը Օշականի այս մեծ սրբի և նրա աշակերտների հանդեպ:

Մեր ժողովրդի պատմության մեծ ու փացնապայծ դարաշրջաններից մեկն է եղել Ս. Մեսրոպի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանը: Քաղաքական հեղհեղուկ իրադրությունների մեջ, հզորագույն պետությունների ճնշման ներքո քաղաքականապես, փրկնտեսապես և հոգեպես փշրվում ու պառակտվում էր մեր ժողովուրդը:

Առորին մշակութային-եկեղեցական իր ազդեցության գոտին ջանում էր փարածել հայ ժողովրդի կյանքի շրջագծի մեջ:

Նրա հետ մրցումի մեջ էր մտել հույնը՝ զորացած Բյուզանդական կայսրության շքեղափայլ փառքի ճաճանչող զորությամբ և քաղաքական ու քաղաքակրթական հրապուրիչ ներգործությամբ:

Պարսիկն իր դարավոր ազդեցությամբ և հարևանությամբ, լեզվական, ցեղային, ընկերային, փնփեսական սերտ ու անընդմեջ հարաբերությամբ, քաղաքական փիրապետության ազդեցությամբ, փորձելով ընկլուզել Հայաստանը Սասանյան կայսրության և մազդեզական կրոնի ու մշակույթի մեջ, իր մեծ բանվածքում հյուսքի մի նոր կփոր ավելացնելու անհագ փառասիրությամբ:

Հայոց Եկեղեցին ևս փառապալից վիճակ էր ապրում, քանի որ իր հավափացյալ հոփի հետ խոսում էր ոչ հարազատ ձայնով ու խոսքով:

Մինչ այդ էլ Քրիստոսի Ավետարանն արդեն հնչում էր Հայոց աշխարհում, բայց նահանգից նահանգ անցնելիս սահմանագլուխներին փոխում էր փարազավորումը՝ երբեմն հունական, երբեմն էլ պարսկական գույներ ու գծեր հագնելով: Աստծո խոսքը դեռ օփար էր հնչում հայի համար, քանի որ հայը փակավին ինքնուրույն հայափիպ գիր չուներ: Ս. Գիրքն անմատչելի, խորհրդասքող մատյան էր հայի համար: Աստծո խոսքը, Քրիստոսի Ավետարանը հայի կյանքի մեջ կյանք դառնալու համար հայոց ինքնագիր լեզվին էր կարոտ, ինչպես հողը՝ արորին:

Հայի ինքնությունը, ինքնուրույնությունը, ազատ ինքնարտահայտությունը, մեկ խոսքով՝ հայի ազգային անկախությունը դամոկլյան սրի տակ էր ընկած: Իր բնիկ երկրի մեջ, իր հայրերի մշակած հողի վրա, իր կառուցած սեփական շենքերի և քաղաքների մեջ հայը մտատանջության էր մատնված իր ինքնությունը կորցնելու հեռանկարի դիմաց: Տագնապը մեկ անգամ ևս ամպոտել էր հայոց երկինքը: Խռովքը դարձյալ սկսել էր հայոց ազգի սիրտը խոցոտել: Գալիքի անորոշությունը, օտարացման, ազգալքումի վտանգով չարագուշակ՝ սկսել էր մտալլկել հայոց ավագանու միտքը: Մռայլ էր երկինքը հայոց: Մառախուղը շղթայել էր Արարատի երկնեղբայր գագաթը: Ծանր երկունքի ժամանակ էր հայ ժողովրդի համար, և սակայն հպարտությամբ պիտի արձանագրենք, որ այդ երկունքն իր արժանավոր ծնունդն ունեցավ շնորհիվ Մաշտոցի, ով Մովսես մարգարեի նման «Նմանեալ Մովսէսի փէր վարդապետի...», առաջնորդեց ժողովրդին այդ ծանր ու կենսորոշիչ ժամանակներում՝ հասցնելով հայ դպրությունն մեր Ավետյաց երկրին...

Եբրայեցի ժողովուրդը անապատով քայլել էր քառասուն տարի, ոլորապտույտ, ի վերջո, սակայն, հասնելու համար... Ավետյաց երկրին:

Եբրայեցին Մովսես մարգարե ուներ:

Մովսեսը բարձրացել էր Սինա լեռը, մշուշապատ, աստվածամերձ, և երկնքից օրենք էր ստացել, աստվածագիր տասնաբանյա պատվիրաններով:

Մովսեսն իջել էր Սինայի բարձունքից, սակայն լեռան ստորոտին տեսել էր ուխտադրուժ, հավատազանց ժողովուրդ՝ իր Աստծուն մոռացած և ոսկին, հորթի ձևի տակ աստծո վերածած և ինքն իրեն խենեշ կենցաղի գոհ դարձրած: Այնքան զայրացել էր, որ իր աստվածախնդիր հոգին պոռթկացել էր և աստվածագիր տասնաբանյայի քարեղեն տախտակները զարկել էր քարին և փշրել: Մովսեսն օրենք էր բերել ժողովրդին, բայց գտել էր ժողո-

Մովսեսն ազում էր ժողովրդին Աստծուն մոտեցնել.
վարդը՝ անօրեն ու օրենքի անարժան: Մովսեսն ազում էր ժողովրդին Աստծուն մոտեցնել.
բայց գտել էր ժողովուրդը՝ Աստծուց խուսափումի ճամփի վրա՝ երկրպագու՝ կեղծ, շինծու
չաստվածների:

Հայի Մովսեսը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը, լինելով իր ժողովրդի և Եկեղեցու հարազատ որ-
դին, ունենալով քաղաքական զգոնություն, լայնահորիզոն միտք ու խորունկ մտահայեցո-
ղություն, անցավ քրտնաջան գործունեության՝ գալիք քաղաքական ու կրոնական վտանգ-
ները կանխելու աննահանջ վճռականությամբ:

Մեսրոպն էլ երկար թափառելուց հետո, հայոց անապաստանած և նոր փարավոններից
սպառնացված աշխարհի մեջ, վերջապես, նոր Սինայի բարձունքի իր որոնումի ճանապար-
հին հասել էր Ասորիք, Եդեսիա, Ամիդ, Սամոսատ. Աստված մոտեցել էր իրեն և իր աչքերի
մեջ, երկնքի աստղերի լույսով ձևավորել էր Հայոց գիրը, հայի նո՛ր Տասնաբանյան «բերե-
լով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ»:

Հայոց այս նոր մարգարեն, գիրը ձեռքին, երեսուն և վեց տառերը մագաղաթի աստղերի
վրա դրոշմած՝ Ասորիքից վերադարձի ճամփին մոտենում էր Հայաստանի սահմանին: Իր
ծոցի մեջ «մագաղաթի վրա փծգույն» պսպղում էր խոսքն Աստծո աստվածագիր և աստ-
վածատուր տառերով, հայալեզու կերպադրությամբ. **«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»**: Ահա առաջին մեսրոպագիր տողերը հայոց պատ-
մության...

Թագավոր ու կաթողիկոս, նախարար ու իշխան, եպիսկոպոս ու վարդապետ, ազատա-
նիք թե գեղջուկք, քահանայք թե սարկավագունք, արք և կանայք, ծերք և երիտասարդք
համախումբ և միասիրտ դիմավորեցին ու խոնարհվեցին հայոց նոր Տասնաբանյայի առաջ:

Եթե գրերի գյուտի հրաշքն Աստծո ողորմության ծնունդը չլիներ, ապա նա չէր կարող մեր ժողովրդին միախմբել, ազատել ու առաջնորդել դեպի փրկություն: Նույնիսկ ավելին, գրերի գյուտը ոչ թե Աստծո ողորմության արդյունքն էր մեր ազգին, այլ սիրո, Երկնային Արարչի անսպառ սիրո, քանի որ Բարձրյալն Աստված ազգերի դարապրոտի երթում մեր ազգին ռահահորդի հաղթական քայլք է շնորհել, քանի որ համայն մարդկության փրկության համար մարմնացած, մարդացած և երկնքից երկիր իջած Աստվածորդին միայն մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթքների շնորհիվ էր, որ կրկին երկնքից երկիր իջավ, այս անգամ, սակայն, միմիայն մեր ազգի փրկության և մեր Եկեղեցու հաստատման ու հարատևության համար:

Հրաշք էր անկասկած, որ բազմաթիվ սպիներից հետո անաղարտ մնաց մեր ժողովրդի ազգային դիմագիծը, կենդանի մնաց մեր ժողովրդի նախրյան շունչը, քրիստոնեության ամենակարող Աստված Հայ Եկեղեցու սրբազան բեմից հայերեն խոսեց մեր ժողովրդի հետ...: Հարցք էր, սիրելի հավատացյալնե՛ր, կենդանի հրաշք էր այդ, այս բառի բառացական խորունկ նշանակությամբ: Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն ավելի քան հազար վեց հարյուր տարիներ շարունակ ծնկի է եկել Օշականի Մեծ Վարդապետի շիրիմի առջև և հայցել նրա բարեխոսությունը, այդ է պատճառը, որ Հայց. Ս. Եկեղեցին նույնչափ տարիներ շարունակ օրհնում և խնկարկում է Մեծ Սրբի համեստ շիրիմը.

**«Փա՛ռք քեզ, Աստուած, փառք քեզ,**
**Յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:**

Որովհետև՝ «Մեր պաշտած Աստվածն այնս մերն է: Այնս մոռացածս լեզվով չենք գրնլու իրար... Այնս մեր զգացումնները, մտածումները, ծգտումները, գաղափարները օդին ու հովին գոհ չեն գնա, ինչպես մեր հայրերի ապրումները գնացին: Այնս հույնից, պարսիկից ու ասորուց պակաս չենք: Իրենց չափ մենք մենք ենք»:

Տոն էր հայության: Հայ Գրի ծննդյան տոն: Հայ ազգի վերածնության երաշխիք: Հայ ցեղի հավերժության գրավական:

Այրբենաստեղծ և գրացյուտ Վարդապետն իր ժողովրդի հետ միասին զգում էր նրա ցնծությունը: Հայաստանը Թաբոր լեռ էր դարձել, և ժողովուրդն ապրում էր Պայծառակերպության հրաշքը:

Եվ այս է պատմությունը հայոց...: Դարերի վրա հանդիսադրված անպատմելի սխրագործություն:

Վանքերի կամարների տակ այն հնչեց տիվ և գիշեր:

Մագաղաթների վրա այն շնչեց ու ներշնչեց:

Քարերի վրա այն իմաստ փվեց այլապես կույրիմաստ բազալտներին ու տուֆե զանգվածներին:

Պալատների մեջ այն հնչեց պատգամաշեշտ:

Բանակների հետ քայլեց իբրև հաղթերգ:

Ցնծության սեղաններին այն ուրախացրեց սրտեր:

Տխրալից պահերին կապեց գոտին հոգիների:

Լեզուն բացվող մանուկի ժպիտը եղավ:

Եվ այս եղավ պատմությունը Հայոց...

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Պատմությունը վերացական երևույթ չէ, պատմությունն ամեն մի մարդու կյանքն է, որ կարող լինել արժեքավոր, իմաստավոր, լեցուն և նաև ճիշտ հակառակը:

Ս. Մեսրոպ Մաշտոցի ավանդած կյանքի պատմությունը պահպանող, հարստացնող, արժևորող և իրենց ուսերի վրա սրբությամբ կրող այուները դարձան Թարգմանիչ վարդապետները, ովքեր իրենց հոգով ու մանավանդ ոգով անջնջելի տեղ են գրավել հայ ժողովրդի առաջացող կյանքի ճանապարհին, նրանց անունները լուսապտու և պայծառաշող կանթեղներ են դարձել մեր ազգի համար – **Ս. Մեսրոպ, Եղիշե, Մովսես Քերթող, Դավիթ Անհաղթ փիլիսոփա, Գրիգոր Նարեկացի և Ներսես Շնորհալի. «Տօն սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց...»:**

Ամեն տարի գեթ երկու անգամ կրոնական վեհացումի և համազգային սնեռումի առիթ են նրանք մեր առաքելահաստատ Եկեղեցու տոնացույցում: Իսկ ամեն օր բազմիցս ներկա են մեր մեջ: Ամեն օր ներկա են հայ դպրոցների գրասեղանների առջև, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սրբազան արարողությունների ժամանակ, հայ գրքի ու մամուլի էջերում, հայ մշակույթին ձոնված ոգեկոչումներին, արժեվորումներին, վերարժարժումներին ծառայող հանդեսների բեմերի վրա:

Այսպես եղան ժամանակին: Կան և այսօր: Պիտի մնան և վաղը: Ինչո՞ւ կան այսպես ժամանակի մեջ և ժամանակից վեր: Որովհետև ապրեցին և գործեցին մեր ժողովրդի հավերժության համար: Ժամանակը նվաճեցին ժամանակայինից վեր արժեքներով: Անմահության բարձրահայաց ճեպքով անցան և հենց այդ իսկ պատճառով էլ անմահացան:

Հանձն առնել ամբողջ մի ժողովրդի լուսավորության գործը, դաստիարակել ամբողջ մի ժողովուրդ, գցել հզոր խարիսխը մեր ողջ հոյակապ գրականության՝ այդ գործն է միայն հանճարեղ ու տեսիլք ունեցող անհատականությունների: Պայծառացնել հարազատ Եկեղեցին, շենացնել նրա բարոյական ու կրոնական կապը իր սիրեցյալ հոտի հետ՝ այդ էլ միմիայն սուրբ մարդկանց գործն է:

Հինգերորդ դարի քաղաքական դժխեմ և մթագնող պայմանների փակ հյուծումի դատապարտված հայ կյանքի մեջ վերականգնումի նոր ջիղ մտցրեցին, նոր արյուն և ավյուն ներարկեցին, նոր թափ տվին մեր թարգմանիչ վարդապետները:

Թարգմանիչները մեզ ոչ թե միայն գիրք տվին, այլ գիրքը շնչավորող, արժեվորող և կյանքի մեջ ու կյանքով թարգմանող մարդիկ:

*

* *

**Գիր, Գիրք և Մարդ:**

Այս երեք բառերի մեջ է խտացած Թարգմանիչների ազգային-կրոնական մեծագործությունը:

Մեր ներկա կյանքի կարիքների եռյակ կարևորագույն շրջագծերը:

Ով պետք է լցնի կարիքների այս կարասացող դատարկությունը...:

Նոր թարգմանիչներ են պետք մեզ: Հին թարգմանիչների ոգիով թրծված մարդիկ՝ հոգևորական, մտավորական և ուսուցիչ, ովքեր կարողանան այս նոր ու հարափոփոխ աշխարհի մեջ Ե դարի ոճով թարգմանել հայկական արժեքները մեր նոր սերնդին:

Մարդն է կարևոր...

Դեպի մարդու պատրաստություն լարենք մեր բոլոր աշխատանքները: Մեր գործունեության սյուքը, մեր ողջ միջոցներն ուղղենք դեպի դպրոց, կրթություն, Եկեղեցի, որպեսզի կարողանանք ունենալ նոր թարգմանիչներ: Որովհետև առանց նոր թարգմանիչների, հին թարգմանիչների, Ե և հաջորդող դարերի թարգմանիչների վաստակը կխամրի հայ կյանքի մեջ: Եվ այն ժամանակ կսկսի իրական, անդարմանելի ողբերգությունը: Այն ժամանակ է, որ կմթագնի հայի գոյության և լինելության տեսիլքը:

Բայց մենք հավատում ենք, որ Ե դարում թարգմանիչներ ծնող ազգը չի կարող թարգմանիչներ չծնել ԻԱ դարում...:

Եվ թող այսօր թարգմանիչ վարդապետների ստեղծագործ հոգին հավերժ ուղեկից լինի մեզ մեր բովանդակ կյանքի ընթացքում.

Թող Օշականի ամենասուրբ գերեզմանում հանգչող, այբբենագիր Վարդապետի բարեխոսությունը հավերժ հնչի մեզ համար երկնքում.

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

# Տ. ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 հոկտեմբերի 2003 թ.)

Փառք և գոհություն մեր Երկնային Տիրոջը՝ այս գեղեցիկ օրը պարգևելու համար: Հոկտեմբերի 19-ը Հայ Առաքելական Եկեղեցու և Հայոց Բանակի պատեգրության մեջ մտավ որպես Միածնաէջ Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակին նվիրված ուխտագնացությունների շրջագծում Հայոց Բանակի ուխտագնացության օր:

Անցած տարեվերջին Վեհափառ Հայրապետի իմաստուն տնօրինությամբ 2003 թ. հռչակվեց Մայր Տաճարի տարի՝ մատուցվող Ուխտի Պատարագներով առիթ և հնարավորություն ընձեռելով հայաստանաբնակ և աշխարհասփյուռ հայությանը՝ իրենց գոհության և փառաբանության աղոթքը կատարելու ու ձոնաղրելու Միածնաէջ Սրբասեղանի առջև, հավաստելու իրենց նվիրումը, սերը, իրենց խոնարհումը, հավատարմությունն առ Լուսավորչահաստատ Աթոռը Հայոց Հայրապետության, առ Լուսավորչաշավիղ Գահակալն Ամենայն Հայոց:

Եվ այսօր իրենց ուխտի ճանապարհին անցան հարյուրավոր զինվորականներ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի գլխավորությամբ: Եկան Էջմիածին՝ ևս մեկ անգամ իրենց մեջ Էջմիածնի խորհուրդը ապրելու, Էջմիածնի սրբությամբ սրբվելու, Էջմիածինն իրենց կյանք տանելու: Եկան Էջմիածին՝ ևս մեկ անգամ ուխտելու՝ հավատարիմ մնալ մեր ազգային արժեքներին, մեր ինքնաբույր հավատքին, մեր դարավոր մշակույթին: Թող Բարձրյալն Աստված ընդունի Ձեր ուխտը:

Այս պահին իմ միտքն է գալիս հայոց պատմությունից մի դրվագ: 1918 թ. մայիսյան դժնդակ օրերն էին, թշնամին մեծաթիվ ուժերով շարժվում էր Երևանի վրա: Սիլիկյանը զեկուցում է Արամին. «Զորամասս քայքայվում է՝ թիկունքի ընդհանուր քայքայման պատճառով: Զրի պակասության պատճառով զորամասը հոգնած է, իսկ գլխավորը փամփուշտն է, որ համարյա չկա: Մտածում եմ, որ սփիպված եմ նահանջել և Ջեյվայից»: Եվ խնդրում է Երևանի մոտ պաշտպանական դիրքեր պատրաստել:

Սիլիկյանը դալիս է նաև Էջմիածին, Գևորգ 5-րդ Վեհափառ Հայրապետին առաջարկելու թողնել Սուրբ Էջմիածինը և պատսպարվել Սևանի վանքում: Գևորգ 5-րդ Վշտակիր Կաթողիկոսը, շրջապատված հոգևորականներով, լսում է առաջարկությունը և պատասխանում. «Ես չեմ կարող թողնել Էջմիածինը: Եթե պետք է մեռնեմ՝ Էջմիածնում կմեռնեմ, իմ ձեռքերով կպաշտպանեմ, իմ հոգևորականներով կպաշտպանեմ»: Վեհափառի այս պատասխանը ոգևորություն է առաջացնում հոգևորականների ու զինվորականների շրջանում, պետական այրերի մոտ և ալիքվում ժողովրդի մեջ:

Հինգ օր շարունակ Հայաստանյայց բոլոր եկեղեցիների զանգերը հնչում էին՝ մարտի կոչելով բոլոր նրանց, ում համար թանկ էր Հայրենիքի պատիվը, ում համար թանկ էին հայոց սրբությունները: Հինգ հարյուր հոգևորականներ, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի,

Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի ղեկավարությամբ անցնելով աշխարհազորի գլուխ, մեկնում են Սարդարապատ: Միլիկյանը հաղորդում է Արամին. «Ես ամեն ինչ ունեմ, այլես մարդ մի ուղարկիր: Եղա Կաթողիկոսի մոտ, որն ինձ օրհնեց և հաստատապես որոշեց մնալ Էջմիածնում: Շնորհիվ իր ուղարկած ուժերի՝ փրամադրությունը հրաշալի է: Արևածագին անցնում եմ հակահարձակման: Աստված մեզ հետ»: Եվ Աստված մեզ հետ եղավ Սարդարապատում: Աստված մեզ հետ եղավ նաև Արցախում:

Դարերի ընթացքում Էջմիածինը մեծ դեր է կատարել Հայոց մեջ: Լինելով հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը՝ իր շուրջն է համախմբել ողջ հայությանը, եղել է հոգատար մայր բոլոր կարոտյալների, մխիթարիչ բոլոր սգավորների համար, ապաստան բոլոր հավատացյալների ու ուխտավորների, ոգեշնչման աղբյուր արվեստի ու մշակույթի գործիչների համար: Դարեր շարունակ Էջմիածնին են ձոնվել բազմաթիվ ներբողներ, տաղեր, գանձեր, շարականներ: Էջմիածինը եղել է գրչության, գրականության, նաև դպրության կենտրոնը. այստեղ են կերտվել մեր ազգային ինքնությունը հանդիսացող բազմաթիվ մատյաններ, հոգևոր, աստվածաբանական երկեր ու աստվածաբանական խորհուրդ ունի իր մեջ: Դարերի ընթացքում Էջմիածինը մեծ Վիրավի. Էջմիածինը մեծ խորհուրդ ունի իր մեջ ուսումնասիրություններ, տաղեր ու շարականներ:

Բայց և առավել չափով Էջմիածինը եղել է սիրո, եղբայրության, միասնականության, առ Աստված հավատքի ու խաղաղության Քարոզիչ, եղել է Բարձրյալ Աստծո ծրագրերի իրականացնողը հայության մեջ: Դարեր շարունակ Էջմիածինը, համաձայն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի այն խոսքի, թե «Արքայությունը ձեր մեջ է», Երկինքն իջեցրել է Երկիր և այստեղ տարածել, սփռել Աստվածային Սերը, «ի մարդկան խաղաղութիւնը»:

Եվ իր այս առաքելության համար է, որ մեր ժողովուրդը սիրով, հավատքով և նվիրվածությամբ է պարուրել մեր հոգևոր այս վեհապանծ կոթողը: Տեղին է այստեղ հիշել 20-րդ դարի մեծագույն բանաստեղծ ու մտածող Ավետիք Իսահակյանի կես դար առաջ ասած խոսքերը. «Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Նրա մաշկը քերես՝ Էջմիածին դուրս կգա: Հայ ժողովուրդն իր պետականությունը կորցնելով՝ Էջմիածնի մեջ գտավ իր ազգային զգացմունքների հանրագումարը: Էջմիածինը շանթարգել է եղած հայ ժողովրդի համար: Եթե հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ Էջմիածնի է: Հայ ժողովուրդը երկու զորավիգ է ունեցել՝ մեկը Էջմիածինն է, մյուսը՝ ազգային-ազատագրական իդեալը»:

Մեծանուն բանաստեղծը հոգու ինչ հրճվանք պետք է ապրեր, եթե այս օրվան ներկան լիներ և ականատեսը հայ ժողովրդի երկու զորավիգների սիրո համբույրին՝ Էջմիածինը ազգային-ազատագրական իդեալի մեջ, և այդ իդեալը կրողները, իրականացնողները՝ Էջմիածնի մեջ:

Այսօր էլ հայ ժողովրդի զորավիգները երկուսն են՝ 1700-ամյա Էջմիածինն ու 11-ամյա Հայոց Բանակը: 10-11 տարիներ առաջ հայ ժողովրդի ազգային-ազատագրական իդեալը մարմին առավ, նյութականացավ, իրականություն դարձավ Հայոց Բանակով և շնորհիվ հազարավոր նվիրյալների անձնվեր ծառայության, շնորհիվ բազում հայորդիների թափած արյան, շնորհիվ մերձավորի, եղբոր, ընկերոջ նկատմամբ ունեցած մեծագույն սիրո:

Հայոց Բանակը հիմնվեց մեկ կարևոր առաքելությամբ՝ հայ ժողովրդի խաղաղությունը, բարօրությունն ապահովելու, երաշխավորելու, ստեղծարար կյանքը զարգացնելու առաքելությունն էր այն: Առաքելություն, որ առ այսօր հաջողությամբ են իրականացնում մեր զին-

ված ուժերը՝ իրենց հաղթանակներով ու հզորությամբ շարժելով ողջ հայության հպարտության զգացումը:

Խաղաղության մեծագույն ցանկությունն էր, որ ի մի բերեց մեր հազարավոր հայրերին ու եղբայրներին, մայրերին, քույրերին: Բազում նվիրյալներ իրենց հայրերի, պապերի դարավոր ընդվզումը հոգիներում՝ ելան նրանց նվիրական իղձը իրագործելու՝ ազատ ու անկախ Հայրենիք կերտելու վճռականությամբ: Այսօր արդեն իրականություն է դարձել նրանց նվիրական ցանկության մեկ մասը՝ ունենք անկախ պետականություն, հզոր բանակ, բայց ոչ վերջնական խաղաղություն:

Եկեղեցին և Բանակը համազգային արժեք են և համազգային հոգածության կարիք ունեն: Բանակը միայն պաշտպանության նախարարինը չէ, Էջմիածինը, Եկեղեցին միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսինը չէ և վերջապես՝ Պետությունը միայն Նախագահինը չէ: Մենք իրավունք չունենք այս արժեքները անձնավորելու:

Սրանք այն արժեքներն են, որոնց համար յուրաքանչյուր հայ մարդ պարտականություն ունի՝ անկախ սոցիալական, կուսակցական, դավանական պատկանելությունից: Իր ուժերի, հնարավորությունների սահմաններում նեցուկ լինելու, օգտակարություն ունենալու և ողջ ծանրությունն առաջնորդների ուսերին չթողնելու պարտականություն ունի: Այսօր Աստուծո կամոք բարենպաստ իրավիճակ է ստեղծվել երկիրը զարգացնելու, կյանքը բարելավելու, այս արժեքների շուրջը համախմբվելու: Եվ մենք իրավունք չունենք այս պատեհությունը կորցնելու:

Խոսքիս ավարտին ուզում եմ հիշեցնել մեր արդի պատմության երկու երջանկահիշատակ մեծությունների՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի և Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Առաջինի վերջին պատգամները.

*«Մտածեք էս երկրի մասին, մտածեք էս բանակի մասին. սա է էս երկրի փրկությունը»:*

*«Փափագս է, որ դուք երկար ապրեք, քաջ լինեք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը սիրեք և անոր սուրբ, կրոնական և ազգային ծառայությունը շեն պահեք»:*

# Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(26 նոյեմբերի 2003 թ.)

*«Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս. այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ: ... Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս»:*
(Մատթ. ԻԴ 27, 30)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօր Մատթեոս ավետարանիչն այս խոսքերով՝ որպես Աստուծո նամակագիրը և Աստուծո խոսքը փոխանցողը դիմում է մեզ՝ այսօրվա ապրողներիս ցույց տալով, որ աշխարհը վերջ ունի, աշխարհը մի օր իր վերջավորությանն է հասնելու և հավերժությամբ չէ, որ ապրելու է այս աշխարհը, որ այսօր գոյություն ունի:

Ավետարանիչը դարձյալ պատմում է մեզ այդ վերջին նշանների մասին: Պատմում է, որ որևէ կառույց, որևէ գոյություն չի մնալու երկրի վրա այնպես, ինչպես կա, այլ փոխվելու է նոր կերպով և նոր տեսքով: Եվ սա Աստծո անսուտ խոսքն է: Մենք, որպես հավատացյալ քրիստոնյաներ, այս խոսքին ենք հավատում ու ապրում և աղոթում ենք, որպեսզի այդ Նորը և այդ Փրկիչը նորից ու նորից գա:

Այսօր մեր Եկեղեցու պատմության մեջ նաև այն օրն է, որը կոչվում է Գյուտ Խաչ՝ Խաչի գյուտը: Եվ ավետարանիչը ճիշտ սրա մասին է խոսում ասելով, որ Տիրոջ նշանը պիտի երևա երկնքում տարածված, արևմուտքից արևելք, և բոլորդ պիտի տեսնենք այդ նշանը: Մեզ համար որպես հավատացյալներ, որպես պատմության մեջ ապրողներ տեսանելի է և ընդունելի Գյուտ Խաչի պատմությունը, ինչպիսին որ կա, այն, որ գտնվեց Խաչը, հայտնվեց Խաչը և բժշկություն տվեց կամ կենդանություն պարգևեց մի երիտասարդի, մի պատանու և այդպիսով ճանաչվեց որպես փրկության զորություն և այդպիսով ճանաչվեց որպես Փրկչի Խաչ:

Ինչպիսին որ կլինի մեր վերաբերմունքը հանդեպ այդ պատմության, կհամարենք այն չափազանցություն կամ կեղծիք կամ որևէ անհատական ստեղծագործություն, այդ պատմությունն իր մեջ նաև երկրորդ երեսն ունի, որ ցույց է տալիս այն մեռած մարդկությունը՝ Խաչի նշանի առջև կենդանացած, ցույց է տալիս Խաչի նշանի զորությունը, սիրո զորությունը, որ կարող է մարդուն կենդանություն պարգևել որևէ վայրկյանի: Եվ մենք ընդունել ենք այդ պատմությունը որպես այդպիսին և այսօր նշում ենք Գյուտ Խաչի տոնը: Այսօր մեզ համար նա Խաչի Գյուտ է, Կանադայում ապրող հավատացյալներիս համար Խաչի Գյուտ է այստեղ գտնվելը, Խաչի Գյուտ է այն իմաստով, որ եկել ենք մեր սիրով՝ բերելու, հայտնելու

մեր խավպարմությունը և նաև սերը փաննլու Ս. Էջմիածնից. ո՛չ միայն փայու, այլ նաև փաննլու: Եվ այս է Խաչի Գյուտը մեզ համար:

Այսօր մենք ուխտավոր ենք, եկել ենք մեր երկիրը, մեր հայրերի երկիրը՝ վերստին համբուրելու այդ հողը և վերստին այս հողի վրա իջեցնելու Քրիստոսին, այս անգամ մեր միջոցով և վերստին այս Տաճարը կոչելու Էջմիածնի Սուրբ Տաճար: Ուխտավոր ենք և եկել ենք մեր հավատարմությունը հայտնելու մեր հայոց Սուրբ Աթոռին, հայտնելու և ասելու, որ հավատում ենք Էջմիածնական ճշմարտությանը և նրա հաղթանակող իրականությանը, որ այսօր մեր միջոցով է իրականացվում: Եկել ենք նաև որպես ուխտավորներ խառնվելու մեր հող ու ջրին, մեր հացին, մեր՝ այստեղ, այս երկրի մեջ ապրող մեր սիրելի ժողովրդին՝ քույրերին և եղբայրներին և ուժ ստանալու և Աստծո հետքերով քայլելու այս երկրի մեջ, որի ամեն հետքի վկայությունը մի-մի փաճար է, մի-մի սրբավայր: Բայց ո՛չ միայն քայլելու, այլ նաև մեր սրտի հետքը դնելու այստեղ, դրոշմելու այստեղ և այդպես վերադառնալու դեպի մեր տունը, Կանադա՝ հավատավորն ու ուխտավորը մնալով մեր միակ տանը՝ Հայաստան երկրին և Ս. Էջմիածնին:

Ամեն առավոտ այս Տաճարը ողջույն է փոխանցում այն մյուս փաճարին՝ Արարատին՝ լինելով բարոյական և հոգևոր Արարատ: Այսօր մենք եկել ենք այդ ողջույնը փոխանցելու Մայր Տաճարից դեպի Արարատ լեռը, եկել ենք խառնվելու այդ ողջույնին: Եվ այսօր Մայր Տաճարը՝ Ս. Էջմիածինը, ո՛չ թե վերացական դաշտ է, ո՛չ թե փառաբանության առիթ է, ո՛չ թե մեր գովերգության կարիքն ունի, այլ մեր գործի, մեր ներկայության, մեր խորը հավատքի կարիքն ունի. հավատքի, որ Էջմիածինը չի ընկրկելու և Էջմիածինը չի նահանջելու և Էջմիածինն է կրողը այն միակ զորագլխի, որ մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոս, որ գնել է մեզ Իր արյամբ և այսօր հավաքել է վտարվածներին, փրփմությամբ ցրվածներին ա՛յս Տաճարի մեջ, ուրախության համար, հավաքել է այստեղ, որպեսզի մեր սրտից եկող բոլոր հոգեկան զգացումներին արդյունք և պտղաբերություն տա և դառնա մեր փրկության օջախը:

Այսօր մեր սրտի մեջ մեր անսահման հավատարմությունը և համբույրն ենք բերել դրոշմելու մեր ազգի Հոր՝ Վեհափառ Հայրապետի Օծյալ Աջին, որի միջոցով պատմության շարունակականության ճամփով այսօր արտահայտված է Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը և հետևաբար Ս. Գրիգոր Լուսավորչի Աջին ենք բերել մեր համբույրը տալու և հայտնելու, որ ո՛րևէ վայրկյան և ո՛րևէ պահ, ամենածանր և ամենադժվա՛ր պահին Սփյուռքի քայքայող և ոչնչացնող իրականության մեջ մենք մնալու ենք որպես զավակներն Ամենայն Հայոց Հայրապետի և Ս. Էջմիածնի: Եվ միա՛կ աղբյուրը, որ կարող է կասեցնել կամ որոշ չափով պահել, այդ իրականության մեջ փրկություն հանդիսանալ մեր ժողովրդին, դա հոգևոր իրականությունն է, բարոյական իրականությունն է:

Այսօր իմ մտքի մեջ և իմ սրտի մեջ միայն աղոթք է և տարիներ շարունակ Հայաստանում ծառայած լինելով, տարբեր ասպիճաններին մեջ լինելով՝ այսօր նաև ինձ համար անձնապես մի նշակի ուխտի օր է, որովհետև առաջին անգամն է, որ այս հանգամանքով՝ որպես առաջնորդ կանադահայոց, վերադառնում եմ Հայրենիք և, առաջին անգամը լինելով, բարձրանում եմ այս Ս. Խորան և իմ աղոթքը, իմ անսահման աղոթքը և դարձյալ աղոթքը մատուցում՝ մեր ժողովրդի և մեր Եկեղեցու հոգևոր առավել զորացման ու հոգևոր արժեքներով ապրելու համար:

Մեր աղոթքն ուստի այսօր դառնում է դեպի մեր Տաճարը սուրբ՝ ասելու համար, որ Հա-
յաստան աշխարհի սրտում ծաղկած Սուրբ Էջմիածին, դու, որ ադամանդե ժայռերի վրա և
լեռների գրկում բարձրացած ես և անպարտելի կանգնած ես պատմության դիմաց, դու, որ
անդավաճան կերպով, որպես առաքինի նախապետ հավատարիմ քո սրբությանը և քո
Աստծուն, հանապազ վառ ես պահում երգդ և աղոթքդ, այսօր ընդունիր մեզ քո գրկից ներս,
մասնակից դարձրու քո Սուրբ Հաղորդությանը և պարգևիր մեզ զորությունը՝ մասնակից դառնա-
լու, միանալու քո Փեսայի մարմնի և արյան միջոցով այս երկրում ապրող ժողովրդի հետ և
մեր հաղորդությունը կատարյալ դարձրու. մեր մտածումը ամբողջական դարձրու. մեր զոր-
ծը թերի մի՛ թող, մեր հայացքը պա՛րզ ու ջինջ դարձրու, մեր միտքը ուղի՛ղ պահիր և մեր
սիրտը՝ ազնվությամբ, անկե՛ղծ և աղոթքո՛վ լցնում: Այս է այսօրվա իմ աղոթքը և այս է ամ-
բողջ կանադահայության աղոթքը:

Վեհափառ Տեր, որպես ամփոփում, որպես Ձեր ամենախոնարհ և կրտսեր զավակը,
դարձյալ ու վերստին այս Ս. Սեղանի առջև խոնարհեմ և կերդնում, որ Կանադայի մեջ արև-
մուտքից դեպի արևելք, հարավից դեպի հյուսիս այդ մեծ երկրի մեջ որքան որ Աստված մեզ
ուժ և կարողություն տվել է, որքան որ մեր տկար անձը կարող է պարունակել, մենք ծառ-
այողն ենք Ձեր գավազանի, մենք ծառայեցնողն ենք Ամենայն Հայոց Հայրապետի ամեն-
օ՛րհնության ճշմարտությանը: Վստահ եմ, որ վստահում եք Մեզ, համոզված եմ, որ Ձեր օրհ-
նությունը մեզ հետ է և այդ օրհնություններն են մեզ կյանք տվողը:

Եվ թող Աստված պահի մեզ բոլոր տեսակի խոչընդոտներից Իր Խաչի նշանով, Իր այս-
օրվա Գյուտի նշանով և մենք այդ պատվանու նման մերձենանք Խաչի նշանին և սպասենք
հարության լույսը և հարության կենդանացնող ճշմարտությունը: Մեր սերը ձեզ բոլորիդ, և
կխնդրենք, որ առաջիկայից և ամեն օր հիշեք ձեր քույրերին և եղբայրներին, որ գտնվում են
Կանադայի մեջ, ձեր աղոթքը բարձրացնեք իրենց համար, և դա մեզ մեծագույն, ամենամեծ
զորությունն է, որ կարող է տալ: Ուրիշ ոչնչի կարիք չունենք մենք, միայն ձեր աղոթքի, ձեր
զորակցության և ձեր աջակցության՝ Աստծո միջոցով: Թող Աստված ուղղի՛ մեր ճանապար-
հը, արդար անի մեր կյանքը և մեզ զորությունը տա Իրեն ծառայելու համար այժմ և միշտ և
հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ԳՅՈՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 նոյեմբերի 2003 թ.)

*«Մեծաւ փառօք եւ բազմութեամբ*
*զօրացդ լուսեղինաց իջեր ի յերկնից ի դաշտն Արարատեան*
*ի յայցելութիւն փոքու հօտիդ Քոյ ազգիս հայոց,*
*եւ ի ցուցումն յարկականի սիրոյդ եւ մեծի ողորմութեանդ։*
*Եւ ոսկէ ուռամբ բաղխեցեր զխորս անդնդոց*
*եւ հալածեցեր զգունդս սանդարամետականաց,*
*ուր եւ լուսաձեւ յօրինմամբ հրաշագործեցեր*
*զՄայր Աթոռն մեր զՍուրբ Էջմիածին»։*
(Ժամամուտ Սրբոյ Էջմիածնի)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօր, սիրելիներ, այս սրբության սեղանին առաջ, վեհավոց փառաբանության, Թ-աբոր լերին Հայաստանյայց կուգանք անգամ մը ևս Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ծունկի գալ և մեր ուխտը նորոգել Աստուծո այնպես, ինչպես երբ կանչվեցանք ծառայության Եկեղեցվո, ամենքս ալ, Սուրբ Հոգվույն շնորհքներով զորացած, առաքվեցանք ծառայության Եկեղեցվո: Տարինք ամենքս ալ Ավետարանն իր ամբողջ բովանդակությամբ գործնապես ապրելու, ողջունելու ամենքը՝ Եկեղեցվո բոլոր զավակները անպայմանավոր ծառայությամբ, սիրով և առանց գայթակղության:

Ամենքս ալ այսօր կիրավիրվինք Հայրապետի օրհնությամբ ծունկի գալ և Հայաստանյայց Եկեղեցվո Թ-աբոր լերան վրա աղոթքով հաղորդության մեջ մտնել մեր բոլոր հայրերուն, որոնք մանավանդ 1700 տարիներ առաջ այս Տաճարի օրհնության մասնակցեցան և մեզի փվին քաջությունն իրենց հետևելու: Նշանեցավ այսօր, առ մեզ «լոյս երեսաց Քոց եւ նտուր ուրախութիւն սրտից մերոց»:

Ո՜վ Տեր, Դուն այսօր զորացուցիր մեզ կրկին անգամ ծառայության նորոգության ուխտը կատարելու և այդ ուխտով մանավանդ տանելու մխիթարությունը մեր ժողովուրդի զավակներուն, Ավետարանը, որուն կյանքը վստահվեցավ այս Մայր Տաճարին՝ փարածելու ամենուն համար սեր և եղբայրական օգնություն: Առաքյալը մեզ ցույց փվավ առաջնորդության ծառայական ոգին: Ամենքս ալ առանց այլայլության, զորացած իր օրինակով եկանք սպասավորության Եկեղեցվո: «Ժողովեալքս ի հարկի սրբութեան եւ ի փեղւոջս փառաբանութեան» այսօր ամենքս ալ կուգանք լսել Աստուծո հարցը:

Սիրելիներ, փորձեցեք ձեր անձերը, քննեցեք զանոնք, թե արդյոք կմնա՞ք հավատարիմ այն ծառայության ուխտին, որ այսօր պետք է գործել:

Սիրելիներ, աղոթք և օրհնություն ամենուն, որ մեզի ձայնակցելով եղան ամբողջ Եկեղեցվո
միությամբ սիրտ ի սիրտ և ձեռն ի ձեռ ծառայելու ամենուն, կաթիլ մը մխիթարություն բերե-
լու սրտերուն մեր եղբայրներուն և քույրերուն: Այսօր ձեր զավակները և եղբայրները նկած
են այս Տաճարին մեջ, որպեսզի հետևին Հայրապետի ինչեցրած ավետարանական կոչին:
Կմնանք հավատարիմ մեր ծառայության, ունկնդիր ըլլանք անոնց առաջնորդության և. ի-
րենց օրինակին հետևելով, ողջունել փեսաճելի ապրող օրինակը կյանքին: Բոլորս ալ երեկ
և առջի օր մանավանդ վկայեցինք 1700-ամյա կյանքին շունչը իրագործված և ապահով-
ված մեր Եկեղեցվո առաջին սպասավորին՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրինակով, որուն
հետևելու մեր ուխտն այսօր կվերանորոգենք՝ Նորին Սրբությանը մաղթելով, որպեսզի հա-
վիտյան ինքը մնա առաջնորդն ամենուս՝ պահելու իրարու սերը և եղբայրական ոգին ի շի-
նություն և ի մխիթարություն մեր Հայաստանյայց Եկեղեցվո:

Լույս ծագեցավ 1700 տարիներ առաջ այս Մայր Տաճարին մեջ վերստին օրհնությամբը
Ս. Լուսավորչի, և վերհիշելով այդ օրը, այսօր, իմ աղոթքը կբարձրացնեմ և կմատուցանեմ
իմ հարգալիր ողջույնը Ամենայն Հայոց Հայրապետին՝ Եսայի մարգարեի հետևողությամբ
ըսելով. «Լուսաւորեայ, լուսաւորեայ Էջմիածին, զի հասեալ է լոյս քո եւ փառք Տեառն ի վե-
րայ քո ծագեցին»:

Ուխտի այս օրվան առիթով կաղոթենք առ Աստված, որ Մայր Աթոռը շարունակե եր-
կար-երկար տարիներ ծաղկիլ և փառավորիլ իր առաքելության ճամփուն, նարկապես ե-
կեղեցական դասուն զորացումով և մեր բոլորիս ալ եկեղեցաշնորհ սպասավորությամբ:
Լույսը տարածված է և հասցված է մեզի առաջնորդությամբը Հայրապետին, որպեսզի մեր
Եկեղեցին ընդ երկայն ավուրս շարունակե իր առաքելությունը:

Այսօր ուխտի օր է, աղոթքի և վերանորոգման հարցումի: Ես անձնապես, ձայնակցելով
իմ հոգևոր եղբայրներուն և ժողովուրդին, կհայցեմ Աստուծմե, որպեսզի զորացնե մեզ հա-
վիտյան, որպեսզի Իր փառքը հաղթահարե երկրի բոլոր փորձություններուն և մեր հավատ-
քով զորացած ընթանանք հավիտյան՝ մեր հավատքը չզիջելով որևէ մեկ նոր երևույթնե-
րուն: Աղոթք և օրհնություն բոլոր անոնց, որոնք գործեցին և աշակերտիմք և հետևիմք ա-
ռաքելույթ կյանքին, ամեն:

# Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՏՈՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՋԱՆԳԱԿԱՏԱՆ ԽՈՐԱՆԻՑ

(8 նոյեմբերի 2003 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Շատ սիրելի ներկաներ և ուխտավոր հայորդիք այսօրվա հրաշարաշխ այս տոնի մասնակից:

Այսօր այս խորհրդաշատ և յուրահատուկ Սուրբ Պատարագի միջոցով, երկրի վրա երկինք խորհրդանշող այս Սուրբ Եկեղեցին, որը 1700 տարիներ սրբվել և յուրաքանչյուրիս նման մեր նախնյաց աղոթքով մաքրվել է ներկայությամբ և, ինչու չէ, սրբասուրբ այս Տաճարի յուրաքանչյուր կենդանի քարի կենդանացումով ու զորությամբ, կենդանացնում և զորացնում է մեզ այսօր: Լավ գիտեք, որ միշտ չէ, որ հավատացյալը գալիս է Ս. Պատարագի և իրեն երևելի չի լինում այն: Սակայն եթե առավել անկեղծանանք՝ այս Էլ իր յուրահատուկ խորհուրդն ունի, որ տարվա մեջ միայն այս օրը, այս տոնին, Ս. Պատարագը հրեշտակների նման անտեսանելի է, խորհրդավոր և միևնույն ժամանակ շնորհաշատ և այսչափ բարեխոսական և միջնորդական է:

Այսօր, սիրելիք, երկինք ու երկիր միավորվելով՝ հոգով և ճշմարտապես երկրպագում ենք անեղ Աստծուն, Արարչին երկնի և երկրի՝ ասելով. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14): Եվ այսօր Ս. Գաբրիել և Ս. Միքայել հրեշտակապետների և իրենց փառաբանակից երկնային զորաց հիշատակությունն է տոնախմբում մեր Մայր Եկեղեցին, հրեշտակներին և սրբերին դիմելով՝ խնդրում է իրենց հաղթանակած բարեխոսությունը մարտնչողներիս համար, քանզի նրանք երկրի վրա պայքարի իբրև արդյունք հաղթել են աներևույթ թշնամուն և իրենց արդարությամբ և մաքուր կենցաղավարությամբ միավորվել Աստուծո հետ՝ սպանձնելով Աստծո առաջ մեր միջնորդությունը:

Հրեշտակներն առավել լինելով Աստծո անդրանիկ սրբասաց փառաբանող բանակներ՝ վանեցին բանսարկու և բոլոր չար հրեշտակներին, ովքեր Աստծո կամքին հակառակվեցին, և բարու ու լույսի այս բանակներն իրենց հնազանդությամբ, առաքինի քաջությամբ ու սրբությամբ, անարյուն իրենց մարտիրոսությամբ աստվածային շնորհներով առատացան և փառքով պսակվեցին Արքայության մեջ անմահ Արքայի հետ միասին:

Նրանք եղան նաև մարդկության պահապանները և առաջնորդները երկնային հավիտենության, նրանք եղան մարդկության փրկության ավետախոսներն Աստվածամոր անձի միջոցով և Աստծո բոլոր պատգամների հաղորդակիցներ, մեր անդրանիկ եղբայրներ, որ կոչվեցին նաև դասք անդրանկաց: Եղան ոչ միայն մեզ Աստծո կամքը հայտնողներ, այլև մարդու և Աստծո միջնորդ և հաշտարար՝ մեր իսկ փրկությանը հետամուտ:

Աստված, սիրելիներ, ի սկզբանե անտի յուրաքանչյուր մարդու մի պահապան հրեշտակ է կարգել մեր մշտական զգաստության համար, քանզի կամենում է, որ «ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեմք»:

Սիրելիներ, այսօր, այս խորհրդաշատ պահին, եկեք միասին աղոթքով միավորվենք և Տիրոջից Իր խաղաղության հրեշտակին հայցենք յուրաքանչյուրիս համար, որպեսզի գալով մեր յուրաքանչյուրիս պահապան այդ հրեշտակը, պահի ու պահպանի մեզ անխռով ու անվրդով, առաջնորդի մեզ Արքայության ճշմարիտ և սրբացնող ճանապարհով դեպի անեղ, անմահ Արարիչ Աստված, և միասին աղոթքով միանանք՝ ասելով. «Որ անդադար օրհնաբանիս ի դասուց հոգեղինաց երկնաւոր զուարթնոցն, արժանաւորեայ զմեզ ռալխլ փառաբանութեամբ ընդ սուրբս Քոյ երկրպագել մեծի եւ ահաւոր փէրութեանդ Քոյ յաւիտեանս յաւիտենից»:

*«Շնորհք, սէր, խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանս. ամէն»:*

# Տ. ՏԱԹԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 նոյեմբերի 2003 թ.)

Սիրելի եւ բարեպաշտ հաւատացեալներ,

Այսօր նուիրական պարտք է մեզի, գոհութիւն եւ փառք մատուցանել Աստուծոյ. մեր կեանքին մէջ մեզի պարգեւած Իր շնորհքներուն համար, որոնցմով կը գտնենք մեր հոգեւոր մխիթարութիւնը եւ ուրախութիւնը, Իր անբաւ ողորմութեամբը:

Ահա այսպիսի շնորքի կ'արժանանք մենք այս պահուս, երբ կը բախտաւորուինք Ուխտի Պատարագ մատուցանել այս Սուրբ Տաճարին մէջ, որուն կառուցման եւ սրբագործման 1700-ամեակի Յոբելինական Տարի հռչակուած է Ազգիս Ընդհանրական Հայրապետին Սրբատառ Կոնդակով:

Արդարեւ որքան քաղցր կը հնչեն հոն Վեհափառ Հօր խօսքերը՝ ուղղուած աշխարհասփիւռ իր հաւատաւոր զաւակներուն, երբ ի մէջ այլոց կ'արտայայտուի ըսելով. *«Այսօր Մենք ենք կրողները Սուրբ Էջմիածնի Խորհրդի եւ շնորհընկալները՝ տօնախմբելու հայոց Մայր Տաճարի 1700-ամեայ յոբելեանը»:*

Բացառիկ ժամանակի մէջ ապրելու բախտաւորութեամբ, երջանիկ սրտերով, այսօր, մեզի համար նուիրական պահ մըն է կատարել Սուրբ Պատարագի Խորհուրդը, հանդիպիլ Աստուծոյ Միածին Որդւոյն, Ամենայն Հայոց այս Սրբավայրին մէջ, մեզի հետ ունենալ Պրագիլահայ Համայնքի Հաւատացեալներու խոնարհ զգացումները, ապրելու համար պատմական այն սրբազան պահը, որ եղաւ Հրաշալի Տեսիլքը մեր Հաւատքի Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին:

Անհուն երախտիքով լեցուած են մեր սրտերը եւ հոգիները այս պահուս, երբ Աստուծոյ կամքով պարգեւատրուած կը զգանք ապրելու եւ շնչելու հոգեպարար այս մթնոլորտին մէջ: Որքան շնորհակալական զգացումներով համակուած ենք այսօր, երբ մեր Սրբազնագոյն Հայրապետին. Նորին Սրբութիւն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաւէրով եւ կարգադրութեամբ, երջանիկ առիթը կը շնորհուի մեզի բարձրանալու այս Սուրբ Սեղանին առջեւ, վերապրելու 303 թուին Հայոց աշխարհի մէջ տեղի ունեցող հրաշալի այն օրը, երբ *«Աստուած կերեց մեր հողը, դրեց խարիսխ հաւատի ու կառուեց կամար Սրբազան Ուխտի»:*

Այսօր երբ կանգնած ենք այս Սուրբ Տաճարին Յոբելեանական բացառիկ տարեդարձին դէմ յանդիման, պարտինք խորհրդածել, որ Ան լոկ Հայրապետական Աթոռ եւ Աղօթավայր մը չէ եղած մեր Եկեղեցիին եւ ժողովուրդին համար: Ան 1700 տարիներէ ի վեր կանգնած կայ հայ ժողովուրդի Մայր հողի վրայ, իբրեւ վկայութիւն, Նախախնամութեան կողմէ կատարուած այն ուղիղ ընտրութեան, որ Հայ Ազգին համար եղաւ եւ ան կոչուեցաւ «Նոր Իսրայէլ»:

Եղան դառն եւ դաժան ժամանակներ, որ այս Տաճարը մնաց մինակ եւ ամայի. սակայն երբեք անտէր: Չպակսեցան անոր հանդէպ փարագիր հայ ժողովուրդի համակ սէրն ու հաւատարմութիւնը: Ան եղաւ հաւատացեալ հայու ամենօրեայ նիւթը աղօթքի, հայ հոգիի խորքէն բխող, հառաչանքով եւ արցունքով դէպի Աստուած բարձրացող, ի խնդիր Այս Միածնաէջ Տաճարի հասպարութեան եւ անապատութեան, քանզի, ինչպէս կը վկայէ մեր Սրբազնագոյն Հայրապետը իր Կոնդակին մէջ՝ *«Ամէն հայի համար անվիճարկելի միակ սրբութիւն է Սուրբ Էջմիածինը. հայ ու քրիստոնեայ ապրումի պարունակը»:*

Այո՛, եղան նաեւ դառն ժամանակներ, երբ նոյնիսկ Հայոց Հայրապետները, որպէս Մայր Աթոռի գահակալներ, փարաբախտ պայմաններու բերումով, հեռու մնացին իրենց ամբողջ կեանքի ընթացքին, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարէն, ու թէեւ բնաւ բախտը չունեցան փեսնելու իրենց սեփական աչքերով զԱյն, բայց սիրեցին, հաւատարիմ եւ մանաւանդ կապուած մնացին անոր, իրենց հետ ամբողջ հայ ժողովուրդի այն հաւատքը, որ ճակատագրուած էր ապրելու հեռու Մայր Հողէն եւ Սուրբ Էջմիածնէն:

Այսօր կ'ապրինք համեմատաբար նպաստաւոր պայմաններու մէջ: Հայ ժողովուրդը բախտաւորուած է տեսնելու իր Մայր Հայրենիքը ազատ եւ անկախ պայմաններու մէջ: Ցաճախ առիթներ կը արեղծուին Ուխտի գալու Սուրբ Էջմիածին: Անցեալի արգելքներն ու դժուարութիւնները վերացած են այլեւս, սակայն այսուամենայնիւ, հայ ժողովուրդը, ճակատագրի բերումով, իր կարեւոր տոկոսով կ'ապրի Սփիւռքի պայմաններուն մէջ, ուր շատ անգամ օտար մշակոյթի եւ կենցաղի ազդեցութեան տակ, անծանօթ եւ հեռու կը մնայ իր հարազատ Եկեղեցիէն, Մայր Հայրենիքէն, լեզուէն, եւ հետեւաբար անծանօթ իր սեփական պատմութեան եւ մշակոյթին:

Այսպիսի փխուր եւ մտահոգիչ պայմաններու մէջ ապրող գաղութի մը առաջնորդին մտահոգութիւններն են ասոնք, զորս կ'ուզենք բերել այսօր, Ուխտի այս Պատարագի Սուրբ Խորհուրդին, խնդրելու համար Միածին Որդիին եւ մեր Փրկչին Օրհնութիւնն ու օգնութիւնը անոնց համար:

Այո, փխուր է մտածել, որ հեռաւոր այդ ափերուն, բազմամիլիոն մարդոց եւ ցեղերու այդ խառնարանին մէջ, ուր կեանքը սանձարձակ եւ զուրկ բարոյական ամէն հասկացողութենէ, արագընթաց կը սլանայ, իր յորձանքին մէջ կուլ տալով մեր գաղութի ինքնութեան գիտակցութիւնը, երիտասարդ սերունդներու ազգային, բարոյական համոզումները եւ անոնց հոգեւոր կեանքի բոլոր ըմբռնումները: Նման խճողուած, ապականած ժխորի եւ շփոթ մթնոլորտի մէջ, Հայ Եկեղեցւոյ զանգի ղօղանջը յաճախ անհասանելի եւ խուլ է իր հաւատացեալներուն ականջներուն:

Հայ Եկեղեցին, այո, բաց է, լոկ Խորհրդակատարութիւններ մատակարարելու համար: Հայ հաւատացեալի հոգիներէն եւ սրտերէն բարձրացող աղօթքը շատ անգամ Շնորհալիի, Նարեկացիի եւ Մեսրոպի շունչովն ու հոգիովը չեն պարունակուած: Աւետարանի եւ Տիրոջ Խօսքի Պատգամը սփիւռքաբար յաճախ պէտք են փոխանցուիլ օտար ոճով եւ ձեւով:

Այս աննպաստ պայմաններու տակ, ծանր ու դժուար են հաւատքի եւ ազգային գիտակցութեան պահպանման աշխատանքները, համայնքի մը մէջ, ուր ամէն օր նահանջ կայ, եւ ուր անխուսափելիօրէն իր զաւակներէն մին կը կորսուի:

Մենք այսօր երբ Ուխտի Սուրբ Պատարագ կը մատուցանենք, կը բերենք մեզի հետ Սուրբ Էջմիածնի պանդուխտ զաւակներուն ցաւերն ու փառապանքները, եւ կը խնդրենք մեր հաւատքի Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութիւնը առ Միածին Որդին Աստուած, որ պահպանէ հայ մարդը իր հաւատքին մէջ, ուր որ ալ գտնուի ան: Փրկէ զանոնք օտար հոսանքներէ, որոնք կը հեռացնեն մեր սփիւռքի որդիները իրենց հարազատ մօրմէն, արմատներէն, Մայր Հայրենիքէն եւ Առաքելահիմն Աստուածակերտ մեր Մայր Եկեղեցիէն եւ Սուրբ Էջմիածնէն:

Այս առիթով մեր պաղատանքն ու աղօթքն է, որ մեր հայրերուն Տէրը հաստատ, անսասան եւ պայծառ պահէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Առողջ եւ արեւշատ օրեր պարգեւէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արժանաւոր յաջորդին՝ Ամենայն Հայոց մեր սիրեցեալ Հայրապետին, շնորհելով առաւել իմաստութիւն եւ կորով, առաջնորդելու, ընդ երկար աւուրս, իր Փառաւոր Հօտը ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Թող Տէրը շնորհէ նաեւ բոլոր Իր սպասաւորներուն առողջ եւ յարատեւութեան կամք եւ ոգի, որպէսզի համբերատարութեամբ եւ հաստատ հաւատքով կարենան առաջնորդել իրենց յանձնուած բանաւոր հօտերուն հոգեւոր եւ ազգային կեանքը, առաջնորդելով, այս աշխարհի մէջ, անոնց հայեացքը դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Մայր Հայրենիք, եւ անոնց հոգեւոր կեանքին մէջ՝ անոնց հոգիները դէպի աղբիւրը ճշմարտութեան, Աստուծոյ Խօսքին եւ մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Փրկարար եւ Յաւիտենական Կեանքին, շնորհքովը Հոգւոյն Սրբոյ, ընդ որում Օրհնեալ էք, յաւիտեանս յաւիտենից, ամէն:

# Տ. ԱՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(16 նոյեմբերի 2003 թ.)

*«Հայր մեր որ յերկինս...»:*
(Տերունական աղոթք)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ.

Այսօրվա Ս. Պատարագով իր վերջավորության կուգա Ս. Խաչի Տոնդավարեն սկսած Խաչի շրջանը, կթևակոխենք Հիսնակի շրջանեն ներս: Կսկսի այլևս Հիսուս Քրիստոսի ծննդյան և Աստվածահայտնության պատրաստության շրջանը, զոր կարժեվորենք հոգեպես և բարոյապես պատրաստվելով: Հիսնակը մեզի կհիշեցնե մեր առաջին նախածնողքը, երբ Աստված զանոնք ստեղծեց և դրավ եդեմական պարտեզին մեջ, որպեսզի վայելեն նյութական պտուղները՝ ուրախանան, երջանկանան և այդ ուրախության ու երջանկության մեջ երգեն փառքը Աստծո, սակայն երբ մեղքը սողոսկեցավ մարդու կյանքեն ներս, Աստված երբ կարտաքսեր զանոնք դրախտեն, ըսավ օձին. «Քու և այդ կնոջ միջև թշնամություն պիտի դնեմ. մարդու սերունդեն պիտի գա մեկը, որ քու գլուխդ պիտի ջախջախե» (հմմտ. Ծննդ. Գ 15):

Ահավասիկ ավետիսը, մեղքի պարտության ավետիսը: Եվ այդ օրվնե սկսած մեղավոր մարդիկ սկսան սպասել այդ ակնկալված Մեսիան: Դարեր շարունակ Իսրայելի ժողովուրդը սպասեց այդ Մեսիան: Հին Կտակարանի Օրենքը և Մարգարեությունները սերնդյալ կնրպով պահեցին այդ ճշմարտությունները: Եվ երբ ի լրումն ժամանակի ծնավ Հիսուս Քրիստոսը Ս. Կույս Մարիամ Աստվածածնեն՝ մարմնացավ, մարդացավ և ծնավ կատարելապես: Ան լույս էր, մեղքին խավարը փարատող լույսն էր, և մարդիկ, որոնք դարերով սպասած էին զինք, նախընտրեցին ընդունիլ խավարը, քան թե լույսը: Եվ անոնք, որոնք ընդունեցին այդ լույսը, կոչվեցան Աստծո որդեգիրները: Ինչ առանձնաշնորհ, մենք այլևս Աստծո որդեգիրներն ենք, մենք այլևս սատանայի իշխանության տակ չենք: Քրիստոս Իր արյունով գնեց մեզ սատանայի իշխանութենեն և փշրեց մեղքի կապանքները:

Երբ երեխա մը կմկրտվի, քահանան երբ երեխան կմտցնե ավազան, կըսե. «Գնեալ արեամբն Քրիստոսի, ընդունի յորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինի ժառանգակից Քրիստոսի»: Այո, Քրիստոս Իր անկրկնելի Ս. Պատարագը մատույց Գողգոթայի բլուրին վրա: Այդ արյունով գնեց մեզ և թաղվեցավ, հարություն առավ մեռելներեն և համբարձավ փառոք առ Հայր: Այդ օրվնեն սկսյալ Քրիստոսի մարմինը եղող Եկեղեցին իր ողջ անդամներով սկսավ սպասել Անոր Երկրորդ Գալստյանը: Ավետարաններուն մեջ ընդարձակ հատվածներ կան այդ մասին: Պողոսի և Առաքելական թուղթերուն մեջ մեջբերումներ կան, հորդորներ կան այդ մասին: Անոր Երկրորդ Գալուստին մասին ոչ մեկ տարակույս կա: Եվ Եկեղեցին ալ

անցուցած է իր Հավատո հանգանակին մեջ՝ ըսելով. «Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»:

Սիրելի ժողովուրդ, ահավասիկ Հիսնակն այդ սպասման շրջանն է: Եվ մեր երանաշնորհ Հայրապետներն իմաստությունն ունեցած են Զատկի մեջ տաղավարի սկզբնավորությունը դնող Բուն Բարեկենդանին և Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության Տաղավարին սկզբնավորությունը դնող այս կիրակիի Բարեկենդանին շեշտը դրած նն աղոթքի վրա: Այսօրվան աղոթքը եթե մտիկ ըրիք, հոն Քրիստոս կսորվեցնե, թե ինչպես պետք է աղոթել: Պետք է սկսել Տերունական աղոթքը. «Հայր մեր որ յերկինս ես...»: Ինչ ուրախություն Նոր Կտակարանի հավատացյալներուն համար, ինչ մենաշնորհ, փակվեցավ Հին Կտակարանը, որտեղ վախ ու սարսափ ազդող Եհովա մը կար, ուրտեղ վրեժխնդիր Եհովա մը կար, որ ամեն մեկ հանցանքին հարված կիջեցներ:

Հավատացյալն ինչպե՞ս պիտի սիրե Աստված մը, որ յուրաքանչյուր հանցանքին, փոքր հանցանքին հարվածներ կիջեցներ: Զավակ մը ինչպե՞ս պիտի սիրե իր հայրը, երբ հայրը ներողամտության ոգի չունի ու հասկացողություն չունի և իր զավակին ամեն մեկ հանցանքին համար պատիժներ կսահմանե: Այսպես էր Հին Կտակարանին մեջ Եհովան: Եվ այժմ Քրիստոս կսորվեցնե մեզի. «Աստված քու Հայրդ է, մոտեցիր Անոր բաց սրտով, անկեղծությամբ, աղոթե Անոր, աղոթքը Հայր ու զավակին միջև հարաբերության միակ միջոցն է»: Պետք է աղոթքներն ըլլան անկեղծ, մտերմիկ, պարզ, փաքուկ, հայր մը իր զավակին հետ և կամ զավակն իր հոր որքան կխոսի այդպես ազատ, անկեղծ, այդքան հաճույք կզգան իրարմե: Եվ անոնք, որոնք կծանձրանան աղոթք մատուցանելե, աղոթելե, անոնք Աստուծո որդեգիրներ չեն ընդունվիր, անոնք չեն կրնար կապ հաստատել իրենց երկնավոր Հոր հետ:

Ամեն աղոթք աղոթք չի նկատվիր: Աղոթք, որ անձնական շահերուն համար կմատուցվի, աղոթք չէ: Ընդհանրապես մարդիկ իրենց հիվանդության, իրենց ձախողության, իրենց տառապանքի, ցավի ու վիշտի համար կուգան աղոթելու: Մի կարծեք, թե Աստված մտիկ կընե ատոր: Պիտի աղոթեք, երբ հարուստ եք, պիտի աղոթեք, երբ առողջ եք, երբ երջանիկ եք, երբ կրնաք ուտել, խմել, զվարճանալ, պետք է փառք տալ Աստծո և այդ փառքը ձեր աղոթքով է, որ պետք է մատուցանեք Անոր:

Այո, սիրելի հավատացյալներ, 1700 տարիներե ի վեր մեր երանաշնորհ Հայրապետներն աղոթեցին մեզ համար, որպեսզի Աստված անսասան պահե Իր իսկ ձեռքով հիմնադրած այս Սուրբ Եկեղեցին: Հայրապետներն աղոթեցին իրենց տառապած ժողովուրդին համար, որովհետև քրիստոնեական կրոնքն իսկապես հայու համար տառապանքի կրոնք եղավ, ցավի ու վիշտի կրոնք եղավ: Եթե կարդաք մեր ազգային ու եկեղեցական պատմությունը, պիտի տեսնեք, թե ի՛նչ դեպքեր պատահած են, որոնք ցավ, տառապանք պատճառած են այս սուրբ ազգին: Եվ պատճառն այն է, որ հայ ազգը մյուս ազգերեն ավելի սերտ կապված է իր Փրկչին, հավատացած է իր վարդապետության և, հետևաբար, զոհած է ինքզինքը: Այդ պատճառով ալ միշտ պայքարի ելած է:

Այժմ կարգը մերն է, սիրելիներ, աղոթել Ս. Գրիգոր Լուսավորչեն սկսյալ մինչև վերջին երանաշնորհ Հայրապետը Գարեգին Առաջին, աղոթել անոնց հոգիներու փրկության համար, անոնք մեզի համար սուրբ պետք է նկատվին, որովհետև տանջվեցան տանջված ժողովուրդին հետ և սակայն անկոտրուն կամքով առաջնորդեցին այս վիրավորյալ ժողովուր-

...մեր բոլորի սիրելի, արժանաւոր-
դը դէպի փայլուն ապագա: Մենք կաղոթենք նաև այժմու մեր բոլորի սիրելի, արժանաւոր-
փիր ու պատվական Հայրապետին՝ Ն. Ս. Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Վեհափառին համար:
Թող Աստված, առողջությամբ ու հաջողությամբ պսակված, երկար կյանք պարգևե Անոր,
փակապար հաջողություն Իր աստվածահաճո գործունեության մեջ: Եվ թող Աստված՝ Դի-
սուս Քրիստոս, անսասան պահե Իր իսկ հիմնած Ս. Էջմիածնի եկեղեցին:

Ուրախություն է մեզ այսօր մատուցանել մեր Ուխտի Ս. Պատարագը, որում մենք ալ,
մյուս եպիսկոպոս եղբայրներուն կարգին, արժանի եղանք այս Խորանը բարձրանալ և ներ-
կայանալ Դիսուս Քրիստոսին, մատուցանել մեր աղոթքները թե՛ մեր Մայր Եկեղեցիին հա-
մար, թե՛ մեր պատապած ժողովուրդին համար: Մենք կաղոթենք նաև մյուս նվիրապետա-
կան Աթոռներուն և գահակալներուն համար, կաղոթենք մեր եպիսկոպոսաց, վարդապե-
տաց, քահանայից և սարկավագաց դասուն համար և ո՛ղջ համայն ժողովուրդին համար և
կըսենք միաբերան. «Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի Քո անշարժ պահեա. ամէն»:

# Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 նոյեմբերի 2003 թ.)

*«Անձն իմ ի ձեռս քո յամենայն ժամ»:*
(Սղմ. ՃԺԸ 109)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատավոր ժողովուրդ, այսօր՝ նոյեմբերի 21-ին, երեքամյա Սուրբ Կույսի՝ տաճարին ընծայելու տոնն է:

Աստվածամայրը, ինչպես գիտենք, խոստացված զավակ էր, և իր ծնողները՝ Հովակիմն ու Աննան, ուխտել էին, որ եթե երեխա ունենան, ընծայելու են Տիրոջը: Եվ այդպես էլ եղավ: Երբ լրացավ իրենց դստեր առաջին տարին, ծնողները նրան նվերներով հանդերձ տարան տաճար՝ Աստծուն ընծայելու: Իսկ երբ լրացավ երրորդ տարին, ծնողները, կրկին վերցնելով իրենց հետ ընծաներ, տարան տաճար և հանձնեցին նրան Զաքարիա քահանայապետին: Երբ երեքամյա Մարիամը մտավ տաճար, առանց օգնության բարձրացավ տաճարի տասնհինգ աստիճաններով, որոնք տանում էին դեպի Մեծ սեղանը, և բոլորին զարմացրեց:

Տաճարում Ս. Կույսը սնվեց աստվածային օրենքի և առաքինության մեջ և իր կյանքն անցկացնում էր մշտնջենական աղոթքներով:

Երբ լրացավ Մարիամի տասնչորս տարին, քահանայապետը նրան պատվիրեց ամուսնանալ, ինչպես մյուս կույսերին, սակայն նա չհամաձայնեց՝ ասելով, որ իր ծնողներն իրեն նվիրել են տաճարին, և ինքն Աստծուն ուխտել է կույս մնալ: Քահանայապետերն սկսեցին փնտրել պարկեշտ ու Աստծու երկյուղն ունեցող, ամեն տեսակ չարությունից զերծ, բոլոր մարդկանցից վկայված մի մարդու, որպեսզի Կույսին նրա պահպանությանը հանձնեն, որպեսզի պահպանվի Բանն Աստծու բնակարանը, ըստ Եզեկիել մարգարեի տեսիլքի. «Տեսնում էի մի փակ ու կնքված դուռ, և ոչ ոք չէր մտնում և դուրս չէր գալիս նրանով, բայց միայն Իսրայելի Տեր Աստվածը» (տե՛ս Եզկ. ԽԴ 2):

Քահանաները դիմեցին Աստծուն, որ Նա Ինքը ցույց տա այդ մարդուն: Եվ երկնքից մի ձայն ասաց. «Հավաքիր Իսրայելի բարեպաշտ որդիների գավազանները և դրանք դիր խորանում և ում գավազանը որ կծաղկի, նրան էլ տուր այս կույսին»: Այդ ժամանակ քահանայապետը հավաքեց գավազանները և դրանք դրեց խորանում: Մի որոշ ժամանակ անց Հովսեփի գավազանը ծաղկեց, և Սուրբ Հոգու շնորհը երևաց նրա վրա: Այն օրերին Հովսեփը քառասունմեկ տարեկան էր: Սակայն քանի որ Հովսեփը հանձն չէր առնում ընդունել Մարիամին, քահանաները նրան ասացին. «Ո՛վ մարդ, Աստծուն մի՛ հակառակվիր, հիշիր Կորխին ու Դաթանին, քանզի Տիրոջից է, որ վիճակը քեզ է ընկել»:

Ապա քահանայապետն օրհնեց Կույսին և նրան հանձնեց Հովսեփին, ով էլ հնազանդորեն առնելով Մարիամին, այսինքն՝ ի պահպանության վերցնելով Բանն Աստծո տաճարը, տարավ Նազարեթ՝ իր տունը, որը Գալիլիայի կողմերում է, և կարգեց իր զավակների հետ: Կույսը չորս ամիս նրա տանն ապրելուց հետո՝ հրեշտակից ընդունեց հղության ավետիսը:

Հովսեփը մեծ երկյուղով ծառայում էր Կույսին, մինչև մեր Կենսարարի երեսունմեկ տարին լրանալը, և ապա փոխվեց այս աշխարհից յոթանասուներկու տարեկան հասակում:

Սիրելի հավատացյալներ, ի՞նչ է ուսուցանում այս տոնը մեզ:

Այս տոնը մեզ՝ քրիստոնյաներիս ուսուցանում է նվիրվել Աստծուն օրորոցից մինչև գերեզման, իսկ մասնավորապես ուսուցանում է ծնողներին կրթել և դաստիարակել իրենց որդիներին հավատքի և բարեպաշտության մեջ:

Բայց գերազանց խրատ է տալիս այս տոնը քրիստոնյա կանանց և աղջիկներին՝ նմանվելու Ս. Կույսին: Ինչպես Աստվածամայրը, սկսած երեք տարեկանից, մնաց Տաճարի հովանավորության ներքո՝ իր ժամանակը պնօրինելով աստվածային օրենքների և աղոթքների ուսուցմամբ, այնպես էլ նրանք փոքր հասակից պիտի կրթվեն և դաստիարակվեն հավատքի և բարեպաշտության հոգով, աստվածային օրենքով և աղոթքով:

Այս տոնը, սիրելի հավատացյալներ, վերոնշյալներից զատ, մեզ ուսուցանում և կոչում է ինքնանվիրումի, այնպիսի ինքնանվիրումի ու ինքնաընծայման, որ ունեցան մեր նախնիները:

Սիրելի քույրեր և եղբայրներ. Աստված ազգերի դարավորոփ երթում մեր ազգին ռահահորդի հաղթական քայլք է շնորհել, և սա մեր նախնիների ինքնաընծայման և անսակարկ նվիրումի շնորհիվ: Ովքեր անցան երկնքում զետեղված ցանձանակի, հավաքական կյանքի կենդանի և հավերժորեն բաց գանձանակի, այսինքն՝ պատմության առջևից, Ավետարանի այրի կնոջ նվիրումով, ընծայեցին Աստծուն այն, ինչ որ ունեին.

Այսպես, սիրելիներ, մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչն իր արցունքն է դրել՝ որպես անսպառելի յուղ մեր հավատքի անմար ճրագի, և անշեջ պահել Արագածի կատարի կանթեղի խորախորհուրդ լույսը:

Օշականի սուրբն իր գիրն է դրել այնտեղ՝ պասնաքանյա պատվիրանների նման այն հայի հոգում դրոշմելով՝ որպես մեր ինքնության դիմագիծ:

Ս. Եզնիկ Կողբացին իր միտքն է դրել՝ որպես կյանքի փիլիսոփայություն:

Ս. Ղևոնդ Երեցն իր թերևս բեկված խաչն է զետեղել այնտեղ՝ որպես զոհողության գաղափարին իբրև վկայություն և ներշնչող ուժ:

Իրենից անբաժան Ավարայրի Վարդանը, անպայման խաչի կողքին, իր արյունոտված սուրն է դրել՝ որպես խորհրդանիշ հայրենապաշտպանության և եկեղեցապաշտպության:

Ս. Մովսես Խորենացին մեր ժողովրդի մեծության ոգին արթուն պահող իր մատյանն է դրել այնտեղ՝ որպես փառքի կոթող:

Ս. Գրիգոր Նարեկացին իր աղոթքն է դրել՝ որպես հոգու սնուցման անմահացուցիչ կերակուր:

Ս. Ներսես Շնորհալին իր շարականահյուս տողերն է դրել՝ որպես հայ հոգու նվագերգություն, որը քաղցր մեղեդիների զորությամբ, հոգեցրավ ու սրտահույզ ձայներն ալիքներ ու շեշտեր հնչեցրեց գանձանակի անպարագիծ տարածության մեջ:

Ս. Գրիգոր Տաթևացին իր գրքերն է գրել՝ որպես նախանձախնդրության վկայություն:

Գանձանակի առջևից անցան հայ բյուրավոր նահապետներն ու իրենց կյանքի փակված էջերը զետեղեցին որպես հաղթանակի մղող ուժ:

Անցան մեր կառուցող վարպետները, ովքեր բերեցին այնտեղ հավերժականեցում ու վեհասլաց, վեհ ու վսեմ կաթողիկեների աստվածամերձ հարևանությունը երկնքի հետ, որպես աստվածափնտրության վկայություն:

Անցան քանդակագործներ, ովքեր մահվան վրա կյանքի հաղթանակը երգող գեղազարդ խաչքարերի ասես ամբողջական անփառներ ընծա բերեցին՝ որպես անմահության խորհրդանիշ:

Անցան գեղագիր ու գեղակազմ ձեռագրերի գրիչներ ու ծաղկողներ, և նրբագիծ ու գունագեղ մանրանկարների ճոխ մատենադարաններ ամփոփեցին այդ անպարփակելի գանձանակի մեկ անկյունում:

Ահա այսպես, սիրելի քույրեր ու եղբայրներ, հազար ու մեկ հայ սերունդներ անցան գանձանակի առջևից և հազար ու մեկ տեսակ նվերներ դրին այնտեղ, բայց բոլոր այս ընծաների մեջ՝ անկախ նրանց այս ողջ այլազանության, մի բան կար, որ հասարակաց էր բոլորի համար, - նրանք տվեցին այն, ինչ որ ունեին՝ իրենց ամբողջ կյանքը, նման այրի կնոջը, առանց հաշվի ու սակարկության, այլ տարված՝ գանձանակի Տիրոջ՝ երկնային Վարդապետի հանդեպ ունեցած իրենց սիրո ու նվիրումի զորությունից և ապա, հավատքի՝ քրիստոնեական կրոնի և հայ ցեղի առաքինությունների անդիմադրելի ուժի մղումով:

Արդարև, սիրելի հավատացյալներ, գանձանակի առջևից այրի կնոջ հետևողությամբ, այլ խոսքով՝ աստվածահաճո ձևով անցնելու պայմանն իր բարձր և վեհ իմաստի մեջ ուրիշ բան չէ, եթե ոչ նվերը նետել գանձանակի մեջ այն անխախտ գիտակցությամբ և համոզումով, որ հոգեկանը գերազանց արժեք է նյութականի դիմաց: Մինչ վերջինս փոխվում է, նվազում, աճում, կորսվում ու վերստին գտնվում, այլ խոսքով մարդուն է պատկանում, առաջինը մարդն իսկ է և անկորնչելի՝ իր բնությամբ ու գերազանց ու բացարձակ արժեքով:

Գանձանակը հավետ բաց է... և հիմա մենք՝ ապրողներս ենք անցնում այդ գանձանակի առջևից... և հիմա, այլ կերպ ասած, մեր ինքնաընծայման ու ինքնանվիրումի հերթն է...

Սիրելիներ, մեր կյանքից և անձից զատ ուրիշ որևէ բան չունենք Աստծուն արժանի, որպեսզի նվիրենք, ուստի այսօրվա տոնի խորհրդով զորացած, ընծայենք մեզ Աստծուն, որպեսզի ուժականությունն ու ունակությունն ունենանք սաղմոսերգուի խոսքերով դիմելու Տիրոջն՝ ասելով. **«Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ»:**

**«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»:**

# Տ. ԴԱՎԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(23 նոյեմբերի 2003 թ.)

*«Միշտ անշարժ պահիս զաթոռս Հայկազնեայս»:*
(Շարակնոց)

Շարական մը, որ յուրաքանչյուր Պատարագի առաջին թափորի ավարտին դպիրները կերգեն՝ հայցելով, խնդրելով Տիրոջմե, որ Տերը անսասան պահե Հայկազյան Աթոռը, Հայկական Ս. Աթոռը, Ս. Էջմիածինը, որու Եկեղեցվո նավակատիքի 1700-ամյակն է այս տարի, ուր Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ յուրաքանչյուր թեմակալ եպիսկոպոս կամ ոչ թեմակալ եպիսկոպոս ուխտի Ս. Պատարագ մատուցանելու իրավերը ունեցավ այստեղ, և երախտապարտ ու շնորհակալ եմ Վեհափառ Հայրապետին, որ զիս ալ հրավիրեց այս կիրակի օրվա Ուխտի Ս. Պատարագը մատուցանելու և միաժամանակ կատարելու օծումը հինգ քահանա հայրերու:

Էջմիածինը, սիրելի եղբայրներ և քույրեր, քրիստոնեական Եկեղեցվո մեջ և Հայ Եկեղեցվո մեջ ունեցած է և ունի մասնավոր նշանակություն: Կար ժամանակ մը, երբ քրիստոնեական աշխարհը կանտեսեր Հայ Եկեղեցվո առաքելականությունը և Հայ Եկեղեցվո, այսպես ըսենք, ինքնուրույնությանն առաջին դարերուն: Բայց վերջին էքյումենիք շարժումներե ետքը մեր հոգևորականներն ապացուցին, փաստեցին օտար Եկեղեցիներու մոտ, որ Հայ Առաքելական Եկեղեցին առաջին Եկեղեցին եղած է պատմականորեն, որ որպես պետական կրոն ընդունած է քրիստոնեությունը և անշուշտ անոր կողքին կառուցած է իր առաջին Տաճարը: Իսկ հայ ժողովուրդի համար Էջմիածինն ունեցած է բացառիկ նշանակություն, որովհետև մեր իղձերուն, մեր երազներու, մեր հոգևոր կյանքի այսպես մարմնացումն իր մեջ խտացուցած է:

Էջմիածնի բովեն անցած են մեր հոգիներու լուսավորիչը Գրիգոր, սրտերու լուսավորիչը Ներսես, մտքերու լուսավորիչը Սահակ, դիվանագետ մեծ եկեղեցականներ հանձին Սահակ Ձորափորեցիներու և Հովհան Օձնեցիներու, Սիմեոն Երևանցիներու և հայրենանվեր Կաթողիկոսներ՝ հանձին Ներսես Աշտարակեցիներու, Խրիմյան Հայրիկներու: Մարտիրոս, նահատակ հոգևոր պետեր հանձին Խորեն Մուրադբեկյանի, մեծ դիվանագետներ Գևորգ Չորեքչյան և Վազգեն Կաթողիկոսների և մեծ էքյումենիք ու մտավորական Գարեգին Առաջին Կաթողիկոսի:

Անոնց բոլորին հոգեծին մեկ զավակը 21-րդ դարու սկիզբեն ի վեր կհովվե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ հանձին Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի: Հայրապետ մը, որ կքաջալերե գիրն ու գրականությունը, կքաջալերե մեր հավատքի արծարծումը՝ կառուցանելով եկեղեցիներ, և ունի ուղիղ ու ներդաշնակ հարաբերություն հայ պետականության

հետ. և պտոր շնորհիվ մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը վստահաբար կընթանան դեպի հառաջ և հաստատուն կրնա պահել Հայկազյան Աթոռը, որու մենք կձգտինք:

Եվ Հայաստանյայց Եկեղեցին, այսպես ըսենք, ոսկի շղթա մըն է՝ հիները կան և այսօր ալ կգործեն և իրենց ծառայութենեն մաս մը կփոխանցեն հետզհետե նորերու և այսօր ուրախ առիթն ունի Հայ Եկեղեցին իր շարքերեն ներս ընդունելու հինգ նոր հոգևորականներ՝ հանձինս Տ. Հայրիկի, Տ. Հակոբի, Տ. Տիրանի, Տ. Հովնանի և Տ. Կյուրեղի: Քաջ գիտցեք, սիրելի նորած հոգևոր եղբայրներ, որ մուտք գործելով Եկեղեցիեն ներս՝ դուք անշուշտ ձեր ուսումնական շրջանին սորվեցաք մեր և Ընդհանուր Եկեղեցվո պատմությունը և ստացած բոլոր գիտելիքները հետզհետե ամբարեցիք, որ կարենաք ձեր հոգևոր կյանքի ընթացքին պայքարիլ և մնալ միշտ պատնեշի վրա ամուր և անսասան՝ պահելու համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, այն Եկեղեցին, որ նվիրապետական այն մեծ հաստատությունն է, որ իր մեջ կմարմնացնե մեր լուսավորչյան հավատքը, իր մեջ կմարմնացնե մեսրոպյան ոսկեղենիկ լեզուն, մեր ավանդությունները, մեր ընտանեկան բարքերը, մեր սովորությունները, և այս Եկեղեցին մեր գորովագութ մայրն է, որ Սփյուռքի և Հայրենիքի մեջ և ամենուրեք իր թևերու շուրջ կհավաքե իր զավակները:

Այսօր եկեղեցական ըլլալ, անշուշտ, մեծ հերոսություն և քաջություն կպահանջե, չի բավեր միայն ըլլալ ծիսագետ և ծիսակատար պաշտոնյա: Այսօրվա հայ եկեղեցականը պիտի ունենա այնքան ուսում, որ կարենա մրցիլ ուրիշ Եկեղեցիներու եկեղեցականներու հետ և, ինչու չէ, աշխարհական մտավորական դասի հետ. բայց այդ պաշարը մեկ օրեն մյուսը կարելի չէ ունենալ: Ձեր ամբողջ կյանքի ընթացքին, փոքր տարիքեն մինչև ձեր կյանքի ավարտը, պետք է ըլլաք ընթերցասեր, մնայուն կերպով կարդաք, ամբարեք, մարսեք և փոխանցեք: Ապա պետք է ըլլաք նաև աղոթասեր հոգևորականներ, որովհետև չի բավեր միայն գիտությունը, այլ աղոթքն անհրաժեշտ է: Մնայուն հարաբերությունը Աստուծո հետ, Քրիստոսի հետ պետք է ունենաք և այդ մնայուն հարաբերությունն ունենալու համար պարտիք ընթեռնուլ, կարդալ Ս. Գիրքը միշտ, ամեն օր, գեթ քառորդ ժամ, կես ժամ և անկե ստանաք պատգամը, որ ուղղած է մեզի Քրիստոս՝ փոխանցելու համար զայն ուրիշին: Ապա ընկերային հարցերու մեջ պետք է մոտ զգաք դուք ձեզի ժողովուրդին և օգտակար ըլլաք, ուր որ ալ գտնվիք և չանտեսեք մեր ժողովուրդը, որ այնքան կարիքն ունի հոգևոր խոսքերու, այնքան կարիքն ունի, այսպես ըսենք, հոգևոր կյանքի և անիկա կուզե փեսնել եկեղեցականի մեջ:

Եկեղեցականը միայն ուսումով, գիտության հմտությամբ չէ, որ պիտի կարողանա այդ ճամփան ցույց տալ ժողովուրդին, այլ նաև իր կյանքի օրինակով: Վստահ եմ, որ դուք այսպես Վեհափառ Հայրապետի կորովի, բծախնդիր, ուսումնատենչ սաներն եք, և Վեհափառը հոգևոր Հայր մըն է, որ միշտ պիտի քաջալերե ձեզ, եթե դուք իրոք մնաք ձեր ուղիղ ճանապարհին վրա:

Իմ մաղթանքս և աղոթքս է, որ Սուրբ Հոգին մնայուն կերպով ձեզ առաջնորդե, և Աստուծո ներկայությունն ըլլա միշտ ձեր բոլորի սրտերու մեջ՝ ի փառս Աստուծո և ի վայելումն ազգիս հայոց. ամեն:

# Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(29 նոյեմբերի 2003 թ.)

*«Աստուածատունկ այգւոյն հրեղէն պարիսպք եւ բարձր աշտարակք:*
*Ոսկեղէն բաժակք եւ ծիր մատռուակք Հայաստանեայց*
*Հայր հոգեւորք Բարդողոմէոս եւ Թադէոս:*
*Բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց»:*
(Շարական)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ահավասիկ, սիրելիներ, թե ինչպես է շարականագիր Հայրը դիմում Հայաստանում քրիստոնեության լույսը փարածած և քարոզած երկու սուրբ առաքյալներին նվիրված փոնի շարականում. «Աստվածատունկ այգու հրեղեն պարիսպներ և բարձր աշտարակներ: Ոսկեփայլ Աստուծո շնորհքի բաժակներ և ծիր մատռվակներ: Հայոց հոգևոր հայր Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս, բարեխոսեցեք Տիրոջ առջև մեզ համար»:

Քրիստոսի ծննդյամբ սկսվող թվականության առաջին տարիներին, Աստուծո անսահման սիրո իբրև արտահայտություն, Տիրոջ Միածին Որդին եկավ ու բնակվեց մեր մեջ՝ դառնալով մեր նման մեկը: Եկավ խոսելու, եկավ ապրելու, եկավ, ի վերջո, ճանապարհի ուղենիշ լինելու: Ուղենշեց և Իր անձնազոհ օրինակով հայտնեց Աստուծո գթառատության անսահմանությունը, պարզ ու հասարակ մարդկանց ընտրեց իբրև Իր խոսքի և Իր ավանդած ճանապարհի վկայողներ և արտահայտողներ, հասարակ և անգամ վախվորած ու երկմտող մարդիկ, սակայն արիացան և Աստուծո օրհնության ներգործումով քաջորեն փակավ-փակավ փարածեցին Քրիստոսի լույս հավատքն իրենց անձերն իսկ նվիրաբերելով և այդ ճանապարհին իրենց իսկ արյան ուժով հաստատելով: Տարածվեցին ու սփռվեցին, և նրանցից երկուսը վիճակվեցին Հայոց աշխարհին: Եկան կյանքի լույս խոսքով հեթանոսության խավարը փարատելու և Հայաստան երկիրը Աստծուն ուղեցրելու և իրենց սուրբ նահատակությամբ ավանդեցին հարության շնորհատու պատգամը փոխանցել հետագա սերունդներին, ինչն իրականացավ մեր նախնի հայրերի շնորհիվ:

Այսօր, սիրելիներ, երկնավոր Ուսուցչի առաքելությունն իրականացնողների տոնն է նաև: Եկեղեցու և ժողովրդի պայծառ ապագան իր հզոր կենսաուժն է, որ թաքնված է ամեն մի կրոնապարած վարդապետ-ուսուցչի մեջ, և մեր այսօրվա տոնախմբության ամբողջ շքեղության հաղորդողները դուք եք, շատ սիրելի կրոնի ուսուցիչներ: Ձեր բարձրասլաց աղոթքով և համբերատար ջերմեռանդությամբ, ձեր մասնակցությամբ Եկեղեցու սուրբ ու նվիրական գործին, և Քրիստոս այսօր էլ ձեզ է դիմում ասելով. «Երբեք ու երբեք, որեէ պարագայում չփկարանաք, այլապես ինչով պիտի համեմվի երկիրը հայոց»:

Այսօր դուք, սիրելի ուսուցիչներ, մեր ժողովրդի փարոսը դարձած, ձեր կյանքը համակ լույս դարձրած ազգի ճանապարհով ընծայվում եք Աստծուն՝ զինված համբերատարության հույսով, և առավել ապացուցում եք, որ կարող եք ի մի գալով, աղոթքի նրգեցողությամբ միացած առաքյալներին՝ վաստակել ձեր առաքելական վարձը, ինչին ճշմարտապես արժանի եք:

Քրիստոնեությունը, սիրելիներ, երբ ուսուցանվում է և, մանավանդ, կիրառվում կյանքի փորձով, այն դադարում է խոսք և դավանաբանություն լինելուց, այլ կյանք, ապրում և կենսավորված ուժականություն է դառնում: Այս առումով անգնահատելի է Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի գործունեության արդյունքը հանդիսացող ժրաջան մշակների առատ պտուղները՝ սկսած դեռևս 1991 թվականից, Վազգեն Առաջին Երջանկահիշատակ Կաթողիկոսից: Այնուհետև նոր թափ և լայնատարած գործունեությամբ կենսառուժ ստացած Լուսահոգի Գարեգին Առաջին Հայրապետի գահակալության շրջանին և այսօր Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Վեհափառի գահակալության օրերում, երբ մեր Եկեղեցու կրոնադաստիարակչական առաքելությունը և բարոյական ու հոգևոր արժեքները մտան դպրոցական կրթական շրջանակ, վերջապես զգացին, որ միասնաբար՝ Եկեղեցի և պետություն համագործակցությամբ, ժողովուրդն է շահելու:

Այսօր բոլորիս համար առիթ է մեծ ուժով վերանորոգվելու և վերահիմնավորված կենդանանալու: Երկնքի Արքայության առաքելավանդ հրավերը, սիրելիներ, այսօր էլ հնչում է մեր ականջներում և կանչում մեղքերի թողության առաքելական գործունեությամբ Սուրբ Հոգու բնակարան լինելու, երբեք ու երբեք չթուլանալու և չվհատվելու: Այս հրավերն Աստծո խաղաղության և Երկնքի Արքայության, այսօր առավել հավատքի և հույսի առաքինությամբ միահյուսվում է սիրո անկեղծության հետ և մեր հոգիներում սրբագործող ուժ դառնում:

Այսօր, սիրելիներ, այս 1700-ամյա հնաբույր սրբացած պատերին եկել ենք յուրաքանչյուրս մեր համբույրը տալու, ուր դարեր առաջ աստվածային շնորհառատ փառքի օրհնաբեր շողը ծագեց և մինչև այսօր միաձնաէջ Լույսի օրհնաբաշխ փայլն է ճառագում ամեն մեկիս հոգիներում, և այս Տաճարի օծման հոբելյանն ենք տոնում ընթացիկ ամբողջ տարում հայրապետահաստատ տնօրինությամբ: Եվ այսօր կարծես մի փայլ վերստին երևում է լույսի անսպառ այս Տաճարից, քանզի, ինչպես Աբրահամ Աստապատցի վարդապետն է ասում «Յազգէն հայոց ոչ ոք կարէ զԱստուած ունել յերկինս, եթէ զՍուրբ Էջմիածինն ոչ ունիցի մայր հաւատոյ ի յերկրի»:

Թող Ամենազոր Աստված Սուրբ առաքյալների բարեխոսությամբ այս քրիստոսաշեն Սրբություն Սրբոցը հաստատ, անսասան և ամուր պահի իր Հայրապետական Աթոռով, իր Գահակալով, հոգևորականաց համայն դասով, առաքելական ոգով և ամբողջ ժողովրդով:

Թող Աստծո շնորհքը, խաղաղությունը, սերը և բարեխոսությունը համորեն առաքելոց, մանավանդ սուրբ առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի և ուժը սրբագործող երկնաբարձ Սրբո Էջմիածնի եղիցին ընդ մեզ, ընդ ամենեսյանս. ամեն:

# ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐՎԱՆ ԵՊՍ. ԶԱՔԱՐԵԱՆ

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

### Ի՞նչ է հիմքը Եկեղեցւոյ առաքելութեան*

Ներկայ իրականութեան մէջ Եպիսկոպոսաց Ժողովի անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է Եկեղեցւոյ առաքելութեամբ: Եւ ահա այդ պայմանաւորուածութիւնը զիս կը մղէ քննելու Եպիսկոպոսաց Ժողովի հետ զուգահեռ, Եկեղեցւոյ առաքելութիւնը:

Վարդապետական սկզբունքէ դիտուած, Եկեղեցւոյ առաքելութեան հիմքը կը կազմէ Աստուծոյ փրկչական ծրագիրը, որ կը բխի Հայր Աստուծոյ սիրոյ աղբիւրէն: Իսկ այդ ծրագիրը պատմականօրէն իրագործուած է Աստուծոյ Միածին Որդիով՝ Յիսուս Քրիստոսով: Քրիստոսով իրագործուած աստուածային ծրագիրը կը շարունակուի Եկեղեցիով: Եկեղեցին կ'ապրի ժամանակին մէջ եւ իր բնութեամբ կոչուած է շարունակելու փրկչական առաքելութիւնը: Աշխարհին կը ներկայանայ իբրեւ անոր երկարաձգումը, եւ որու համար ալ ըսուած է, թէ Եկեղեցին խորհուրդն է ընդհանրական փրկութեան:

Առաքելութիւնը մեծ նշանակութիւն ունի, ո՛չ այնքան անոր համար, որ ինքը միջոցի դեր կը կատարէ աստուածային նպատակի, փրկչական ծրագրի իրագործման մէջ, այլ անոր համար առաւելաբար, որ միջոցէ անդին, ինք ընծայութիւն մըն է, սիրոյ պուռչութիւն մը պիտի փափաքէի ըսել. *«Այսպէս Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչեւ Իր Միածին Որդին տուաւ... Վասնզի Աստուած Իր Որդին չղրկեց աշխարհ, որպէսզի աշխարհը դատէ, հապա՝ որպէսզի աշխարհ անով փրկուի»* (Յովհ. Գ. 16-17):

Այս տողերը կը պարզեն Հայր Աստուծոյ առաքելութիւնը, որու Առաջին առաքեալը, եթէ կարելի է այսպէս որակել, կը հանդիսանայ Աստուծոյ Միածին Որդին՝ Յիսուս Քրիստոսը:

Ամբողջ երկրի փարածքին աւետելու համար Հայր Աստուծոյ եւ Որդի Աստուծոյ ճշմարտութիւնը, Եկեղեցին իր լոյսն ու ուժը կը ստանայ նոյնինքն Աստուծոյ Հոգիէն, Սուրբ Հոգիէն, որով ի յայտ կու գայ իր առաքելութեան էապէս երրորդութենական նկարագիրը: Երրեակ միութիւնը իր ինքնութիւնն է եւ համոզումը իր առաքելութեան: Եւ այս ինքնութեան փորձառութիւնը կ'ապրի ան շնորհիւ իր հաւատացեալ զաւակներու յանձնառութեան: Դեռ կայ Յիսուսի պատուիրանը, զոր ան տուաւ իր առաքեալներուն, յարութիւն առնելէ ետք. - *«Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք...»* (Մտթ. ԻԸ. 19): Այս պատուիրանը կը հնչէ դեռ այսօր իր ամբողջ արժէքով եւ այժմէականութեամբ,

---

* Կարդացված Ս. Էջմիածնում գումարված եպիսկոպոսական ժողովի ընթացքում (Տպագրվում է կրճատումներով):

որովհետեւ աշխարհի վրայ ամէն ժամ ծնունդ կ'առնեն մարդկային էակներ, որոնք նոյնքան իրաւունք ունին ճանչնալու Յիսուս Քրիստոսը, հանդիպելու անոր եւ արժանի դառնալու փրկութեան: Այնքան ատեն, որ եկուորներ պիտի ըլլան աշխարհի վրայ, այնքան ժամանակ այժմէական պիտի մնայ առաքելութիւնը: Իսկ Եկեղեցին չի կրնար եւ ոչ ալ անշուշտ կը կամենայ խուսափիլ այդ պատասխանատուութենէն:

Վարդապետական սկզբունքէ մեկնած Եկեղեցւոյ առաքելութեան հիմքն ու այժմէականութիւնը ընդգծեցի, ցոյց տալու համար նոյն ատեն, թէ ժողով հասկացութիւնը էական բաղադրիչ մըն է քրիստոնէական հաւատքի դաւանութեան մէջ:

Հայր, Որդի եւ Ս. Հոգի անբաժանելի Երրորդութիւնը, որու վրայ հիմնուած, խարսխուած է մեր քրիստոնէական հաւատքը, չի՞ յուշեր միթէ մեզի, թէ Աստուծոյ նրեք անձերը իրարու հետ ժողովի մէջ են մշտապէս: Ժողով՝ որ էապէս կը նշանակէ միութիւն: Հայրը կը ծրագրէ, Որդին կ'իրագործէ, Սուրբ Հոգին կը շարունակէ:

Թերեւս ըլլան առարկողներ, թէ ժողով հասկացութեան վարդապետական եզրը, քրիստոնէութեան մէջ ընդհանրական նկարագիր ունի, «եկեղեցի» բառն իսկ ժողովում, ժողով կը նշանակէ. եւ չի կրնար եպիսկոպոսական դասու մասնաւոր սեփականութիւնը համարուիլ: Ուստի ի՞նչ կարիք կայ պնդելու Եպիսկոպոսաց Ժողովի անհրաժեշտութեան վրայ:

Ես այս առարկութեան պիտի պատասխանէի պարզապէս վերի օրինակով: Հայր, Որդի եւ Ս. Հոգի կը գործեն տարբեր պաշտօններով, մէկ եւ նոյն նպատակին համար, մէկ եւ նոյն առաքելութեան համար:

Եկեղեցւոյ կեանքէն ներս ալ այսպէս է: Հովուապետէն սկսեալ մինչեւ ամենախոնարհ քրիստոնեան, պարտականութիւնն ունին տարածելու Տիրոջ պատգամը աշխարհի չորս ծագերուն, ծառայելու մէկ եւ նոյն նպատակին, բայց նուիրապետական կարգով, իւրաքանչիւրը իր իրաւասութեան սահմաններուն մէջ, իրեն վստահուած պատասխանատուութեամբ:

Մեր Եկեղեցւոյ նուիրապետական կարգէն ներս, առաքելական աւանդութեամբ եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան կարգով, Եպիսկոպոսաց Ժողովին յանձնուած է Եկեղեցւոյ առաքելութեան համակարգումի պատասխանատուութիւնը: Եթէ եպիսկոպոսը իր ձեռնադրութեան խորհուրդով հսկիչ է, տեսուչ, ապա Եպիսկոպոսական Ժողովը հսկիչ մարմինն է, այլ կերպ ըսած տեսչարանը Եկեղեցւոյ առաքելութեան: Այս մարմինն է, որ կը հսկէ ընդհանուր առաքելութեան: Մէկ է եկեղեցւոյ առաքելութիւնը, բայց բազմաթիւ են ձեւերը, տարբեր են միջավայրերը եւ մակարդակները՝ այլազան: Եկեղեցւոյ առաքելութիւնը ըլլալով աստուածային եւ բացարձակ, փոփոխուող ժամանակի մէջ եւ մարդկային յարաբերական կեանքի ընթացքին կը հանդիպի նոր երեւոյթներու, դէմ յանդիման կը գտնուի նոր հարցերու առջեւ, ըլլան անոնք կրօնական, հոգեւորական, ընկերաբանական, տնտեսական, գիտական եւ այլ, որոնք կը պահանջեն անթերի, յարմար պատասխաններ: Այդ պատասխանները, որպէսզի ըլլան յարմար եւ որոշ չափով ալ անթերի, կը կարօտին լուրջ ուսումնասիրութեան եւ խնամուած հիմնագրումի: Վերջապէս ո՞վ պիտի կարգաւորէ այսպիսի խրթին հարցերու լուծումը, որոնք կը պահանջեն խորհրդակցութիւններ եւ հաւաքական աշխատանք, եթէ ոչ՝ Եպիսկոպոսաց Ժողովը:

Այս մարմինն է, որ պիտի հաւաքէ հարցերը, որոնք կրնան գալ թեմերէ, կրօնական կամ աշխարհիկ համայնքներէ, եկեղեցականներէ, եւ այլն. եւ փնտռէ լուծումները այդ հարցերուն:

Եպիսկոպոսաց Ժողովը եթէ վերածուի անուանական ներկայութեան, այսինքն տեսակ մը փորումի, այն ատեն այնտեղ խօսուած նիւթերը եզրակացութեան չեն յանգիր, անոնք կը մնան օդին մէջ: Քանի որ փորումը տեղ մըն է, ուր խօսուած նիւթերու մասին ո՛չ որոշում կ'առնուի եւ ո՛չ ալ գործադրութեան հարց կը ծագի, եւ փորումի մասնակիցներն ալ հազիւ սրահի դառնալէն դուրս ելած, կը մոռնան արդէն ամէն բան: Մինչդեռ Եպիսկոպոսաց Ժողովը երբ գործէ պատասխանատուութեամբ եւ իր իրաւասութեան սահմաններով, այն ատեն հարցերը կը դասաւորուին խնամքով, յայտագրային կարգապահութեամբ, որոշումներ կ'առնուին եւ գործադրութեան կը դրուին: Հարցերը կը գտնեն իրենց լուծումները:

Եպիսկոպոսաց Ժողովը պարտի ունենալու իր մնայուն դիւանը: Դիւանի անդամները կ'ընտրուին Եպիսկոպոսաց Ժողովի կողմէ երկու կամ երեք տարուան համար: Այս դիւանը կը ստանձնէ նաեւ պատասխանատուութիւնը առնուած որոշումներու գործադրութեան:

Եպիսկոպոսաց Ժողովը դառնալու է հեղինակութիւն, չեմ ըսեր իշխանութիւն, որովհետեւ Եպիսկոպոսաց Ժողովի իշխանութեան հոգեւոր ըմբռնումը շատո՛նց աղաւաղուեր է մեր մտայնութեան մէջ: Սա փաստը չէ՞ նաեւ այն միւս իրողութեան, որ Եկեղեցւոյ առաքելութեան Երկնային մակարդակը նուազ տեղ կը գրաւէ մեր հոգեբանութեան եւ գործունէութեան մէջ, քան թէ ազգային գաղափարախօսական մակարդակը: Շեշտը դրուած է առաւելաբար կրօնա-ազգային դիմագիծին վրայ, քան թէ հոգեւոր եւ հայկական ինքնութեան:

Ես պիտի ըսէի անա Եպիսկոպոսաց Ժողովի օրակարգի հարցերէն թերեւս առաջինը:

Վերադառնալով առաքելութեան այժմէականութեան, եթէ համոզուեցանք, թէ Եկեղեցւոյ առաքելութիւնը այժմէական է, այն ատեն Եպիսկոպոսաց Ժողովը անհրաժեշտութիւն է: Առաքելութիւնը ո՛չ սահման ունի եւ ո՛չ ալ մասնաւոր ընկերա-մշակութային շրջապատ: Չնայած որ մեր Եկեղեցւոյ պարագային, անցեալին, առաքելութիւնը սահմանափակուեցաւ Հայոց աշխարհէն ներս եւ մնաց ինքնապաշտպանութեան դիրքերու վրայ: Բայց այս պարագան չի նսեմացներ երբեք Հայ Եկեղեցւոյ առաքելական գործունէութիւնը, որովհետեւ սահմանափակ կարծուած իր առաքելութիւնը եղաւ նոյնքան պտղաբեր, որքան սահմաններ չճանչցող առաքելութիւնները քոյր Եկեղեցիներու: Մեր պատմութեան ճակատագիրը մեզ պարտադրեց, որ մենք ինքնապաշտպանութեան դիրքերէն դուրս, ուրիշ դիրքերու վրայ չկարենանք առաքելութիւն կատարել, բայց օրինակելի եւ աննման էր առաքելութեան հայկական տեսակը, որովհետեւ հաւատքի համար ան գնաց մինչեւ զանգուածային նահատակութեանց:

Նպատակս չէ այստեղ մէկ Եկեղեցիէն միւսին առաքելութեան բաղդատականը կատարել եւ ո՛չ ալ գերարժեւորումներ ընել, միջանկեալ այս յիշեցումը անհրաժեշտ նկատեցի, որովհետեւ աւելի քան 70 տարիներէ ի վեր Հայ Եկեղեցւոյ առաքելութեան դրութիւնը փոխուած է: Նոր դրութիւնը սահմաններ չունի եւ ո՛չ ալ ընկերա-մշակութային մասնաւոր շրջապատ: Երրորդ հազարամեակի մուտքին Հայ Եկեղեցին առաքելութիւն պիտի կատարէ երկրի փարածքի այն բոլոր անկիւններուն մէջ, ուր համայնքներ կազմուած են: Այդ համայնքները կը կրեն տեղւոյն ազգերու մշակութային, հոգեւոր եւ ընկերային ազդեցութիւնները:

Հարցերը, որոնք յառաջ կու գան ցրուեալ Հայ հաւաքականութիւններու մէջ, խայտաբղէտ են: Եկեղեցւոյ առաքելութիւնը յաճախ այնպիսի բախումներ կ'ունենայ նոր երեւոյթներու հետ, որոնք աննախընթաց են մինչ այդ իրեն ունեցած օրինաչափութիւններուն եւ փորձառութեան: Հարկաւ այդ հարցերէն անոնք, որոնք թեմական կալուածի կը պատկանին, թեմական օրէնքի տրամադրութիւններով իրենց լուծումները կը գտնեն, բայց հարցերը, որոնք դուրս են թեմական իրաւասութիւններէն, իրաւասու Մարմնի մը պէտք է բերուին լուծումներ փնտռելու համար:

Հնտաքրքրական պիտի ըլլայ յիշել այստեղ հարցերէն ոմանք: 1968-ին Նիւ Ճըրզիի մէջ ծագեցաւ Եկեղեցւոյ պաշտօնէութեան հետ կապուած կարեւոր խնդիր մը: Կուսակրօն վարդապետ մը ցանկացաւ շարունակել իր եկեղեցական պաշտօնը որպէս ամուսնացեալ քահանայ: Խնդրոյ առարկայ վարդապետին հարցը լուծուեցաւ օրուան Վեհափառ Հայրապետին եւ թեմակալ առաջնորդին միջեւ, ի նպաստ վարդապետի ցանկութեան: Հեռու ինձմէ ամէն մեղադրանք: Ոչ դէպքը քննադատելու միտք ունիմ, ոչ ալ անձ քարկոծելու: Մանաւանդ յետագային նման դէպքեր կրկնուեցան: Կ'ուզեմ գիտնալ պարզապէս այս հանգրուանին, թէ մեր Եկեղեցին վերջնականապէս որդեգրե՞ց Անկլիքան Եկեղեցւոյ դրութիւնը: Հարցը կրնա՞նք համարել, թէ իր լուծումը գտած է:

Ուրիշ հարց մը: Կարգ մը ամուսնացեալ քահանաներ կը խորհին, թէ թեմակալ առաջնորդաց ընտրութիւնը պէտք չէ եպիսկոպոսներու մենաշնորհը ըլլայ: Անոնք փափաք կը յայտնեն, որ ամուսնացեալ քահանաներն ալ իրաւունք ունենան առաջնորդ ընտրուելու եւ ինչու չէ, եպիսկոպոս ձեռնադրուելու:

Անձնասպանութեան պարագայ: Ծանօթ է բոլորիս, թէ համաձայն մեր Եկեղեցւոյ կարգ ու կանոնին անձնասպան մէկը կը զրկուի յուղարկաւորութեան ծէսէն: Ներկայ ժամանակներուն մէջ Եկեղեցին աւելի հանդուրժող վերաբերմունք ցոյց պիտի տա՞յ անձնասպաններու հանդէպ:

Իսկ այժմէական հարցերու երկար ցանկ մը, ինչպէս՝ դիակիզումի, համասեռումի (քլոնած), վիժումի, կանխարգելութեան, սրբադասութեան, եւ այլն. միշտ Եպիսկոպոսաց Հաւաքներու օրակարգի նիւթ լ. տարիներէ ի վեր, բայց տակաւին ոչ մէկ նիւթ հանգամանաւոր կերպով չէ ներկայացուած, որպէսզի անոնց շուրջ որոշումներ առնուին, եւ հռչակագիրով մը հրապարակուի առ ի գործադրութիւն:

Այս բոլորով հանդերձ կայ աւետարանումի ամբողջական ձեւի մը կազմակերպումը, որ պարտականութիւնն է Եպիսկոպոսաց Ժողովի:

Կը խորհիմ, թէ այսքան փաստեր բաւ են ապացուցելու համար, թէ որքան անհրաժեշտ է Եպիսկոպոսաց Ժողովը ներկայ իրականութեան մէջ: Հարցերը գիրար կը հրմշտկեն եւ կը կարօտին կարգաւորումի: Կը մաղթեմ, որ վայրկեան մը առաջ ճշդուի Եպիսկոպոսաց Ժողովի հանգամանքը, եւ ան լծուի անմիջապէս գործի յանուն մեր Եկեղեցւոյ առաքելութեան առաւել կենսունակութեան:

Եպիսկոպոսաց Ժողովի իրաւասութեան սահմանները ճշդելու գործը անհատի մը գործը չէ: Ատիկա կը պահանջէ հաւաքական աշխատանք մասնագէտներու համագործակցութեամբ: Առաւելաբար Հայաստանեայց Եկեղեցւոյ Կանոնագրութեան խմբագրական կազմին գործն է ճշդել Եպիսկոպոսաց Ժողովի իրաւասութիւնները, եւ ոչ թէ ինձ նման սովա-

կան անհատի: Այստեղ ես միայն իմ ըմբռնումներս կրնամ ըսել, որոնցմէ ոմանք կրնան ընդունելի ըլլալ եւ ոմանք անընդունելի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր Եպիսկոպոսական Ժողովին հետ կը կառավարէ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին:

Եպիսկոպոսական Ժողովին նախագահը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է:

Հայ Եկեղեցւոյ առաքելութեան կը հսկէ Եպիսկոպոսական Ժողովը:

Եպիսկոպոսական Ժողովը կը զբաղի՝ աւետարանչական, աստուածաբանական, վարդապետական, դաւանաբանական, ծիսական, եկեղեցագիտական, հովուական, կրօնաբարոյական, Եկեղեցւոյ կարգապահական, կրօնադաստիարակչական հարցերով:

Եպիսկոպոսական Ժողովը կը գծէ Եկեղեցւոյ արտաքին եւ ներքին կրօնական քաղաքականութիւնը:

Եպիսկոպոսական Ժողովը կը քննէ թեմերէն եկած ընկերային կամ այլ նոր խնդիրներ, որոնք կրնան յառաջ գալ ճարտարարուեստի զարգացման պատճառով:

Եպիսկոպոսաց Ժողովը իր ընտրեալ դիւանով պարտի ունենալ մնայուն նկարագիր, հերթական նիստերու կանոնաւոր յայտագրով:

Եպիսկոպոսաց Ժողովը կը գումարուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով:

Եպիսկոպոսաց Ժողովին անդամ կրնան ըլլալ Հայ Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսները, շնորհիւ եպիսկոպոսական ձեռնադրութեան խորհուրդին:

Եպիսկոպոսական Ժողովին որոշումները կը վաւերացնէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Յիշեցնեմ, թէ Կանոնագրութիւն Հայ Եկեղեցւոյ Փետրուար 26 1999-ի նախագիծը իր 6-րդ գլուխը, յօդուած 44-էն մինչեւ 53, յատկացուցած է Եպիսկոպոսաց Ժողովի իրաւասութեան սահմաններուն:

Եպիսկոպոսաց Ժողովի իրաւասութեան սահմաններուն մասին Հայ Եկեղեցւոյ կանոնագէտներ, վստահ եմ, աւելի մանրամասն առաջարկներ ունենալու են ներկայացնելու, քան ինչ-որ համեստօրէն փորձեցի ներկայացնել վերը:

# ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՀՈԳԻ ԵՎ ԿՅԱՆՔ
(Աստվածաշնչային թարգմանությունների մասին)

Աստվածաշնչային ընկերության կողմից 1997 թ. հրատարակված գրաբար Աստվածաշնչի սկզբում զետեղված է երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական խոսքը: Վեհափառ Հայրապետը շատ դիպուկ է նկատել մի կարևոր իրողություն. «Միշտ է, որ մենք ունենք աշխարհաբար թարգմանութիւններ, թէ՛ արեւելահայերեն եւ թէ՛ արեւմտահայերեն ճիւղերով: Բայց գրաբարը ունի մի այնպիսի առանձնակի գրաւչութիւն, արտայայտութեան համառօտակիութիւն, ճշգրտութեան նրբերանգութիւն, որոնք դժուար կարող են ամբողջական հարազատութեամբ վերարտադրուել որևէ արդիական թարգմանութեամբ»:

Երբեմն գրաբար որևէ բառ կարող է ունենալ մի քանի իմաստներ, փոխաբերական իմաստով գործածություններ: Արդիական թարգմանությունները հաճախ գործածում են տվյալ բառի իմաստներից որևէ մեկը, ինչը միշտ չէ, որ ընդունելի է: Այդպիսի դեպքերում, չնայած որ թարգմանությունը ճիշտ է լինում, որովհետև թարգմանիչն այդ նույն բառի արտահայտած իմաստներից մեկն է զետեղում թարգմանության մեջ, սակայն հաճախ դրանից տուժում է աստվածաշնչյան մտքի նրբությունը և ասելիքի ամբողջությունը: Եթե բառը մի քանի իմաստներ ունի, ապա պետք է տվյալ իմաստի և խորհրդի վերհանմամբ որոշել, թե որ բառը պետք է գործածվի: Եվ հիմնականում թարգմանության խմբագիրն ինքը, որն անպայման պետք է քաջատեղյակ լինի Եկեղեցու վարդապետությանը և Աստվածաշնչի գրքերի՝ Եկեղեցու կողմից ընդունելի մեկնությանը, պետք է նկատի նրբերանգային խախտումը թարգմանության մեջ և այն կարգավորի բառիմաստի ճիշտ օգտագործմամբ:

### ՈՉ ՃԱՆԿԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ

Քննարկենք Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարը: Նշենք, որ այս համարի թարգմանությունը ոչ միայն հայերեն, այլև մյուս լեզուներով հաճախ չի արտահայտում այն նրբերանգայնությունը, որն առկա է Աստվածաշնչի այս հատվածում: Խոսքը հիմնականում վերաբերում է Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված *ոգի* (հոգի) բառին, որը բազում հրատարակություններում թարգմանված է *կյանք* բառով: Ահա Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարի բովանդակությունն ըստ 1994 թ. հրատարակված արևելահայերեն Աստվածաշնչի նոր թարգմանության. «Դրա համար ասում եմ ձեզ. ձեր *կեանքի* համար հոգ մի՛ արէք, թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, եւ ոչ էլ ձեր մարմնի համար, թէ ի՛նչ պիտի հագնէք. չէ՞ որ *կեանքը* աւելին է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան զգեստը»:

վերջին շրջանի հրատարակություններից.

Ինչպես կարելի է նկատել հատվածից, շեշտը հիմնականում դրվում է ընթերցող լայն շրջանակների համար թարգմանություններում նախադասությունների իմաստը դյուրըմբռնելի դարձնելում: Եվ տվյալ տեքստով նախադասությունը շատ հեշտ կարող է հասկանալ յուրաքանչյուր մարդ: Փոխարենը, սակայն, նախադասությունը դժվարընկալելի է դառնում կյանք-ը հոգի-ով փոխարինելու դեպքում. «*Հոգ* մի՛ արեք ձեր *հոգու* համար, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք .... չէ՞ որ *հոգին* ավելին է, քան կերակուրը» և այլն: Իրոք, թվում է, թե ի՞նչ կապ ունի հոգին կերակրի կամ ըմպելիքի հետ, և քանի որ գրաբարում *հոգի* կամ *ոգի* բառն ունի նաև *կյանք* իմաստը, ապա թարգմանչի կարծիքով շատ տրամաբանական գործածությամբ
բանական և միակ ճիշտ ձևը *հոգին կյանք* թարգմանելն է:

Այս տրամաբանությունն է իշխում Աստվածաշնչի բազում հրատարակություններում: Սկսած քսաներորդ դարի հենց սկզբից՝ Աստվածաշնչի մեր արևմտահայերեն և հետո էլ արևելահայերեն գրեթե բոլոր հրատարակությունները *հոգիի* փոխարեն ունեն *կյանք* բառը: Նույնն է պատկերը նաև Աստվածաշնչի անգլերեն հրատարակություններում. դրանցում ևս գործածված է *կյանք (life)* բառը[1]: Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարն այս նույն ձևով է նաև Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների 1912 թ. հրատարակված Աստվածաշնչում: Նույն *կյանք (vie)* բառն է գործածված ֆրանսերեն հրատարակություններում[2]:

Այն փաստը, որ թարգմանություններում հաճախ միտում կա դժվարըմբռնելի նախադասությունները պարզեցնել որևէ բառի երկրորդական կամ երրորդական իմաստների օգտագործմամբ, երևում է Մատթեոսի Ավետարանի հենց այս նույն հատվածի ազատ թարգմանություններից: Անգլերեն հրատարակություններից մեկում ամբողջովին դուրս է թողնված անգամ *կյանք* բառը: Սրանով նախադասությունն ավելի բարդ է դարձել, սակայն իմաստն ըստ թարգմանչի՝ դյուրըմբռնելի. «Դրա համար ասում եմ ձեզ. մի՛ մտահոգվեք կերակրի և ըմպելիքի համար, որոնց կարիքն ունեք, *որպեսզի ողջ մնաք (to stay alive)*[3]: Գրեթե նույն ազատ թարգմանությունն է նաև ֆրանսերեն հրատարակություններից մեկում *ապրելու համար (pour vivre)*[4]:

Այս հատվածի նման ազատ մի թարգմանություն կա նաև մեր հայերեն հրատարակություններից մեկի մեջ: Ճիշտ է, թարգմանիչն այնքան էլ չի հեռանում բնագրից, ինչպես

---

[1] Նշենք այդ հրատարակություններից մի քանիսը.

**The New Jerusalem Bible**, Doubleday & Company, INC., Garden city, New York.

**The Holy Bible**, containing the Old and New Testaments, translated out of the original tongues and with the former translations diligently compared & revised, King James Version 1611, American Bible Society, New York.

**New American Standart Bible**, containing the Old and New Testaments, the New Open Bible, study edition, Thomas Nelson publishers, Nashville.

[2] **La Bible**, traduction œcuménique, édition intégrale, 1988.

**La Sainte Bible** qui comprend l'Ancien et Nouveau Testament traduits sur les textes originaux hébreu et grec par Louis Segond docteur en théologie, nouvelle édition revue, Paris, 58, rue de Clichy, 58, 1931.

[3] **Holy Bible**, Good News colour reference edition.

[4] **La Bible**, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deutérocanoniques, traduite de l'hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.

անգլերեն և ֆրանսերեն հիշյալ հրատարակություններում է, սակայն այստեղ էլ նկատելի է, որ թարգմանչի նպատակն է եղել նախադասությունը հեշտ ընկալելի դարձնել: Նախադասության իմաստը պարզեցնելու համար նա *կյանք* բառի կողքին ածական է ավելացրել և գրաբար *ոգի* կամ *հոգի* բառը թարգմանել է *երկրաւոր կեանք* արտահայտությամբ: Նախադասությունն ստացել է հետևյալ տեսքը. «Մի՛ հոգ ըրէք ձեր *երկրաւոր կեանքին* համար, թէ ի՞նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք»[5]:

Այս հատվածի բացատրությանն անդրադառնալով՝ *կյանք* բառն է օգտագործում նաև Մաղաքիա արքեպս. Օրմանյանն իր «Համապատումի» մեջ: Օրմանյանն այսպես է բացատրում. «Հոգ մի տարեք, թե ձեր *կյանքը պահպանելու համար* ինչ պիտի ուտեք կամ ինչ պիտի խմեք»: Նշենք նաև, որ Օրմանյանը ոչ թե Ավետարանների թարգմանություն է կատարել, այլ պարզ խոսքերով բացատրել է Ավետարանը:

989 թվականին գրված Էջմիածնի Ավետարանում[6] Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարն այս ձևով է. «Մի հոգայք վասն *ոգւոց* ձերոց զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք... ոչ ապաքէն *ոգի* առաւել է քան զկերակուր»: Նախադասությունն այս ձևով է նաև 1857 թ. հրատարակված Աստվածաշնչում[7] և Էջմիածնի մի հնատիպ հրատարակության մեջ[8]: Այսինքն՝ գրաբար բոլոր հրատարակություններում և ձեռագրերում միայն *ոգի* բառն է գործածված: Գնահատելի և գովելի են հատկապես Աստվածաշնչի ռուսերեն նորագույն հրատարակությունները, որոնք նախանձախնդրորեն ջանում են հարազատ մնալ հունարեն բնագրին և այս հատվածում էլ պահպանել են հունարենի *ոգի* - *ψυχή* բառի իմաստը՝ այն արտահայտելով *душа* բառով:

## ՈԳԻՆ ԿՅԱՆՔ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ոգի* բառի դիմաց Հայկազյան բառարանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ ψυχη. Anima. animus. πνευμα. spiritus. շունչ կենդանի կամ կենդանւոյ, հոգի անմարմնոց և բանականաց և շնչաւորաց. սիրտ. յօժարութիւն սրտի. անձն. *կեանք*[9]: Աճառյանի արմատական բառարանում *հոգի* բառի փոխաբերական իմաստներից նշվում են հետևյալները՝ անձ. մարդ. շունչ. սատանա. սիրտ. կյանք. կենդանություն[10]: Խուդաբաշյանի Հայերեն-

---

[5] Աստուածաշունչ Նոր Կտակարան Քրիստոս Յիսուսի, պատկերազարդ, համեմատութեամբ այլ թարգմանութեանց գրաբարէ աշխարհաբարի վերածեց Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, տպագրուած Թուճեան եղբարց ծախքով «Հայ Կեդրոն»-ի մէջ, Պուէնոս Այրէս, Արժանթին, 1943:

[6] **L'Evangile Armenien**, édition phototypique du manuscrit N° 229 de la bibliothèque d'Etchmiadzin, publiée sous les auspices de M. Léon Mantacheff par Fréderic Macler, professeur à l'école nationale des langues orientales vivantes, Paris, librairie Paul Geuthner, 13, rue Jacob (VI^e), 1920.

[7] **Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի**, ի Վիէննա, ի վանս պաշտպանի Ս. Աստուածածնի:

[8] **Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի**, տպագրեալ հրամանաւ Սինոդի Սրբոյ Էջմիածնի, ի Վաղարշապատ. ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1884 – ՌՅԼԳ:

[9] **Նոր բառագիրք Հայկազեան լեզուի**, հտ. Բ, Վենետիկ, 1838, էջ 503:

[10] Հր. Աճառյան, **Հայերեն արմատական բառարան**, հտ. Գ, Երևան, 1977, էջ 107:

գրված է՝ дух. душа. ум, лице. жизнь[11]:
ռուսերեն մի բառարանում *հոգի* բառի դիմաց
*կյանք* իմաստը, սակայն նկատելի է, որ
ինչպես տեսնում ենք, *հոգի* կամ *ոգի* բառն ունի
իմաստներից է միայն:
այն *ոգի* բառի վերջին փոխաբերական
հենց սկզբում նշվում է, որ թարգմանութ-
Աստվածաշնչի շատ հրատարակությունների
Նոր Կտակարանի բոլոր գրքերը, ինչ-
յունը կատարված է եբրայերենից և հունարենից:
թե հունարենն ինչ բառ է օգտագործում
պես գիտենք, հունարեն են գրվել: Այժմ տեսնենք,
Հունարեն Աստվածաշնչի նորագույն հրա-
Ավետարանի մեզ հետաքրքրող հատվածում:
կատարված 1996 թվականին Աստվածաշնչային ընկերության
տարակություններից մեկը՝
ևս եղել է նախադասության իմաստի հեշտ ընկա-
կողմից, որի նպատակը, հավանաբար,
Մատթեոսի Ավետարանի այս հատվածում գործածում է ζωή - *կյանք*
լելի շարադրումը,
Աստվածաշնչի նոր հրատարակությունները, կարելի է ասել, ավելի
բառը: Հետևաբար
ζωή - *կյանք* բառի իմաստին, քան թե թարգմանում են ψυχή բառը, որի
շատ հետևում են
փոխաբերական իմաստներից է *կյանքը*: Սակայն հունարեն սկզբնական
երրորդական
Ավետարանի այս հատվածում, ζωή - *կյանք* բառը երբեք չի եղել:
բնագրում

Այսոր հունարեն լավագույն հրատարակություններից են համարվում Նեսթլե-Ալանդի հրատարակությունները և հատկապես «Նեսթլե-Ալանդի պատրաստած 26-րդ հրատարակությունը, որը որպես հիմնական տեքստ օգտագործվում է աշխարհի բոլոր համալսարաններում»[12]: Նեսթլե-Ալանդի հրատարակություններում Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարում գործածված է ψυχή – *հոգի* կամ *ոգի* բառը: 1923 թ. Աթենքում հրատարակված հունարեն–ֆրանսերեն և ֆրանսերեն–հունարեն բառարանը, իբրև ψυχή բառի թարգմանություն, նշում է âme (հոգի) բառը:

## ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թվում է, թե ինչ կարիք կար այսքան մանրամասն անդրադառնալու ավետարանական այս համարին, եթե թարգմանությունն ինչ-որ իմաստով ճիշտ է, սակայն սա այն տողերից է, որոնց թարգմանության ժամանակ նույնիսկ մի փոքր շեղումն էլ վերացնում է մտքի նրբությունը:

Քրիստոս Իր քարոզների ընթացքում միշտ պարզեցնում էր հաղորդվող միտքը, որպեսզի հասարակ ժողովուրդը կարողանար լավ ըմբռնել աստվածային ճշմարտությունները: Օրինակ՝ Քրիստոս երկնքի արքայությունը նմանեցնում էր թթխմորի, մանանեխի հատիկի, ծովը նետված ուռկանի, արտի մեջ թաքցված գանձի և այլաբանական իմաստ պարունակող առակներով էր խոսում միայն այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում էր մարդկանց ներաշխարհում աստվածային ճշմարտությունների պատվաստմանը, մարդկանց կողմից աստվածային կամքի իրագործմանը: Դրանցից են, օրինակ, սերմնացանի, որոմ-

---

[11] Բառարան 'ի հայկական լեզուէ 'ի Ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղէքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց, հտ. Բ, Մոսկվա, 1838, էջ 69:

[12] Ներածություն Նոր Կտակարանի, պատրաստեց՝ Եզնիկ ծայրագույն վարդապետ Պետրոսյանը, դոկտոր աստվածաբանության, Բ տպագրություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 14:

ների. երկու որդիների, չար մշակների, հարսանեկան խրախճանքի մասին առակները և այլն: Եվ Մատթեոսի Ավետարանի Զ գլխի այս հատվածն այլաբանական առակ չէ, այլ՝ Քրիստոսի պատվիրանը երկրային հոգսերով չտարվելու, ինչը Տերը բացատրում է հասարակ ժողովրդի համար հասկանալի օրինակներով: Եվ եթե Քրիստոս ցանկանար *կյանք* ասել, ապա այստեղ հենց *կյանք* էլ կասեր, և եթե *հոգի* է ասել, ուրեմն հատուկ նպատակ է ունեցել:

Բարսեղ Մաշկևորցին իր «Հորդորակներում» օգտագործել է Մատթեոսի Ավետարանի այս համարը՝ գործածելով *հոգի* բառն այնպես, ինչպես որ Աստվածաշնչի գրաբար թարգմանության մեջ է: Եվ Մաշկևորցու «Հորդորակների» արևմտահայերեն թարգմանության մեջ թարգմանիչը շատ ճիշտ ձևով պահպանել է *հոգի* բառը[13]:

Երբ *հոգու* փոխարեն օգտագործում ենք *կյանք* բառը, մի շատ կարևոր նրբություն վրիպում է ընթերցողի աչքից ու մտքից: Ավետարանական այս հատվածը շեշտում է ոչ միայն երկրային հոգսերով չտարվելը, այլև հոգու կարևոր դերը, և քանի որ թվում է, թե հոգին կապ չունի ուտելու և խմելու հետ, ապա ավելի նախընտրելի է համարվում այստեղ գործածել *կյանք* բառը: Եվ նման դեպքում կորչում է հոգու և մարմնի միավորության պատկերացումը, քանի որ միտքն այլևս ամբողջովին այլ հարթություն է տեղափոխվում, այլ իմաստ է ձեռք բերում. հիմնականում շեշտվում է սնվելու հոգսը, որն անհրաժեշտ է ապրելու, կյանքի գոյությունը պահպանելու համար, այսինքն՝ միտքն ամբողջովին նմանվում է վերը նշված ազատ թարգմանություններին, որոնցից ընդհանրապես դուրս էր թողնված մեզ հետաքրքրող բառը: Այսպիսի թարգմանության դեպքում շեշտվում է միայն մեկ բան՝ հոգսով չտարվելը, մինչդեռ հակառակ պարագային, բացի այս պատվիրանից, առկա է նաև մի կարևոր ուսուցում մարմնի և հոգու միավորության մասին:

Եկեղեցու Հայրերը և եկեղեցական մեծ հեղինակները ևս անդրադարձել են Մատթեոսի Ավետարանի այս համարին՝ տալով կարևոր բացատրություններ: *Հոգու համար* բառերը հակադրված են հաջորդող *մարմնի համար* բառերին, և երանելի Օգոստինոսի կարծիքով դրանք չի կարելի հասկանալ միայն հոգու իմաստով, այլ նաև՝ կյանքի: Հովհան Ոսկեբերանը մեկ այլ բացատրություն է տալիս: Ընդունելով, որ այստեղ *հոգի* բառը պետք է լինի՝ նա ասում է, թե *հոգու համար է* ասված ոչ թե այն պատճառով, որ հոգին կերակրի կարիք ունի, այլ այստեղ Փրկիչը պարզապես դատապարտում է վնասակար սովորույթը, այսինքն՝ Ոսկեբերանը շեշտում է *հոգևոր* արատի դատապարտումը[14]:

Նման դիպուկ բացատրություն են տալիս և մեր Եկեղեցու Հայրերը: Ստեփանոս Սյունեցու՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունից երևում է, որ ըստ նրա այստեղ անպայ-

---

[13] **Բարսեղ Մաշկևորցի. Յորդորակներ, աշխարհաբարի վերածեց՝ Անուշաւան Վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1980, էջ 328:**

[14] **Օգոստինոսի և Ոսկեբերանի կարծիքների մասին տե՛ս Толковая Библія или комментарии на все книги Св. Писанія Ветхаго и Новаго Завета, том 3, Новый Завѣтъ, Петербургъ, 1911-1913, ст. 134.**

մաև *հոգի* բառը պետք է լինի[15]: «Մեկն իրավամբ կհարցնի. եթե հոգին առանց մարմնի չի կերակրվում տեսանելի կերակուրներով, և առանց հոգու մարմնի համար էլ անպիտան են զգեստները, ապա ինչո՞ւ կերակուրը և ըմպելիքը հոգիների համար ասվեց, իսկ զգեստները՝ մարմինների»[16]: Այս հարցից սկսած Սյունեցին գեղեցիկ կերպով շեշտում է հոգու և մարմնի միավորության այն գաղափարը, որն ամփոփված է Մատթեոսի Ավետարանի Զ 25 տողում: *Հոգի* և *մարմին* բառերն օգտագործված են այն պարզ պատճառով, որ առանց մարմնի հոգու համար պիտանի չեն կերակուրները, և առանց հոգու էլ մարմնի համար պիտանի չեն հագուստները: Կարո՞ղ ենք արդյոք այսպիսի գեղեցիկ եզրակացություն անել այն դեպքում, երբ *հոգին*՝ *կյանք* է թարգմանվում, կամ էլ այս բառն ընդհանրապես դուրս է նետվում: Իհարկե՝ ոչ:

Մի գեղեցիկ անդրադարձով Սյունեցին ընդամենը մեկ նախադասությամբ բացատրում է *հոգի* բառի գործածության պատճառը: Զգալի զորությունները, որոնցով կերակրվում են կենդանիները, այսինքն՝ հոտոտելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը, հոգու ազդեցություններ են և ո՛չ մարմնի, այդ իսկ պատճառով էլ կերակուրը և ըմպելիքը հոգու համար ասվեց[17]: Հոգու և մարմնի միավորությանը շատ ավելի մանրամասն անդրադառնում է Ղազար Ջահկեցին: Նա չնայած մեկնություն չի գրել Մատթեոսի Ավետարանի այս հատվածի վերաբերյալ, սակայն նրա բացատրությունն ամբողջովին դրան է վերաբերում և կարծես թե այս համարի դիպուկ մեկնությունը լինի:

Ջահկեցու բացատրությամբ մարդը միայն հոգի չէ և ոչ էլ սոսկ մարմին, այլ երկուսի միավորությամբ է կատարյալ մարդ: Հոգին երբեք [մարդու երկրային կյանքի ընթացքում] առանձնաբար չի գործում, և ոչ էլ մարմինն է առանձնաբար գործում: Ծնրադրությունը [աղոթքի ժամին] երբեք առանց հոգու չէ, թեպետ մարմնով է, և ոչ էլ ճաշակումը՝ առանց հոգու, քանզի միավորությամբ է լինում թե՛ մարմնավորը, թե՛ հոգևորը: Ծնրադրությունը հոգևոր է, իսկ հացի և ջրի ճաշակումը՝ մարմնավոր, բայց մարդն ամեն ինչ գործում է այս երկուսի [մարմնի և հոգու] միավորությամբ[18]: Հոգու և մարմնի միավորության մասին այնպիսի գեղեցիկ պատկերացում կարող ենք կազմել Մատթեոսի Ավետարանի Զ գլխի 25-րդ համարի իմաստային ճիշտ թարգմանության և դրա համառոտ բացատրությունն իմանալու դեպքում:

---

[15] Սյունեցու մեկնության արևելահայերեն թարգմանության մեջ մի ակնհայտ անհամապատասխանություն կա: Մեկնության մեջ նախ բերվում են ավետարանական համարները և ապա տրվում է մեկնությունը: Սյունեցին մեկնությամբ բացատրում է *հոգի* բառի գործածությունը, մինչդեռ ավետարանական մեջբերման մեջ *հոգի* բառն ընդհանրապես չկա, որովհետև թարգմանիչը մեջբերումները կատարել է Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանությունից, որտեղ օգտագործված է *կյանք* բառը: Սյունեցին ինքը երբեք չէր կարող *կյանք* բառով մեջբերում անել, որովհետև գործածել է գրաբար Աստվածաշունչը, իսկ գրաբար օրինակներում միայն *ոգի* բառն է առկա:

[16] Ստեփանոս Սյունեցի, Չորս Ավետարանների համառոտ մեկնությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 57:

[17] Ստեփանոս Սյունեցի, նշվ. աշխ., էջ 57-58:

[18] Ղազար Ջահկեցի, Աստուածաբանական Դրախտ Ցանկալի, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 2002, էջ 207:

*ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների դոկտոր*

# «ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ մատենագրության մեջ «Բանք իմաստասիրաց» ժողովածուները ուրույն տեղ են գրավում: Ծնունդ առնելով մեր գրականության արշալույսին, նրանք գոյատևել են մինչև ուշ միջնադար և որոշակի հետք թողել: Հակառակ դրան մինչ այժմ «Բանք»-երը պատշաճ ուշադրության չեն արժանացել: Եթե հաշվի չառնենք «Եօթն իմաստասիրաց պատմութիւնը»[1] (թարգմանիչ Հակոբ Թոխատեցի, 1614 թ), որը Եզովպոսի ասույթների, ասացվածքների, առակների հետ մեծ դեր է խաղացել ասույթների ժողովածուների կազմավորման գործում և վաղուց արդեն գրավել նաև հայ բանասերների ուշադրութունը, հատկապես Ն. Ակինյանի[2], ապա այլ ուսումնասիրություններից պետք է հիշատակենք իտալացի հայագետ Է. Տեզայի «Բանք»-երի բուն ժողովածուներին վերաբերող «Հելլեն իմաստասիրաց հատընտիր խրատք թարգմանեալք ի հայէ»[3] վերտառությամբ երկը, որը նվիրված է VI-VII դարերում հայերեն թարգմանված «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ»[4] ժողովածուի քննությանը: Մնացած հայագետները այս կամ այն ժողովածուին անդրադարձել են մասնավոր հարցերի կապակցությամբ, դիցուք թարգմանիչների երկերի ցանկերի և ժամանակագրության ճշտման առիթով, երբեմն ոչ ճիշտ բնորոշելով տվյալ երկը:

Նախքան անցնելը ասույթների հայ ձեռագրային աշխարհում կենցաղավարման հարցին, մի փոքր տեղեկություն տանք ասույթների ծագման, նրանց խաղացած դերի մասին հունական և լատինական գրականություններում:

Ասույթը կոնկրետ և համառոտ արտահայտված այն միտքն է, որից բխում է որևէ բարոյախոսական սկզբունք: Փիլիսոփայական և բարոյագիտական հնագույն սիստեմները ի հայտ են գալիս ասույթների ձևով: Ուսումնասիրողները տարբերակում են երկու տիպի ասույթների ժողովածուներ՝ «Գնոմոլոգիաներ» (հուն.՝ γνώμη - խրատ, ասույթ) և «Ապոթեգմատներ» (հուն.՝ ἀπόφθεγμα - ասույթ, դիպուկ խոսք): Սկզբնական շրջանի, հնագույն շերտի համար, բնորոշ էին բանաստեղծական ասույթների ժողովածուները՝ Գնոմոնոլոգիաները, ուր քաղվածքներ էին ամփոփված այս կամ այն նշանավոր բանաստեղծի, փիլիսո-

---

[1] Տե՛ս Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի, և կնոջն, և որդւոյն Դիոկղետիանոսի, և յեօթանց իմաստասիրաց: Տպագրեցեալ... ի մայրաքաղաքն ըստամբոլ...ի...ՌՃՀ (1731):

[2] Տե՛ս Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 141-202:

[3] Տե՛ս Է. Տեզա, Հելլեն իմաստասիրաց հատընտիր խրատք. թարգմանեալք ի հայ. «Բազմավէպ», 1894, էջ 71-76, 130-133:

[4] Տե՛ս «Սոփերք հայկականք», Ձ. Ա., Վենետիկ, 1853, էջ 9-59:

փայի երկերից: Սրանք մի կողմից հետապնդում էին ուսուցողական նպատակ՝ նախատես-
ված էին դպրոցների համար, մյուս կողմից՝ նպաստում էին փիլիսոփայական որևէ ուղղու-
թյան գաղափարների տարածմանը:
Գնալով այդ ժողովածուների թիվը աճում է: Առաջ են գալիս ժողովածուներ, որոնցում
ամփոփվում էին ոչ թե մեկ, այլ արդեն մի խումբ հեղինակների ասույթներ: Հետագայում,
հռոմեական դարաշրջանում, նոր պայմաններում, հարմարեցվելով հռոմեական բարձրա-
գույն տիպի հռետորական դպրոցներին, դրանք համալրվում են արձակագիրների երկերից,
հատկապես պատմիչներից քաղված ասույթներով, ուր շռայլորեն օգտագործվում են
տարբեր պատմական անձանց կենսագրություններից վերցված բարոյախրատական դեպ-
քեր, անեկդոտանման պատմություններ, առակներ: Հին բանաստեղծական ասույթներին
կցվում են բացատրություններ: Այս նոր տիպի ժողովածուները կոչվում են ապոթեգմատ-
ներ: Հայտնի են ապոթեգմատների Պլուտարքոսի, Ֆավորինի խմբագրությունները, Ստո-
բեոսի ժողովածուն:

Ե՛վ հունական, և՛ հռոմեական ասույթները, նախատեսված լինելով դպրոցի համար, պահպանում են իրենց նշանակությունը նաև դպրոցից դուրս՝ որոշ իմաստով դառնալով տեղեկատու հանրագիտարաններ, որոնցից կարող էին օգտվել թե՛ աշակերտները, թե՛ գիտնական հեղինակները: Բացի այդ, ասույթների բոլոր ժողովածուները հռոմեական դա-րաշրջանում գրողների համար ձեռք են բերում loci communesե-ի (ընդհանուր տեղինե-րի-ի) նշանակություն: Վերջինս որոշիչ դեր խաղաց դրանց դասավորման, տարբեր ձևերի առաջացման մեջ (թեմատիկ, հեղինակային և այբբենական կարգով): Դասակարգման այդ սկզբունքները հավաքողին ազատ ընտրության հնարավորություն էին տալիս. նա կարող էր դուրս նետել կամ ներմուծել այս կամ այն ասույթը: Նույն կերպ կարող էր վարվել գրիչը, ընդօրինակողը: Սրանով է բացատրվում ասույթների ժողովածուի բազմազանությունը տարբեր ընդօրինակություններում[5]:

Քրիստոնեական դարաշրջանի գրականությունը ժառանգեց նաև անտիկ և հռոմեական շրջանների ժողովածուները, որի հիմնական աղբյուրն Աստվածաշունչն էր: Այդպիսի երկերից էր Հովհան Դամասկացու «Սուրբ զուգահեռներ» ժողովածուն: Մ. Տեր-Մովսեսյանցի համոզմամբ Վիեննայի մխիթարյանների հայ ձեռագրերի հավաքածուի մի ձեռագիր պարունակում է այդ երկի հայերեն թարգմանությունը (տե՛ս Սպերանսկի, նշված աշխ., էջ 69):

Հայ թարգմանիչների թարգմանությունների շնորհիվ հայերը ինչ-որ չափով հաղորդակից դարձան հունական և հռոմեական մատենագրության մեջ տարածված ժողովածուներին և թարգմանված երկերը նույն դերը խաղացին հայ գրականության և դպրոցի մեջ:

Հայերի առաջին ծանոթությունը ասույթների հետ վերաբերում է դեռևս V դարի երկրորդ կեսին, երբ այլ երկերի հետ հայերեն թարգմանվեց հույն հռետոր Ափտոնիոսի ճարտասանական ձեռնարկը՝ «Arts hretorika»-ն: Թարգմանիչն իր կողմից լրացումներ կատարելով՝ ձեռնարկը կոչեց «Գիրք պիտոյից»: Սրանում ուսուցողական նպատակով հարց ու պատասխանի ձևով օգտագործվել են նաև հին հույն իմաստասերների առանձին ասույթ-

[5] Ասույթների ժողովածուների մասին տե՛ս **М. Н. Сперанский**, Переводные сборники изречений в славяно-русской письменности, М., 1904, с.1-67.

ները, որոնցից մի քանիսը անցել են հայ մատենագրություն և տեղայնացել: Օրինակ՝ շատ հայտնի «Սահմանք քաջաց՝ զէն իւրեանց» ասացվածքի աղբյուրը գալիս է հունական հին ասույթների ժողովածուներից. «Ջսլավոնացի ումն հարցեալ, թէ ո՞ւր սահմանք Սպարտաց, և նորա՝ նիզակն ցուցեալ, ասէ. «Ցայսմ վայրի»[6]:

Ասույթների ժողովածուները հայկական միջավայրում ունեցել են զարգացման երկու հանգուցային և մեկ միջանկյալ շրջան.

1. Առաջին շրջանը սկիզբ է առնում VI-VII դարերում, երբ հայերեն թարգմանվեց վերոհիշյալ «Բանք իմաստասիրաց» ժողովածուն: Այն հատկապես խորը հետք է թողել հայ մատենագրության մեջ: «Բանք»-ի հրատարակիչները՝ Վենետիկի մխիթարյանները, գտնում են, որ իրենց հրատարակածը Հովհաննես Ստոբեոսի գրքի կամ նրա համառոտության թարգմանությունն է՝ վերջինիս, սակայն, համարելով II դարի հեղինակ «Անտոնեանց ժամանակի յոյն մատենագիր, Քրիստոսէ գրեթէ 150 տարի ետք»[7]: Իսկ թարգմանությունը «թէ յոճոյն ու թարգմանութեան ընտրութենէն՝ յայտնապէս կը տեսնուի, որ մեր երանելի թարգմանչաց միոյն երկասիրութիւնն է, կարգեալ ի խրատ և յուսումն մանկութեան»[8]: Տեզայի կարծիքով, «ստուգապէս չի կրնար ըսուիլ, թէ Ստոբէոսի հետևած ըլլան, թէպէտ և հավանական է ենթադրել, թէ այդ հռչակեալ գրքէն բռած են իրենց ծաղկաքաղը»[9]: Ըստ առավել ընդունված կարծիքի, Ստոբեոսը VI դարի առաջին տասնամյակների բյուզանդական հեղինակ է, որն իր մեծածավալ երկի մեջ ամփոփեց անտիկ և հռոմեական շրջանների ժողովածուներից հասած ժառանգությունը: Ուրեմն, հայերեն թարգմանությունը, եթե այն Ստոբեոսի երկի համառոտությունն է, չի կարող կատարված լինել VI դարից վաղ:

Ինչևէ, «Բանք»-ը լայն տարածում է գտել հայ միջնադարյան գրականության մեջ: Նրանում ամփոփված իմաստասերների ասույթներով, թևավոր խոսքերով դարեր շարունակ սնվել են մեր բարոյախրատական և կրթական ձեռնարկները, քարոզգրքերը և այլ ժողովածուները՝ հարստացնելով և ավելի պատկերավոր դարձնելով հայոց լեզուն: Ժողովածուն պահպանվել է XIII-XVI և ավելի ուշ դարերի շուրջ 100 գրչագրերով: Երկը պատկանում է հունա-արևելյան տիպի ժողովածուների խմբին: Կառուցման սկզբունքը թեմատիկ է. ասել է՝ յուրաքանչյուր գլուխ նվիրված է որևէ թեմայի (Ա՝ Իմաստութիւն, Բ՝ Ուսումն, Գ՝ Բարեկամութիւն և բարեկամք և այսպես 24 գլուխ):

Ասույթների հեղինակները բացառապես հին հույն իմաստասերներ, կայսրեր, զորավարներ են: Պարունակած ողջ նյութը, ինչպես վաղ շրջանի ժողովածուներում, կրում է աֆորիզմային բնույթ՝ բաղկացած է սեղմ, պատկերավոր ասույթներից, որոնց երբեմն հաջորդում է նույնքան սեղմ առակ, բայց որպես կանոն առակն ու բարոյախոսությունը բացակայում են: «Բանք»-ի լայն տարածումը և ժողովրդականացումն է վկայում նրա երկրորդ

---

[6] «Գիրք պիտոյից»: Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993, էջ 38:

[7] «Բազմավէպ», 1853, էջ 252:

[8] Նույն տեղում:

[9] «Բազմավէպ», 1894, էջ 73:

թարգմանությունը՝ «Ասացուածք խոհեմականք»[10] վերտառությամբ 1675 թ.: Ըստ Է. Տեգայի այդ թարգմանության հեղինակն է Ոսկան Երևանցին: Մենք ապացուցել ենք, որ այն Հովհաննես Հոլովի թարգմանությունն է[11]:

«Սոփերքում» հրատարակած «Բանք»-ից հետո զետեղված է մի ուրիշ գրվածք՝ «Սեկոնդոս փիլիսոփայի խօսքը առ Ադրիանոս»[12] խորագրով: Դա խրատական, հարց ու պատասխանի ձև ունեցող մի փոքրիկ գրվածք է: Հեղինակի մասին հրատարակիչները տեղեկություններ են քաղում հենց բնագրից, ուր ասվում է, որ Սեկոնդոսն Ադրիանոս կայսեր ժամանակակից աթենացի իմաստասեր է, և ավելացնում են, որ նա «միայն իր այս պատմութեամբը, և իմաստուն կէս մըն ալ իմաստակ խոսքերով»[13] ծանոթ է: Զարբհանալյանն այս գրվածքի մասին խոսելով, ընդգծում է, որ «Հելլեն ուրիշ նախնի իմաստասիրաց այլևայլ զգոնութեան խրատուց և թելադրութեանց՝ հայերէն թարգմանութիւնք ալ կան գրուած, մանաւանդ յՈսկեփորիկ գիրս:...գրչագրաց մէջ գտուածները աւելի բազմաթիւ են»[14]:

Է. Տեգյան այն համեմատում է հույն և լատին նմանատիպ բնագրերի հետ և բավական խիստ գնահատական տալիս այդ գրվածքին. «Ճարտասանական ոստք են՝ պատուաստիք խառնակուած, և անվարժ պարտիզպանի ձեռքով պարտէզ պարտէզ փոխադըրուած» և կասկած է հայտնում, «թէ հայ թարգմանութիւնն կարենայ օգնութիւն մը մատուցանել այն նկարագրական հաւաքմանց ամբողջութիւն մը կազմել ուզողին, որոնք կը համարէին հիմք թէ իմաստասէր մը ներկայացուցած ըլլայ զաշխարհ գիրս աշխարհի»[15]:

Հաջորդ շրջանը մենք անվանում ենք միջանկյալ, քանի որ այդ ժամանակահատվածում XIV-XV դդ., ասույթների շարքը լրացվում է ոչ թե ինքնուրույն «Բանք»-երի ժողովածուներով, այլ Կաթոլիկ Եկեղեցու քարոզչական թարգմանական երկերի շնորհիվ, որոնք նույնպես հագեցված են բարոյախրատական զրուցատիպ օրինակներով: Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Բարդուղիմեոս Բոլոնիացու [Մարաղացու] «Քարոզգիրքը», ինչպես և Պետրոս Արագոնացու նույնատիպ ստեղծագործությունները, որոնց մեջ օգտագործված զրույցները, ասույթները քաղված են եվրոպական միջավայրում նույն ժամանակահատվածում լայն տարածում գտած ժողովածուներից: Բարթուղիմեոս Մարաղացու «Քարոզգրքից» անցած զրույցներ հանդիպում են արդեն նրան ժամանակակից հայ մատենագիրների, ինչպես, օրինակ, միարարների հակառակորդ Գրիգոր Տաթևացու, կամ նրանց համակրող Հովհաննես Ծործորեցու երկերում:

2. Եթե առաջին շրջանի «Բանք»-երը քիչ թե շատ ուսումնասիրված են, ապա XVII-XVIII դդ. թարգմանությունները մինչև վերջին ժամանակները բոլորովին անհայտ էին, ա-

---

[10] «Ասացուածք խոհեմականք հընոց իմաստասիրաց» - տե՛ս Գիրք վայելուչ և հարկաւոր հանուրց Հայկազունեաց բարեսիրաց, Մարշիլիայ, 1675, էջ 74-125:

[11] Այդպիսի ենթադրության է հանգել մեզնից առաջ Ռ. Իշխանյանը, թեև այն փաստերը, որոնց վրա հենվում է նա, ոչ մի կապ չունեն «Ասացուածք խոհեմականքի» հետ: Այս մասին մանրամասն տե՛ս **Ք. Ս. Տեր-Դավթյան**, «Հայելի վարուց» ու XVII-XVIII դարերի թարգմանական արձակը: «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 119-131:

[12] Տե՛ս «Սոփերք հայկականք», հ. Ա, էջ 67-70:

[13] «Բազմավէպ», 1853, էջ 252:

[14] Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն: Վենետիկ, էջ 133:

[15] «Բազմավէպ», 1894, էջ131:

վելի ճիշտ կլինի ասել, որ հայտնի էին միայն դրանց մի մասի անվանումները: «Հայելի վարուցի» ուսումնասիրության և նրա բնագրի հրատարակության կապակցությամբ մենք անդրադարձանք նաև XVII-XVIII դդ. թարգմանական արձակին[16] և ցույց տվեցինք, որ այդ ժամանակահատվածը հայ-արևմտաեվրոպական գրական կապերի խորացման շրջան էր և թարգմանությունները գրեթե անխտիր միջնադարյան, այդ թվում և նրա կողմից ժառանգած անտիկ և հռոմեական շրջանների փոքր տեսակի պատմողական արձակի ժողովածուներ են: Այստեղ բավական հարուստ են ներկայացված նաև մեզ հետաքրքրող ժողովածուները: Սրան ավելացնենք, որ թարգմանիչները բացառապես հայ գաղթավայրերի մշակութային գործիչներ են: Այդ թարգմանությունների մանրազնին քննությամբ հաջողվեց պարզել, որ նշված ժամանակաշրջանում հայերեն են թարգմանվել թե՛ արդեն հնուց հայտնի արևելահունական-բյուզանդական և թե՛ հայ մատենագրությանը անծանոթ արևմտաեվրոպական լատինական ժողովածուներ:

Ընդհանուր պատկերացում կազմելու համար XVII-XVIII դդ. հայերեն թարգմանված «Բանք» ժողովածուների մասին, ստորև բերում ենք մեզ հայտնի հուշարձանների ցանկը.

1. 1633 թ. «Բանք իմաստասիրաց»-ի քառահատոր ժողովածու, թարգմանիչ՝ Զաքարիա Բեռնատովիչ:

2. 1671 թ. «Նորագոյն ծաղիկ զօրութեանց», թարգմանիչ՝ Հովհաննես Հոլով:

3. 1675 թ. «Ասացուածք խոհեմականք», թարգմանիչ՝ Հովհաննես Հոլով:

4. 1768 թ. «Ասացուածք փիլիսոփայից», թարգմանիչ՝ Հ. Նալյան:

Թվարկված ժողովածուներից Զաքարիա Բեռնատովիչի քառահատոր «Բանք իմաստասիրաց»-ը, «Ասացուածք խոհեմականք»-ը և «Ասացուածք փիլիսոփայից»-ը հունական-բյուզանդական խմբին պատկանող ժողովածուներ են: «Ասացուածք»-ը, ինչպես արդեն նշեցինք, հնում թարգմանված «Բանք նախնի իմաստասիրաց»-ի նոր թարգմանությունն է:

1768 թ. Հակոբ Նալյանը հայերեն է թարգմանում հույն իմաստասերների մի այլ ժողովածու՝ «Ասացուածք փիլիսոփայից»[17]: Սակայն նրա վաստակը հին շրջանի իմաստասերների ասույթների թարգմանության գործում չի սահմանափակվում միայն այդ ժողովածուով: Լինելով ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը, նա ուսուցողական նպատակով, օգտվելով անմիջապես բնագրերից, իր «Գանձարանում» և մյուս բոլոր ստեղծագործություններում առատորեն օգտագործել է իմաստասերների ասույթների և միջնադարյան զրուցատիպ բազմաթիվ ժողովածուներ: Այդ տեսակետից նրա գրական ժառանգությունը կարոտ է հատուկ ուսումնասիրության: XVII դարում հայերեն է թարգմանվում ևս մի ժողովածու՝ «Նորագոյն ծաղիկը», որն արդեն պատկանում է արևմտալատինական տիպի ժողովածուների շարքին և այդ առումով նորություն էր հայ մատենագրության համար:

[16] Տե՛ս «Հայելի վարուց»: Աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի, Երևան, 1994, էջ 44-70:

[17] Տե՛ս «Ասացուածք փիլիսոփայից հաւաքեալ ի Յակոբայ Աստուածաբան Կոստանդնուպօլսոյ Պատրիարքի», Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3 6592, էջ 51ա-73բ:

Այստեղ կցանկանայինք համառոտակի անդրադառնալ մեր կողմից մանրակրկիտ ուսումնասիրված և վերջերս նաև հրատարակված Զաքարիա Բռնատովիչի «Բանք իմաստասիրաց»[18] և Հովհաննես Հոլովի «Նորագյուտ ծաղիկ»[19] գործերին:

Լեհահայ գաղութի հասարակական և մշակութային գործիչ Զաքարիայի գրական աշխատությունների մեջ առավել հետաքրքրականը և արժեքավորը «Բանք իմաստասիրաց» ժողովածուի թարգմանությունն է: Այն զետեղված է իր իսկ կողմից ընդօրինակված ձեռագրում (Մատենադարան, № 1916, էջ 389բ-421բ):

421բ էջում թարգմանիչը թողել է իր հիշատակարանը, որից պարզվում է, որ նա այդ երկը թարգմանել է հայերեն 1633 թ.:

Հիշատակարանում բացի թարգմանության թվականից, վայրից և թարգմանչի անունից այլ տեղեկություններ չկան, ոչ մի խոսք չի ասված ո՛չ թարգմանության աղբյուր հանդիսացող երկի, ո՛չ նրա հեղինակի և ո՛չ էլ այն մասին, թե որ լեզվից է թարգմանվել ժողովածուն: Գիտենք միայն, որ թարգմանությունը արված է Լեհաստանում Լվովի ավագերեց Զաքարիայի կողմից: Հ. Անասյանը ենթադրում է, որ այն կատարվել է լատիներենից[20]:

Մեզ հաջողվել է պարզել, որ թարգմանությունը արված է լեհերենից և որ թարգմանության հիմքում ընկած է ճանաչված լեհ գրող Բենյաշ Բուդնու «Չորս գիրք հակիրճ և պերճախոս պատմությունների, որոնք հունարեն կոչվում են Ապոթեգմատա» վերնագիրը կրող ժողովածուն: Ժողովածուն հրատարակվեց XVII դարի սկզբին և լայն ճանաչում գտավ: XVII դարի երկրորդ կեսին այն թարգմանվեց նաև ռուսերեն, ապա XVIII դարի ընթացքում ունեցավ մի քանի ռուսերեն հրատարակություններ (1711, 1716, 1723, 1745, 1781):

Բենյաշ Բուդնու ժողովածուի նյութի դասակարգման սկզբունքն ըստ հեղինակների է. առաջին հատորում բացառապես ներկայացված են հույն իմաստասերները (Սոկրատ, Պլատոն, Արիստիպոս, Արիստոտել և այլ հույն փիլիսոփաներ), երկրորդում՝ հույն, հռոմայեցի, պարսիկ կայսրեր ու թագավորներ և այլ իշխանավորներ, երրորդում՝ լակեդոմացի իմաստասերներ, չորրորդում՝ իմաստուն կանայք: Այստեղ, ինչպես ուշ շրջանի նման ժողովածուներում, որոնք ընդգրկում էին նաև գնոմոլոգիաներում եղած նյութը, կան հարցերի և պատասխանների ձևով տրված ասույթներ և ասացվածքներ, կարճ բարոյախոսական անեկդոտանման դեպքեր պատմական անձերի կենսագրությունից: Որոշ իմաստասերների ասույթներին երբեմն նախորդում կամ հաջորդում են համապատասխան հեղինակների 1-2 էջանոց «ուսմունքները» կամ «առակները», որոնք նույնպես կրում են աֆորիզմային բնույթ:

Առաջին իսկ հայացքից պարզվում է, որ Բենյաշ Բուդնու ժողովածուն ծավալով գրեթե երկու անգամ ավելի մեծ է, քան նրա հայերեն թարգմանությունը: Զաքարիայի թարգմանության սեղմության պատճառը պայմանավորված է մի քանի հանգամանքներով. 1. Նա

---

[18] Տե՛ս Ք. Ս. Տեր-Դավթյան, «Բանք իմաստասիրաց»-ի մի նոր ժողովածու հայերեն թարգմանությամբ», «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4: Նաև՝ Բանք իմաստասիրաց, աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի: Երևան, 2001:

[19] Տե՛ս Քնարիկ Տեր-Դավթյան, Հովհաննես Հոլովի երկու թարգմանությունների շուրջ: Բանբեր Մատենադարանի, № 16, Երևան, 1994, էջ 112-119:

[20] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա. Բ, Երևան, 1976, էջ 1473:

չի թարգմանել այս կամ այն փիլիսոփայի «ուսմունք» կոչված հատվածները, 2. Որպես կանոն չի թարգմանել ասույթներին հաջորդող բարոյախոսական ամփոփումները և բացատրությունները, 3. Կատարել է կրճատումներ՝ պահպանելով բնագրի հաջորդականությունը: Զաքարիան իր թարգմանության մեջ ղեկավարվել է որոշակի սկզբունքով՝ երկը իրոք համապատասխանեցնելով «կարճառոտ բանքերի» պահանջին և ցուցաբերելով բարձր գրական ճաշակ: Ընտրված ասույթներն ու առակներն այնքան խոսուն են և այնքան լեցուն բարոյախոսական իմաստով, որ նրանց կցված խրատաբանական մեկնությունններն արդեն թվում են անտեղի և ավելորդ: Շատ ասացվածքներ և զրույցներ համահունչ են նաև մեր ժամանակներին և կարծես հասցեագրված են հենց մեզ: Թեկուզ այս զրույցը. «Երբ նմա [Տիբերիոսին] քաղաքաց իշխանք ասէին, զի այլ ևս մեծ հարկս դիցէ ի վերա աշխարհին, ոչ ետ թոյլ նոցա ինչ ասել, այլ այնպէս պատասխանեալ, թէ բարի հովուի վայել է զբուրդն առնուլ ոչխարաց և ոչ զմորթն քերթել»:

«Նորագոյն ծաղկին»[21], որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի անդրադարձել: Գրքի անվանաթերթի հայերեն խորագրից հետո տպված է նրա լատիներեն անվանումը՝ «Flos virtutum»: Թարգմանության աղբյուրի մասին այլ տեղեկություններ չկան. Եվ դա այն պարզ պատճառով, որ խոսքը մի երկի մասին է, որը շատ մեծ ճանաչում էր գտել կաթոլիկ բարոյախրատական գրականության մեջ: «Flos virtutum»-ը իրենից ներկայացնում է ասույթների և նրանց կցված «exemplum»-ների, օրինակների, բարոյախրատական զրույցների ժողովածու: Այն ստեղծվել է հյուսիսային Իտալիայում, ըստ երևույթին՝ Վենետիկում: Պահպանվել են այդ երկի XIV դ. իտալերեն ձեռագրեր (Բոլոնիայից), որոնց խորագիրն է «Fiori di virti»: Գրքի կազմողներն են Կերուբինո դա Սպոլետոն, Ջիովանի Անտոնինին և Տոմացեո Լեոնին: Այն պատկանում է հնագույն իտալական հրատարակությունների թվին: Մինչև 1500 թ. հայտնի են եղել այդ գրքի 26 հրատարակություններ: Ժողովածուն ունեցել է երկու խմբագրություն. մեկը պարունակում է 35 գլուխ, երկրորդը՝ 41: Համառոտ խմբագրությունը տարածված է եղել Արևելքում, որի վկայությունն են նոր հունարեն, ռուսերեն և ռումիներեն թարգմանությունները: Հայերեն թարգմանության համար հիմք է ծառայել Արևմուտքում տարածված և 41 գլուխ պարունակող ընդարձակ խմբագրությունը:

«Նորագոյն ծաղիկը» ամբողջությամբ կազմված է հեթանոս ու քրիստոնյա հեղինակների ասույթներից: Այն իր կառուցվածքով և մտահղացմամբ տարբերվում է արևելա-հունական ժողովածուներից և ունի թեմատիկ կառուցվածք: Այստեղ հետևողականորեն կիրառված է անտիթեզի սկզբունքը, ըստ որի յուրաքանչյուր երկու գլուխ երկու հակադիր թեմաներ են. ուրախություն-տրտմություն, խաղաղություն-բարկություն, ողորմություն-խստասրտություն և այլն:

Ամենամեծ տեղը ասույթների հեղինակների շարքում գրավում են Սողոմոնը, Պղատոնը, Սենեկան, Արիստոտելը, Սոկրատը, Օգոստինոսը, Թովմա Աքվինացին, ապա նրանց հաջորդում են Թուլիոսը, Օվիդիոսը, Մակրոբիոսը, Իսիդորւասը, Կատոնը, Բոեցիոսը, Աղեքսանդրոսը, Գալիադորասը, Վարոնը, Հերոնիմոսը, Դիոգենեսը, Պյութագորասը, Եզովպոսը և այլք:

---

[21] Տե՛ս «Նորագոյն ծաղիկ զօրութեանց», թարգմանեցեալ ի Յովհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ. ի զուարճութիւն հայկազունեաց յամի... 1671... ի Հռոմ:

«Նորագոյն ծաղիկ»-ի նաև նյութի մատուցման եղանակն այլ է: «Ծաղիկ»-ը ընդգրկում է քրիստոնեական, աստվածաշնչային պատվիրաններին մոտ թեմաները: Յուրաքանչյուր գլուխ, որպես կանոն, սկսվում է համապատասխան թեմային վերաբերող քրիստոնեական բարոյախոսության դրույթների պարզաբանությամբ: Որպես մեծագույն հեղինակություններ վ՛կայա՛կոչվում են Արևմուտքի ճանաչված հեղինակները և աստվածաբանները՝ Օգոստինոս, Թովմա Աքվինացի, մարգարեներ, առաքյալներ: Սակայն նրանց դրույթները ամրապնդվում են մի շարք հունական կամ հռոմեական իմաստասերների, պատմիչների, բանաստեղծների ասույթներով: Յուրաքանչյուր գլուխ պարտադիր ավարտվում է նշված դատողությունները ներկայացնող զրույցներով՝ վերցված կա՛մ միջնադարյան հանրագիտարաններից, կա՛մ զրուցատիպ ժողովածուներից: Այդ աղբյուրների շարքում են Եզովպոսը, Հնագույն պատմությունը, Աստվածաշունչը, Հարանց վարքը, Գիրք մոլութեանցը, Գործք հռոմայեցվոցը, հիշատակվում է նաև պարզապես պատմությունը: Դրանց մեջ ամենամեծ տեղը գրավում են «Գործք հռոմայեցվոցի» զրույցները:

Շատ հավանական է, որ որոշ զրույցներ, որոնց սկսվածքներում նշված են այլ աղբյուրներ, նույնպես քաղված լինեն «Գործք» կամ «Պատմութիւն հռոմայեցվոց»-ից: Այն, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է XIII դարում Անգլիայում, ըստ մասնագետների, Աստվածաշնչից, Բարոյախոսից և «Հազար ու մեկ գիշերից» հետո եղել է Եվրոպայի ամենամեծ ճանաչում գտած զրույցների ժողովածուն: Աշխարհիկ բնույթի այդ միջնադարյան ժողովածուում ամփոփված են առակներ, նորավեպեր, անեկդոտներ և ամբողջ վեպեր, որոնք ծագում են արևելյան, անտիկ և միջնադարյան եվրոպական գրականություններից: Ժողովածուն չի թարգմանվել հայերեն, սակայն նրա բազմաթիվ զրույցներ ուղղակիորեն կամ միջնորդաբար այլ ժողովածուների կազմում մուծվել են հայ մատենագրություն XIV-XVIII դարերի ընթացքում:

«Նորագոյն ծաղկի» թարգմանությամբ հայ մատենագրությունը հարստացավ հին իմաստասերների մինչ այդ անծանոթ արևմտա-լատինական խմբի ժողովածուով: Նրա արժեքը հայ մատենագրության համար հատկապես մեծանում է եվրոպական միջնադարյան ժողովածուներից քաղված զրույցների առկայությամբ, որով հայ մատենագրություն է ներմուծվում միջնադարյան Եվրոպայում շրջանառության մեջ եղած զրույցների մի մեծ խումբ: Ժամանակին Ն. Մառը նկատել է, որ արևմտաեվրոպական հեքիաթները, իմա՝ զրույցները, անեկդոտները, առակները և փոքրածավալ արձակի այլ գրական ժանրերի նմուշները, «որոշակի ազդեցություն են ունեցել մեր ժողովածուների վրա» և բազմիցս նշել է «բարոյախոսական և հետաքրքրաշարժ ժողովածուների ուսումնասիրության անհրաժեշտությունը»[22]: Ահա նաև այդ տեսակետից ասույթների ժողովածուների ուսումնասիրությունը պետք է լինի նման հարցերով զբաղվողների ուշադրության կենտրոնում:

[22] Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Ա., Պետերբուրգ, 1894, էջ 267:

*ԱՆԱՀԻՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ*

# ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍԻ ՄԻ ԴՐՎԱԳ

Ծեսը հանդես է գալիս ոչ միայն կրոնապաշտամունքային արարողություններում, այլև կյանքի բոլոր բնագավառներում (ծնունդ, ամուսնություն, մահ), կարգավորում, կազմակերպում է մարդու և բնության, մարդու և հասարակության կապը, կանոնակարգում այն և դառնում է ավանդական: Ծեսի միջոցով վերարտադրվում է նախասկզբնական արարչագործությունը՝ դառնալով խիստ զգալի, տեսանելի ժողովրդի համար:

Հարսանիքն ինչպես յուրաքնչյուր, այնպես էլ հայ ժողովրդի հնագույն ծեսերից է: Այն ըստ էության նվիրագործական ծես է և մեզ է հասել ամենավաղ ժամանակներից: Հարսանիքի ծիսական արարողություններում տեսնում ենք նախնական մտածողության ու աշխարհընկալման տարրերը: Կրոնական համակարգերի անցումային շրջանում փոխվում են ծեսի միայն արտաքին ձևերը, սակայն բուն նախնական էությունը մնում է անփոփոխ: Հարսանեկան ծեսը ներկայանում է առանձին սյուժեների ձևով և իր մեջ ներառում է առասպելական պատկերացումների մի ամբողջություն:

Ազգագրական հանդեսներում ու ժողովածուներում ամփոփված են Հայաստանի գրեթե բոլոր շրջանների հարսանեկան ծեսի սյուժետային նկարագրությունները՝ իրենց երգերով ու պարերով, խաղերով, տարազներով, ծիսական սովորություններով ու արարողություններով: Սակայն, այնուամենայնիվ, կան նաև նորանոր գրառումներ, հարսանեկան ծեսի նորատիպ արարողական տարբերակներ: Մեր նպատակը չէ ներկա հոդվածում ներկայացնել հարսանեկան ծեսն ամբողջությամբ: Անդրադառնալու ենք միայն մի քանի ծիսական արարողությունների՝ կապված աղջիկ ուզելու, նշանդրեքի և հարսանիքի ժամանակ կատարվող մի արարողության, որը կոչվում է «Թագվորի ծառ փնջելը»:

Ուշագրավ է աղջիկ ուզելու կամ առաջարկություն անելու մի հետաքրքիր տարբերակ, որը պահպանվում է մինչև օրս և այն կատարվում է միայն Ամանորին:

Այդ օրերին բազմատեսակ ուտելիքների հետ միասին սեղանին դնում են նախապես աճեցրած կանաչի (ծլեցրած ցորեն, գարի կամ սիսեռ): Այն անպայման պետք է պատրաստեն տան երիտասարդ աղջիկները: Այս ծիսական սովորության մեջ հետաքրքիր է այն փաստը, որ ցորենը, ընդհանրապես՝ հատիկը, առաջին անգամ ցանելու և աճեցնելու իրավունքը են ստանում երիտասարդ աղջիկները: Իսկ եթե չեն լինում նախապես պատրաստած կանաչ ծիլերը, ապա սեղանին դնում են ծաղիկ կամ սովորական կանաչի, հատկապես՝ ռեհան, քանի որ այն խորհրդանշում է սեր, խաղաղություն և բարեկամություն:

Ըստ սովորության՝ Ամանորին հյուր են գնում՝ իրար շնորհավորելու: Երբ հյուրերի մեջ երիտասարդներ են լինում, տանտերերը ուշադիր հետևում են նրանց: Եթե երիտասարդը պոկում է սեղանին դրված ծաղկի պսակից, նշանակում է՝ խնդրում է այդ տան աղջկա ձեռքը, իսկ թե կանաչի է լինում, ապա տղան ձեռքին խաղացնում է ու դնում բերանը: Համաձայնության դեպքում տանտերերը ինչ-որ ձևով զգացնել են տալիս: Իսկ եթե սեղանին

ո՛չ ծաղիկ և ո՛չ էլ կանաչի է լինում, ապա ջուր է ուզում՝ ասելով. «Ջուր կուզեմ, բայց բեր-ո՛չ ծաղիկ և ո՛չ էլ կանաչի է լինում, ապա ջուր է ուզում՝ ասելով. «Ջուր կուզեմ, բայց բերնեբերան լնի-լեցուն»: Եթե աղջիկը ջուրը տալիս է լնի-լեցուն բաժակով, ուրեմն՝ համաձայն է նրա առաջարկությանը: Այս վերջին տարբերակն ավելի տարածված է և լայն մասսայականություն է վայելում:

Այժմ ներկայացնենք մեկ ուրիշ ծիսական սովորություն՝ կապված նշանդրեքի հետ, որը գրառվել է Իջևանի շրջանում: Նյութը կներկայացնենք այնպես, ինչպես պատմել է ասացողն ինքը (ասացող՝ Սաթենիկ Ավետիսյան):

«Տասնվեց տըրեկան էի, երբ էկան ինձ նշանիլու: Ինձ համար իրեք պատ հըլյունք էին պիրել և մի հատ էլ սինի՝ միջին տանձ, խնձոր, խաղող ու էլի ուրիշ մրգեր: Նրանք ուզըմ էին, որ ես մի միրգ վեր ունեմ: Ես էլ խնձոր վե կալա: Եթե խնձոր ես վեր ունում, ուրեմը՝ ամուսնուդ հավատարիմ կնիկ դես լիլ. էդ օջախումը լավ հարս դես լիլ, իսկ թե, աստոծ վեչ անի, խաղող վեր ունես, ուրեմը՝ սուսուփուս քյում էին: Խաղողը նշանակըմ ա, որ ամուսնուդ հավատարիմ չես լիլ, հավեսիդ հըմար ես ամուսնանըմ»:

Հայ իրականության մեջ յուրաքանչյուր միրգ ունեցել է խորհրդանշական իմաստ. խընձորը համարվել է սիրո, խաղողը՝ պտղաբերության, նուռը՝ կյանքի խորհրդանիշ: Սակայն ասացողն այստեղ ուրիշ կերպ է մեկնաբանում. խաղողը նա համարում է ոչ թե պտղաբերության, այլ անհավատարմության խորհրդանիշ՝ կապված նրա արբեցնող հատկության հետ:

Հարսանեկան ծեսի մյուս արարողությունը, ինչպես վերը արդեն նշվեց, Հայոց մեջ հանդիպող «Թագվորի ծառ փնչելու» ծիսական արարողությունն է, որը պահպանվել է Իջևանի շրջանի և Ղարաբաղի որոշ գյուղերում:

Հարսանիքի նախորդ օրը երկու ազապներ բերում են մի փոքր կանաչ ծառ՝ կճուճի մեջ դրված: Ծառը խորհրդանշում է տղամարդուն:

Ամենավաղ կրոնական համակարգում՝ անիմիստական ժամանակաշրջանում, ծառը նույնացել է մարդու հետ և պաշտվել (գագաթը համարվել է գլուխը, ճյուղերը՝ ձեռքերը, բունը՝ իրանը, և արմատները՝ ոտքերը): Այնուհետև, տոտեմիզմի ժամանակ շարունակվել է ծառի պաշտամունքը, այն սրբացվել, երկրպագվել ու համարվել է գոյության, պտղաբերության խորհրդանիշ: Մինչև հիմա էլ դեռ պահպանվում են ծառի պաշտամունքային տարրերը, որոնք իրենց արձագանքն են գտել ժողովրդական տոներում, ծեսերում ու սովորույթներում:

Եթե ծառը խորհրդանշում է տղամարդու կերպարը, ապա կճուճը՝ կնոջ կերպարը (ուռուցիկ որովայնը խորհրդանիշն է հղիության, պտղաբերության): Կճուճի մեջ կարող է լցված լինել հացահատիկ կամ աղ. երկուսն էլ խորհրդանշում են կյանք, գոյություն: Ծիսական այս արարողությամբ որոշակի նպատակ են հետապնդել՝ «ապահովել» պտղաբերությունը, կյանքի գոյությունն ու շարունակելիությունը:

Երբ ազապները բերում են կճուճի մեջ դրված ծառը, հավաքվում են տղայի հարազատները, բարեկամները ու ընկերները (հիմնականում՝ երիտասարդները) և սկսում ծառը փընջել, զարդարել, որպեսզի հաջորդ օրը դնեն հարսանեկան սեղանին: Ծառը զարդարում են գունավոր թելերով, մոմերով, կոնֆետներով ու մրգերով: Նրանք և՛ փնջում են ծառը, և՛ գո-

վերջում փեսային (որոշ շրջաններում փեսայի գովքը կատարում են հագցնելու ժամանակ)։

«Թագվորի ծառ փնջելու» այս ծեսը նույնանում է «Թագվորագովքի» հետ. սա «Թագվորագովքի» մի ուրույն տարբերակ է։ Միսական այս արարողությունը նաև թատերական մի ներկայացում է. տանը կատարվում է «Ծառ փնջելու», իսկ դրսում «Մսացուն մորթելու» արարողությունը։ Դրսում տարեցներն ու միջին տարիքի հարսանքավորները պար են բռնում։ Այստեղ կա ուշագրավ մի փաստ։ Պետք է պարեն այնպիսի պարեր, որ ոտքերն ամուր գետնին խփեն, իբր թե չարը ոչնչացնելու, ոտքի տակ գցելու և հատկապես՝ զույգերին երջանիկ ու բախտավոր կյանք ցանկանալու։

Հարսանեկան ծիսական պարերը, որոնք գոյություն են ունեցել հնագույն ժամանակներից, ունեն խորհրդանշական իմաստ։ Պարերի միջոցով մարդիկ աշխատել են «ապահովել» հատկապես ամուսնական զույգերի բախտավորությունը, երջանկությունը, ընտանեկան բարենպաստ կյանքը։ Այդ պարերի կատարումը համարվել է պարտադիր և դիտվել որպես կարևոր ծես յուրաքանչյուր ամուսնացող զույգի համար։

Միսական այս արարողությունը, որ կատարվում է մեր օրերում, իր շերտերում կրում է պատմական-առասպելական ժամանակների արծարծումներ, ուր կարծես ջնջվում ու միախառնվում են հնի ու նորի սահմանները։

*Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները բաժանվում են յոթ ենթախմբերի (զուտ արևմտահայերեն բառեր, առավելապես արևմտահայերեն բառեր, արևելահայ-արևմտահայ համանուններ, արևելահայերենի փոխառյալ բառի դիմաց հայերեն նորակազմություններ, միևնույն հասկացության համար բառակազմական տարբեր բաղադրիչներով հայերեն բառեր երկու տարբերակներում, հնչյունափոխական-ուղղագրական տարբերակներ և գրաբարյան բառեր ու բառաձևեր, որոնք պահպանվել են արևմտահայերենում)[1]: Դրանցից առաջինը կազմում են, այսպես կոչված, «զուտ արևմտահայերեն» բառերը:

Բառապաշարի այս շերտը արևելահայերեն-արևմտահայերեն համադրության մեջ ամենաստվարն է: Սրանք այն բառերն են, որոնց գործածությունը դուրս չի գալիս արևմտահայերենի սահմաններից: Մի շարք պատճառներով դրանք մնացել են որպես արևմտահայերենին բնորոշ (և միայն նրան բնորոշ) բառեր: Ընդ որում պատճառները հիմնականում արտալեզվական են: Բովանդակային առումով դրանք խիստ բազմազան են և ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ՝ կապված արևմտահայ կյանքի, կենցաղի ու սովորույթների, ինչպես նաև պատմաաշխարհագրական միջավայրի, բուսանունների ու կենդանական աշխարհի հետ: Սրանց պետք է հավելել նաև եկեղեցական-կրոնական ծեսերի, արարողությունների ու սովորույթների հետ կապված բազմաթիվ բառերը:

Վերջիններս, թվում է, պետք է ընդհանուր լինեին հայերենի բոլոր փուլերի և շերտերի համար, մանավանդ որ իրենց արմատներով գալիս են մեր պատմության հնագույն շրջաններից և դրանց մի մասը սրբագործված է Եկեղեցու նվիրապետական կանոններով: Սակայն այս դեպքում դեր են խաղացել նաև հասարակական-քաղաքական տարբեր միջավայրերը, որոնցում 20-րդ դարում հայտնվեցին մեր ժողովրդի երկու հատվածները, հետևաբար և մեր լեզվի երկու ճյուղերը: Հայրենիքի կորստից հետո արևմտահայերենը վերածվեց Սփյուռքի հայության հաղորդակցման միջոցի, ուր գերակա դարձավ հայապահպանության գործոնը: Այդ գերնպատակին հասնել անհնար էր առանց Եկեղեցու բացառիկ դերակատարության, որով և պայմանավորվեց այս ոլորտի բառերի գործածության մեծ հաճախականությունը արևմտահայերենում:

Մինչդեռ Խորհրդային Հայաստանում ամբողջատիրական հասարակարգի և աթեիզմի համընդհանուր տիրապետության պայմաններում եկեղեցական-կրոնական ընդհանուր

---

[1] Այդ մասին առավել մանրամասն տես **Ռ. Սաքապետոյան**, Արևելահայերեն-արևմտահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Ե. 2000:

բառապաշարը, տերմինաբանությունը մատնվեցին մոռացության և հետևողականորեն դուրս մղվեցին գործածությունից, ուստի և այդ բառապաշարին հնարավոր չէր հանդիպել թե՛ մամուլում և գրականության մեջ, թե՛ բառարաններում, որոնք արտացոլում են կենդանի լեզվի բառապաշարը: Բերենք ասվածը հաստատող մի խոսուն վկայություն հայ բառարանագրության երախտավորներից մեկի՝ Էդ. Աղայանի ակամա «խոստովանությունից»:

Բնութագրելով բառացանկի ընտրության սկզբունքները՝ հեղինակը թվարկում է, թե որ բառերն ու բառաձևերը չեն ընդգրկվել իր բառարանում, ու առաջաբանի 13-րդ կետում գրում է. «Կրոնական ու եկեղեցական բառերի մեծ մասը, որոնց իմացումը, հեղինակի կարծիքով, այսօրվա մասսայական ընթերցողին անհրաժեշտ չէ»[2]:

Ինչ խոսք, նման մոտեցումը տուրք է ժամանակի բարքերին, պահանջներին ու մտածողությանը, մինչդեռ այսօր անհնար է առաջնորդվել նման սկզբունքներով:

Իբրև հետևանք, այսօր արևելահայերենում եկեղեցական միջավայրից դուրս գրեթե չեն գործածվում հիշյալ բնագավառին վերաբերող բառերն ու արտահայտությունները, իսկ արևմտահայերենը դրանք սրբությամբ պահպանել է: Այդ իսկ պատճառով այսօրվա ընկալմամբ եկեղեցական-կրոնական բովանդակությամբ ստորև բերվող բառերը, խորհրդային շրջանում գլխավորաբար, պատկանում էին արևմտահայերենի բառախմբին:

Այժմ փորձենք ներկայացնել այդ բառերից առավել բնորոշները համապատասխան բացատրություններով.

Բանկալ-Եկեղեցուն կից հատուկ տեղ, ուր մոմ են վաճառում:

Գերեզմանօրհնողչեք[3]-Գերեզմանի օրհնության վճար քահանային:

Եղամ- Տաճարի մուտքի առջևի սրահը՝ գավիթ:

Ջոմբ-Աբեղայի կնգուղ:

Ընծայանոց (ընծայարան)-Եկեղեցում գտնվող պահարան, ուր պահվում են Ս. Պատարագի նշխարը և գինին:

Ժամանոց- Պատարագի գինու սրվակ՝ բաժակաման:

Ժամավոր/ժամվոր/- Ժամ՝ եկեղեցի գնացող:

Ժամարար-Պատարագիչ քահանա:

Ժամոց(ժամուց)- Պատարագիչ քահանային տրվող դրամական նվեր:

Խախամ-Հրեա կրոնավոր, ռաբբի:

Խոռել-Եկեղեցական կարգուկանոնը (ծոմը, պասը) խախտել:

Խոստուկ-Խոստովանող, մեղքը ընդունող:

Միատեր-Եկեղեցական ծխի պատասխանատու քահանա, հոգևոր հովիվ:

Միատուն- 1. Քահանա ունեցող ընտանիք: 2. Երիցատուն, քահանայատուն:

Տռազատիկ-1. Տոմարական տարբեր հաշվարկումներով 50 տարին մեկ անգամ տոնվող Զատիկ, որ Երուսաղեմի հայկական և հունական եկեղեցիների միջև վիճաբանու-

[2] Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե. 1976:

[3] -չեք ածանցով կազմված բառերը բնորոշ են միայն արևմտահայերենին, ունեն լեզվական բնույթ և կապ չունեն վերոնշյալ արտալեզվական գործոնների հետ:

թյունների և բախումների պատճառ էր դառնում: 2. Փխբ. Չեղած ու չլինելիք օր, խելառազատիկ:

Մփուլ-Կնգուղ. վեղար:

Կեռոն-Վրան մոմ կրող հատուկ գավազան, որ դպիրները տանում են թափորի առջևից:

Կորբան-1. Զոհ, մատաղ: 2. Կամավոր նվերների գանձանակ: 3. Կամավոր նվեր՝ ժամուց:

Հոգեբաժին-Տուրք քահանային՝ ննջեցյալի տիրոջից:

Ձեռքպագ- Ձեռնահամբույր, հարգանքի տուրք:

Ջոնարան-Սուրբ սեղան, զոհասեղան:

Մաշակ-Հաղորդություն:

Ծոխակ-Եպիսկոպոսական գավազան:

Մատրանապետ-Մատուռի պատասխանատու:

Մարդարիշար-Խունկի տեսակ:

Նվիրանոց-1. Սկիհ, բաժակ: 2. Նվերների աման, ընծայանոց:

Շաբաթանալ-Ըստ հրեական սովորույթի՝ հանգստանալ՝ աշխատանքը դադարեցնել:

Շուշտակ-Կնոջ մահից հետո կուսակրոն հոգևորական դարձած մարդ:

Շուշփա- Մաքուր կտոր, որ դրվում է սկիհի տակ, կամ ծառայում է այն մաքրելուն:

Պահքակեր-Պահքը խախտող և ուտող, պասակեր:

Սիմոնական-Կաշառքով ձեռնադրություն անող հոգևորական, շնորհավաճառ:

Տափանակ-Տուփ, գանձանակ, սրբության անոթ:

Տեր պապա-Քահանա, տերտեր:

Փակակալ-Շենքի՝ եկեղեցու բանալիները պահող մարդ:

Զուտ արևմտահայերեն բառերի մեջ առանձնանում է բառերի մի խումբ, որ պայմանականորեն անվանել ենք ծիսական-ազգագրական իմաստներ արտահայտող բառեր: Սրանք այն բառերն են, որոնք կապվում են արևմտահայության (ապա և սփյուռքահայության) համայնքային-հայրենակցական տարբեր ըմբռնումների ու սովորույթների հետ:

Դրանց մեջ հատկապես ընդգծվում են ամուսնական-ընտանեկան հարաբերություննների հետ կապված հասկացությունները, որոնք առատ նյութ կարող են տալ ազգագրագետներին: Այսպես, հնացույն մի սովորության մասին է վկայում աստառաձևեք բառը, որ նշանակում է պայմանավորված դրամ կամ իրեր, որ փեսայի հայրը տալիս է հարսի հորը: Այստեղ ակնհայտ է օժիտի հակառակ երևույթը, որն, ըստ երևույթին, գալիս է դրացի ժողովուրդներից (քրդեր-եզդիներ, կովկասյան ժողովուրդներ): Նույն ոլորտին է վերաբերում նաև խնդրակ բառը, որ սերունդների համար պահել է հարսանեկան ծեսի հետ կապված մի այլ ավանդույթ. մոտիկ ազգականները տնետուն էին շրջում և տանում հարսանյաց հրավերները, ինչպես նաև ուզընկան բառը, որ նշանակում է խնամախոս:

Առհասարակ արևմտահայոց մեջ ամուսնական ծիսակատարությունը որոշակիորեն տարբերվում էր հիմնականում կովկասյան ժողովուրդների ծեսերը որդեգրած արևելահայոց սովորույթներից: Այդ առումով, չափազանց խոսուն են աղջիկտես (հարսնացու ընտրելու նպատակով աղջիկ տեսնելու գնալը), աղջիկբաղնիք (հարսանիքից առաջ հարսնացուին տրված լոգանք), դրամօժիտ (որպես օժիտ կամ օժիտի փոխարեն տրված դրամա-

կամ փոխհատուցում), հինադրեք կամ հինադրոնք (հարս ու փեսայի ձեռքերին հարսանիքի նախորդ գիշերը հինա դնելու արարողություն) և այլն: Այս շարքի բառերի մեջ առանձնանում են նաև այլևայլ հավատալիքների, սնոտի ըմբռնումներ ու սովորույթներ անվանող մի շարք բառեր, ինչպես՝ աղահմայություն, աղտահմայություն, մոմռաս, դիցանույշ և այլն: Զգալի թիվ են կազմում նաև մկրտության, նշանադրության, հուղարկավորության և մի շարք այլ ծեսերի ու արարողությունների հետ կապված բառերը:

Ինչ խոսք, մեր ժողովրդի երկու հատվածների շփումներն ու աղերսները չեն բացառում ներկայացվող բառերի ու արտահայտությունների փոխներթափանցումները և սակավադեպ գործածությունները՝ մանավանդ ավագ սերնդի ներկայացուցիչների շրջանում: Այդ առումով, ներկայացվող բառերն ու արտահայտությունները զուտ արևմտահայերեն բառաշերտին վերագրելով՝ առաջին հերթին նկատի ունենք պաշտոնական հրատարակությունները, մամուլը և բառարանները:

Աղահմայություն- Աղի վրա՝ աղի միջոցով կատարվող հմայություն:

Աղջիկբաղնիք- Հարսանիքից առաջ հարսնացուին տրված լոգանք:

Աղջիկտես-Հարսնացու ընտրելու նպատակով աղջիկ տեսնելու գնալը:

Աղջկորդի- Չամուսնացած մորից ծնված զավակ, աղիծ:

Աղտահմա- Կեղտի վրա գուշակություններ անող:

Անժըմի- Կանացի երկաթյա ապարանջան ու մատանի, որն, ըստ ավանդության, դարբինը շինում է Ավագ Ուրբաթ գիշերը (փխբ. հուռութք, թալիսման):

Ասպականի- Որսորդներ՝ ձիերով ու շներով:

Ասպատանիկ- 1. Խնամված ձի: 2. Երկրորդական՝ փոխարինող ձի:

Աստառաձնեք- Պայմանավորված դրամ կամ իրեր, որ փեսայի հայրը տալիս է հարսի հորը:

Աստեղ- Աղջիկ՝ հարսնացու ուզել՝ ընտրել:

Արապահ- Հարթ տանիքի չորս կողմը շրջափակող պատ՝ օտար հայացքներից պաշտպանվելու համար:

Բաչուկ - Տափակ նախշած հաց՝ նշան հարսանեկան հրավերի:

Բոռտ- Օրորոցի անկողին՝ կենտրոնը ծակ, ուր կա լոյակ՝ միզաման:

Դահմունք- 1. Բնամթերքով նվեր՝ ընծա: 2. Թեյանվեր:

Դիագող- Դի՝ մեռել գողացող՝ դիակապուտ:

Դղղան- Նախշված փայտի կտոր, որ կախում են ընտիր՝ աչքի ընկնող անասունի վզից՝ աչքով չտալու համար:

Դռնբացեք- Դուռը բացելու վարձ:

Դրամօժիտ- Որպես օժիտ տրված գումար:

Ժածմունք- Կախարդական խոսք կամ գրություն, բժժանք, թալիսման:

Խալյան- Գին, որ փեսացուն վճարում է հարսի հորը (կալիմ, ղալիմ):

Խնդրակ- 1. Տնետուն հարսանիքի հրավեր տանող մարդ: 2. Խնամակալ:

Խունթուրծ- Մոխիրով և քացախով պատրաստուկ՝ վերքի վրա դնելու համար:

Խուր- Կերուխում հարսի տանը՝ աղջիկ ուզելու ժամանակ:

Խոսնցեալ(ք)- 1. գ. Նշանված տղա կամ աղջիկ: 2. ած. Նշանված, նշան դրած:

Խոսքառում- Խոսք առնելու արարողություն նշանդրեքից կամ հարսանիքից առաջ:

Խոսքկապ- Նշանդրեքից առաջ զույգ կողմերի ծնողների միջև կայացվող համաձայնություն:

Կնքազգեստ- Երեխայի մկրտության սպիտակ զգեստ:

Հալավ- 1. Առհասարակ զգեստ՝ հագուստ, շոր: 2. Հարս ու փեսայի համար զնվելիք հագուստեղեն:

Հալավօրհնեք- Ամուսնացողների հագուստները օրհնելու արարողություն:

Հարսանքատեր- Հարսանիքի տեր, սովորաբար փեսայի հայրը:

Հարսնալոշ- Հարսնացուի տանը թխված լավաշ հաց, որ ուղարկվում է ազգականներին՝ որպես հարսանիքի հրավեր:

Հարսնառ- Հարսին հոր տնից եկեղեցի տանելու ծես:

Հարսնեւտուն- Հարսանքատուն:

Հափափել- Աղջիկ առևանգել:

Հերատուկ- 1. Գլխաբաց կին: 2. փխբ. Անամոթ, անպատկառ, լկտի:

Հինադրեք (հինադրոնք)- Հարս ու փեսայի ձեռքերին հարսանիքի նախորդ օրը հինա դնելու արարողություն:

Հողապա- Ստորգետնյա զանձերը պահպանող ոգի:

Հողլաթ- Խաչնձարուրի հատուկ լաթի կտոր, որի վրա հող կամ ավազ էին լցնում:

Հողվըրտիք (հողվայրք, հողոտիք, հողոց, հողվրդի, հողտապան, հողք, հողվերք) - Գերեզման, գերեզմանոց, գերեզմանի հող:

Մակար- Հարս բերելու գնացող թափորի անդամ:

Մուճուր- Հարսանիքի տնտես՝ մառանապետ:

Մչուկ- Հարսի բրգաձև և շղարշով պատած գլխարկ:

Մոմոաս- Մեծ պահքի յոթ շաբաթները որոշելու համար երդիկից կախված սոխի գլուխ՝ վրան յոթ փետուր, որոնցից յուրաքանչյուրը շաբաթը մեկ հանում են, մոոմոող, ակլատիզ:

Յոթնօրեք[եօթնօր(եք)]- Թաղման յոթերորդ օրը ննջեցյալի գերեզմանը օրհնելը, հոգեհանգիստը, հոգեհացը:

Յափափել (յափափել)- Աղջիկ փախցնել:

Նախան- Առաջին պտուղ, բերք, նուբար, երախայրիք:

Նախանուն- Ավազանի կամ մկրտության անուն:

Ծնախորոմ- Ազգականներից հարսին տրվող ընծա:

Շվոտ (շուտտ)- Փետրվարի վերջին գիշերը:

Ողորմատեղ(ի)- Բարի գործ՝ հիշատակ, որի համար մեռնողին երանի են տալիս:

Որբոց-Քահանային տրվող գումար պսակի կամ թաղման արարողության կատարման համար:

Ուզ(ը) ընկան- 1. Աղջկա ձեռքը խնդրող երիտասարդ: 2. Խնամախոս:

Պայ(իկ)- Հավերժահարս, դիցանուշ:

Ջալլ- Եղերամայրերի խումբ:

Ջայլել- Մեռելի շուրջը խմբվել՝ ողբալու համար:

**Ջաչ**- Երեխա փախցնող երևակայական էակ՝ կանացի կերպարանքով:

**Ջրահմայություն**- Ջրի վրա կատարվող հմայություն:

**Տվայր(տուայր)**- 1. Փեսայից հարսին տրվող օժիտ: 2. Ամուսնու մահից հետո կնոջն անցնող ունեցվածք:

**Փեսախում**- Նշանդրեքից հետո հարսի ծնողների կողմից ի պատիվ փեսացուի տրված կերուխում:

**Փեսա(յա)ծու**- 1. Փեսային հարսի մոտ կամ հարսին փեսայի մոտ տանող անձ: 2. Փեսայի մոտիկ ընկեր:

**Փեսապատիվ**- Հարսի ծնողների կողմից փեսայի հարազատներին ուղղված հրավեր հարսանիքի հաջորդ կիրակին:

**Քողք(քօղք)**- Պսակի օրը հարսնացուի դեմքը ծածկող քող:

**Օժիտագիր**- Օժիտի մասին գրավոր պայմանավորվածություն:

**Օժիտադրամ**- Նույնն է Դրամօժիտ:

**Օրորոցախազ**-Օրորոցի երեխաների օրորոցների վրա (տղա և աղջիկ) քաշվող խազ՝ իբրև նշան ապագայում նրանց իրար հետ ամուսնացնելու (թրք. բեշիկ քերթմե):

Ազգագրական բացառիկ արժեք են ներկայացնում նաև այն առած-ասացվածքները, որոնք տարածված լինելով արևմտահայ իրականության մեջ, պատկերացում են տալիս տարբեր հավատալիքների, ծիսական ավանդույթների, կենցաղային սովորությունների մասին: Այսպես՝ խտացված ժողովրդական մի հետաքրքիր հավատալիք է արտահայտում նապիկի փեշը գլխուն քաշել, շապիկի մեջեն անցընել ասացվածքը, որ փոխաբերաբար նշանակում է որդեգրել: Ավանդույթի համաձայն՝ որդեգրող կինը օտար երեխային իր շապիկի միջով է անցկացնում կամ շապիկի փեշը նրա գլխին է դնում, իբրև թե ինքն է նրա ծնողը:

Սովորաբար նման ժողովրդական արտահայտությունները լինում են խիստ պատկերավոր, որով արտահայտվող միտքը կամ գաղափարը դառնում է առավել ցայտուն և արտահայտիչ: Ահա նման մի այլ ասացվածք. Երկու մեռելի քովեն որ անցնի, մեկը կը գողնա (ասվում է խիստ ճարպիկ մարդու մասին), կամ՝ Երկինքը ծիծերը կախել (հորդ անձրև տեղալ), Երկինքի սյո՞ւն պիտի ըլլաս (հասակդ դեռ շա՞տ է երկարելու), Երկու ոտքը մեկ ճողաթափի մեջ դնել (մի թան պարտադրել) և այլն:

Ինչ խոսք, հիշյալ բառերն ու բառաձևերը անգնահատելի են մանավանդ գեղարվեստական գրականության մեջ, ուր դրանք կարող են գործածվել որպես ժամանակաշրջանի ու միջավայրի երանգավորում ստեղծող բառեր՝ յուրահատուկ գույն, համ ու հոտ հաղորդելով նկարագրվող իրադարձություններին:

*ՄԱՐԻ-ԱՆՆԱ ՇԵՎԱԼԻԵ*
*Մոնպելիեի համալսարան*

# ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՎՏՈՆԱԿԱՆՆԵՐԻ՝ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Սեն-Ժան դ'Ակրի* գերմանացիների հիվանդանոցի[1] վերածումը զինվորական միաբանության տեղի է ունեցել Կիլիկիայի հայկական իշխանության՝ թագավորության վերածվելուն[2] զուգընթաց[3]: Զինվորական նոր միաբանությունը, ինչպես նաև նոր թագավորությունն իրենց հիմնադրմամբ պարտական էին միաժամանակ թե՛ Պապին, թե՛ գերմանական կայսրին: Հիրավի, Հայնրիխ VI կայսրը Հարավային Իտալիայում և Սիցիլիայում բազում նվիրատվություններ էր արել միաբանությանը և դրանով իսկ նպաստել վերջինիս բուռն վերելքին[4]: Ինչ վերաբերում է Իննովկենտիոս III Պապին, ապա նա այն վավերացրել է 1199 թ. փետրվարի 19-ին[5]: Հայ հոգևորականության կողմից՝ Հռոմեական Եկեղեցու հետ մերձեցմանը նպաստող որոշ զիջումներ ստանալուց հետո, Կղեստինոս III Պապն իր համաձայնությունն է տվել առ այն, որ Լևոն II իշխանն արքայական թագ ստանա:

Ռուբինյան իշխողը նույն խնդրանքով դիմել է Հայնրիխ VI կայսրին, այնուհետև՝ նրա անժամանակ վախճանից հետո, վերջինիս վարչապետին՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադին, որը 1197 թ. սեպտեմբերին Կիպրոսում Ամորի Լուսինյանին թագադրելուց հետո,

---

* Թեև այս հոդվածում հեղինակը հաճախ տուրք է տալիս հայագիտության մեջ վաղուց մերժված այն թյուր կարծիքին, թե Լևոն Մեծագործը իբր ձեռնադրվել է լատին ծեսով, իսկ Կիլիկյան Հայաստանն արդեն այդ շրջանում շեշտված ձևով արևմտյան սովորույթներին է հետևել, սակայն հաշվի առնելով հոդվածում արծարծված հարցի կարևորությունը հատկապես հայ ասպետական միաբանությունների պատմության տեսանկյունից, նպատակահարմար գտանք այն տպագրել (խմբ.):

[1] Այս հիվանդանոցը հիմնադրվել է ավելի ուշ, քան գերմանացիների հիվանդանոցը Երուսաղեմում, որը հիմնվել է XII դ. առաջին տասնամյակներում և 1140-ական թվականներին դրվել հիվանդախնամների միաբանության հովանու ներքո: Ըստ Մ.-Լ. Ֆավրոյի (**M.-L. Favreau**. Studien zur Frühgeschichte des Deutschen Ordens. Stuttgart. 1975), Սեն-Ժան դ'Ակրի հիվանդանոցը հիմնադրվել է ֆրանկների հակահարձակման ժամանակ, որը հաջորդել է Սալադինի կողմից Երուսաղեմի գրավմանը:

[2] Այն իրողությունների մասին, որոնք 1198 թ. հունվարին պայմանավորել են այդ թագադրությունը, տե՛ս՝ **C. Cahen**. La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche. Paris. 1940, p. 589; **G. Dédéyan**. Idéologie de croisade et idéologie chevaleresque chez les Arméniens de Cilicie.– Les Armes et la Toge. Mélanges offerts à André Martel. Sous la direction de J.-Ch. Jauffret. Montpellier. 1997, p. 57.

[3] Գերմանացիների հիվանդանոցը զինվորական միաբանության է վերածվել 1197 թ. սեպտեմբերից 1198 թ. ընկած ժամանակամիջոցում: Հմմտ. **K. Toomaspoeg**. Histoire des Chevaliers teutoniques. Paris. 2001, p. 18.

[4] **K. Toomaspoeg**. Նշվ. աշխ., էջ 17-18:

[5] **E. Strehlke**. Tabulae ordinis teutonici. Berlin. 1869, p. 266, N 297.

ցնացել է Կիլիկիա և 1198 թ. հունվարին Գրիգոր VI Ապիրատ կաթողիկոսը թագադրել է Լևոնին, որը Մայնցի արքեպիսկոպոսից ստացել է թագավորական այլ տարբերանշաններ[6]: Հայոց պետության ու տևտոնական հիվանդանոցի վերելքը տեղի են ունեցել զուգահեռաբար. նույն տարում և կրել XII-XIII դդ. քրիստոնեական աշխարհում երկու ամենահզոր անձանց դրոշմը: Այդուհանդերձ, գերմանական կայսրի հետ հաստատված հարաբերություններն էին, որոնք քիչ անց երկու կողմերին հնարավորություն էին ընձեռելու առընչակցվելու՝ յուրաքանչյուրի համար առավելագույնս շահավետությամբ:

Ինչպիսի՞ն է եղել տևտոնական միաբանության առանձնահատկությունը Կիլիկյան Հայաստանում:

Մենք կփորձենք պատասխանել այս հարցին՝ Կիլիկիայում գերմանացիների Սուրբ Մարիի միաբանության հաստատման հանգամանքների ուսումնասիրության հենքի վրա. այնուհետև՝ շնորհված նվիրատվական հրովարտակների միջոցով, ինչպես նաև Կիլիկիայի առաջին հայ թագավորների հետ արտոնյալ հարաբերությունների ձևավորման հետնախորքի վերհանման հիման վրա:

## I. Հաստատում աշխարհաքաղաքականության բարենպաստ հենքի վրա

Երրորդ խաչակրաց արշավանքն առաջ էր բերել Սեն-Ժան դ'Ակրի գերմանացիների հիվանդանոցը հիմնադրելու բուռն ցանկությունը:

Հայ պատմիչները, մասնավորապես Հեթում Կոռիկոսցին իր «Ժամանակագրության» մեջ, որն ընդգրկված է «Մանր ժամանակագրություններում», 1190 թվի ներքո նշում է. «Եւ յայսմ ամի եղև սկիզբն կարգաւորութեան Ալաման փրէրացն»[7], դրանով իսկ վկայելով այն հետաքրքրության մասին, որը հայ իշխանները ի սկզբանե դրսևորում էին տևտոնականների նկատմամբ:

Լևոն II իշխանը և նրա նախորդները Կիլիկիայում հիմնադրել էին մի մեծ իշխանություն, որը նրանց միմյանց հաջորդող նվաճումների շնորհիվ ընդարձակվել էր և խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակաշրջանում կարող էր հավակնել վերածվելու թագավորության: Երբ 1190 թ. Ֆրիդրիխ Շիկամորուսն անցնում էր Կիլիկիայով, Լևոնի արքայական նկրտումները, չնայած այն բանին, որ կայսրն, ըստ Ներսես Լամբրոնացու խոսքերի, թագ էր խոստացել[8], չիրականացան, քանի որ մինչ հայոց թագավորը կարող էր

---

[6] C. Cahen. Նշվ. աշխ., էջ 589: C. Mutafian. Le royaume arménien de Cilicie. XII$^{e}$-XIV$^{e}$ siècles. Paris. 1993. 2001, p. 41. Լևոնը թագ էր ստացել նաև բյուզանդական կայսր Ալեքսիոս Անգելոսից:

[7] Հեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ).– Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյանը. Երևան. 1956, էջ 60:

[8] S. Der Nersessian. The Kingdom of Cilician Armenia. chap. XVIII, p. 645 – Setton. A History of the Crusades. vol. II. The Later Crusades. 1189-1311. University of Pennsylvania. 1962.

նրան միանալու համար ժամանակ գտնել. Ֆրիդրիխ I-ը Սելևկիա գետում կնքել էր իր մահկանացուն[9]:

կայսրի հաջորդը՝ Հայնրիխ VI-ը, կարճ ժամանակ անց վախճանվել է: Այդուհանդերձ, կայսրի և Կելեստինոս III-ի մոտ Լևոնի ուղարկած դեսպանությունները հասել են անհրաժեշտ արդյունքների և 1198 թ. հունվարի 6-ին հայ իշխանը թագադրվել է Տարսոնում Սրբազան կայսրության ներկայացուցիչ Կոնրադ Հիլդեսհայմի և Մայնցի արքեպիսկոպոս ու պապական նվիրակ Կոնրադի ներկայությամբ[10]:

Հայոց թագավորը պարտավորվել է ճանաչել գերմանական կայսրի ավագությունը[11], համաձայնագիր, որը թվում է, թե մեծ չափով չի կաշկանդել հայոց պետության գործունեությունը, այլ իր արտացոլումն է գտել գլխավորապես Լևոն I-ի պաշտոնական փաստաթղթերի վերնագրերում[12]: Այդուհանդերձ, այն իր դրոշմն է թողել Կիլիկիայի հայ տիրակալների վարած քաղաքականության վրա, որոնք գերմանական կայսրերին զորավիգ էին բոլոր համաձայնագրերում և տնտեսական ասպեկտներին հնարավորություն է ընձեռել հաստատվելու Կիլիկիայում:

1211 թ. կայսր Օթոնն իր պատվիրակին, Հիլդեսհայմի կանոնիկոս Վիլբրանդ Օլդենբուրգցուն, Հայաստանի թագավոր Լևոն I-ի գահաժառանգի՝ նրա եղբոր թոռան համար նախատեսված արքայական թագով ուղարկել է Կիլիկիա[13]: Այդ դեսպանությունը թույլատրել է ամրապնդել հայոց թագավորի և նրա գերիշխանի միջև գոյություն ունեցող կապերը, հավասարակշռելով, այդպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանում Անտիոքի ժառանգության շուրջ Լևոնի և պապականության միջև ծագած լարված հարաբերությունները: Կայսրի պատվիրակն իր «Peregrinatio»-ի նախաբանում հաղորդում է, որ տևտոնական միաբանության առաջնորդ Հերման դը Սալզան իրեն ուղեկցում էր այդ ճանապարհորդության ընթացքում[14]: Նա հաղորդում է Ռայմոնդ-Ռուբենի թագադրությանը վերջի-

[9] **Imâd ad-Dîn al-Isfahânî** (519-597/1125-1201). Conquête de la Syrie et de la Palestine par Saladin. Trad. française par H. Masse. *DRHC*. Paris. 1972, p. 226-228; Les Gestes des Chiprois. *RHC. D.A.* T. II. p. 660; Anonymi auctoris chronicon ad A.C. 1234 pertinens II. Trad. par A. Abouna. Iintroduction, notes et index de J.-M. Fiey. *CSCO. SS*. 154. Louvain. 1974, p. 151.

[10] Les Gestes des Chiprois, p. 662; **C. Mutafian**. Նշվ. աշխ., էջ 41: Լևոնի թագադրության և այդ արարողությանը ներկա իշխանների ցուցակի մասին տե՛ս Սմբատայ սպարապետի Տարեգիրք. Վենետիկ - Ս. Ղազար. 1956, էջ 208-210:

[11] **S. Der Nersessian**. Նշվ. աշխ., էջ 647:

[12] Օրինակ, Լևոնի կողմից Ամուդայի նվիրատվությանը վերաբերող փաստաթղթում 1212 թ. ապրիլին. "Ego Leo, Dei et romani imperii gracia rex Armenie".– **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 37, N 46:

[13] Վիլբրանդ Օլդենբուրգցին նախ գնացել է Երուսաղեմ՝ մահմեդականների ռազմական ժամանակաշրջանում, այնուհետև՝ պետք է հանդիպեր Կիլիկյան Հայաստանի և Կիպրոսի թագավորներին: Գերմանացի կանոնիկոսի ճանապարհորդության մասին տե՛ս Պ. Հալֆթերի շատ հանգամանալից հոդվածները. **P. Halfter**. Die Beschreibung des Armenischen Königreiches Kilikien durch den Hidesheimer Domherren Wilbrand von Oldenburg.– Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը. Երևան. 2000, էջ 402-421; *Նույնի*՝ Eine Beschreibung Kilikiens aus westlicher Sicht. Das Itinerarium des Wilbrand von Oldenburg.– "Oriens Christianus". Hefte für die Kunde des christlichen Orients. Bd. 85. 2001, S. 176-203.

[14] **Willbrandi de Oldenborg**. "Peregrinatio, iterum edita".– Peregrinatores medii aevi quatuor, Buchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii et Wilbrandus de Oldenborg. Éd. par J. C. M. Laurent. Lipsiae. 1864, p. 162.

նիս, ինչպես նաև հիվանդախնամներին պատկանող Սելեու անառիկ ամրոցի տիրակալի ներկա գտնվելու մասին[15], մի արարողություն, որը տեղի է ունեցել 1212 թ., Աստվածահայտնության օրը:

Վիլբրանդն իր պատումում նկարագրում է Կիլիկիայում զինվորական միաբանություններին պատկանող բազմաթիվ դղյակների և տիրույթների, ի մասնավորի՝ տևտոնականների սեփականությունը հանդիսացող Կումբեթֆորթի և Ամուդայի գտնվելու վայրերը[16]: Փոքր անց, 1212 թ. ապրիլին, Լևոնն այս տիրույթները, ինչպես նաև այլ գյուղեր, մի հրովարտակով[17] նվիրաբերել է գերմանացիների Սուրբ Մարիի միաբանությանը, որը ոչ պաշտոնական ձևով դրանց մի մասի վրա արդեն իր տիրապետությունն էր հաստատել: Խոսքը վերաբերում է մասնավորապես Ամուդա ամրոցին, քանզի 1209 թ. հունիսի 27-ին Իննովկենտիոս III Պապը վավերացրել էր Կումբեթֆորթ և Այուն գյուղերի՝ նախօրոք կատարված նվիրատվությունը[18]: Ուստի կարելի է դրանից եզրակացնել այն խիստ դրական ազդեցության մասին, որը գերմանական կայսրի դեսպանությունները ունեին Կիլիկիայում տևտոնական ասպետների տիրույթների ընդարձակման և օրինականացման խնդրում:

Լևոն I-ի փեսայի ու հաջորդի՝ Հեթում I-ի օրոք շարունակվում է կայսրամետ քաղաքականությունը[19], և տևտոնական միաբանությունը, ըստ այդմ, շարունակում է օգտվել դրա նպաստավոր հետևանքներից: Հիրավի, խաչակրաց վեցերորդ արշավանքի ժամանակ, 1212 թ., հայոց թագավորը սատարում էր Ֆրիդրիխ III Հոհենշտաուֆենին[20], չնայած Պապի քանդրանքին, և հետևաբար, տաճարականների[21] ու հիվանդախնամների՝ իր դեմ ուղղված բողոքին, և անգամ ընդդիմությանը, մի դիրքորոշում, որը բնորոշ չէր տևտոնականներին, որոնց ներկայությունը կայսրի շրջապատում խիստ զգալի էր: Փոխարենը, հայոց թագավորները օգտվում էին կայսրի և նրա կողմնակիցների աջակցությունից, որոնց առաջին շարքերում էին տևտոնական ասպետները: Վերջիններս բազում անգամներ աչքի են ընկել ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական ասպարեզներում: Հավանաբար,

---

[15] Նույն տեղում, էջ 178:

[16] Նույն տեղում, էջ 176. 179: Ի շարս զինվորական միաբանություններին պատկանող այլ ամրոցների, նա նկարագրում է Պաղրասը (բնագրում՝ «Գաստիմը»), որի պատճառով Լևոնը և տաճարականները առճակատման մեջ էին (էջ 174):

[17] **V. Langlois**. Le Trésor des Chartres d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens. Venise. 1863. p. 117-120. **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 37-39. N 46; **K. Forstreuter**. Der Deutsche Orden am Mittelmeer (Quellen und Studien zur Geschichte des Deutschen Ordens. Bd. 2). Bonn. 1967. S. 234. 3-րդ գլուխը վերաբերում է Հայաստանին (էջ 59-67), իսկ հավելվածում (էջ 234-237) կարելի է գտնել հրովարտակների մասնակի հրատարակությունը, որը սրբագրում է Շտրելկեի հրատարակությունը:

[18] **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 266-269. N 298.

[19] Գերմանական կայսրերի և հայ իշխողների հարաբերությունների մասին տե՛ս Պ. Հալֆթերի հոդվածը՝ **P. Halfter**. Die Staufer und Armenien – Von Schwaben nach Jerusalem. Facetten staufischer Geschichte. Sigmaringen. 1995 (Veröffentlichungen des Alemannischen Instituts N 61), S. 187-208.

[20] **J. S. C. Riley-Smith**. The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia – The Cilician Kingdom of Armenia. Ed. par T. S. R. Boase. Edimbourg & London. 1978. p. 92-117.

[21] **Les Gestes des Chiprois**. Նշվ. աշխ., էջ 683:

1212 թ., իբրև Լևոնի դեսպանի, նրանցից Գարնիե անունով մեկին[22] ուղարկել են Պապի մոտ՝ Անտիոքի շուրջ ծագած խնդրի հարցում հայոց թագավորին և նրա եղբոր թոռանը սատարելու համար:

Միևնույն առնականման առիթով, Իննովկենտիոս III-ը 1209 թ. հունիսին՝ Լևոն թագավորին հղած մի նամակում[23], հաղորդում էր Տարսոնի արքեպիսկոպոսից և տևտոնացավորին հղած մի նամակում, հաղորդում էր Տարսոնի արքեպիսկոպոսից և տևտոնական հիվանդանոցի եղբայրներից ստացված նամակների մասին, որոնցում ընդգծվում էր հայոց թագավորի ճիշտ դիրքորոշումը: Եվ Զաբել թագուհու ամուսնու՝ Անտիոքի իշխան Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի բանտարկության ընթացքում, որը տեղի է ունեցել թագավորության ժամանակավոր կառավարիչ՝ Կոստանդին Պայլեռոնցու կողմից, տևտոնական միաբանությունը թույլատրել է վերջինիս՝ բանտարկյալին, որն ավելի քան երկու տարի կալանավորված էր Սսում, տեղափոխել Ամուդա, այն ամրոցը, որտեղ, ըստ հակոբիկյան ժամանակագիր Բար Եբրեոսի, հայերը նրան թունավորել են[24]:

Այս բազմաթիվ օրինակները վկայում են, որ տևտոնական միաբանությունը ներգրավվել է Կիլիկիայի հայկական տարբեր կառավարությունների վարած քաղաքականության պաշտպանության գործում, որը երբեմն հակասել է զինվորական այլ միաբանությունների դիրքորոշմանը և Պապի կամքին: Լևոն I-ի ժամանակավոր կառավարիչ Կոստանդինի և Հեթում I-ի նկատմամբ տևտոնական ասպետների որդեգրած դիրքորոշումը փոխհատուցվել է Կիլիկիայում նրանց միաբանությանն արված նշանակալից տիրույթների նվիրատվությամբ:

## II. Հողային տիրույթների գիշումը

Գերմանացիների Սուրբ Մարիի հիվանդանոցի հաստատումը Հայաստանում պետք է որ շատ արագ տեղի ունեցած լիներ՝ նրանց զինվորական միաբանության վերածվելուց հետո, քանզի 1209 թ. ի վեր, Իննովկենտիոս III-ի կոնդակը վավերացրել է այն երկու տիրույթները՝ Կումբեթֆորթը և Այունը[25], որոնք Հայաստանում տևտոնականներին էին պատկանում հայտնի չէ, թե որքան ժամանակից ի վեր:

Տևտոնական ասպետներին նվիրաբերված տիրույթները սահմանագծված են մեծ ճշգրտությամբ, որը դրանց բնորոշ առանձնահատկությունն է: Հիրավի, բոլոր սահմանները, որոնք նշված են զանազան տարբերանշաններով, ինչպիսիք են ժայռերը, խաչերը, քարանձավները, ծառերը և, բացի դրանից, ջրի բարձրության մակարդակը, սահմանված

---

[22] Տարբերակն առաջադրել է Վ. Լանգլուան. տե՛ս V. Langlois. Նշվ. աշխ., էջ 51: Ղ. Ալիշանը նշում է, որ Գարնիեն գնացել է ոչ միայն Պապի, այլև Ֆրանսիայի թագավորի մոտ: Այդուհանդերձ, այդ դեսպանության հետ կապված նրա հիշատակած տարբերակը, զանազանվում է Լանգլուայի առաջադրած տարբերակից: Տե՛ս L. Alishan. Léon le Magnifique, premier roi de Sissouan ou de l'Arménocilicie. Trad. par le P. George Dayan. Venise-St. Lazare. 1888. p. 138. n. 1 et p. 228.

[23] Innocent III. *PL*. XLV, cols. 54-56.

[24] The Chronography of Gregory Abû'l Faradj, the son of Aaron, the Hebrew physician commonly known as Bar Hebraeus being the first part of his political history of the world. Trad. ang. du syriaque par E.-A. Wallis Brudge. 2 vol. London. 1932. p. 381; J. Riley-Smith. Նշվ. աշխ., էջ 113.

[25] E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 266-269, N 298.

են ճշգրտորեն[26], որը Վիկտոր Լանգլուային հիմք է տվել ասելու, որ Լևոն I-ի օրոք Կիլիկիայում արդեն կադաստրային աշխատանքներ էին կատարվում[27]:

Ինչ վերաբերում է անշարժ ունեցվածքին, ապա այս տիրույթները բաղկացած էին դղյակներից, ինչպիսին էր Ամուդայի դղյակը (Ամուդայի դղյակը գտնվում էր Ջեյհան գետի մոտակայքում, Հարունիեից հարավ-արևելք և Ամանոսյան դռների արևմուտք. նրա գտնվելու վայրը թույլատրում էր մաքսատուրքեր գանձել Սսի և Ամանոսի լեռնանցքների միջև տեղաշարժվող ճանապարհորդներից[28]), որի՝ միաբանությանը նվիրաբերելուն վերաբերվող հրովարտակը ստորագրվել էր 1212 թ. ապրիլին[29], բայց որի՝ տնտեսական կազմակերպությանն արդեն պատկանելու հանգամանքը Վիլբրանդ Օլդենբուրգցին հիշատակում է Կիլիկիա կատարած իր այցելության ժամանակ (1210-1211 թթ.)[30], քաղաքներից, խոսքը վերաբերում է մասնավորապես Հարունիե քաղաքին (Հարունիե բերդամրոցը, որը VII դ. վերջերին կառուցել էր Հարուն ալ-Ռաշիդը, գտնվում էր Մարաշի և կիլիկյան դաշտավայրերի միջև կապ հաստատող ճանապարհի վրա. Ամանոսյան դռների հյուսիսարևմուտքում տեղադրված այդ ամրոցը չէր վերահսկում դրա մոտակա մատույցները)[31], որը Հեթում I-ը և Զաբելը գիջել էին 1236 թ. հունվարի 22-ին[32], աբբայություններից (նախորդ փաստաթղթով միաբանությանն էր նվիրաբերվում երեք աբբայություն՝ Հովիտի, Սուրբ Մամասի և Սոգրի)[33], բազմաթիվ գյուղեր[34] ու ջրաղացներ[35]:

Ինչ վերաբերում է հողային տարածքներին, ապա դրանք բաղկացած էին մշակելի հողերից, ճահճոտ անմշակ հողերից, մարգագետիններից, լեռներից, բլուրներից, հարթա-

---

[26] V. Langlois. Նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46.

[27] V. Langlois. Նշվ. աշխ., էջ 82.

[28] Հմմտ. R. Molin. Unknown Crusader Castles. Haambledon & London. London & New-York. 2001, p. 161:

[29] V. Langlois. Նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46; K. Forstreuter. Նշվ. աշխ., էջ 234.

[30] Willbrandl de Oldenborg. Նշվ. աշխ., էջ 179.

[31] Հմմտ. Robert W. Edwards. The fortifications of Armenian Cilicia. Washington (D.C.). 1987, p. 43; H. Hellenkemper. Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien. Bonn. 1976, S. 119:

[32] V. Langlois. Նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 65-66. N 83; K. Forstreuter. Նշվ. աշխ., էջ 235-236:

[33] Նույն տեղում:

[34] Ըստ 1212 թ. ապրիլի նվիրատվության՝ Սեսփին (ըստ Վ. Լանգլուայի և Ե. Շտրեհլքեի կամ Սեյփին՝ ըստ Կ. Ֆորշտրոյթերի. տե՛ս K. Forstreuter. Նշվ. աշխ., էջ 234), Բուգուեթիա (Բուշեթուիա), Կումբեթֆորթ և Այուն գյուղերը, իսկ ըստ 1236 թ. հունվարի նվիրատվության՝ Լալյան (Լոլիամ), Կոստինոս (Գուստեգենաշ), Գոսքուին (Կոսքուին), Չերրարե, Չաչորիմ (Չաշորիմ), Կենշեքիս (Կամթեքիս), Ադեշեմոն, Պադրաս (Գաստին), Սուրբ Դանիել, Դավենիմ (Դաթենիմ), Սաարգացու, Սուրբ Թորոս, Սև ավերակ (Սիեռերագ), Բերդ, Քոփանգ (Քուիոգ), Տեյագր (Տեյագու), Մոտրիգու (Մուտրիգու), Դրանք, Գյուենեշ (Գյուենոշ), Հաշուղագր (Հաշուղագ) գյուղերը: Հմմտ. V. Langlois. Նշվ. աշխ., էջ 117-120, 141-143; E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46; էջ 65-66, N 83; հմմտ. Կ. Ֆորշտրոյթերի սրբագրած տարբերակը՝ K. Forstreuter. Նշվ. աշխ., էջ 234-236:

[35] V. Langlois. Նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke. Նշվ. աշխ., էջ 65-66, N 83; K. Forstreuter. Նշվ. աշխ., էջ 235-236:

վայրերից, պտղաբեր այգիներից և այլն[36]: Այս տիրույթները գտնվում էին Կիլիկիայի հյուսիս-արևմտյան սահմանագծում և վերջին՝ Հարունիայի նվիրատվությունը շատ ավելի պաշտպանողական բնույթ ուներ, քանզի այն գտնվում էր Ամանոսյան դռների և Սարվանդիքար ամրոցի մոտակայքում: Սարվանդիքարի իշխանական տարածքում տևտոնականները մաքսային կետ ունեին:

Նվիրատվությունները հաճախ ուղեկցվում էին հարկերից ձերբազատված լինելու առնչվող առանձնաշնորհումներով: Հիրավի, Լևոն I-ի հրովարտակը գերմանացիների Սուրբ Մարիի միաբանության եղբայրների համար՝ թագավորին և նրա հպատակներին պատկանող բոլոր տարածքներում նախատեսում էր առանց հարկեր վճարելու՝ այն ամենը գնելու և վաճառելու ազատություն, ինչն անհրաժեշտ էր իրենց կազմակերպության համար, անկախ այն բանից, թե խոսքն ինչին էր վերաբերում՝ մթերքների, հեծնելու անասունների, թե հեծյալասարքերի[37]: Ինչ վերաբերում է Լևոնի եղբոր թոռանը՝ Ռայմոնդ-Ռուբենին, ապա 1219 թ. մարտին նա միաբանության անդամներին թույլատրում է իրենց ունեցվածքով ծովով և ցամաքով անկաշկանդ տեղաշարժվել Անտիոքի իշխանությունում և իր տարածքում նրանց հատկացնում նաև գնումներ և վաճառքներ կատարելու հարցում հարկերից ձերբազատված լինելու իրավունքը[38]:

Այստեղ, սակայն, ծագում է մի խնդիր. հարկ է իմանալ, թե արդյո՞ք ասպետական միաբանության եղբայրները Կիլիկիայում հիվանդանոցային գործունեություն էին ծավալել և հիվանդանոցային շինություններ ունեին: Իրոք որ, ինչպես հիվանդախնամները, տևտոնականներն ի սկզբանե ստանձնել էին միմիայն հիվանդանոցային պարտականություն և ինչպես վերջիններիս պարագայում, սկզբնական շրջանի հիվանդանոցային հաստատությունը զարգացում է ապրել և ռազմականացվել, ամբողջությամբ պահպանելով իր հիվանդանոցային շառավիղները[39]: Այդուհանդերձ, Կիլիկյան Հայաստանում նրանց զիջված ավատներն ունեին նախ և առաջ՝ հստակորեն նախանշված ռազմական նշանակություն, որն առավել ևս ակնհայտ էր, քանզի դրանք գտնվում էին Կիլիկիայի սահմանագծերից մեկի վրա: Լևոն I թագավորը նույնիսկ վկայակոչում էր Հին Կտակարանը՝ տևտոնական հիվանդանոցն Իսրայելի տունը պաշտպանող մակաբայեցիների հետ համեմատելու համար:

Զինվորական միաբանությունների զուգորդումը մակաբայեցիների հետ կրկնվում էր խաչակիրների դարաշրջանի ժամանակագրություններում՝ Աստծո անունից կոչելով մի պայքարի, որի ընթացքում իրեն զգալ էր տալիս աստվածային հզորությունը: Բոլոր զինվորական միաբանությունների ասպետներն ամբողջությամբ նույնանում էին Հին Կտակա-

---

[36] **V. Langlois**. Նշվ. աշխ., էջ 117-120, 141-143; **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46; էջ 65-66, N 83; **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 235-236.

[37] **V. Langlois**. Նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 65-66, N 83; **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 235-236.

[38] **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 41-42, N 51.

[39] Հմմտ. **K. Militzer**. The Role of Hospitals in the Teutonic Order, p. 51-59.– **H. Nicholson** (ed.). The Military Orders. vol. 2. Welfare and Warfare. Ashgate, Aldershot. 1998; **Bernhard Demel**. "Welfare and Warfare in the Teutonic Order: a survey".– **H. Nicholson**. Նշվ. աշխ., էջ 61-73:

րանի այդ ռազմաշունչ ընտանիքի՝ հայր Մատաթիայի, նրա որդիների, որոնց թվում՝ Հուդա Մակաբայեցու՝ Եպիփան IV Անտիոքցու դեմ ուղղված հրեաների ապստամբության զինվորական առաջնորդի հետ: Նրա զոհաբերությունը նմանեցվում է քրիստոնեության առաջին նահատակների զոհաբերությանը:

Մակաբայեցիների թեման ամփոփում է սերտորեն իրար հետ առնչվող երկու հանգամանք. զինվորի, որը հանուն Աստծո գործի պատրաստ է նահատակվելու, ինչպես նաև այն գաղափարի, ըստ որի, հաղթանակի հասնելու համար հարկ է անմնացորդ նվիրաբերվել Աստծուն և հույսը չդնել միայն սեփական ուժերի վրա: Աստծո հանդեպ հավատ տածելու դեպքում սակավաթիվ անձինք կարող են հաղթել մեծ բանակների: Այսպիսով, Հուդա Մակաբայեցին դարձել է խաչակրի և զինվորական միաբանությունների նոր ասպետության նոր մոդելի խորհրդանիշ[40]: Այս մասին Հեթում I-ը ասում է. «Նրանք հայտարարել են, որ ինչպես իսկական եղբայրներ ու անբաժանելի բարեկամներ պաշտպանելու են մեզ և նեցուկ են լինելու մեր թագավորությանը՝ դրան պատկանող բոլոր տարածաշրջաններում»[41]:

Կիլիկիայում միաբանությանը տիրույթներ հատկացնելը միշտ չէ, որ արժանանում էր տեղական բոլոր իշխանների հավանությանը: Հիրավի, 1271 թ. Սարվանդիքար ամրոցի տիրակալ Կոստանդինի և տևտոնականների միջև կնքվում է մի համաձայնություն՝ ճանապարհներից գանձվող մաքսային կետի վերաբերյալ[42], որը եղբայրները հաստատել էին Հարունիեի և Սարվանդիքարի սահմանագծում[43]՝ առանց խորհրդակցելու վերջին ամրոցի տիրակալի հետ: Երկար տարիներ ձգված անհամաձայնությունից հետո միայն գտնվել է փոխզիջումը՝ շնորհիվ 1256-1273 թթ. տևտոնականների առաջնորդ Աննո դը Սանգերհաուզենի միջամտության, երբ մաքսային կետը տեղափոխվել է Սև Աշտարակ կոչվող վայրը և եղբայրները շարունակել են օգտվել ճանապարհներից մաքս գանձելու իրավունքից:

## III. Հայոց թագավորների և տևտոնականների Սուրբ Մարիի միաբանության միջև հաստատված անձնական կապերը

Միջնադարում զինվորական միաբանությունների, այն է՝ տաճարականների, հիվանդախնամների և տևտոնականների ներկայությունը Կիլիկիայում բարյացակամ ընդունելության է արժանացել բարձրաստիճան հայ ազնվականության շրջանում և մասնավորապես թագավորի շրջապատում: Այդ կապերի հաստատումը, որը զուգակցվում էր արքու-

[40] **V. Langlois**. Նշվ. աշխ., էջ 117-120; **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46; **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 234. Հմմտ. A. Demurger. Chevaliers du Christ. Les ordres religieux-militaires au Moyen Age. XIᵉ-XVIᵉ siècles. Paris. 2002, p. 188-189.

[41] **V. Langlois**. Նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 65-66, N 83; **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 235.

[42] Փաստաթուղթը հրապարակել է Ղ. Ալիշանը. տե՛ս Սիսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ. հառաջբեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան. Վենետիկ - Ս.Ղազար. 1885, էջ 210; *RHC. DA*. T. II, p. 840, note d.; տե՛ս նաև՝ **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 236-237:

[43] **J. Riley-Smith**. Նշվ. աշխ., էջ 114.

նիյի և թագավորության հաստատությունների լատինացման հետ. որոշ խոշոր իշխաննե-
րի, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի երկու ամենահզոր թագավորներին, մղել է մտնե-
լու զինվորական միաբանությունների համախմբության մեջ:
Սկսած 1160-ական թվականներից, հայոց իշխան Մլեհը, որը 1170-1175 թթ. բռնակա-
լական մեթոդներով իշխում էր Կիլիկիայում, անդամակցել է տաճարականների միաբա-
նությանը[44]: Նա այդ միաբանությունը լքել է մեզ անհայտ պատճառներով և իշխանության
հասնելուց հետո տաճարականներին վտարել Կիլիկիայից:
Ինչ վերաբերում է նշանավոր ամրոց Լամբրոնի երկու իշխաններին՝ Հեթում III-ին
(1151-1218), որը դարձել է վանական, և նրա որդի Կոստանդին I-ին (1180-1250), ապա
նրանք Երուսաղեմի Սուրբ Հովհաննես՝ հիվանդախնամների միաբանության «confratres»
էին[45]:

1201 թ. տաճարականների միաբանությանը, որը Պաղրաս ամրոցին տիրանալու առի-
թով արդեն առճակատման մեջ էր Լևոնի հետ[46], վերջինս առաջարկել է՝Պաղրաս ամրոցը
զիջելու դիմաց ստանձնել իր եղբոր թոռան՝ Ռայմոնդ-Ռուբենի կրթության գործը, որին
համարում էր իր ժառանգորդը: Բացի դրանից, հաշտության շուրջ համաձայնության կա-
յացման այդ նույն առաջարկության ժամանակ, իր և իր եղբոր թոռան անունից, թագավո-
րը դիմել է տաճարականների միաբանությանը՝ համախմբայրության մեջ ընդգրկվելու
խնդրանքով, որը միաբանության անդամները մերժել են, որպեսզի իրենց պահանջների
օրինականությունը բացասման վտանգի չենթարկվի, ինչին դա կարող էր հանգեցնել[47]:

Սակայն այն միաբանությունը, որի հետ հայոց թագավորները առանձնահատուկ հա-
րաբերություններ էին պահպանում՝ տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությունն էր:
Իրոք որ, Լևոն I-ը՝ Կիլիկյան Հայաստանի առաջին թագավորը, տևտոնականների միա-
բանության «confrater» էր, ինչպես ինքն է այդ առիթով 1212 թ. ապրիլին նշել միաբանութ-
յանը հղած նվիրատվական հրովարտակում. «omnium venerabilibus et religiosis fratribus
sancte domus hospitalis teutonicorum [...] de quorum sum confraternitate»[48]: Հավանաբար,
նույնը վերաբերում է նաև Հեթում I թագավորի (1226-1269 թթ.) պարագային, որն իր հրո-

[44] Willelmi Tyrensis chronicon. Éd. **R. B. C. Huygens**. 2 vol. *CCCM*, 63-63a; Turnhout 1986. Livre XX, p. 948-950; **Giacomo Bosio**. Dell'istoria della sacra religione et illustrissima militia di San Giovani gierosolimitano. 3 tomes en 2 volumes. Rome. 1594-1604; trad. Histoire des chevaliers de Saint-Jean. 2 vol. Paris. 1629, p. 11-12; **L. Alishan**. Նշվ. աշխ., էջ 52-53.

[45] **J. Delaville Le Roulx**. Inventaire des pièces de Terre sainte de l'ordre de Saint-Jean de Jérusalem.– "Revue de l'Orient latin". 3. 1895, p. 67, N 281; p. 69, N 284; **Cyrille Toumanoff**. Les dynasties de la Caucasie chrétienne, de l'Antiquite jusqu'au XIX^e^ siècle.Table généalogiques et chronologiques. Rome. 1990, tableau 56, p. 280.

[46] Տաճարականների և Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունների մասին տե՛ս **J. Riley-Smith**. Նշվ. աշխ., էջ 92-117; **M.-A. Chevalier**. Quelques aspects de la présence des templiers en Cilicie.– Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ. VII միջազգային գիտաժողովի նյութեր. «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը». 20 և 22 սեպտեմբերի 2000 թ., Երևան. 2001, էջ 88-102:

[47] Innocent III. *PL*. XLIII, cols. 1005-1006. Որովհետև ըստ Ջ. Ռիլեյ-Սմիթի, Պաղրասին առնչվող իրենց պա-հանջները Պապի քննությանը ներկայացնելը հանգում էր դրանց օրինականությունը հարցականի ներքո դնե-լուն (**J. Riley-Smith**. Նշվ. աշխ., էջ 102):

[48] **V. Langlois**. Նշվ. աշխ., էջ 117-120; **E. Strehlke**. Նշվ. աշխ., էջ 37-39, N 46; **K. Forstreuter**. Նշվ. աշխ., էջ 234.

վարտակում ճշգրտում է. «Այդ սուրբ կազմակերպության՝ Աստծո կացարանի համար է, որ մենք հայտարարում ենք և ցանկանում այս պահից ի վեր մասնակցել նրանց բոլոր բարեգործություններին», հավաստելով, այսպիսով, միաբանության կազմում գործելու իր ցանկությունը:

Զինվորական միաբանության կազմում որևէ մեկի ընդունելությունն իբրև «confrater» հանգեցնում էր նվիրատվության կամ տարեկան ռենտայի[49]: 1212 թ. և 1236 թ. կազմված նվիրատվական հրովարտակները մասամբ առնչվում էին հայոց տիրակալների՝ տնտոնական համեղբայրության մեջ մտնելուն:

Գերմանական համայրում ունեցող զինվորական միաբանության հետ այս մերձեցումները, հավանաբար, իրականացվել են նաև գերմանական կայսրերին սիրաշահելու ծածուկ նպատակով, մի հանգամանք, որը բացատրում է նաև հայոց թագավորների՝ տնտոնականների, բայց ոչ թե հիվանդախնամների միաբանության ասպետների համեղբայրության մեջ ընդգրկվելուն առնչվող ընտրությունը, որն օգտվում էր շատ ավելի կարևոր նվիրատվություններից և որի հետ Կիլիկիայի տիրակալները գերազանց փոխհարաբերություններ ունեին և կարող էին ակնկալել վերջինիս անվերապահ աջակցությունը միաժամանակ և՛ մարտի դաշտում, և՛ դիվանագիտական ասպարեզում:

Գերմանացիների Սուրբ Մարիի միաբանությունը, որն, ի տարբերություն այլ միաբանությունների, ուներ ազգային համայրում, թույլատրել է, հետևաբար, մշտական կապ պահպանել գերմանական կայսրերի և հայոց թագավորների միջև: Թե՛ այդ, թե՛ հայ իշխողների հանդեպ ունեցած նրանց անսասան հավատարմության շնորհիվ, տնտոնականները կարողացել են օգտվել Կիլիկիայում ռազմավարական որոշակի կարևորություն ունեցող տիրույթների նվիրատվություններից, որոնք նրանց թույլատրում էին, այսպիսով, պաշտպանել այդ երկիրը ներխուժումներից:

Նրանք չեն բավարարվել այդ առաքելության իրականացմամբ և ստանձնել են նաև հայոց թագավորների պաշտպանությունը և՛ պապի մոտ՝ նրանց չարախոսողներից, և՛ ժառանգության շուրջ ծագած վեճերի ընթացքում Անտիոքի իշխաններից, անկախ այն բանից, թե խոսքն ինչին էր վերաբերում՝ Անտիոքի իշխանությանը, թե Կիլիկիայի հայոց թագավորությանը: Միաբանության հանդեպ հայոց թագավորների երախտագիտությունը դրսևորվել է այն բանում, որ նրանցից առաջին երկուսն ընդգրկվել են տնտոնական համեղբայրության մեջ, մի ընտրություն, որն, անկասկած, քաղաքական բնույթ ուներ, բայց վկայում էր նաև այն հարգալից վերաբերմունքի մասին, որն ի հայտ էր գալիս եղբայրների իրականացրած ռազմական և դիվանագիտական գործունեության հանդեպ:

*Ֆրանսերենից թարգմանեց*
*ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ*

[49] A. Demurger, Նշվ. աշխ., էջ 107:

*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ*
*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՄՇՏԱՊԵՍ ՈՒՍԱՆԵԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դր. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն արևելքում» (այսուհետ՝ ԳԱԱ) ընկերությունն[1] իր շուրջ կես հարյուրամյա հայանվեր գործունեության ողջ ժամանակամիջոցում, ի տարբերություն Հայաստանում բարեգործական աշխատանքներ իրականացնող այլ կազմակերպությունների, հայկական շրջաններում մշտապես մեծ սեր և համարում էր վայելում, չնայած այն բանին, որ որոշ կազմակերպություններ, ինչպես, օրինակ, Հայաստանի օգնության գերմանական միության Ֆրանկֆուրտի կոմիտեն, ամերիկյան «American Board» ընկերությունը և այլն, ոչ պակաս ներդրումներ և համապատասխանաբար նաև բարեգործական աշխատանքներ են իրականացրել:

Մյուս կազմակերպությունները որպես կանոն մարդասիրական աշխատանքներին զուգահեռ ձգտում էին հայ հոգևոր-մշակութային կյանքում ձեռք բերել որոշակի ազդեցության ոլորտներ, մասնավորապես թե՛ որբանոցներում և թե՛ բնակչության շրջանում վարում էին նաև ակտիվ քարոզչություն՝ ջանալով հայկական միջավայրում ձևավորել նոր՝ բողոքական կամ կաթոլիկ համայնքներ, ինչը Հայոց Եկեղեցու և ժողովրդի կողմից սուր դիմադրության ու հակամարտությունների պատճառ էր դառնում: Մինչդեռ Լեփսիուսն ու ԳԱԱ-ն, ինչպես դիպուկ կերպով նշում էր ընկերության երկարամյա աշխատակից Ռ. Շեֆերը, իրենց նպատակը համարում էին ոչ թե Ավետարանի քարոզությունը, այլ «Ավետարանի պահանջների իրագործումը»[2]:

Քանի որ ընկերությունն իր նյութական միջոցների զգալի մասը հայթայթում էր գերմանական բարեպաշտ շրջանների նվիրատվություններից, որոնք այդ խնդրի հանդեպ անտարբեր չէին կարող լինել, հակառակորդների կողմից Գ''.Ա-ի հանդեպ ոչ բարյացակամ հասարակական կարծիք ստեղծելու նպատակով նման «խայծի» օգտագործումը բացառելու և միաժամանակ քարոզիչների գործունեության վնասարար նշանակությունն ըստ

[1] «Գերմանական առաքելություն Արևելքում» (Deutsche Orient-Mission) ընկերությունը, դր. Յոհ. Լեփսիուսի կողմից հիմնվելով 1895 թ. սեպտեմբերի 29-ին, համապարփակ փրկարար աշխատանքներ ծավալեց թե՛ իր բնօրրանում գտնվող՝ ժողովրդի և թե՛ այլ երկրներում հանգրվանած բազմահազար գաղթականների շրջանում: Ընկերությունը շուրջ հինգ տասնամյակ անընդմեջ իր որբախնամ, բժշկական հաստատությունների և արտադրական ձեռնարկությունների միջոցով հսկայածավալ նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերեց հայ ժողովրդին՝ մեծ ներդրում ունենալով համիդյան կոտորածների վերքերի սպիացման, եղեռնից փրկված հայության բեկորների վերընձյուղման հարցում և միաժամանակ զորավիգ լինելով Հայկական հարցին ու դառնալով հայ ժողովրդի ձայնն ու դատի պաշտպանը ողջ Եվրոպայում: Ստորև մենք կանդրադառնանք միայն քարոզչության խնդրի հանդեպ Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության որդեգրած դիրքորոշման պարզաբանմանը:

[2] Schafer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 27:

հարկի պարզաբանելու նպատակով Լեփսիուսը հարկադրված էր պարբերաբար հետևողականորեն հիմնավորել քարոզչության հարցում իր որդեգրած սկզբունքները[3]:

Նախ քարոզիչների ձեռնարկումները ժամանակավրեպ էին և հակասում էին օրվա հրատապ պահանջներին. «Քաղցածներին,- ընդգծում էր Լեփսիուսը,- ցրտից սառած և թալանված մարդկանց, որբերին և այրիներին, որոնք անպաշտպան կերպով նման անմխիթար և անհույս թշվառության են մատնվել, պետք է նախ ոչ թե Ավետարանը տալ, այլ հաց, հագուստ և աշխատանք»[4]: Մյուս կողմից Արևելքում քարոզչության ավանդական և դոգմատիկ ըմբռնումները Լեփսիուսի համոզմամբ ինքնանպատակ էին և քննություն բռնել չէին կարող, քանի որ չէին նպաստում հավատի ամրապնդման կարևորագույն նպատակին: Նրանք անտեսում էին Արևելքի «ներքին զարգացման» և հոգևոր-եկեղեցական կյանքի աշխուժացման պահանջները, որոնք շատ ավելի համապարփակ էին, քան որևէ եկեղեցու տեսադրույթների մերկ քարոզչությունն էր:

Քարոզիչները պետք է մշտապես հիշեն, նշում էր Լեփսիուսը, որ Աստծո կողմից Արևելք են ուղարկվել ոչ թե որպես «որևէ դավանանքի կամ եկեղեցու սուրհանդակներ», այլ հանձնարարություն ունենալով քրիստոնյա եղբայրներին իրենց դժվարին ժամին մխիթարել և նեցուկ դառնալ խոսքով ու գործով: Այդ խոսքն ազդեցիկ դարձնելու, այն է՝ Ավետարանն Արևելքում վերակենդանացնելու և քրիստոնյա եղբայրներին հավատ ու կորով ներշնչելու համար Լեփսիուսի համոզմամբ նախ անհրաժեշտ էր համագործակցության, փոխադարձ սիրո և վստահության պայմաններում վերակենդանացնել և ամրապնդել հին քրիստոնյա եկեղեցիները[5]:

Մինչդեռ քարոզիչների գործելակերպն, ընդհակառակը, խզելով այդ եկեղեցիների հետ համագործակցության բոլոր եզրերը՝ պառակտում և ջլատում էր համայնքները: Հետևապես «Արևելքում կատարվելիք աշխատանքը,- ընդհանրացման կարգով նշում էր նա,- որին բոլոր մյուսներից առաջ կոչված է ավետարանական Գերմանիան, ո՛չ ավետարանականացման և ո՛չ էլ այդ իմաստով միսիոներական կարող է լինել: Այն պետք է լինի

---

[3] Լեփսիուսն այդ հարցի վերաբերյալ իր տեսակետները առաջին անգամ հետևողականորեն շարադրեց դեպի Պարսկաստան, Թուրքիա և Բուլղարիա կատարած իր հերթական՝ ութամսյա (1899 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին) ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, որ նա ձեռնարկել էր իր ընկերության մասնաճյուղերն այցելելու, ինչպես նաև այդ երկրներում գործող մյուս կազմակերպությունների աշխատանքներին հանգամանալից ծանոթանալու նպատակով: Մասնավորապես վերջինը նա խիստ անհրաժեշտ էր համարում, իր իսկ վկայությամբ, անհարկի մրցակցությունից խուսափելու և միաժամանակ ճշգրտելու համար այն ոլորտները, որտեղ իր ընկերության գործունեությունը կարող էր առավելագույնս նպատակային լինել: «Իմ պարտականությունն էր,- այդ առթիվ գրում էր նա,- նախ և առաջ ծանոթանալ այլ ընկերությունների աշխատանքին, որպեսզի մեր գործունեությունը չդառնա նետ մյուսների մարմնի վրա, այլ օրհնություն մյուսների աշխատանքի համար: Տե՛ս **Lepsius J.**, Reisebericht von Dr. Lepsius, „Aus der Arbeit des armenischen Hilfswerkes", 1899, էջ 156: Ճանապարհորդության ընթացքում հասու դառնալով հայկական շրջաններում այլ կազմակերպությունների կողմից իրականացվող քարոզչական գործունեությանն ու դրա արատավոր հետևանքներին՝ վերադարձից հետո նա հանդես եկավ այդ գործելակերպի հրապարակային քննադատմամբ և հարցի վերաբերյալ իր դիրքորոշման մանրամասն և համակողմանի պարզաբանմամբ: Տե՛ս **Lepsius J.**, Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient", 1900, էջ 6-8:

[4] **Lepsius J.**, Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient", 1900, էջ 4:

[5] Անդ, էջ 7:

Ճոգևոր աշխատանք, որը հին Եկեղեցիների կրթական և քրիստոնեական մակարդակը կբարձրացնի…: Միայն նա, ով պատմության մեջ Աստծո ճանապարհները չգիտի, կարող է հավատալ, թե անգլիական, ամերիկյան կամ գերմանական քրիստոնեության անգույն պատճենումը ինչ-որ ազդեցություն կարող է գործել Արևելքի ներքին զարգացման վրա»[6]:

Լեփսիուսի համոզմամբ, դա փաստարկում էր նաև ամերիկացի քարոզիչների օրինակը, որոնց ուժերով Ավետարանի քարոզչությունն արդեն հասել էր իր հնարավոր առավելագույն արդյունքին, և նոր քարոզչությունը կարող էր վերածվել միայն անօգուտ մրցակցության: Այն չափով, որչափ գերմանացի բողոքականներն առնչվում էին ամերիկյան քարոզիչների հետ, նրանց փոխհարաբերությունը պետք է կրեր համագործակցական բնույթ, առանձնապես այն բնագավառներում, որտեղ դրանք թույլ էին: Այդ բնագավառներից կարևորագույնը Լեփսիուսը համարում էր ամերիկյան կրթության համակարգը, որի մեթոդական դրվածքը նրա համոզմամբ խիստ թերի էր, քանի որ օտարացնում էր քրիստոնյաներին [illegible]ական ազգային արժեքներից[7]:

Փաստորեն նրբորեն բացառելով քարոզչության անհրաժեշտությունը, Լեփսիուսը միաժամանակ քննադատում էր այն բացասական հետևանքները, որ ուներ ամերիկյան քարոզիչների կրթահամակարգը՝ արևելյան քրիստոնյաներին օտարացնելով իրենց ազգային արժեքներից: Ուստի ԳԱՄ-ն և Արևելքում գործող ցանկացած այլ ընկերություն, ընդգծում էր նա, իր առաջին պարտականությունը համարելով նյութական օգնության կազմակերպումը, միաժամանակ պետք է ջանար համակողմանի «հոգևոր» աշխատանքի միջոցով Ավետարանը և հավատը Արևելքում կենդանի և ազդեցիկ դարձնել:

Այդ հոգևոր աշխատանքը, որի պահանջով նա հանդես էր գալիս, հետապնդելով բացառապես լուսավորական նպատակներ, այն է՝ «ամրապնդել հին Եկեղեցիները», «կրթել, ցուցումներ տալ, հետազոտել, գրել, հրատարակել, տարածել, դպրոցները բարեկարգել, ուսուցիչներ պատրաստել…, Արևելքին հաղորդակից դարձնել Արևմուտքի իմաստության գանձերին և փորձին»[8], ոչ մի կապ չուներ նոր համայնքների ձևավորման՝ քարոզիչների մարդորսական գործելակերպի հետ:

«Արևելքում,- ընդհանրացնելով նշում էր Լեփսիուսը,- մեր աշխատանքում բոլոր պարագաներում պետք է խուսափել քարոզչության որևէ փորձից կամ նույնիսկ միտումից և հրաժարվել քրիստոնյաների շրջանում համայնքների ձ՝ ավորման՝ ցանկացած գործունեությունից, եթե մենք չենք կամենում ավելի քանդել, քան կառուցել: Մեր աշխատանքը պետք է հին քրիստոնեական Եկեղեցիների հանդեպ, որտեղ նրանք դեռ գոյություն ունեն, լինի նույնքան անկեղծ և անկանխակալ, բարեկամական և օգնության պատրաստ, ինչպես բողոքական համայնքների հանդեպ: Քանի որ մենք բարոյական իրավունք չունենք լուսա-

---

[6] Նույն:

[7] Նույն:

[8] **Lepsius J.**, Deutsche Orient-Mission, „Der Christliche Orient", 1900, էջ 83: Այդ վերաբերում էր մասնավորապես այն շրջաններին, որտեղ դրա կարիքը առանձնապես մեծ էր, նշում էր Լեփսիուսը, իսկ այնտեղ, որտեղ Եկեղեցին, հավատն ու Ավետարանը կենդանի և ամուր էին, միսիաները այլ անելիք չունեին, քան «դրանով ուրախանալ և ձեռք մեկնել բոլորին, ովքեր մեզ հետ Աստծո և նրա որդի Հիսուսի ընդհանրությամբ կապված են, ինչ Եկեղեցու կամ դավանանքի էլ որ նրանք պատկանելիս լինեն»: Նույն, էջ 82:

վորչական ծնողների որբացած երեխաներին օտարացնել իրենց Եկեղեցուց. նրանց հանդեպ մեր առաջադրանքը սահմանափակվում է քրիստոնեական-բարոյական դաստիարակությամբ և ուսուցմամբ, որով մենք կարող ենք քրիստոնեության առաջադիմության համար ավելին անել, քան ուղղակի քարոզչությամբ»[9]:

Լեփսիուսի ընկերությունն իր երկարամյա գործունեության ընթացքում մշտապես հավատարիմ մնաց իր առաջնորդի գաղափարական սկզբունքներին: Այն հայության մեջ երբեք քարոզչական գործունեություն չծավալեց, այլ իր բոլոր հնարավորությունները ի սպաս դրեց հայ ժողովրդին և Եկեղեցուն զորավիգ լինելուն: Ընդ որում ուշագրավ է, որ ընկերության՝ դրսի աշխատակիցների ոչ քարոզչական գործունեությունը պայմանավորված էր ոչ միայն այդ հարցում ԳԱԱ-ի որդեգրած դիրքորոշմամբ, այլև սեփական փորձառությամբ:

Ուռհայի մասնաճյուղի աշխատակից Կարեն Յեպեն, օրինակ, միանշանակորեն անթույլատրելի էր համարում նաև կրոնական քարոզչությունը լուսավորչական ծնողների երեխաների և հայ բնակչության շրջանում: Բացի գիտակցելով հայ ժողովրդի համախմբման և ազգային ինքնության պահպանման հարցում Հայոց Եկեղեցու ունեցած պատմական և այժմեական նշանակությունը՝ նա տեղյակ էր նաև այն վնասակար հետևանքներին, որ ունեցավ քարոզիչների գործունեությունը: Յեպեի համոզմամբ այն առանձնապես կործանարար էր հայերի համար, որոնց՝ ազգության և կրոնի ըմբռնումներն այն աստիճան սերտ էին միահյուսված, որ մեկի կորուստը պատճառ էր դառնում նաև մյուսի կորստյանը:

Այդ վկայում էր նաև Ուռհայի հայ եկեղեցական և բողոքական համայնքների օրինակը. «Բողոքական հայերը պոկվել են անցյալից և պատմությունից,- նշում էր Յեպեն,- նրանք նման են բույսերի, որոնք դեռ խորը արմատներ չեն նետել: Յանկացած հողմ նրանց պոկում և տանում է իր հետ: Հոգեբանական անառողջ այլակերպումները, որոնք հաճախ շողոքորթության կերպարանք են ստանում, նրանց մեջ շատ ավելի մեծ ավերածություններ են գործում, քան լուսավորչականների...»[10]:

Մյուս կողմից, Յեպեի համոզմամբ, արևմտյան Եկեղեցիները նաև բարոյական իրավունք չունեին Հայ Առաքելական Եկեղեցուց հավատացյալներ կորզել, քանի որ վերջինս իրականում ոչ միայն «անշնչացած» չէր, ինչպես ընդունված էր կարծել Եվրոպայում, այլև նույնիսկ նորագույն շրջանում, անհավատալի ծանր պայմաններում կարողացել է դիմակայել և տոկալ, այլ կերպ ասած՝ ապացուցել իր կենսունակությունը և պատմության մեջ հաստատել իրեն: Թե՛ անցյալում և թե՛ նոր շրջանում այդ Եկեղեցու հավատացյալները նահատակության այնպիսի օրինակներ են ցույց տվել, որպիսին այլ ժողովուրդների մեջ դեռ տեսնված չէր: Մի քննություն, որն, ըստ Յեպեի, իրենք՝ եվրոպական Եկեղեցիները դեռևս չէին հանձնել:

«Մենք իրավունք չունենք մոռանալ,- նշում էր նա,- որ հայերը Քրիստոսի համար նահատակվում էին, երբ մենք դեռ մորթու մեջ փաթաթված՝ Օդինին կամ Թորին զոհեր էինք մատուցում: Եվ հավանաբար մենք պետք է մի փոքր ավելի զգույշ խոսենք «մեռած» լուսավորչական Եկեղեցու մասին: Քանի որ նահատակները քրիստոնեական Եկեղեցու ամե-

[9] Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient", 1900, էջ 6:

[10] Jeppe K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient", 1909, էջ 4:

նակենդանի զավակներն են: Ինչպե՞ս կարող էր մեռած մայրը այդպիսի[illegible] աշխարհ բերել»[11]:

Հետևությունը բնականաբար մեկն էր. հայության համախմբման հարցում Եկեղեցին ուներ խիստ կարևոր նշանակություն, որի պատճառով և ի շահ հայ ժողովրդի իրագործվող բարեգործական նախաձեռնությունների հիմքում պետք է լիներ նաև Եկեղեցու ամրապնդման ձգտումը. հանգամանք, որ անհամատեղելի էր միաժամանակ և՛ բարեգործությամբ, և՛ քարոզչությամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությանը:

Ուստի, ինքնին հասկանալի է, որ որբանոցում եկեղեցական տոները նշվում էին ըստ Հայ Առաքելական Եկեղեցու տոնացույցի: Երեխաները ստանում էին ընդհանուր քրիստոնեական դաստիարակություն: Նրանք ընթերցում և ունկնդրում էին Ավետարանի պատմությունները, հարցերի և պատասխանների միջոցով մեկնաբանում դրանք, ուսանում Հիսուսի կյանքը և գործերը՝ միաժամանակ սովորելով նաև շարականներ: Իսկ ինչ վերաբերում էր նրանց եկեղեցական պատկանելությանը, ապա եթե բողոքական ծնողների երեխան ցանկանար հաճախել առաքելական Եկեղեցի, նա այդ կարող էր անել: Նմանապես նաև լուսավորչական ծնողների երեխան կարող էր այցելել բողոքական Եկեղեցի, սակայն նրանցից ոչ ոք որբանոցում ապրելու ընթացքում իր Եկեղեցուց հրաժարվելու իրավունք չուներ[12]: Ոչ վերջին հաշվով դրանով էր պայմանավորված այն մեծ վստահությունը, որ որբանոցն ուներ թե՛ լուսավորչական և թե՛ բողոքական հայ համայնքներում:

Ինչպես Ուռհայում, Խոյի որբանոցում նույնպես երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում էր հայ ազգային և եկեղեցական ավանդույթների հիմքի վրա՝ զերծ քարոզչության կամ դավանափոխության որևէ միտումից: Ընդ որում Խոյի աշխատակիցները ևս հաճախակի հանդես էին գալիս ծավալուն հրապարակումներով՝ ըստ ամենայնի հիմնավորելով Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալների և որբանոցի երեխաների շրջանում քարոզչության իրականացման անթույլատրելիությունը: Այդ առումով առանձնապես բնութագրական է Դետվիգ ֆոն Օյրցենի 1903 թ. հրատարակված՝ «Մեր որբ երեխաների եկեղեցական պատկանելությունը» հոդվածը, որտեղ նա խնդիրը դիտարկում էր ամենատարբեր տեսանկյուններից[13]:

«Գերմանական պետական օրենքները Գերմանիայում արգելում են կաթոլիկ ծնողների որբացած երեխաներին Ավետարանական Եկեղեցում դաստիարակել,- նշում էր նա,- ուրեմն ինչո՞ւ պետք է այդ թույլատրելի լինի հայ քրիստոնյաների որբերի հանդեպ: Առավել ևս, երբ այդ դեպքում երեխաները պետք է պատկանեն մի Եկեղեցու, որի խնամքն ու հոգատարությունը հետագայում երբեք չեն վայելելու: Չէ՞ որ Պարսկաստանում, ինչպես Արևելքի մյուս երկրներում, գերմանական Ավետարանական Եկեղեցի չկա, և նրանք կորբանան նաև Եկեղեցու առումով»[14]:

Անշուշտ, այդ հարցի ամենապարզունակ պատասխանը կլիներ այն, որ հարկավոր էր հիմնել ավետարանական եկեղեցիներ՝ դրանց համար պատրաստելով ուսուցիչներ և քա-

---

[11] **Sick I. M.**, Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1930, էջ 89:

[12] Անդ, էջ 4-6:

[13] **Oerzen D. von**, Die kirchliche Stellung unserer Waisenkinder, „Der Christliche Orient", 1903, էջ 177-181:

[14] Անդ, էջ 177:

հանաներ: Օյրցենի համոզմամբ, սակայն, այդ նույնպես արդարացի չէր լինի: «Չնայած Հայ Առաքելական Եկեղեցին կարծրացած է,- նշում էր նա այդ առթիվ.- և պահպանել է սովորույթներ, ըմբռնումներ և այլն, որոնց հետ մենք որպես ավետարանական քրիստոնյաներ չենք կարող համաձայնել, սակայն մի՞թե իրավունք ունենք որպես մրցակիցներ հանդես գալ նրա դեմ, որը, չնայած իր բոլոր թուլություններին և հիվանդություններին, կոտորածների ժամանակ հազարավոր քրիստոնյա նահատակներ է տվել»[15]:

Այսպիսով, Օյրցենը, ինչպես Ռոհրբախը, ընդդիմանում էր Հայ Եկեղեցու «անկենդանության» վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետներին, քանի որ անկենդան Եկեղեցին նահատակներ չէր կարող տալ: Ավելին, Հայ Եկեղեցու բարենորոգության ձգտումները և այն հանգամանքը, որ հայ հոգևորականներից շատերն էին մեկնում Գերմանիա աստվածաբանություն ուսանելու համար[16], նրանց ենթադրել էին տալիս, որ Հայոց Եկեղեցին ուներ վերանորոգության նախադրյալներն ու անհրաժեշտ ներուժը և միջամտության կարիք չուներ[17]: Բացի այդ, նշում էր Օյրցենը, այն ոչ միայն չի բռնանում խղճի ազատության վրա, այլև «անհավատալի համբերատար է» և նույնիսկ իր հավատացյալներին չի արգելում մասնակցել այլ Եկեղեցիների ժամերգություններին, այնպես որ «սովորական անհատը, եթե նա մի քիչ քրիստոնեական համբերատարություն և սեր է սովորել, Հայ Առաքելական Եկեղեցում ոչ միայն կարող է պահպանել իր ավետարանական հավատը, այլև գործել նրա համար»[18]: Հետևապես, Օյրցենի համոզմամբ, սխալ էր որևէ Եկեղեցու վերաբերյալ կարծիքներ կազմել՝ հենվելով միայն նրա ծիսական տարբերությունների վրա: Նման ընկալումները կարող էին հանգեցնել թյուրիմացությունների, քանի որ «ձևերը և էությունը տարբեր իրողություններ են»[19]:

Ինչևէ, քանի որ գերմանական հասարակական շրջաններում շարունակում էին հաճախակի դժգոհություններ ի հայտ գալ այն առնչությամբ, որ Լեփսիուսի ընկերությունը կատարում էր բացառապես մարդասիրական գործունեություն և ամենևին չէր զբաղվում հայկական կամ նույնիսկ մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության իրականացմամբ[20], այդ և նման մտայնությունների դեմ պայքարը մշտապես մնում էր ընկերության հրապարակախոսության օրակարգում:

Հիշյալ տեսակետների քննարկման և հարցի առնչությամբ ընկերության դիրքորոշումը վերստին հիմնավորելու նպատակով ընկերությունը 1926 թ. սեպտեմբերի 27-ին կազմակերպեց մի համաժողով, որը, միանշանակորեն հերքելով Հայ Եկեղեցու «անկենդանության» վերաբերյալ դեռ գոյատևող ըմբռնումները, մեկ անգամ ևս փաստեց իր քննադատ-

[15] Անդ, էջ 178:

[16] Նկատի ունի Կարապետ Տեր-Մկրտչյանին, Գարեգին Հովսեփյանին, Երվանդ Տեր-Մինասյանին և մյուս հայ հոգևորականներին, որոնք «Das Notwendige Liebeswerk» կազմակերպության աջակցությամբ ուսանել էին Գերմանական համալսարաններում: Տե՛ս **Hacik Rafi Gazer**, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts« Götingen, 1996:

[17] **Oerzen D. von.** Die kirchliche Stellung unserer Waisenkinder, „Der Christliche Orient", 1903, էջ 178:

[18] Անդ, էջ 181:

[19] Անդ, էջ 180:

[20] Տե՛ս Korrespondenz, „Der Orient", 1926, էջ 31:

նրա՝ որպես կանոն, այդ ըմբռնումների վրա խարսխված տեսակետների սնանկությունը: «Հենց միայն Հայ Եկեղեցու կյանքն ու կենսունակությունը,- համաժողովի առթիվ նշում էր ընկերության պարբերականը,- ապացուցում են հարյուրամյակներով հաստատված այն փաստը, որ քրիստոնեության մեջ համախմբվածությունը, հակառակ բոլոր հալածանքնե-րին, կյանքի գործոնն է, որն ապացուցվել է մարտիրոսությամբ: Մի Եկեղեցի, մի ժողո-վուրդ, որը մեռնում է իր հավատի համար, մեռած չէ»[21]:

Քանի որ, սակայն, հիշյալ մեղադրանքները չէին շտապում տեղի տալ, ընկերությունն իր համակողմանի պարզաբանումները շարունակեց նաև հետագայում: Հակադրվելով մի-սիայի հասկացողության՝ հիշյալ կարծրացած ըմբռնումներին և հանգամանալից հերքելով դրանք՝ Թ. Շնայդերն իր «Կարին Յեպեն որպես միսիոներուհի» հոդվածում Կ. Յեպեի հա-յափրկիչ գործունեությունը բնութագրում էր որպես այն ճշմարիտ և աստվածահաճո «մի-սիան», որին պետք է նվիրվեր իսկական միսիոները: «Որոշ շրջաններ, որոնք միսիան ա-ռանց մկրտության և հեթանոսների դարձերի չեն կարող պատկերացնել,- նշում էր նա,- արդեն այն տեսակետն են արտահայտել, որ Լեփսիուսի Առաքելության աշխատանքը մի-սիոներական ընկերության անվանումը չի վաստակում, այլ միայն մարդասիրական բնույթ ունի: ...Այսօր յուրաքանչյուր խելացի միսիայի կարգախոսը պետք է լինի ոչ թե նոր դավա-նափոխությունների կատարումը, այլ նրանց վերածնունդը, որոնք մեր միջոցով կորել են, նրանց պահպանումը, որոնց սպառնում է կործանումը»[22]:

Ավելին, «միսիայի» ավանդական ըմբռնումը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի համոզմամբ, այլ-ևս չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, և նույնիսկ մահմեդական շըր-ջանների ավետարանականացման պահանջները, ընկերության համոզմամբ, ինքնանպա-տակ ու ժամանակավրեպ էին ու կշարունակեին լինել այնքան ժամանակ, քանի դեռ առ-կա էր հալածված և առևանգված քրիստոնյաներին մահմեդականացումից փրկելու գեր-խնդիրը: «Հավանաբար առաջին հայացքից օտարոտի է թվում, որ մենք որպես ավետա-րանական միսիա մեր առաջադրանքը չենք համարում հայ ժողովրդի ներսում կամ հայ ժո-ղովրդի՝ մեզ վստահված երեխաների մեջ ավետարանական-եկեղեցական ուսմունքը ներ-մուծելը: Սակայն ավելի խորազնին կշռադատման դեպքում պարզ կդառնա, որ միսիայի գաղափարը չի նշանակում քրիստոնյա հավատակիցներին մեկ այլ Եկեղեցուց բերել սե-փական Եկեղեցին:

Հայ լուսավորչական շրջաններում քարոզչության և դավանափոխման խնդրի հանդեպ ընկերության դիրքորոշումն այն աստիճան միանշանակ էր, որ ընկերության տնօրեն դր. Պաուլ Շյութցն, օրինակ, 1928 թ. Ղազիր[23] կատարած իր այցելության ընթացքում հրա-ժարվեց մկրտել լուսավորչական ընտանիքների երեխաներին՝ բողոքական Եկեղեցու կա-նոններով մկրտությունը թույլատրելի համարելով միայն բողոքական ընտանիքների երե-խաների համար: «Մենք ուշադրություն դարձրեցինք, որ միայն բողոքական հայերն իրենց երեխաներին բերեն մեզ մոտ մկրտելու,- նշում էր այդ առթիվ նա,- քանի որ մենք սկըզ-բունքորեն մեզ իրավունք չենք վերապահում հայ լուսավորչական ծնողների երեխաներին

[21] Տե՛ս Die Mitarbeiter-Konferenz, „Der Orient", 1926, էջ 147:

[22] Schneider Th., Karen Jeppe als Missionarin, „Orient im Bild", 1929, էջ 4:

[23] Լիբանանյան բնակավայր, որտեղ այդ շրջանում գործում էր ընկերության մասնաճյուղերից մեկը:

մկրտել: Մենք Հայ Եկեղեցին համարում ենք ծագումով հավասարարժեք եղբայրական Եկեղեցի և խնամքով խուսափում տպավորություն ստեղծելուց, թե մենք՝ քրիստոնյաներս, քրիստոնյաների մեջ ուզում ենք միսիոներությամբ զբաղվել»[24]:

Դր. Լեփսիուսի ԳԱՄ-ն հակառակորդ մտայնությունների դեմ պայքարը և իր որդեգրած դիրքորոշման հրապարակային պաշտպանությունը անզիջում կերպով և հետևողականորեն շարունակեց նաև 1930-ական թվականներին, երբ Գերմանիայում իշխանության գլուխ էին անցել նացիոնալ-սոցիալիստները, և բարեգործական կազմակերպությունների գործունեության համար ստեղծվել էր աննախադեպ ծանր իրավիճակ: Այդ շրջանում պետական քարոզչությանն ու քաղաքականությանը տուրք տվող զանազան եկեղեցական շրջանների կողմից Դր. Լեփսիուսի ԳԱՄ-ի գործունեության՝ «ոչ միսիոներական» նկարագիրը նույնիսկ պատրվակ էր ծառայում ընկերության գոյության անհրաժեշտությունը վիճարկելու համար, ուստի հասկանալի է, որ հակառակորդների գաղափարական սնանկության մերկացումը շարունակում էր մնալ ընկերության մարտնչող հրապարակախոսության ամենաարդիական թեմաներից մեկը: Հենց միայն այն փաստը, նշում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանն իր «40 տարվա միսիոներական աշխատանք Արևելքում» հոդվածում, որ առանց ընկերության աջակցության «հարյուրավոր հայ երեխաներ կկործանվեին», բավական էր, որպեսզի նրա գոյությունը արդարացվեր[25]:

Նախագահի համոզմամբ այդ շատ ավելի մեծանշանակ և աստվածահաճո առաքելություն էր, քան այն ավանդական «միսիոներությունը», որի դիրքերից փորձում էին հանդես գալ իր քննադատները: Դրա լավագույն հիմնավորումը տալիս էր նաև Աստվածաշունչը. «Գթասիրտ սամարացին մարդասպանների մեջ ընկածին չքարոզեց, այլ կապեց նրա վերքերը և տարավ ծածկի տակ,- գրում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանը:- Մեր միսիայի պատմությունը հենց այդ տեսանկյունից է շատ ուսանելի: Այն հիմնադրվեց որպես մահմեդականության համար նախատեսված միսիա և դարձավ բարեսիրական գործունեություն դժբախտ հայ ժողովրդի համար... Այդ մեր Լեփսիուսի միսիայի փառքն է, որ մենք տասնամյակներ շարունակ հայերի մեջ աշխատելով՝ երբեք չենք փորձել նրանցից որևէ մեկին օտարացնել իր ազգային Եկեղեցուց...»[26]:

Ուժգնացող հրապարակային հարձակումների դեմ Դր. Լեփսիուսի ԳԱՄ-ի ինքնապաշտպանական ելույթները հատկանշվում էին այդ ժամանակ նույնիսկ անթույլատրելի թվացող՝ հավատի, սիրո և փորձությունների լեփսիուսյան դպրոցն անցած համարձակությամբ: «Հարց է առաջադրվել, թե արդյոք մեր և մեզ նման կազմակերպությունները գոյու-

---

[24] Schütz P., Dr. Schütz in Ghasir, „Orient im Bild", 1928, էջ 50:

[25] Fleischmann P., 40 Jahre Missionsarbeit im Orient, „Orient im Bild", 1935, էջ 33:

[26] Fleischmann P., Gehet hin und lehret alle Völker!, „Orient im Bild", 1936, էջ 25: Հատկանշական է, որ ի պատասխան քարոզչության խնդրի նորօրյա շահարկումներին, Դր. Լեփսիուսի ԳԱՄ-ն դեռ 1933 թ. ընդգծված տառատեսակով և առանց մեկնաբանությունների վերստին իր պարբերականում զետեղեց այդ հարցի առնչությամբ շուրջ երեք տասնամյակ առաջ Լեփսիուսի կողմից կատարված սպառիչ պարզաբանումներից մեկը, որը մշտապես բնութագրական էր եղել ընկերության գործունեության համար. «Արևելքում կատարվելիք աշխատանքը, որին բոլոր մյուսներից առաջ կոչված է ավետարանական Գերմանիան, ո՛չ ավետարանականացման և ո՛չ էլ այդ իմաստով միսիոներական կարող է լինել: Այն պետք է լինի հոգևոր աշխատանք, որը հին Եկեղեցիների կրթական և քրիստոնեական մակարդակը կբարձրացնի. .: Տե՛ս „Orient im Bild", 1933, էջ 13:

թյան իրավունք ունեն. թե ոչ...,- գրում էր Պ. Ֆլայշմանը 1935 թ.:- Մենք այդ հանգիստ լսում ենք և զվարթ» շարունակում մեր ճանապարհը: Մեր Յոհաննես Լեփսիուսն այն ժամանակ, 1895 թ., նմանապես քիչ է եկեղեցական իշխանություններից թույլտվություն խնդրել, երբ վտանգված հայ քրիստոնյաների ճիչը Արևելքից հասավ այստեղ, և հարցը վերաբերում էր նրանց օգնելուն և փրկելուն: Նաև 20 տարի անց նա չսպասեց պետական և եկեղեցական իշխանություններին, այլ պարզապես արեց այն, ինչին իրեն համարում էր կոչված: Այդպես և մենք կշարունակենք անել այն, ինչին մեզ համարում ենք կոչված: Աստծո գործերում կա մի ատյան, որի առաջ կշռադատող, խորհրդածող բանականության բոլոր առարկությունները պետք է համրանան...»[27]:

Այդ գաղափարապայքարին զուգահեռ, ավելին, ի լրումն դրա, պարբերականներում լույս էին ընծայվում նաև ընկերության աշխատակիցների և բարեկամների կողմից հեղինակված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը նոր և ուրույն կողմերով էր լուսաբանում հայոց պատմական անցյալը, հոգևոր-մշակութային կյանքի նվաճումները ու առանձնահատկությունները: Գերտրուդ Հեթցելն, օրինակ, իր «Հայերը և Աստվածաշունչը» հոդվածում պարզաբանում էր Հայաստանում քրիստոնեության ընդունման և Աստվածաշնչի հայերեն թարգմանման պատմությունը՝ զուգահեռաբար ներկայացնելով «Հնագույն» քրիստոնյա ժողովրդի մանրանկարչության ընտիր նմուշներ[28]: Իսկ նույն տարում հրապարակված իր մեկ այլ՝ «Անին՝ 1001 եկեղեցիների քաղաքը» ծավալուն հոդվածում նա ներկայացնում էր Հայաստանի 10-14-րդ դարերի հերոսական պատմությունը և կատարում ուշագրավ պարզաբանումներ այդ շրջանի հայ ճարտարապետության նվաճումների մասին[29]:

Հրապարակվում էին ուշագրավ հետազոտություններ նաև Հայ Եկեղեցու անցած պատմական ուղու, նրա առանձնահատկությունների և հայ ու եվրոպական եկեղեցիների փոխառնչությունների պատմության վերաբերյալ[30]: «Մենք այստեղ հաճախ ենք հանդիպում հայ քրիստոնյաների, բայց հազվադեպ ենք հաղորդակից դառնում հայկական քրիստոնեությանը,- նշում էր Պ. Ֆլայշմանն իր հոդվածներից մեկում:- Եվ հենց այդ է, որին արժե մեծ ուշադրություն նվիրել: Քանի որ դա նախ և առաջ մի ժողովրդի քրիստոնեությունն է, որն իրավամբ համարվում է հնագույն քրիստոնյա ժողովուրդը: Եվ բացի այդ դա մի քրիստոնեություն է, որ ամենասերտ կերպով միահյուսված է ազգայնության հետ, այնպես որ ցոնե մինչև այժմ մեկն առանց մյուսի հնարավոր չի եղել պատկերացնել: Վերջապես, ինչպես Արևելքի մյուս Եկեղեցիները, և հավանաբար շատ ավելի մեծ չափով, քան նրանք, նա իր ժամերգությունում և կառավարման ոլորտում կրում է հնագույն, մասամբ

---

[27] **Fleischmann P.**, 40 Jahre Missionsarbeit im Orient, „Orient im Bild", 1935, էջ 33-34:

[28] **Hetzel G.**, Die Armenier und die Bibel, „Orient im Bild", 1935, էջ 27:

[29] **Hetzel G.**, Ani, die Stadt der 1001 Kirchen „bin bir kilisse", „Der Orient", 1935, էջ 33-37:

[30] **Klinge G.**, Die armenische Kirche in ihrem Verhältnis zu den europäischen Kirchen, անդ, էջ 6-12; „Zum armenischen Bibeljubiläum", անդ, էջ 86-89; **Fleischmann P.**, Armenisches Kirchentum, „Der Orient", 1937, էջ 57-60; **Witzemann H.**, Das heilige Öl der gregorianischen Kirche, անդ, էջ 38-40; **Fleischmann P.**, Vom armenischen Christentum, „Orient im Bild", 1937, էջ 17-18; **Loeßner A.**, Die armenische Kirche in Ostgalizien, „Der Orient", 1938, 45-51 և այլն:

չափազանց արժեքավոր գանձեր, որոնք անհրաժեշտ են առաջին հարյուրամյակների քրիստոնեությունն ընկալելու համար»[31]։

Կազմակերպությունն իր ընդդիմախոսների մեղադրանքների սնանկությունը մշտապես փաստարկում էր Հայ Առաքելական Եկեղեցու վերաբերյալ գոյություն ունեցող թյուր տեսակետների հերքման միջոցով՝ ի ցույց հանելով դրանց անհեթեթությունն ու կանխակալությունը։ «Մենք միշտ հրաժարվել ենք Հայոց հին Եկեղեցին բողոքականացնել,- տեղեկացնում էր ընկերությունը 1929 թ.,- որովհետև իրավունք չունենք պառակտել մի քրիստոնյա Եկեղեցու, որը պատմության մեջ հնագույնն է, այլ պետք է ծառայենք նրան։ Հին Եկեղեցիների թուլությունները մեզ, իհարկե, հայտնի են, ինչպես հայտնի է նաև այն, որ այդ թույլ Եկեղեցիները մեկ և կես հազարամյակ է, ինչ իսլամի կենտրոնում դիմակայման և կենսունակության այնպիսի ուժ են ի հայտ բերել, որպիսին արևմտյան Եկեղեցիները դեռ պետք է ապացուցեն։ Հանուն քրիստոնյա հավատի մեռնելը հին Եկեղեցիների համար դարձել է ոչ դոգմատիկ սեփականություն։ Մենք պարտավոր ենք ակնածանք տածել այդ փաստի հանդեպ»[32]։

Դր. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերությունն, այսպիսով, ի տարբերություն Հայաստանի օգնության գերմանական միության Ֆրանկֆուրտի կոմիտեի և Հայաստանում գործող բոլոր մյուս եվրոպական ու ամերիկյան առաքելական կազմակերպությունների, հայության մեջ երբեք քարոզչական գործունեություն չվարեց, այլ ընդհակառակը, իր բոլոր ուժերն ի սպաս դրեց Հայ Առաքելական Եկեղեցու ամրապնդմանն ու զորացմանը[33]։ Իր առաջադրանքը համարելով ոչ թե Ավետարանի քարոզումն, այլ «Ավետարանի պահանջների իրագործումը»՝ այն մինչև իսկ պարբերաբար սուր գաղափարապայքար էր ծավալում դա վիճարկող կամ քննադատող՝ հասարակական և եկեղեցական մտայնությունների դեմ։ Ընկերության շուրջ կեսդարյա գործունեության պատմությունն, ինքնին հասկանալի է, որ այդ առումով խիստ արդիական է ժամանակակիցներիս համար և կշարունակի լինել այնքան ժամանակ, քանի դեռ մեկընդմիշտ տեղի չեն տվել Հայոց Եկեղեցու դեմ ուղղված մարդորսական խոտելի փորձերն ու ներդումները։

---

[31] Fleischmann P., Armenisches Kirchentum, „Der Orient", 1937, էջ 57։

[32] Schafer R., Werden die armenischen Kinder konfirmiert?, „Orient im Bild", 1929, էջ 71։

[33] ԳԱՄ-ն Հայ Առաքելական Եկեղեցու հետ բնականաբար մշտապես գտնվում էր սերտ համագործակցական փոխհարաբերության մեջ, և դա այն աստիճան միանշանակ էր, որ Մայր Աթոռի կողմից ընկերությանը հատկացվեց մինչև իսկ Պարսկաստանում գտնվող հնագույն հայկական վանքերից մեկը՝ Ս. Թադեի վանքը։ Տե՛ս „Der Christliche Orient", 1897, էջ 331։

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԽՍԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՂՃԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՆԳՈՒՑԱԿԵՏՈՒՄ

Որպես փիլիսոփայական խառնվածքի տեր գրողի, Դերենիկ Դեմիրճյանին մշտապես հուզել են «ներքին մարդու» գաղտնարանները թափանցելու, նրա գործողություններ դրդապատճառները, մարդկային բարոյական արժեքները, կեցության իմաստը բացահայտելու հիմնախնդիրները:

Հասարակական կյանքի առանձին ժամանակահատվածներում, երբ մարդ օտարվում է ինքն իրենից, երբ մարդասիրությունը առաջընթացի փոխարեն նահանջ է ապրում, գեղարվեստական գրականությունը դիմում է սոցիալ-հոգեբանական վերլուծությունների՝ քննելու կյանքի հակասությունների էությունը, հայտնաբերելու բնական վիճակից մարդու հեռանալու պատճառները, օգնելու համար կանխել օտարման այս գործընթացը:

Ժամանակին իրենց ստեղծագործություններով այդ նպատակն էին հետապնդում համաշխարհային գրականության նշանավոր դեմքեր Ալբեր Քամյուն, Մարսել Պրուստը, Ֆրանց Կաֆկան, Վիլյամ Սարոյանը և շատ ուրիշներ, իսկ Հ. Թումանյանի ստեղծագործության գլխավոր երակը երազանքն էր կատարյալ մարդու («Ա՜խ, երանի՛ ով մարդ կըզա ու մարդ կերթա անարատ»):

Հատկապես առաջին աշխարհամարտի տարիներին Դեմիրճյանը գեղարվեստական քննության նյութ դարձրեց մարդկային խիղճը՝ ցանկանալով այն դիտարկել տարբեր կողմերից, գտնել խղճի էությունը, նրա սոցիալ-հոգեբանական արմատները: Պատերազմի տարիներին Դեմիրճյանն այդ թեմային անդրադարձավ «Դատաստան», «Ավելորդը», «Հովնան Մեծատուն» և այլ ստեղծագործություններով, ուր ձգտեց գեղարվեստորեն պատճառաբանել ու հաստատել, որ խիղճը մարդու հոգեկան ու բարոյական ներքնաշխարհը մաքրագործողն է, այն անցին զանձը, որ վեր է ամեն ինչից:

Ինչպես աշխարհի մեծագույն արվեստագետների, այնպես էլ Դեմիրճյանի ստեղծագործության գլխավոր առանցքը եղել են կյանքն ու մարդը, մարդկային հոգու տարաբնույթ դրսևորումները, անհատի ներքնաշխարհում տեղի ունեցող հոգեբանական տեղաշարժերի բացահայտումը:

Մեծանուն գրողն իր արձակ ու դրամատիկական գործերով պայքարում էր հանուն մարդու, հանուն նրա բարոյական անաղարտության, իսկ քանի որ բարդ ու դժվարին է մարդու ներքնաշխարհը, ուստի այդ նպատակը տանում էր դեպի հոգեբանական բարդ իրավիճակների պատկերման:

Դեմիրճյանը մշտապես փնտրում էր այն հարցերի պատասխանը, թե ի՛նչ է մարդկային էակը, ի՛նչն է նրան խանգարում մարդ լինել կամ մարդ մնալ, և ի՛նչն է այլանդակում, աղավաղում նրա բուն էությունը:

- Մարդը նա է,- ասում էր Դեմիրճյանը,- ում կրծքի տակ ջերմ ու մարդասեր սիրտ է բաբախում, ում հոգին շռայլ է պարարտ սևահողի նման և ով գեղեցկանում ու պայծառանում է՝ գեղեցիկն ու պայծառը տեսնելիս:

Այս դավանանքն է մշտապես ուղեկից եղել գրողին, և նա իր ստեղծագործությամբ խարազանել է մարդկային կեցության նշված սկզբունքները ոտնահարող արարքները, բարոյական արժեքների անտեսումը, որոնց պատճառով դառնանում է կյանքը, սպանվում է խիղճը, մարդն ընկնում է իր բարձունքից:

Դեմիրճյանն իր լավագույն գործերում դատապարտում է ընդհանուրի շահագրգռություններից կտրված անհատի մասնավոր հոգեբանությունը, զննում է մարդու բարոյական կերպարը բնորոշող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են խիղճը, գթասրտությունը, սերը, ցույց է տալիս սեփականության և նյութապաշտության ավերիչ դերը անհատի հոգևոր աշխարհում:

Սունդուկյանի, Րաֆֆու, Պռոշյանի, Շիրվանզադեի և նշանավոր այլ գրողների նման Դեմիրճյանը խորապես անդրադարձավ շահի ու խղճի, սեփականատիրության ու մարդկայինի միջև մշտապես առկա ներքին հակասության խնդրին: Չէ՞ որ խղճի առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված են սոցիալական գործոններով, մարդկանց հասարակական կյանքի պայմաններով, և քանի որ խիղճը կոնկրետ պատմական երևույթ է և մարդու մեջ ձևավորվում է նրա ողջ կյանքի ընթացքում, ուստի այն հասարակական հարաբերությունների, կենսապայմանների և սոցիալական վիճակի արտացոլումն է մարդկանց գիտակցության մեջ:

Եթե «Վասակ» դրամայում գլխավոր հերոսի միջոցով գրողը ներկայացնում է ձեռք բերվածով չբավարարվելու և փառամոլությամբ տարված մարդու ներքնաշխարհի դեգերումները, որոնք իր հերոսներին աստիճանաբար մղում են դեպի ծանր ոճիրների ուղի, ապա Հաճի աղան («Ավելորդը») և Հովնանը («Հովնան Մեծատուն») պատկերված են իրենց անձնական նեղ շահերի տեսանկյունից, թեև երեք կերպարներին էլ բնորոշ են եսասիրությունը, իրենց անձի գերագնահատման և ուրիշներից բարձր դասելու հատկությունը: Ի տարբերություն վերջին երկուսի, մարզպան Վասակ Սյունեցու գործողությունների շրջանակն ավելի լայն է և համահայկական ընդգրկում ունի: Նրա ինքնախոստովանությունից և մյուս գործող անձանց բնութագրումներից իմանում ենք Վասակի՝ հեռուն գնացող նպատակները, որոնք հակընդդեմ են ժողովրդի ձգտումներին ու շահերին, ուստի նա, չկշռադատելով իր արարքների հետևանքները, գնում է դեպի դավաճանություն: Դեմիրճյանը ցույց է տալիս, որ երբ մարդը հակադրվում է ժողովրդի ընդհանուր շահերին ու նրա կամքին, երբ գերիշխող է դառնում եսամոլությունը, դրանցից ծնվում է դավաճանությունը:

Գրողը թեև Վասակի և Հովնանի կերպարներին մոտենում է տարբեր դիրքերից, բայց հանգում է նույն եզրակացության. եթե մարդը չի կարողանում սանձել իր եսասիրական նպատակները և դեմ է դուրս գալիս ընդհանուրին, արժանանում է արհամարհանքի ու դատաստանի և, ի վերջո, պատժի: Երկու հերոսներն էլ խոսում են ժողովրդի շահերից ու «բարձր նպատակներից», սակայն այդ նպատակների իրականացման համար կանգ չեն առնում ոչնչի առջև՝ զոհասեղանին դնելով ընտանիք, հարազատներ, նույնիսկ հարազատ ժողովրդին: Տեղի է ունենում էգոիզմի բախումը խղճի ու գթասրտության հետ, և այդ բախման հանգուցակետում են միայն հասկանում, որ իրենց ջանքերը իզուր են անցել, որ բոլոր

զոհերն ու զոհողությունները անՆպատակ են եղել. մնացել է միայն ուշացած զղջում ու տառապանք:

Եթե ընդունում ենք, որ պարտականությունը անխզելիորեն կապված է խղճի հետ, և վերջինիս մեջ է արտահայտվում մարդու ներքին վերահսկողությունն իր արարքների նկատմամբ, ապա լիարժեք մարդը բարդ ու դժվարին իրավիճակում անգամ հնարավորություն է ունենում որոշելու իր արարքների բնույթը, ճիշտը զատելու սխալից:

Վերոհիշյալ գործերում Դեմիրճյանն ընդգծել է հենց այդ հանգամանքը, այսինքն՝ ցույց է տալիս պարտականության և խղճի միջև առաջացած այն մեծ անջրպետը, որն արգելում է մարդկայնորեն վերաբերվելու հարազատներին կամ շրջապատին: Եվ քանի որ խիղճը «սեփական գործողությունների նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունք է», ուստի գրողը ցույց է տալիս դրա իսպառ բացակայությունը իր հերոսների հոգևոր աշխարհում:

Թեմայի արծարծման և կերպարների «ներքին հոգեհարազատության» տեսանկյունից ավելի շատ նմանություններ ունեն Հաճի աղան և Հովնան Մեծատունը:

Տարիներ շարունակ իր արարքների նկատմամբ բարձր ինքնավերահսկողությամբ աչքի ընկած, միշտ զգաստ ու սթափ Հաճի աղան այժմ առաջին անգամ շփոթվում է, սխալվում՝ ժամանակին տեղյակ չլինելով մոտեցող վտանգի մասին: Որքան աղետը մոտենում էր, այնքան ավելի էր մեծանում տագնապը Հաճի աղայի ներսում, և նա սարսափած մտածում էր իր աղայությունը, հարստությունն ու հասարակության մեջ հաստատուն դիրքը կորցնելու մասին:

Դեմիրճյանը համոզիչ պատկերներով ներկայացնում է աղայի մեջ կատարվող փոփոխությունները՝ կապված մոտեցող աղետի հետ: Սկզբում նա մտածում էր փրկել կարևորը, պետքականը, իսկ եթե հնարավոր չլինի, ապա փրկել ամենակարևորը: Հաճին վճռեց ու «դաժանացավ... ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, անգթանալ, թեկուզ և ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը, իր տունը...»:

Գրողը, սակայն, կանգ չի առնում իր «հերոսի» որոշման այդ կետում: Դեպքերի հետագա զարգացումը աղայի ուղեղին տալիս է այլ «հրահանգներ». նրա միտքը լարված աշխատում է: Թշնամու ձայներից Հաճին սկսեց ավելի պարզորոշ զգալ ու շոշափել մահվան վտանգը: Մոտեցող աղետը խուճապի է մատնում նրան, և նա զգում է, որ «տարերային մի ուժ նրան միայն մի բան է թելադրում, փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից», իսկ «մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ՝ նսեմացավ նրա աչքում»: Հաճի աղայի մեջ գլուխ է բարձրացնում հարուստ սեփականատիրոջ, գծուծ շահամոլի և դրանց ծնունդ՝ եսասիրության ոգին:

Երկար տարիներ ապրելով և գործելով առևտրականների միջավայրում և անվերջ զբաղված լինելով գործարքներով, Հաճի աղայի հոգեկան աշխարհում ձևավորվել էր պետքականի, կարևորի առարկայական գոյությունը, ուստի տագնապի պահին նրան հետաքրքրում էր ոչ թե մարդը, այլ իրերը, ամենապետքական առարկաները: Այդ է պատճառը, որ նման պարագայում Հաճի աղային ղեկավարում էր եսասիրության «ամենահաղթ ուժը», և նա մտածում էր, որ եթե հնարավոր չլինի փրկել ամենակարևորը, ապա ինչ գնով էլ լինի, պետք է ազատել սեփական անձը՝ թեկուզ մնացած հարազատների կորստյան գնով: Նրա աչքերում այդ պահին միայն իր «ես»-ն էր, իր անձի փրկությունը, որովհետև ինքն էր տանտերը, հարուստը, փրկվելու ամենաարժանին:

Որպես էգոիստ, Հաճին ունակ էր ամեն ինչի, քանի որ հաշվի չէր նստում իր խղճի հետ (եթե կար այդ խիղճ կոչվածը), գուցեն մտածելով, որ խիղճը ստեղծել են վախկոտները, իսկ ինքն առայժմ դեռ կանգուն է, հաստատուն ու վճռական:

Այստեղ կարելի է վկայակոչել Ի. Կանտին. «Բարոյական եսասերը նա է, ով ամբողջովին բոլոր նպատակները սահմանափակում է ինքն իրենով, ով օգուտ է տեսնում միայն այն բանում, ինչը ձեռնտու է իրեն և իր կամքի բարձրագույն որոշակիությունը տեսնում է միայն իր սեփական երջանկության շահավետության մեջ և ոչ թե պարտքի գիտակցման մեջ»[1]:

Խուճապի ու իրարանցման խառնաշփոթում կարգադրություններ անելիս Հաճի աղան մի քանի անգամ նայում է անդամալույծ քրոջը, բայց քանի որ տարված էր միայն ամենապետքական, ամենակարևոր իրերը տեղափոխելու խնդրով, «չի նկատում» նրան, իսկ հիմա մտածելով՝ «անախորժություն զգաց»: Դրան հակառակ՝ Սրբունին կարծես չէր հետաքրքրում այն աղմուկն ու շփոթը, որ պատել էր իրենց ընտանիքին ու ողջ քաղաքին: Դա առերևույթ հանգստություն էր, որովհետև անդամալույծը կարծես համակերպվել էր իր վիճակին, ապա թե՝ մանկությունից ծանոթ էր եղբոր բնավորությանը և հասկանում էր, որ ինքը դժվար թե տեղ ունենա գնացողների մեջ: Հենց այս հանգուցակետում է հոգեբան գրողը ստեղծում քրոջ և եղբոր կերպարների հակադրության համոզիչ պահը և ընթեցողի ներսում լսելի դարձնում խղճմտանքի, ցավի ու ափսոսանքի ձայնը. «Ձեռքերդ անցու՝ ճամփան չմնիս»:

Հաճի աղան չունի ուրիշի ցավով մտահոգվելու, տառապելու զգացմունքը: Նա տարիներ շարունակ ապրել է գիշատչին հատուկ զգուշավորության և թույլերին անակնկալի բերելու գազանային սկզբունքով՝ հոգին դաժանացրած ու խղճմտանքը գրպանը դրած: Բնական է, որ նման մարդը անհաղորդ պիտի մնար քրոջ վիճակին՝ դառնալով նրա կործանման պատճառը: «Ուրիշ որտե՞ղ կարող է ճանաչվել մարդու իսկական մեծությունը,- գրում էր Վ. Գ. Բելինսկին,- եթե ոչ այն դեպքում, երբ մարդ գերադասում է տառապել, քան խղճին հակառակ բան կատարել»[2]:

Իմանալով քրոջ ողբերգական մահվան մասին, Հաճին կարծես ապրում է տառապանքի պահեր, նրա քայլվածքն այլևս չուներ առաջվա հանդիսավորությունը, փոխվել էր տիրական կեցվածքը, դարձել խղճահարության արժանի: Նա իր մտապատկերում վերականգնում էր քրոջ կերպարանքը, պատկերացնում նրա դիակը, և որքան երկար էր մնում այդ մտապատրանքը, այնքան շատ էր տառապում, միաժամանակ հոգին խաղաղվում էր, հանգստանում:

Սրբունը նրա համար կարծես մի սուրբ էր, որի հիշատակի առջև պիտի ծնկաչոք խնկարկեր:

Դեմիրճյանը Հաճի աղային ներկայացնում է երկու հակադիր իրավիճակներում՝ տագնապի պահին և վտանգն անցնելուց հետո՝ ցույց տալով տարբեր հանգամանքներում դրսևորվող մարդու էությունը, նրա բարոյական կերպարը: Գրողը ցանկանում է պարզել, թե նրա նման մարդը կարո՞ղ էր դիմանալ կյանքի փորձությանը, ունա՞կ էր վերանալ եսասիրական ճղճիմ զգացումից և պահպանել մարդու կոչումը: Իհարկե, սեփականատի-

---

[1] **И. Кант,** Сочин., т. 4(1). М., 1965 г., стр. 413.

[2] Տե՛ս **В. Г. Белинский.** Соч., т. 1, М. 1948, стр. **293.**

րսւկան անհագ տենչով բռնված վաճառականը չի դիմանում անակնկալ փորձությանը, իսկ աղետից հետո հանգիստ վիճակում սկսում է վերլուծել, ծանր ու թեթև անել իր արարքը. բնական է՝ ապրել նաև ափսոսանքի ու զղջման պահեր:

Դեմիրճյանի նպատակն է ներկայացնել ոչ թե խղճի խայթից ծնված այրող տառապանքը, այլ դրա արտաքին կեղևի տակ թաքնված ներքին այն դրդապատճառները, որոնք հոգեկան տագնապի մեջ են գցում նրան:

Գրողը քայլ առ քայլ «հետևում է» իր «հերոսի» գործողություններին ու պատճառաբանում նրա արարքների բուն էությունը: Հաճի աղայի անցած ճանապարհն այնպիսին չէր, որ նրա ներքնաշխարհում այժմ տեղի ունենային նման կտրուկ փոփոխություններ: Դա միայն ցուցադրական բարեպաշտություն էր, որով ցանկանում էր շրջապատին երևալ իր մարդկային առաքինությամբ և, քանի որ աստվածավախ էր, մտածում էր հոգեպես մաքուր «ներկայանալ» Ամենակալին և «էն աշխարհը» գնալուց առաջ քավել մեղքերը:

Պատմվածքն ուշադիր ընթերցողին համոզում է գրողի գաղափարական-գեղագիտական այն կարևոր հարցադրման մեջ, թե ո՞վ է ավելորդը:

Կյանքում ավելորդ և հոգեպես անդամալույծ պետք է համարել նրան, ով եսասեր է, անտարբեր, մարդատյաց, ով չի զգում ուրիշի ցավն ու վիշտը, ով կյանքից հեռանում է անշուք ու աննկատ՝ չթողնելով ափսոսանքի նշույլ անգամ:

«Ավելորդը» պատմվածքից երեք տարի հետո Դեմիրճյանն անդրադառնում է նույն խնդրին՝ այլ մոտեցմամբ ավելի մեծացնելով թեմայի ընդգրկման սահմանները, խորացնելով պրոբլեմը՝ գլխավոր հերոսին պատկերելով ավելի բարդ ու դժվարին իրադրության մեջ:

«Հովնան Մեծատուն» դրամայում մարդկանց առջև դարձյալ իր ամբողջ սրությամբ ծառանում է տեղահանության, ինչքն ու ունեցվածքը կորցնելու, ինչպես նաև ֆիզիկապես կործանվելու ծանրագույն խնդիրը:

Դեմիրճյանն այստեղ վարպետորեն կիրառում է հակադրության մեթոդը՝ ի ցույց դնելու մարդկանց վերաբերմունքի և գործելակերպի կտրուկ փոփոխությունները կյանքի տարբեր իրավիճակներում:

Դրամայի սկզբում Հովնանը ամուսնացնում է իր խորթ որդուն, առատաձեռն է ու սրտաբաց, իր հարուստ սեղանից բաժին է հանում տկարներին, օտարականներին ու ճամփորդներին, որով և արժանանում է վերջիններիս օրհնանքին, փառքի ու պատվի, բարձրանում ինքն իր աչքում, ներկայանում բարի ու ազնիվ մարդու կերպարանքով:

Սակայն թուրքերի հարձակման պատճառով ուրախությունը փոխվում է տագնապի, և Հովնանի առջև մեկեն բացվում է կործանման սարսափելի վտանգը:

Ինչպես Հաճի աղան, այնպես էլ Հովնանն անակնկալի է գալիս, սկզբում չի պատկերացնում տեղահանության ու փախուստի դժվարությունը, դեռ գտնվում է իր մարդկային արժանապատվության բարձունքում, և բոլորը նրան են նայում, նրանից սպասում վտանգից փրկվելու ելքը: Սակայն քիչ հետո միանգամից փոխվում է Հովնանի հոգեվիճակը, և իր անձի վեհության, իր բացառիկության մեջ մշտապես համոզված մարդն իջնում է այդ «բարձունքից» և սկսում մտածել, որ բոլորի նման ինքն էլ պիտի բռնի տեղահանության դժվարին ճանապարհը: Նրա ուղեղում չի տեղավորվում այն միտքը, որ ինքը մյուսների նման պետք է կրի նվաստացման դառնությունը, ճակատագրի հարվածները, նույնիսկ զգա մահվան սարսուռը:

Գրողը զարգացման ընթացքի մեջ է պահում Հովնանի կերպարը, նրա հետագա գործողությունների ընթացքը և, աստիճանաբար բացելով նրա հոգեկան աշխարհի ծալքերը, ցույց տալիս ժողովրդին «օգտակար լինելու» մասին Հովնանի խոսքերի սնանկությունը:

Եթե Համի աղայի գիտակցության մեջ անընդհատ իրերի տեղափոխման խնդիրն էր պտտվում, ապա էգոիզմի մոլուցքով բռնված Հովնանն իր առավելությունն ու ապրելու իրավունքը ձգտում էր հիմնավորել ազգին օգտակար լինելու «նվիրական» զգացումով: Ո՞վ պետք է աշխարհին պատմի սոսկալի ողբերգության մասին, ո՞վ պետք է հասնի արդարության հաղթանակին, եթե ոչ՝ ինքը, միայն ու միայն ինքը, ուրեմն ինչ գնով էլ լինի, ինքը պետք է կենդանի մնա: Իսկ այդ «գինը» շատ թանկ է նստում Հովնանի վրա (որդու մահ, հարսի և աղջկա բարոյական կորուստ, կուրացած մոր լքում և այլն):

Այս առումով Հովնանի համար խիստ բնութագրական են Դեմիրճյանի կերտած և դատաստանի արժանացրած մեկ այլ կերպարի՝ Թոմասի խոսքերը. «Ոչ ոք մարդուն այնպես դաժան չի դարձնում, ինչպես ինքը մարդը»:

Դեմիրճյանը հակադրել է բարոյական անկում ապրող Հովնանին իր խեղճության մեջ մարդկային արժանիքը պահած, անձնազոհության գնացող Աբրոյին: Անապատի ավազուտներում անգամ կիսախելագար վիճակում գտնվող Հովնանը չի դադարում սեփական անձի փրկության մասին մտածելուց, իսկ Աբրոն համարձակ կանգնում է թուրք սպայի առաջ և ներկայանում որպես Հովնան: Աբրոյի և բազում աբրոների համար է երևի ասված.

> **Այո՛, միայն նա կարող է կյանքն ավարտել երջանիկ,**
> **Ով ապրում է խղճմտանքի բարձր օրենքով չըգրված[3]:**

Իսկ Հովնա՞նը...

Նախկին հպարտ, բարձր արժանապատվությամբ օժտված, տիրական կեցվածքով, փառքի ու մեծարման արժանացած Մեծատունը, որ իրեն համարում էր «ուրիշ մարդ», առանձնահատուկ էակ, այժմ մարդկային կերպարանքը կորցրած, մեռնում է հոգեկան ամայության մեջ:

Այսպիսով, վերոհիշյալ ստեղծագործություններում Դեմիրճյանն առաջադրում է մարդ անհատի լինելիության, նրա լիարժեքության կարևոր խնդիրը և հաստատում, որ նյութական արժեքների գնով կամ հակամարդկային արարքներով սեփական փրկություն որոնողներն աղճատվում են, բարոյազրկվում, կորցնում մարդկային դիմագիծը, մերձենում գազանին: Ե՛վ Համի աղան, և՛ Հովնան Մեծատունը, ինչպես նաև Վասակն ու Թոմասն իրենց գործելակերպով իջնում են խավար հոգիների աշխարհը, դառնում դաժան, վախկոտ, հոգով բթացած: Չէ՞ որ լույսին նախորդելուց առաջ աշխարհ մուտք գործած խավարը չարի, անխղճության արտահայտությունն է, իսկ խավարն ավանդաբար զուգորդվել է չարից սերված ուժերին, որոնցից էլ ծնվում են մարդկային հոգու խավարն ու անգթությունը:

Այդպիսի խավար հոգիներն էլ խղճի դատաստանին են ենթարկվում Դեմիրճյանի կողմից:

---

[3] Հին հունական ողբերգություններ, ԵՊՀ, 1990 թ., էջ 232:

## ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

*ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ*
*Արվեստագիտության դոկտոր*

# ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃՅԱՆ
# ՀԱՅ ՆԿԱՐԻՉԸ
# ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԻՋԵՎ

*«Անմահ է գեղեցիկն և հավիտենական*
*մասը կկազմե, անմահ են գեղեցկին զինվորք»:*
***Արշակ Ֆեթվաճյան***



Դժվար է գտնել որևէ այլ հայ նկարիչ, որի գեղարվեստական ժառանգությունը լինի այնքան բազմաբնույթ, որքան Արշակ Ֆեթվաճյանինը: Իր երկարամյա կյանքի ընթացքում նա ստեղծել է մեծ թվով կտավներ, որմնանկարներ, գծանկարչական աշխատանքներ, ձևավորել է թատերական ներկայացումներ, պարասրահներ, դրամներ, դրոշմանիշեր, նույնիսկ կազմել է ճարտարապետական ինքնուրույն նախագծեր և վերստին զարդարել կանգուն տաճարները: Եթե այս ամենին գումարենք նաև նրա բանաստեղծական գրվածքները, ասույթները, իտալերենից, ֆրանսերենից կատարած թարգմանությունները, հայ արվեստի, ճարտարապետության, մշակույթի ու նոր քաղաքաշինության հրատապ և կնճռոտ հարցերին նվիրված նրա գիտական և հրապարակախոսական հոդվածները, համաշխարհային գեղանկարչության, ընթացիկ թատերական ներկայացումների մասին գրած ուսումնասիրությունները, ապա մեր առջև կհառնի մի այնպիսի մեծություն, որի տեղը հայ նշանավոր գեղագետների առաջին շարքում է:

Արշակ Ֆեթվաճյանի ժառանգությունն իր բազմակողմանիությամբ մասամբ հիշեցնում է Վարդգես Սուրենյանցի վաստակը, ուստի պատահական չէ, որ վրձնի երկու մեծանուն վարպետների ճանապարհները մերթ ընդ մերթ հատվել կամ զուգահեռ են ընթացել:

Սակայն դժվար է գտնել որևէ այլ հայ գեղանկարիչ, որի գործունեությունն այնքան սերտ կապված լիներ սեփական ժողովրդի պատմական, գեղարվեստական անցյալի մասունքներին, այնքան բազմաթիվ ու բազմատեսակ թելերով հյուսված լիներ նրա հին ու նոր մշակույթի խնդիրներին:

Ֆեթվաճյանի թողած ստեղծագործությունների մեջ կան բնության տեսարաններ, պատմական և ավետարանական թեմաներով հորինված աշխատանքներ, նշանավոր

մարդկանց դիմանկարներ. Անիի ավերակներից և, առհասարակ, հայկական ճարտարապետական հուշարձաններից, միջնադարյան հայկական, ինչպես նաև բյուզանդական մանրանկարներից կատարված ընդօրինակություններ և Հայաստանի շուրջ քսան գավառների ազգագրական տարազով կանանց պատկերներ:

Արշակ Ֆեթվաճյանը ծնվել է 1866 թ. հոկտեմբերի 1-ին Տրապիզոնում, Աբրահամ և Մարիամ Ֆեթվաճյանների ընտանիքում: Նախնական կրթությունը տեղի ազգային վարժարանում ստանալուց հետո նա 16 տարեկանում ընդունվել է Կ. Պոլսի նորաբաց կայսերական գեղարվեստի վարժարանը և դարձել այդ հաստատության առաջին ուսանողն ու անդրանիկ ընթացավարտը: 1887 թ. ավարտական վկայականը ստանալու հետ միաժամանակ փայլուն առաջադիմության համար նա արժանացել է վարժարանի «Հռոմի մրցանակին», որը նրան հնարավորություն էր ընձեռում պետության հաշվին կատարելագործել իր արվեստը «հավերժական քաղաքում»: Խոստումնալից երիտասարդ նկարչին օսմանյան կրթական նախարարությունն առաջարկում է գնալ Հռոմ և ուսումնառությունը շարունակել այնտեղ՝ հետագայում Կ. Պոլիս վերադառնալու և որևէ պետական պաշտոն ստանձնելու պայմանով: Ա. Ֆեթվաճյանը սակայն հրաժարվում է այս առաջարկից:

Պոլսահայ Ոսկան Բեյ Մարտիկյանն իր նյութական օժանդակությունն է առաջարկում երիտասարդ նկարչին և հորդորում է Հռոմում ուսումնառությունն ավարտելուց հետո Թուրքիա չվերադառնալ, այլ կյանքն ու արվեստն ի սպաս դնել հարազատ ժողովրդի մշակույթին: Այս բարերարի անունը հավետ գաղտնի պահելու պայմանով[1] Ա. Ֆեթվաճյանը 1887 թ. օգոստոսին գնում է Հռոմ և ընդունվում Սան Լուկա գեղարվեստների ակադեմիան: Այստեղ նա ծանոթանում է ժամանակի իտալական հայտնի գեղանկարիչների գործունեությանը և աշակերտում մեծահամբավ Չեզարե Մակարիին: Իր ուսուցչի՝ Իտալիայի ժամանակի ամենամեծ նկարչի հանդեպ անսահման հիացմունքն ու երախտագիտությունը Ա. Ֆեթվաճյանը պահում է մինչև կյանքի վերջը:

Իտալիայում ուսանելու շնորհիվ նա հնարավորություն է ստանում շրջագայելու երկրի տարբեր քաղաքները, այցելելու համաշխարհային քաղաքակրթության հրաշակերտներով հարուստ կենտրոնները:

Ա. Ֆեթվաճյանի հոգում անջնջելի հետք է թողնում հատկապես Վենետիկը: Այդ տարիներին նա հոդվածներ է գրում իտալական տոների, նշանավոր հուշարձանների, իր հափշտակության առարկան հանդիսացող Վենետիկի գեղեցկությունների, Չեզարե Մակարիի հրաշակերտների և հասարակության կյանքում արվեստի նշանակության մասին: Կ. Պոլսի «Արևելք» թերթում հրատարակված այդ հոդվածները վկայում են նկարչի ոչ միայն գեղագիտական մեծ իմացության, այլև նրա գրական օժտվածության վերաբերյալ:

1888 թ. Ս. Ղազարում նա ծանոթանում է Ղևոնդ Ալիշանի հետ և վերջինից ստանում իր նկարչական, պատմա-բանասիրական ապագա գործունեության ծրագիրը: Մեծավաստակ գիտնականն Ա. Ֆեթվաճյանի գեղասեր աչքը շլացնում է Մխիթարյան միաբանության հայկական ձեռագրերի մանրանկարներով, ներշնչում նրան անպայման նվիրվելու հին գրչագիր մատյանների ձևավորումների ուսումնասիրության գործին: Ալիշանը երիտասարդ նկարչի խանդավառ հոգում սեր է բորբոքում հայ մշակույթի դարավոր, կիսա-

[1] Տե՛ս Ա. Տեր-Մանուելյան, Նկարիչ Արշակ Ֆեթվաճյան, կենսագրություն, վկայություններ իր մասին, էջեր, նամակներ և նկարներ մեծ նկարիչեն, Բեյրութ, 1966, էջ 51-54:

վեր կոթողների հանդեպ: Ականավոր հայագետի առաջարկով Ա. Ֆեթվաճյանը 1889. 1890. 1891 թթ. ամառային ամիսներին, իր արձակուրդի օրերին, 20-30 ընդօրինակություն-ներ է կատարում Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի նկարազարդումներից, մաս-նավորապես՝ մեծ քանասերի նախասիրած երկերից[2]:

Հռոմի գեղարվեստների ակադեմիայում Ա. Ֆեթվաճյանը չորս տարի անընդմեջ կա-տարելագործում է իր նկարչական վարպետությունը: Ակադեմիան ավարտելու տարում նա երկու նկարներով մասնակցում է Պալացցո դ'Արտե Մոդերնոյում (Ժամանակակից արվեստի պալատում) բացված Իտալիայի նկարիչների ազգային ցուցահանդեսին՝ գրա-վելով արվեստասերների ուշադրությունը:

1891 թ. Ա. Ֆեթվաճյանը տեղափոխվում է Վիեննա և չորս տարի շարունակ աշխա-տում որպես ազատ արվեստագետ՝ վրձնելով մի շարք դիմանկարներ: Բարեկամանալով Վիեննայում պարսից դեսպան, հայազգի Նարիման Խան Ենիկոլոպյանի հետ, արվեստա-գետը վերջինիս պատվերով նկարում է Նասր Էդ-Դին շահի և նրա վեզիրի հասակաչափ պատկերները: Այդ աշխատանքների կապակցությամբ երիտասարդ նկարչի անունը հի-շատակվում է հայ և գերմանական թերթերում[3]: Այս շրջանում է ահա Ա. Ֆեթվաճյանը ստեղծում իր «Թուրքական սուրհանդակը Անատոլիայի մեջ» յուղաներկ նկարը, որը մեծ ճանաչում է բերում հեղինակին և հետագայում ցուցադրվում նրա բոլոր պատկերահան-դեսներում:

Վիեննական տարիներին ևս նկարիչը շարունակում է արվեստին ծառայել ոչ միայն վրձնով, այլև գրչով: Այդ ժամանակ Վիեննայի և Կ.Պոլսի հայկական մամուլում լույս են տեսնում նրա արվեստաբանական մի շարք հոդվածները, իտալերենից կատարված չա-փածո և արձակ թարգմանությունները[4]:

Արդեն ավստրո-հունգարական մայրաքաղաքում ապրելու տարիներին Ա. Ֆեթվաճյա-նը բուռն կերպով տենչում է անցնել Կովկաս՝ նվիրվելու համար հայոց պատմական անց-յալը վրձնով ներկայացնելու գործին[5]:

Վիեննայից հետո Ա. Ֆեթվաճյանը մեկնում է Փարիզ, ապա ուղևորվում Մյունխեն, Անտվերպեն, Դրեզդեն և շրջագայում արվեստագիտական այլ խոշոր կենտրոններում:

Նկարչի համար կարևոր հանգրվան է դառնում Պետերբուրգը: Ռուսական մայրաքա-ղաք գալու առաջին իսկ շաբաթվա ընթացքում նա տեղի նկարիչների կայսերական ակումբների անդամ է ընտրվում: Շատ շուտով նա անդամակցում է նաև ռուս ջրանկարիչ-ների ընկերությանը՝ դառնալով նրա առաջին այլազգի անդամը[6]:

19-րդ դ. 90-ական թթ. նա համընդհանուր ճանաչում է գտնում որպես անդրանիկ հայ ջրանկարիչ: Պետերբուրգում ապրելու առաջին իսկ տարում Ա. Ֆեթվաճյանը տասը նկար է ներկայացնում տեղի ցուցահանդեսներում և նույնքան ջրաներկ աշխատանքներ՝ որոնց-րին օգնելու նպատակով արվեստագետների կազմակերպած երկու պատկերահանդեսնե-

---

[2] Տես Մ. Ճանաշյան, Ա. Ֆեթվաճյան և Ղ. Ալիշան: «Բազմավեպ» (Ս. Ղազար), 1948, հմր. 3-4, էջ 82-87:

[3] Տես Գ., Ա. Ֆեթվաճյան, Ազգային նկարիչ, «Հանդես ամսօրյա» (Վիեննա), 1891, թիվ 11, էջ 347:

[4] Տես Ա. Ֆեթվաճյան, Օրջագայություն նկարչաց աշխարհին, «Հանդես ամսօրյա», 1892, թիվ 1-6, 9-11, 1893, թիվ 3:

[5] Տես Փ. Տ-Մ., Նամակ Ավստրիայից, «Մշակ», լրագիր (Թիֆլիս), 1892, մայիսի 5, էջ 3:

[6] Տես «Արաքս» հանդես (Ս. Պետերբուրգ), Գիրք Բ, 1897, էջ 12-14: «Բազմավեպ», 1898, հոկտեմբեր, էջ 501:

րում: Ա. Ֆեթվաճյանի ստեղծագործությունների մասին գովեստով է արտահայտվում ոչ միայն հայկական մամուլը. դրանց վերաբերյալ գնահատանքի ոգևորված խոսք է գրում ռուս անվանի գրող ու լրագրող Ի. Ի. Յասենսկին: Պետերբուրգյան ութ տարիների ընթացքում արդեն անվանի դարձած վարպետը մասնակցում է կայսերական ակադեմիայի ցուցահանդեսներին և այլ ցուցահանդեսների, վրձնում է անվանի մարդկանց դիմանկարները, իսկ պատվերներից ազատ ժամանակ ստեղծագործում է իրեն հոգեհարազատ այլ թեմաներով:

1899 թ. սեպտեմբերին Բաթումում, 1900 թ. հունվարին Թիֆլիսում, 1902 թ. հուլիսին Պյատիգորսկում, նույն տարվա նոյեմբերին Բաքվում բացվում և մեծ հաջողությամբ են ընդունվում վարպետի անհատական պատկերահանդեսները[7]: Նկարիչը արվեստասերների դատին է հանձնում իր այնպիսի հռչակավոր աշխատանքները, ինչպիսիք են «Թուրքական սուրհանդակը Անատոլիայի մեջ», «Սուլթան Մահմեդ Ա-ի դամբարանը», «Վենետիկի Ս. Մարկոսի տաճարը», «Մատթեոս Պատրիարք Իզմիրլյանի դիմանկարը» յուղաներկ ստեղծագործությունները: Թիֆլիսյան մամուլում հայտնված քննախոսականներից մեկում «Կըրկ Չահզադե մզկիթի բակը» նկարը համեմատվում է Վ. Վերեշչագինի միջինասիական պատկերների հետ[8]:

1900 թ. սկսվում է Ա. Ֆեթվաճյանի հայագիտական-հնագիտական ու ազգագրական գործունեությունը: Նույն թվականից սկսած նա ամեն տարի շրջում է Արևմտյան Հայաստանում և ջրաներկով ու մատիտով թղթին է հանձնում եկեղեցիների, բերդերի, պարիսպների, քաղաքացիական շենքերի, տարբեր գավառների ազգագրական զգեստներ կրող հայուհիների պատկերները: Ծուրջ քսան տարի շարունակ նա առանց հոգնության կամ տրտունջի, մեն մենակ, ապավինած սեփական ուժերին, մեծ համբերատարությամբ, բծախնդիր ճշգրտությամբ գծագրում ու երփնագրում է հայ մշակույթի հինավուրց ցանձերը: Այդ լեռնակուտակ գործն իրականացնելիս նրան առաջնորդում է հոգում Ալիշանի վառած կրակը և իր «անմահ ուսուցչի՝ հանճարեղ վարպետ» Չեզարե Մակարիի պատվիրանը՝ Եվրոպա վերադառնալիս իր հետ տանել Հայաստան-երկրից այն, ինչ որ հայկական էր և «արևմտյայք դեռ չէին գիտցել»[9]:

«Լեզվով չի պատմվիր այն փլուզումը,- գրում է Ա. Ֆեթվաճյանը,- որ իմ մեջ տեղի ունեցավ, երբ ես իմ աչոք տեսա առ տեղյավն այն, որի մասին քիչ ու միչ տեղյակ էի միայն հատ ու կենտ աղքատիկ, լղար տեղագրություններից, որ մեկ-մեկ զարդարված կլինեին պատահական եվրոպացի ճամբորդների լույս ընծայած մի գրքից քաղածո պատկերներով»: Նա խոստովանում է, որ իր՝ այն ժամանակ 36 տարեկան երիտասարդի մեջ «ծայն է առնում» ազգային արժանապատվությունը, և արվեստագետը վճռում է հայության ար-

---

[7] Տես «Մուրճ» լրագիր (Թիֆլիս), 1900 թ., թիվ 1, հունվար, էջ 125-126: «Մշակ», 1900, հունվարի 1, էջ 4, հունվարի 8, Հ. Գենչյան. Նամակ Պյատիգորսկից: «Մշակ», 1902, օգոստոսի 2, էջ 1, Հ. Գ., Նամակ Բագուից: «Մշակ», 1902, նոյեմբերի 21, էջ 1-2:

[8] Տես «Մշակ», 1900 թ., հունվարի 15, էջ 4:

[9] Տես Ա. Ֆեթվաճյան. Իմ նվիրաբերությունները հայ ազգին: «Լրաբեր» լրագիր (Նյու Յորք), 1947, ապրիլ 10, էջ 4:

ժեքն ու արժանիքը չիմացողների համար վեր հանել «ազգային հանճարի ցերիվերոյութ-
յունը պերճաբանող շինարարական գեղարվեստի դիմապատկերը»[10]:
Ա. Ֆեթվաճյանի ձեռնարկած դժվարին աշխատանքի արդյունքն է լինում երեսուն մե-
ծաչափ ջրաներկ պատկերները, որոնք ներկայացնում են Անին ու հարևան շրջանների
ճարտարապետական կոթողները, ինչպես նաև հայ քանդակագործական մանրամասնե-
րի, քարակերտ դրվագների, զարդերի հազար հինգ հարյուր մատիտանկարները:

Այդ մեծ հավաքածուին պետք է գումարել նաև Հայաստանի շուրջ 20 գավառների հա-
յուհիների նույն այդ ժամանակում կատարված դիմանկարները իրենց տարազի բնորոշ ա-
ռանձնահատկություններով: Եթե Ա. Ֆեթվաճյանը միայն այս հնագիտական, ազգագրա-
կան աշխատանքը կատարած լիներ, դա էլ բավական էր, որ նրա անունը ոսկե տառերով
հավերժանար մեր մշակույթի նվիրյալների շարքում: Նման մեծ ընդգրկում ունեցող գոր-
ծունեությունը նրան դասում է մեր ոսկեձեռիկ հինավուրց քարգործների, մանրանկարիչ-
ների շարքը, որոնց ստեղծագործությունները պատճենելով՝ նա եղբայրակից է դառնում
իր հեռավոր գործընկերներին:

Ժամանակի հոլովույթի հետ բազմապատկվում է Ա. Ֆեթվաճյանի փաստանկարների
արժեքը: Այդ երկերը անգին են ոչ միայն այն պատճառով, որ նրա պատկերած կոթողները
անցյալում լուսանկարված չեն եղել կամ գտնվում են այժմ Հայաստանի Հանրապետութ-
յունից դուրս, այլև որովհետև դրանց մեծ մասն այսօր արդեն գոյություն չունի: Ինչ վերա-
բերում է հայուհիների տարազներին, ապա անհրաժեշտ է հիշել, որ 1915 թ. Մեծ եղեռնի և
մյուս տարիներին ոչնչացան ու անհետացան հայ ազգագրության համար բացառիկ ար-
ժեք ունեցող անթիվ մասունքներ, այդ թվում և հայկական տարազների բազմատեսակ
նմուշները:

Հայուհիների զգեստավորման ցուցադրումով Ա. Ֆեթվաճյանն առաջին անգամ հան-
դես է գալիս 1900 թ. Թիֆլիսի պատկերահանդեսներում, որտեղ նա արվեստասերների ու-
շադրությանն է հանձնում իր նշանավոր «Ալեքսանդրապոլցի հայուհին» նկարը:

1905 թ. Օդեսայում եղած ժամանակ նա գլխավորում է մի հանձնախումբ, որը կարողա-
նում է հսկայական քանակությամբ հագուստ և կոշիկ հավաքել ու առաքել դրանք Կով-
կաս՝ հայ-թաթարական ընդհարումներից տուժած հայերին բաժանելու համար[11]:

1906 թ. Ա. Ֆեթվաճյանին նորից տեսնում ենք Վիեննայում, որտեղ իր անձնական մի-
ջոցներով կարողանում է հրատարակել Անին ներկայացնող 15 գունավոր բացիկների մի
փունջ և տասը պատկերաքարտեր՝ իր առավել նշանավոր յուղաներկ աշխատանքներից՝
բնանկարների, հայուհիների դիմանկարների վերատպություններ[12]:

«Առանց հավակնություն ունենալու Անին ամբողջ ներկայացուցած լինելու, կկարծեմ,
որ հավաքած եմ այս ալբոմի մեջ Բագրատունեաց մայրաքաղաքին և նորա անմիջական
շրջակայքի ավերակներեն ամենեն նկարչականները»,- գրում է արվեստագետը բացիկնե-
րի հավաքածուի շապիկի վրա:

Ականավոր հայագետ Հակոբոս Տաշյանին ուղղված նամակում նա այդ առիթով գրում
է. «Իմ նկարների մեջ ես աշխատել եմ պահել յուրաքանչյուր քարի և գույնի հարազատութ-

[10] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան, Իմ նվիրաբերությունները..., էջ 4:

[11] Տե՛ս Խմբագրական, Արշակ Ֆեթվաճյան, «Հայրենիք» լրագիր (Բոստոն),1947,հոկտեմբերի 11, էջ 4:

[12] Տե՛ս Фетвачян А.,Развалины Ани, Անի, Les Ruines d'Ani, Vienne,1906.

յունը, որպեսզի դրանք չլինեին ավերակներ, այլ մի մի փոքրիկ Անիի ավերակների: Ձեռնարկելով այս գործին՝ աչքի առաջ ունեցել եմ ամեն բանից առաջ, զուտ ժողովրդական մի գործ կատարել, տալ ժողովրդին արժան և կարելի հնարքը ցեղեցկագիտական մի վայելք ունենալու և Անիի հավետ ողբալի պատկերներին դեմ հանդիման կանգնեցնելով զինք՝ միջոց տալ մտածելու»: «Հենց որ մի քիչ թեթևանամ այս անգամ շալկված պարտքես,- շարունակում է Ա. Ֆեթվաճյանը,- կգամ իրագործելու մի ուրիշ և անհամեմատ բարձր գործ, որ է՝ Անին 24 պատկերներով և պանորամայով և յուրաքանչյուր ավերակը վերակազմած ճարտարապետական պատկերներով և հատակագծերով՝ նորեն 24 հատ, մի այդքան երես ևս հավաքածո Անվո ճարտարապետական շինվածոց մեջ գործածված քանդակների տեսակներում և երեքլեզվյան պատմությունը մեր հիմնահատակ Անիին՝ գրված ամենակարող գրչի մը կողմե:... Սա անհացին ծախս կուզե և անկասկած նյութական շահ չի տար ինձ, ես շնորհակալ կլինիմ, եթե վնաս ալ չի տա: Չի գիտեմ ինչու, հավատացած եմ, որ կհաջողի գլուխ բերել այս գործը, որի նման բան հայը դեռ չի արել»[13]:

Դժբախտաբար անձնուրաց նկարչին վիճակված չէր իրականացնել իր ծրագիրը: Նրա և այլ ուսումնասիրողների երազանքները, Անիի հուշարձանները տեսնել գունավոր և շքեղ տպագրված, կենսագործվեցին միայն 1984 թ., երբ Միլանում հանրածանոթ «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարով հրատարակվեց «Անի» հատորը: Այդ գրքում, ցավոք, Ա. Ֆեթվաճյանի պատկերները չեն օգտագործված:

1908 թ. գարնանը Թիֆլիսում գործող անհատական պատկերահանդեսում Ա. Ֆեթվաճյանը կովկասյան հասարակությանը ներկայացրեց Անիի նկարները: Դա Թիֆլիսում բացված ջրաներկ աշխատանքների առաջին ցուցադրությունն էր[14]: Անիի հնություններից բացի այնտեղ աչքի էին ընկնում նաև այլ ստեղծագործություններ[15]: Ցուցադրվող գործերից «Սասունցի կնոջ» նկարի մասին «Մշակ»-ը գրում է. «Ահավոր վախուտներին ապավինած՝ անդունդի վրա կախ մի քարափի հարթության վրա ձախ կողքին թեք ընկած, աչքն հեռավորության մեջ խորասույզ և հոնքերը կիտած լրտեսում է մի կին: Նա աջը պահում է ցետնի վրա հանգչող մի հրացանի վրա և պատրաստ է առաջին կասկածից ճապուկ կերպով վեր ոստնելու, այնքան լարված ուշադրություն ես նկատում նրանում և լարված՝ իր բոլոր ջլերով:

Ի՞նչ է պաշտպանելու նա այդ ամայության մեջ լեռների ծոցում:

Այն փափլիկ ու կայտառատեսիլ մանկիկը, որ խունճուճ-մունճուճ եկած՝ բերնումն ունի մոր ծիծը, այդ մոր միակ կյանքն ու գոյությունն է, միակ հույսը, և սա այդ հուսածաղիկը իր կուրծքին սեղմած պահպանելու համար կդիմագրավե մի ամբողջ դժոխքի: Նա կորցրած է երևում ամեն բան և բոկոտն ապավինել է իր հայրենի քարաժայռերուն. բայց նա դեռ չէ կորցրել կյանքի ջերմությունը և հույսը՝ որ դարձյալ կաշխարհակալե կորցրածը: Այդ իր կյանքի հատոր մանկիկը մի օր հետ կդարձնե նրան իր պապենի ժայռերը: Ուստի այժմ, ինքն արծիվ, նա պաշտպանելու և պահպանելու է իր ձագիկը վայրագ վիշապից, որի հուպ սողոսկումից ունի երկյուղ:

---

[13] Տես Հ. Տաշյան, Մատենախոսական «Անի» գունատիպ հավաքածո և պատկերաքարտեր, «Հանդես ամսօրյա», 1906, հոկտեմբեր, էջ 318-320:

[14] Տես «Մշակ», 1908, մարտի 19:

[15] Տես, Սիրող, Ֆեթվաճյանի պատկերահանդեսը, «Մշակ», 1908, մայիսի 2, էջ 2:

Դա սասունցի դյուցազնական է: Նկարչի բանաստեղծական ներշնչումին մրցակցել է
վրձինը սքանչելապես: Պ. Ֆեթվաճյան այդ պատկերին մեջ դրել է իր սիրտը. հոգին,
մտքին պլացքը և իր բոլոր արվեստը և ինքն արդեն սիրահար է իր ստեղծագործած ապա-
գա հույս ցողտրիկ մանուկին»[16]: Այս ցուցահանդեսն այցելող արվեստասերներից ոմանք,
մամուլում հանդես գալով, թելադրում են հայկական ազգագրական ընկերությանը գնել Ա-
նրի 24 ջրաներկ պատկերները և դրանցով զարդարել նոր հիմնադրվելիք ազգագրական-
հնագիտական թանգարանը[17]: Այդ առաջարկը հայկական շրջանակներում, դժբախտա-
բար, արձագանք չի գտնում:

Հայ քանդակագործության ու շինարվեստի նրբին գիտակ հանդիսացող նկարչին
հանձնարարվում է զարդարել Թիֆլիսի 1900-1908 թթ. վերակառուցված Քամոյանց Ս.
Գևորգ եկեղեցին: Ա. Ֆեթվաճյանը վերակենդանացնում է հին հայոց գեղարվեստի ա-
վանդույթները և իր ձեռքով կերտում այդ կառույցի ներքին քանդակագործական և նկար-
չական մասերը՝ մարմարե խաչկալը, քանդակազարդ դռները: Այս ձեռնարկի ունեցած
հաջողությունը հասարակական մեծ խանդավառություն է առաջ բերում, և դա է պատճա-
ռը, որ Ա. Ֆեթվաճյանին 1909 թ. մինչև 1914 թ. հանձնարարվում է հայկական ոճով վերա-
շինել Թիֆլիսի Կուսանաց անապատի Ս. Ստեփաննոս եկեղեցին, Արմավիրի Ս. Գևորգ ե-
կեղեցին և Ղարսի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորչի բեմը, խաչկալը և հինգ դռները[18]:

Այդպիսով Ա. Ֆեթվաճյանը նոր կյանք է տալիս ազգային շինարվեստի շքեղ ավանդույթներին:

1900-ական թվականներից սկսած Ա. Ֆեթվաճյանը հոդվածներով հանդես է գալիս Թիֆլիսի հայկական լրագրերում: Նրա մի շարք թղթակցությունները նվիրված են հայկական միջավայրում գեղագիտական դաստիարակության պակասին, կերպարվեստի երկերի մասսայականացման անբավարար վիճակին և արվեստի նշանակությանը հասարակական կյանքում: Մեր դարի 10-ական թվականներին նա հաճախ է անդրադառնում Էջմիածնի շրջափակում կառուցվող նոր շենքերին:

«Էջմիածինը մեր հանուր ազգի կուլտուրականության համար մի պրիզմա է. օտար աչքերը դրա միջով կնայեն մեզ և կչափեն մեր որակը»,- գրում է նկարիչը[19]: Նա գտնում է, որ Մայր Տաճարի հարևանությամբ կառուցվող շենքերը պիտի իրենց ոճով և կատարումով չնսեմացնեն հինավուրց կոթողների նկարագիրը, այլ ներդաշնակ և համահունչ լինեն նրանց[20]: Ուշագրավ է, որ մեր դարի 10-ական թթ. Ա. Ֆեթվաճյանը, որպես Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման համար Թիֆլիսում ստեղծված մասնախմբի անդամ, անվանի նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի հետ միասին գործուն մասնակցություն է բերում Ս. Էջմիածնին առնչվող բոլոր ձեռնարկներին[21]:

---

[16] Տե՛ս Ա. Մ. Եզեկյան, Ֆեթվաճյանի պատկերահանդեսը, «Մշակ», 1908, մարտի 21, էջ 2:

[17] Տե՛ս Ռ., Ակվարելների ցուցահանդեսի առթիվ, «Մշակ», 1908, ապրիլի 5, էջ 2:

[18] Տե՛ս Մ. Սևակ, Նկարիչ Ա. Ֆեթվաճյան և իր գործերը, «Հայաստանի կոչնակ» հանդես (Նյու Յորք), 1923, թիվ 1, էջ 12:

[19] Տե՛ս, Ա. Ֆեթվաճյան, Էջմիածնի շրջափակի շենքերի կառուցման հարցի առիթով /Նամակ խմբագրությանը/, «Մշակ», 1910, փետրվարի 17, էջ 3-4:

[20] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան, Համարատվություն Էջմիածին գնացած պատգամավորության, «Մշակ», 1910, հունիսի 9, էջ 2:

[21] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան, Համարատվություն..., էջ 2:

Այս շրջանում նա գրում է նաև Թիֆլիսում բեմադրվող ներկայացումների թատերախոսականներ: Այդ իմաստով ուշագրավ է «Ս. Թառայանի «Սոկրատը» հոդվածը, որտեղ հեղինակը քննադատաբար է անդրադառնում ոչ միայն բեմադրության մեջ ընդգրկված դերասանների խաղին, այլև նրանց զգեստների և միջավայրի ձևավորմանը[22]:

Մոտ տասը տարվա դադարից հետո, 1917 թ., Ա. Ֆեթվաճյանը կրկին ի ցույց է դնում իր նկարները: Նա մասնակցում է Արվեստը խրախուսող կովկասյան ընկերության պատկերահանդեսին, որը բացվում է Թիֆլիսում հունվար ամսին[23]: Այստեղ հայրենանվեր արվեստագետը ներկայացնում է Անին պատկերող ջրաներկ աշխատանքները, ինչպես նաև «Աղոթքը Գեթսեմանի պարտեզում» և այլ ստեղծագործություններ[24]: Այդ ցուցահանդեսի 150 պատկերների մեջ Գևորգ Բաշինջաղյանի, Փանոս Թերլեմեզյանի և անվանի ու անհայտ այլ նկարիչների գործերի կողքին Ա. Ֆեթվաճյանի նկարները առանձնանում են իրենց գեղարվեստական արժանիքներով և բարձր գնահատվում արվեստի քննադատների կողմից:

1917-1918 թթ. Արևմտահայոց Ազգային Խորհրդի հանձնարարությամբ Արշակ Ֆեթվաճյանն անդամակցում է մի հանձնախմբի, որի գործն էր զինվորներ հավաքելն ու նրանց ճակատ ուղարկելը թուրքերի դեմ կռվելու համար[25]:

1917 թ. հուլիսին, Նիկողայոս Մառի՝ Անի կատարած վերջին գիտարշավի ժամանակ, Բագրատունյաց երբեմնի մայրաքաղաք է գալիս և Ա. Ֆեթվաճյանը: Նա ուղեկցում է հայ մշակույթի մեծ երախտավոր, արվեստաբան և բանասեր Գարեգին Հովսեփյանին (Կիլիկիո ապագա Կաթողիկոսին), որին Անիում ուսումնասիրություններ կատարելու նպատակով ընկերակցում էին նաև նկարիչ Վրթանես Ախիկյանը և լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը[26]: Այդ գիտարշավը դառնում է Անիում Ա. Ֆեթվաճյանի աշխատելու վերջին դրվագը:

1918 թ. նրան տեսնում ենք Էջմիածնում հայ գաղթական կանանց պատկերները վրձնելիս[27]:

Ա. Ֆեթվաճյանի գեղարվեստական կենսագրության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության հանձնարարությամբ նրա իրականացրած հայկական նամականիշների ու թղթադրամների ձևավորման գործը: Այդ նամականիշներն ու թղթադրամները կատարված են բացառիկ խնամքով ու հմտությամբ: Դրանք նկարազարդելու համար արվեստագետն ընտրել է հայության համար խորհրդանշական հանդիսացող պատկերներ ու դրվագներ. զույգ Մասիսները, ճախարակով հայ գեղջկուհին, օձին պատառող արծիվը և այլն:

1919 թ. Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, օժտելով հատուկ լիազորություններով, Ա. Ֆեթվաճյանին ուղարկում է Ֆրանսիա՝ տպագրելու համար հայկական

---

[22] Տե՛ս «Մշակ», 1910, նոյեմբերի 24, էջ 3-4:

[23] Տե՛ս Արվեստը խրախուսող կովկասյան ընկերության պատկերահանդեսը, «Տարազ» հանդես (Թիֆլիս), 1917, թիվ 1, հունվար, էջ 16:

[24] Տես О. Тер-Григорян. Художник А. Фетваджян (впечатления). "Армянский вестник" журнал (Москва), 1917, N 24, с. 9-10.

[25] Տե՛ս Խմբագրական. Արշակ Ֆեթվաճյան. «Հայրենիք» լրագիր, 1947, հոկտեմբերի 11, էջ 4:

[26] Տե՛ս Հ. Աճեմյան. Անի քաղաքը ներկայիս. «Հանդես ամսօրյա», 1924, թիվ 1-2, էջ 46-56:

[27] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան. Իմ օվկիանոսյան թռիչքներ..., էջ 4:

նամակադրոշմները. և Անգլիա՝ տպագրելու հայկական թղթադրամները: Նկարիչը Փարիզ է հասնում 1919 թ. սեպտեմբերի 13-ին կամ 14-ին[28]: Նամակադրոշմների տպագրության պատվերը նա հանձնում է փարիզյան Շասեփո հրատարակչատանը, որն իրականացնում է աշխատանքը 1920 թ. հոկտեմբերին: Շասեփո հրատարակչության կողմից աշխատանքների ձգձգումը Ա. Ֆեթվաճյանի համար պատճառ է դառնում երկարացնելու իր՝ Փարիզում մնալը:

Սակայն այդ շրջանում հանրապետության ֆինանսական վիճակի աստիճանական վատացման, մասնավորապես արտասահմանյան դրամի պակասի պատճառով նամակադրոշմների տպագրության ողջ ծախսը վճարելն անկարելի է դառնում և միայն դրանց մի մասն է ուղարկվում Հայաստան:

Նամակադրոշմները Երևան են հասնում նոյեմբերի վերջին, այսինքն այն պահին, երբ Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգերը: Նոր իշխանությունները արգելում են նամակադրոշմների փոստային շրջանառությունը:

1921 թվականին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին կառավարության արտասահմանյան ներկայացուցիչները գնում են փարիզյան հրատարակչատանը մնացած նամակադրոշմները և հանձնում դրանք վաճառքի ֆիլատելիստական մասնագիտացված խանութներին[29]:

Մինչ այդ, սակայն, Ա. Ֆեթվաճյանը, դժգոհ մնալով Շասեփո հրատարակչատան պատրաստած նամակադրոշմների տպագրական որակից, մեկնում է Անգլիա, որպեսզի այնտեղ տպագրի թղթադրամները: Լոնդոնում նա պատվիրում է այդ գործը «Վաթերլո անդ Սոնս» հրատարակչությանը[30]: Վերջինս հայկական թղթադրամների տպագրությունն իրականացնում է բարձր որակով և ընտիր թղթի վրա: Այդ թղթադրամների համար Ա. Ֆեթվաճյանի կատարած ձևավորումները այսօր անգամ հիացնում են դիտողին իրենց գեղարվեստական անթերի կատարումով ու ճաշակով, բայց տպագրությանը հաջորդած Հայաստանի խորհրդայնացումից հետո դրանք ևս գործածության մեջ չեն դրվում:

Նախքան Անգլիա մեկնելը, դեռևս Փարիզում եղած ժամանակ, 1919 թ., նա միջնադարյան արվեստի լավագույն գիտակ, աշխարհահռչակ բյուզանդագետ, պատմաբան Շարլ Դիլի հովանավորությամբ ֆրանսիացի գիտնականների կողմից հրավիրվում է իր հայրենագիտական նկարները 1920 թ. ապրիլին ցուցադրելու Լուվրի դեկորատիվ արվեստների բաժնի սրահում[31]: Նկարչի ճարտարապետական և ազգագրական պատկերները առաջ են բերում հայ և օտար քննադատների հիացմունքը և հայտնություն դառնում քրիստոնեական արվեստի մասնագետների համար[32]: Այս նշանավոր իրադարձությանը հետևում է մեկ ուրիշը. Ա. Ֆեթվաճյանը հրավեր է ստանում մասնակցելու 1920 թ. Փարիզում ջրանկարիչների միջազգային ընկերության մասնավոր ցուցահանդեսին և ընդունվում է նույն ընկերության անդամ:

---

[28] Տե՛ս, Х. А. Закиян, С. А. Салтыков, Почта и почтовые марки Армении, Ереван, 1988, с. 85-87.

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 86:

[30] Տե՛ս A. Sand Pederson, Armenian Freedom Issues. "The American Philatelist", 1977, September, vol. 91, No. 9, p. 709.

[31] Տե՛ս G. Schlumberger. La collection de Fetvadjian, des monuments historiques de l'Arménie.- "Journal de débats", 1920, 19 mai.

[32] Տե՛ս Մ. Սևակ. Նկարիչ Ա. Ֆեթվաճյան..., էջ 12:

Լուվրի ցուցահանդեսի առիթով Շ. Դիլը գրել է. «Անոր ցուցահանդեսը - այնքան շահեկան, այնքան դաստիարակիչ գեղարվեստի պատմության - հավատքի վկայություն մըն է հայ ազգին ապագային համար և իբր այդ նս արժանի է մեր համակրանքին: Դարերով Հայաստանի մեջ գոյություն ունեցած է պետություն մը, ազգ մը՝ ընդունակ ուրույն կյանքի, ստեղծագործ ինքնատիպությամբ և բեղմնավոր ազդեցությամբ: Այս պետությունը, այս ազգը, աշխարհի մը մեջ որ կսպասե, որ կհուսա քիչ մը ավելի արդարություն, իրավունք ունի վերածնելու և հակառակ այն վայրագ կոտորածներուն, որոնցմով նկրտեցան բնաջնջել զայն, իբրև Ղազարոս մը՝ հարություն կառնե գերեզմանեն»[33]: Բարձր գնահատելով Ա. Ֆեթվաճյանի վաստակը՝ Շ. Գիլը նոր «Պավսանիաս» է կոչում նրան, այն հույն պատմիչի անունով, որի գործերում կան դասական արվեստի հրաշակերտների նկարագրությունններ:

Ա. Ֆեթվաճյանի ստեղծագործությունների այդ պատկերահանդեսի մասին մեծ համակրանքով, ջերմությամբ, հարգանքով հոդվածներ են հրատարակում հայ մշակույթի նշանավոր երախտավոր, գրող և խմբագիր Արշակ Չոպանյանը և բազմավաստակ բանասեր Կարապետ Բասմաջյանը: Ուշագրավ է հատկապես Ա. Չոպանյանի կարծիքը: Նա գրում է. «Այսօր ան կազմած ունի արդեն հսկա ալպոմ մը, ուր կդիզվին Արևելյան Հայաստանի վանքերուն, եկեղեցիներուն, դղյակներուն, խաչքարերուն ամենեն աղվոր ճակատազարդերը, պատուհանի քանդակները, ձեղնադրվագները, սյունի խոյակները և դեռ հարյուր տեսակ վիմեղեն կենսախայտ, գեղաճաճանչ պաճուճանքներ, որով մեր հայրերուն քմայքը ճոխացուցեր է կյանքի և մահվան հուշարձանները, աղոթքի և սիրո սրբավայրերը. Ֆեթվաճյանի փորձ մատիտը խորիմաց արվեստագետի թափանցող ճշտությամբ, զմայլացին փայփայումով և հարազատ ու գիտակից ազգասերի կաթոգին խանդավառությամբ, այդ բոլոր հայեցի գեղեցկությունները հաջողեր է թուղթին վրա սևեռել. կենդանի, թրթռուն, ավելի փափուկ և խորունկ արտահայտված, քան լավագույն լուսանկարին մեջ: Եվ այդ բոլոր գծագրությանց այլազան, զարմանազան ու սրբազան հավաքույթը՝ կոթող մըն է, ցեղին օժտված ու երկյուղած մեկ զավակին կողմե կանգնված ի պատիվ հայ հանճարին»[34]:

Ավելի ուշ, մեկ այլ առիթով, Ա. Չոպանյանը գրել է. «Թորամանյանին, Կոմիտաս վարդապետին և Գարեգին վարդապետ Հովսեփյանին հետ, Ֆեթվաճյան եղած է ուրեմն առաջիններեն մին, որ Հայոց հին արվեստը մասնավոր խնամքով ուսումնասիրելու և զայն վերակենդանացնելու գովելի գաղափարն ունեցած են:

Ինչպես Կոմիտաս վարդապետը, որ բուն հայ երաժշտությունը գտնելե և ուսումնասիրելե ետք, ճանչցուց զայն եվրոպացվոց, Ֆեթվաճյան ալ փայլուն ջանքեր ըրավ հայ ճարտարապետությունն ու քանդակագործությունը Արևմուտքի գեղասերներուն ծանոթացնելու»[35]: Այս հոդվածում մեծանուն գրողը հայ հասարակությանը հորդորում, կոչ էր անում օգնելու նկարչին հրատարակել իր փաստանկարների մեծարժեք հավաքածուն:

---

[33] Տե՛ս «Արշակ Ֆեթվաճյան», Արշակ Ֆեթվաճյանի հոբելենական կեդրոնական հանձնախումբ, Նյու Յորք (1923):

[34] Տե՛ս «Արշակ Ֆեթվաճյան», Արշակ Ֆեթվաճյանի հոբելենական կեդրոնական հանձնախումբ...:

[35] Տե՛ս Ա. Չոպանյան, Արշակ Ֆեթվաճյան և իր գործը, «Ապագա» լրագիր (Փարիզ), 1924, հուլիսի 26, էջ 1-2:

1921 թ. Լոնդոնում գտնվելու ժամանակ Ա. Ֆեթվաճյանը հռչակավոր Վիկտորիա և Ալ-
բերտ թանգարանի տնօրինության կողմից առաջարկ է ստանում կազմակերպելու իր հայ-
րենագիտական նկարների ցուցահանդեսը[36], որը բացվում է նույն տարվա նոյեմբերի
սկզբին և տևում երկուս ու կես ամիս[37]: «Մորնինգ փոստը», «Գլազգո հերալդը», «Վեստ-
մինսթր գազեթը» և այլ անգլիական թերթեր ու հանդեսներ ըստ արժանվույն են գնահա-
տում հայ արվեստի ցուցահանդեսը և իրենց հիացումը հայտնում Ա. Ֆեթվաճյանի գործի
վերաբերյալ[38]: Միաժամանակ նա հրավիրվում է ներկայացնելու իր աշխատանքները
Բրիտանական ճարտարապետների արքայական ակադեմիայի ինստիտուտում: Ա. Ֆեթ-
վաճյանի ցուցահանդեսն այստեղ կազմակերպվում է 1922 թ. ապրիլի 19-29-ին: Նկարիչ-
թանգարանի առաջարկվում է հոդված գրել հայ գեղարվեստի վերաբերյալ:

Ուրարտուից մինչև 14-րդ դարը Հայաստանի ճարտարապետության զարգացման պատմությունն ընդգրկող այդ ուսումնասիրությունը հրատարակվում է նույն հաստատության հանդեսի 1922 թ. համարներից մեկում[39]: Չնայած այս բոլորին Անգլիայում իր նկարները տպագրելու վերաբերյալ նկարչի ակնկալությունները ու ծրագրերը, դժբախտաբար, չեն իրականանում: Քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունը Հայաստանում փոխում է և մեծ նկարչի կյանքի ընթացքը:

1922 թ. օգոստոսին Ա. Ֆեթվաճյանը մեկնում է ԱՄՆ՝ հույս ունենալով այնտեղ որևէ մեկենաս գտնել իր նկարները տպագրելու համար: Բայց այստեղ ևս նրան սպասում է դառն հիասթափությունը: Սակայն, անգամ այդ ժամանակ, արվեստագետը չի վհատվում:

Նյու Յորքում նյութական անձուկ վիճակի մեջ հայտնված Ա. Ֆեթվաճյանի համար ուրոշ իմաստով բախտորոշ է դառնում հանդիպումը Հայաստանի Հանրապետության ԱՄՆ-ի չորս նախկին դեսպաններից մեկի՝ Մանուել Տեր-Մանուելյանի հետ: Զարգացած և խորաթափանց նախկին դիվանագետը և հեռատես գործարարն իսկույնևեթ կարողանում է գնահատել բացառիկ արվեստագետին: Միանգամից, առանց ժամանակ կորցնելու, նա որոշում է իր հովանավորության տակ վերցնել Ա. Ֆեթվաճյանին և ապաստան տալ սեփական հարկի ներքո: Այսպիսով վաստակավոր նկարիչը հայտնվում է Բոստոնում և դառնում Մանուելյանների ընտանիքի լիիրավ անդամը:

Մանուել և Արմենուհի Տեր-Մանուելյանների հյուրընկալ օջախում հաստատված Ա. Ֆեթվաճյանն այդպիսով ձեռք է բերում մի տաքուկ ընտանեկան մթնոլորտ, որից երկար տարիներ զրկված էր աստանդական կյանքի ընթացքում:

Մանուելյանների օջախում հաճախակի հյուրեր էին տարագիր ազգային գործիչները, և այդտեղ տիրող հայրենասիրական մթնոլորտում էին մեծանում Մանուելյանների երեք զավակները՝ Վիգենը, Հայկը և Լուսինը: Նրանց համար Ա. Ֆեթվաճյանը դառնում է թե՛

---

[36] Տե՛ս Armenian Architecture from the 6th to the 13th century. Catalogue of an exhibition of drawings of architectural details and ornament by A. Fetvajian. Prefatory note by Cecil H. Smith, Introduction by W. R. Lethaby, Victoria and Albert Museum, Department of Engraving, Illustration & Design, 1921:

[37] Տե՛ս Ֆեթվաճյան ի Լոնդոն. «Թեոդիկ. Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1923, էջ 298: «Արշակ Ֆեթվաճյան», Արշակ Ֆեթվաճյանի հոբելենական կեդրոնական հանձնախումբ...:

[38] Տե՛ս Սիրիլ Գ. Ե. Բրնթ. Արշակ Ֆեթվաճյանի արվեստը, «Հայաստանի կոչնակ», 1923, թիվ 1, էջ 14-15:

[39] Տե՛ս Մ. Սևակ. Նկարիչ Ա. Ֆեթվաճյան..., էջ 13, A. Fetvajian, An Outline History of Armenian. Architecture. "Journal of the Royal Institute of British Architects", November 1921-October 1922, vol. XXIX, London, 1922, p. 585-594.




ԱՆԻԻ ԿԱԹՈՂԻԿԵՆ



ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ



ՍԱՍՈՒՆՑԻ ԿԻՆԸ



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՑԻ ՀԱՅՈՒՀԻՆ

հոբելյար և թե՛ յուրահատուկ ուսուցիչ և օրինակելի կերպար, որն իր գեղարվեստական վաստակով ու նկարագրով մեծ չափով ուղղորդում է նրանց ապագա գեղագիտական կողմնորոշումները: Ա. Ֆեթվաճյանի դասերից հատկապես օգտվում է զավակներից երեցը՝ Վիգենը, որը հետագայում դառնում է Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանի հիմնադրման նախաձեռնողն ու եռանդուն կազմակերպիչը և ազգային-հայրենասիրական զանազան ձեռնարկների հեղինակը:

Կոլումբիայի համալսարանի ուսուցչապետ Ա. Դ. Ֆ. Հեմլինի հետ ծանոթանալուց հետո Ա. Ֆեթվաճյանը կարողանում է 1922 թ. հոկտեմբերին իր նկարահանդեսը կազմակերպել նույն հիմնարկության Էյվերի գրադարանում: Դրան հետևում են Ա. Ֆեթվաճյանի ցուցահանդեսները Չիկագոյի, Փրինսթոնի համալսարաններում, ինչպես նաև ամերիկյան հնագիտական ինստիտուտի տարեկան համագումարի առթիվ[40]:

ԱՄՆ-ում Ա. Ֆեթվաճյանի ժամանելուն պես նկարչի աշխատանքները շքեղ տպագրելու համար անհրաժեշտ գումարներ հավաքելու նպատակով և նրա գործունեության քառասնամյակը տոնելու համար հայկական շրջանակների նախաձեռնությամբ 1923 թ. ստեղծվում է մի հանձնախումբ[41]:

Սակայն մի քանի տարվա գոյությունից հետո այս ձեռնարկի կազմակերպիչները հուսալքվում են, և հանձնախումբը դադարեցնում է իր գործունեությունը՝ դեմ առնելով հայկական քաղքենի շրջանակների անտարբերությանն ու սառը վերաբերմունքին: Հաստատվելով Բոստոնում՝ Ա. Ֆեթվաճյանն այստեղ է անցկացնում իր կյանքի վերջին քսանհինգ տարիները՝ առանձնացած և նվիրված իր ուսումնասիրություններին, նկարչական աշխատանքներին: Այդ շրջանի նրա հետազոտություններից հիշարժան են հայ մանրանկարչությանը և Անահիտ դիցուհու արձանագլխին վերաբերող հոդվածները:

ԱՄՆ-ում ապրած տարիներին Ա. Ֆեթվաճյանը հայկական ոճով քանդակում է Նյու Յորքի 27-րդ փողոցի եկեղեցու սեղանն ու խորանը, պատրաստում Հեյվրհիլի եկեղեցու սեղանի հատակագիծը, մասնակցում Անգլիայում Գալուստ Կյուլպենկյանի ծնողների հիշատակին նվիրված տաճարի ստեղծմանը: Նա երկար ժամանակ է նվիրում Նյու Փրիփորթի թատրոնի ներքին զարդարանքների կատարմանը: Անվանի նկարիչը փոքրուն մասնակցություն է ունենում նաև Բոստոնի Սիմֆոնի Հոլլի ցուցահանդեսի (որտեղ ներկայացված էր նաև այլ ազգերի արվեստն ու մշակույթը) հայկական բաժնի ստեղծմանը: Տնից տուն շրջելով, պատմական, ազգային, գեղարվեստական նշանակություն ներկայացնող առարկաներ է հավաքում և կազմակերպում դրանց ցուցադրությունը[42]:

1941 թ. Բոստոնում բազմերախտ նկարիչը հրատարակում է «Իմ մտքերը» գիրքը, որտեղ ամփոփված են նրա տարբեր տարիների ասույթները: Դրանք անցին վկայություններ են արվեստագետի մտահոգությունների, աշխարհայացքի, գեղագիտական ճաշակի և կենսափորձի մասին: Այդ գրքում արտացոլվել են նաև Ա. Ֆեթվաճյանի դառնությունները ու հիասթափությունները: Նրա տխուր հոգեվիճակի մասին գաղափար են տալիս և գրած

[40] Տե՛ս Թղթակից. Հայ տաղանդը և գեղարվեստը Չիքագոյի համալսարանին մեջ. «Հայաստանի կոչնակ», 1923, թիվ 39, էջ 1241-1242, «Արշակ Ֆեթվաճյան», Արշակ Ֆեթվաճյանի հոբելենական կեդրոնական հանձնախումբ...:

[41] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան, «Թեոդիկ. Ամենուն տարեցույցը», Վիեննա, 1925, էջ 197:

[42] Տե՛ս Ա. Տեր-Մանուելյան, Նկարիչ Արշակ Ֆեթվաճյան ..., էջ 53-54, 63-64, 80-83 :

բանաստեղծությունները, որոնք տպվել են ամերիկահայ մամուլում: Թե՛ այս ամենը և թե՛ ժամանակակիցների վկայությունները ցույց են տալիս, որ հայրենասեր նկարչի հուսահատական ապրումների պատճառն իր նկարների անստույգ ճակատագիրն էր և Հայաստանից դուրս ապրելը:

Վրձնի մեծ վարպետի հայրենասիրության վառ արտահայտությունն է այն հանգամանքը, որ նա բազմիցս մերժել է օտար թանգարանային հաստատությունների առաջարկները՝ բարձր գնով վաճառելու հնագիտական եզակի պատկերների իր հավաքածուն, որովհետև նա համոզված է եղել, որ տարիների իր աշխատանքը պատկանում է միայն ու միայն իր ժողովրդին[43]:

Նկարչի հայրենասիրությունը, սկզբունքայնությունը, անկոտրում կամքն ըստ ամենայնի գնահատելու համար անհրաժեշտ է հիշել, որ ԱՄՆ-ում ապրելու բոլոր տարիներին նա գտնվել է նյութական անձուկ պայմաններում: Կյանքի վերջին շրջանում, ի մի բերելով սեփական գործունեության արդյունքները և հետադարձ ակնարկ նետելով անցած օրերին, Ա. Ֆեթվաճյանը գրում էր, որ տասնամյակներ շարունակ հայրենիքից հեռու լինելը, իր իսկ խոսքերով ասած՝ «... անհեռաստան երկիրներում... օտար ժողովուրդների մեջ մենակ, վարձու սենյակներում, հյուրանոցներում, սրտիս վրա քար դրած ապրելու հարկադրվածությունն» և մյուս ձախորդությունները չեն պակասեցրել իր հոգում արվեստի նկատմամբ խանդավառությունը և հավատը գալիք լավ օրերի նկատմամբ:

1947 թ. Հայաստանի կառավարությունը, ընդառաջ գնալով բազմավաստակ արվեստագետի հայրենաքաղձ ցանկությանը և բարձր գնահատելով տարիների նրա երախտիքը, ի թիվս այլ մտավորականների, տունդարձի հրավեր է ուղարկում նաև Ա. Ֆեթվաճյանին:

Կարոտով և անհամբերությամբ նկարիչը պատրաստվում էր հայրենիք մեկնել, եռանդով զբաղվում էր Հայաստան ուղարկվող բոլոր նկարների կտակի ձևակերպման աշխատանքներով, բայց ճակատագրի անողոք տնօրինությամբ 1947 թ. հոկտեմբերի 7-ին Մեդֆորդում (Մասաչուսեթսի նահանգ) մեծ արվեստագետը կնքում է իր մահկանացուն[44]:

Հայաստան է տեղափոխվում Ա. Ֆեթվաճյանի աճյունը և հողին հանձնվում Երևանում, իսկ նրա ստեղծագործությունները, իր իսկ կտակի համաձայն, փոխադրվում են Հայաստանի պետական պատկերասրահ, որտեղ անմիջապես բացվում է դրանց ցուցահանդեսը: Անվանի նկարչի պատկերահանդեսները Երևանում կազմակերպվել են նաև 1956, 1964 թվականներին:

Հայ արվեստի անխոնջ նվիրյալի՝ Ա. Ֆեթվաճյանի ժառանգությունը ներկայացնող մի քանի պատկերներ կարելի է տեսնել Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնական ցուցադրության կազմում, որոշ այլ նկարները Բոստոնում՝ «Հայրենիք» լրագրի խմբագրատանը, և ԱՄՆ-ի Հայկական գրադարանի թանգարանում, ինչպես նաև Հայաստանի, ԱՄՆ-ի ու այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

---

[43] Տե՛ս Ա. Ֆեթվաճյան, Իմ նվիրաբերությունները..., էջ 4:

[44] Տե՛ս Նկարիչ-բանասեր Արշակ Ֆեթվաճյանի հուղարկավորությունը, «Լրաբեր», 1947, հոկտեմբերի 16, էջ 1:

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# ՊՐՈՖ. ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԲՐՈՒԿ

(1934-2003)



2003 թ. նոյեմբերի 22-ին Նոր Լովենում, 69 տարեկան հասակում, անսպասելիորեն իր մահկանացուն կնքեց մեր ժամանակների նշանավոր արևելագետներից մեկը՝ հայագետ, վրացագետ և Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների հմուտ մեկնաբան պրոֆ. Միշել վան Էսբրուկը: Նա բազմիցս եղել է Հայաստանում, խորամուխ եղել Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր գանձերի հետազոտության խնդիրներում, մեծ բարեկամություն հաստատել հայաստանյան հայագետների մի ողջ սերնդի հետ:

Միշել վան Էսբրուկը ծնվել է 1934 թ. հունիսի 17-ին Բելգիայի Մալին քաղաքում, մի ընտանիքում, որի նախնիները ունեն թե՛ ֆլեմական և թե՛ վալոնյան ծագում: Տոհմանունը ֆլեմական է, սակայն ընտանիքում մայրենի լեզուն ֆրանսերենն է եղել: Գիտնականի հայրը՝ պրոֆ. Գիյոմ վան Էսբրուկը († 1974 թ.), Կոլումբիայի համալսարանում 1921-1923 թթ. մասնագիտացել է երկրաբանության բնագավառում, իսկ մայրը՝ Իդա Բրուսելմանը († 1965 թ.), 1914-1918 թթ. դպրոց է հաճախել Լոնդոնում: Այդ է պատճառը, որ նրանց ընտանիքում խոսակցական լեզուներից էր նաև անգլերենը:

Պատանի Միշելը 1951 թ. Բրյուսելի Սեն-Միշել քոլեջում սկսում է ուսումնասիրել հունարեն և լատիներեն: Այնուհետև մեկ տարի սովորում է Բրյուսելի Սեն-Լուիս իրավաբանական ֆակուլտետում, որից հետո, 1953-1955 թթ., մտնում է Հիսուսյան վանական կարգի շարքերը: 1959 թ. նա պետական քննություն է հանձնում և դասական բանասիրության մասնագետի վկայական ստանում Բելգիայում: Այնուհետև երեք տարի Լիբանանի Սեն-Ալբեր քահանայապետական ինստիտուտում պատրաստում և պաշտպանում է փիլիսոփայության գիտական աստիճանի (sj) ատենախոսություն «Պրոհայրեսիսը Արիստոտելի և հույն ճարտասանների մոտ» թեմայով: Այնուհետև, մեկ տարվա զինվորական ծառայությունից հետո, դասավանդում է նույն ուսումնական հաստատությունում:

1962 թ. Միշել վան Էսբրուկը հրավիրվում է պաշտոնավարելու Բրյուսելի Բոլանդիստների վանական միության գրադարանում, ուր հնարավորություն է ստանում զբաղվելու եկեղեցագիտական խնդիրներով: Այդ ժամանակ, իբրև ազատ ունկնդիր, նա թույլտվություն է ստանում Լովենի համալսարանում հետևել պրոֆ. Ժ. Գարրիտի հայկական և վրացական բանասիրության դասախոսություններին: Մեծահռչակ պրոֆեսորը դեռ նոր էր հրապարակել «Պաղեստինա-վրացական Տոնացույցը» Բոլանդիստների շարքում: Մեկ տարի անց, Միշել վան Էսբրուկը, գիտակցելով վաղ վարքագրական մատենագրության ուսումնասիրության ողջ բարդությունը, հասկանում է, որ երկու արևելաքրիստոնեական լեզուների իմացությունը դեռևս բավարար չէ այդ աշխատանքներին լծվելու համար: Նրան թույլատրվում

է Բեյրութի Սեն-Ժոզեֆ համալսարանում ուսանել արաբերեն և ասորերեն, սակայն 1964 թ. նա ետ է կանչվում Լովեն՝ շարունակելու Աստվածաբանական կրթությունը:

1966 թ. Միշել վան Էսբրուկը ձեռնամուխ եղավ Լովենի համալսարանում Արևելյան բանասիրության և պատմության գծով դոկտորական ատենախոսության շարադրմանը: 1970 թ. նա ավարտում է աստվածաբանական կրթությունը և ձեռնադրվում քահանա: 1972 թ. Աթոսից Փարիզ է վերադառնում հայր Ֆրանսուա Հալկինը՝ իր հետ բերելով 11 վրացերեն ձեռագրերի լուսապատճենները: Դրանք լուսանկարվել էին Փարիզի Ձեռագրերի ինստիտուտի աշխատակից Մարսել Ռիշարի նախաձեռնությամբ: Այդ ձեռագրերն էլ որոշում են տաղանդավոր երիտասարդի հետագա ուղին: Միշել վան Էսբրուկը լծվում է հիշատակված վրացերեն ձեռագրերի վերծանման գործին և պարզում, որ դրանք պատկանում են Մրավալթավի (Ճառընտիր) ժողովածուների տիպին: Առաջնահերթ խնդիր էր այդ բնագրերի համեմատությունը այլ ձեռագրական ընդօրինակությունների հետ: Պրոֆ. Ժ. Գարիտի հանձնարարությամբ, Միշել վան Էսբրուկը 15 օր աշխատում է Թբիլիսիում: 1972 թ. արդեն պաշտպանության էր պատրաստ նրա դոկտորական աշխատանքը, սակայն Ժ. Գարիտի հիվանդության պատճառով հետաձգվում է: Միշել վան Էսբրուկը կարողանում է պաշտպանել միայն 1975 թ., իր հեղինակավոր ղեկավարի ներկայությամբ: Այդ թվականին էլ նա դիմում է Բելգիայի կառավարությանը, որպեսզի իրեն ընդգրկեն Սովետա-բելգիական համատեղ գիտական ծրագրերի մեջ:

Այդ թվականից ի վեր վարքագրության հետազոտության բնագավառում նա մասնակիցն է դառնում բազմաթիվ գիտական ծրագրերի, որոնք իրականացվում էին Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում և Երևանում: Միշել վան Էսբրուկը օգտագործեց այս բարեպատեհ առիթը՝ տիրապետելու համար ռուսերենին, վրացերենին և հայերենին: 1982 թ. արդեն ճանաչում ունեցող գիտնականը հրավիրվում է Հռոմի քահանայապետական Արևելագիտության ինստիտուտ՝ դասավանդելու հայերեն և վրացերեն:

1985 թ. նա մեկ տարով փոխարինում է պրոֆ. Ժան-Պիեռ Մահեին Փարիզի Կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնում: 1986 թ. Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյան համալսարանի խնդրանքով, իր թեկնածությունն է ներկայացնում Արևելաքրիստոնեական բանասիրության ամբիոնի վարիչի թափուր տեղում ընտրվելու համար: Միաժամանակ, իբրև հաջորդը մեծահռչակ պրոֆ. Ցուլիուս Ասֆալգի, փոխարինում է նրան այդ ամբիոնում՝ դասավանդելով Քրիստոնյա Արևելքի վեց լեզուները՝ հայերեն, վրացերեն, արաբերեն, ասորերեն, ղպտերեն և գեեզ (եթովպերեն): 1987 թ. Միշել վան Էսբրուկն ընտրվում է այդ ամբիոնի վարիչ և ղեկավարում այն մինչև 1999 թ. հուլիսի 31-ը:

Դասախոսական աշխատանքին զուգահեռ նա մեծ ջանասիրությամբ նվիրվում է հիշատակված արևելյան լեզուներով վաղ քրիստոնեական բնագրերի հայտնաբերման և հրապարակման աշխատանքին՝ միաժամանակ ձեռնամուխ լինելով այդ հազվագյուտ փշրանքների ստեղծման պատմական միջավայրը ներկայացնելու և բնագրագիտական նուրբ հետազոտություններ գրելու գործին:

Հայագիտության ոսկե ֆոնդի մասն են կազմում բարեհիշատակ գիտնականի հետազոտությունները Սողոմոն Մաքենացու և Մշո Ճառընտրի, Ագաթանգեղոսի Պատմության, Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի պաշտամունքի, Եզնիկ Կողբացու Եղծ Աղանդոցի, հայկա-

կան ձեռագրական կրկնագրերի վերաբերյալ: Վերջին տարիներին նա առանձնապես մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Հայոց Եկեղեցու վաղ շրջանի պատմության, ծեսի և իրավունքի խնդիրների նկատմամբ: Այդ նպատակով կատարված պրպտումների արդյունքում Միշել վան Էսբրուկը նոր մեկնաբանություններ առաջարկեց Ե-Ը դարերի հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների հետազոտության և վաղ հայկական մատենագրության մի շարք երկերի ուսումնասիրության և թվագրության բնագավառում: Նա իր ինքնատիպ զեկուցումներով և նորահայտ նյութերով հաճախ էր հանդես գալիս հայագիտական գիտաժողովներում:

Միշել վան Էսբրուկը անդամն էր Գերմանիայի Գիտությունների Ակադեմիայի Հայրաբանության հանձնաժողովի, ընտրվել էր Վրաստանի Գիտությունների Ակադեմիայի արտասահմանյան անդամ: 1998 թ. դեկտեմբերին Թբիլիսիի համալսարանի վրացագիտության ամբիոնը վրացագիտության բնագավառում ունեցած ձեռքբերումների համար նրան արժանացրեց Մարի-Ֆելիսիտե Բրոսեի անվան մրցանակի:

Հայագետները լավ են հիշում նրա գործուն մասնակցությունը և վառ զեկուցումները վերջին 30 տարում Երևանում տեղի ունեցած միջնադարագիտական գիտաժողովներին: Իբրև գիտնական, նա խորապես գիտակցում էր Քրիստոնյա Արևելքի ժողովուրդների ինքնուրույն մշակույթների դերը միջնադարում: Միշել վան Էսբրուկի համար հարազատ էին այդ ժողովուրդների կենցաղը և երազանքները: Հիշում եմ նրա բուռն վրդովմունքը Օպերայի հրապարակում, 1988 թ. Սումգայիթյան աղետի օրերին: Այդ գաղափարներով էին լեցուն 2003 թ. սեպտեմբերին նրա ընթերցած երկու զեկուցումները Երևանում և Ծաղկաձորում տեղի ունեցած գիտական նստաշրջաններում, որոնք նվիրված էին Կովկասյան եկեղեցիների ծագմանը և հայ մատենագիրներ Սահակ Ձորափորեցուն ու Սահակ Մռութին:

Նրան խորթ չէին մարդկային պարզ ուրախությունները: Հիշում եմ, 1986 թ. հայագիտական կոնֆերանսի ժամանակ նա Գյումրի մտնելիս հայոց քոչարիի հնչյունների տակ պարով դիմավորեց գիտաժողովին ընդառաջ եկող աղ ու հաց բերող պատանիներին:

Մահից մի քանի ամիս առաջ ճանաչված հեղինակն ինձ ուղարկեց իր հրատարակած երկերի մատենագիտությունը, որի հրապարակումը կարող է նոր խթան դառնալ հայագիտական պրպտումների համար: Այդ իսկ պատճառով, վերանայելուց և լրացնելուց հետո, այն հանձնում ենք հայագետների ուշադրությանը:

Միշել վան Էսբրուկի պայծառ հիշատակը անմար կմնա նրան հիշողների սրտերում, իսկ թողած գիտական ժառանգությունը ուղենիշ կդառնա նոր գիտական նվաճումների համար:

*ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ*

*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԲՐՈՒԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ*

## Հապավումներ

AB = Analecta Bollandiana, Brussel.

AnHC = Annuarium Historiae Conciliorum, Freiburg.

Augustinianum = Augustinianum. Periodicum quadrimestre Instituti Patristici "Augustinianum", Rom.

BK = Bedi Kartlisa, Paris.

CNRS = Centre National de la Recherche Scietifique.

CSCO = Corpus Scriptorum Christianorum Orientalium, Rom &.

JÖB = Jahrbuch für Österreichische Byzantinistik, Wien.

MUSJ = Mélanges de l'université Saint-Joseph, Beirouth.

ÖAkdW = Österreichische Akademie der Wissenschaften, Wien.

*OC* = Oriens Christianus.

OCP = Orientalia Christiana Periodica, Rom.

OLP = Orientalia Lovaniensia Periodica, Leuven.

PdO = Parole de l'Orient, Kaslik (Liban).

PO = Patrologia Orientalis, Paris.

REArm = Revue des Etudes Armenien, Paris.

REGC = Revue des études géorgiennes et caucasienes, Paris.

*SC* = Sources Chrétiennes, Paris.

XB = Христианский Восток, Москва – Санкт - Петербург.

## Հոդվածներ


1. Chronique arménienne, *AB* 80, 1962, 441-457.

2-3. Saint Épimaque de Péluse, *AB* 84, 1966, 399-342 and 85, 1967, 441-457.

4. Un recueil prémétaphrastique arabe du XIe siècle, in *AB* 85, 1968, 143-164.

5. Une liste d'apôtres dans le codex géorgien 42 d'Iviron, *AB* 86, 1968, 139-150.

6. La lettre de l'empereur Justinien sur l'Annonciation et la Noël, in *AB* 86, 1968, 352-371/87, 1969, 442- 444.

7. Salomon de Mak'enoc' vardapet du VIIIe siècle, in *Armeniaca*, ed.P.M.Djanaschian, Venise 1969, 33-44.

8. Nathanaël dans une homélie sur les archanges, in *AB* 89, 1971, 155-176.

9. Témoignages littéraires sur les sépultures de S.Grégoire l'Illuminateur, in *AB* 89, 1971, 387-418.

10. Un corpus de l'hagiographie géorgienne en géorgien, AB 89, 1971, 419-420

11. Un nouveau témoin du livre d'Agathange, in *REArm*, 8, 1971, 13-171.


---

* Վրացագիտական հոդվածների վերնագրերը ճշտելիս մեզ օգնել է պրոֆ. Էլգուջա Խինթիբիձեն:

12. Le traité sur la Pâque de Méliton en géorgien, in *Le Muséon*, 84, 1971, 373-394.

13. Hébreux 11.33-38 dans l'ancienne version géorgienne, in *Biblica*, 53, 1972, 43-64.

14. Nouveaux fragments de Méliton conservés en géorgien, in *AB* 90.1972, 63-99.

15. Nouveaux apocryphes de la Dormition conservés en géorgien, in *AB* 90.1972, 363-369.

16. Apocryphes géorgiens de la Dormition, in *AB*, 91, 1973, 55-75.

17. Le roi Sanatrouk et l'apôtre Thaddée, in *REArm*, 9, 1972, 241-283.

18. Généalogie de la Vierge en géorgien, in *AB* 91,1973,347-356.

19. Une homélie sur l'Église attribuée a Jean de Jérusalem, in *Le Muséon*, 86 1974,283-304.

20. Les oeuvres de Méliton de Sardes en géorgien, in *BK*, 32, 1973, 48-63.

21. L'assomption de la Vierge dans un transitus pseudo-basilien, in *AB* 92,1974, 125-163.

22. L'homélie géorgienne d Hésychus de Jérusalem sur la résurrection des morts, in *Le Muséon*, 84, 1974, 125-163.

23. Le passage d'Eznik (p.24) dans le De Universo d'Hippolyte, in *Le Muséon*, 84,1974, 441-444.

24. Un nouveau dictionnaire de la langue géorgienne ancienne, in *BK*, 32, 1974, 86-108.

25. L'Éthiopie à l'époque de Justinien : S.Arethas de Neğran et S.Athanase de Clysma, in *IV Congresso internazionale di Studi Etiopici. Acc. dei Lincei* vol.371, Roma, 1974, quad.191, 117-139.

26. Les formes géorgiennes des Acta Iohannis, in *AB*, 93, 1975, 5-19.

27. Les apophtegmes dans les versions orientales, in *AB*, 93, 1975, 381-389.

28. Les Acta Iohannis traduits par Euthyme l'Hagiorite, in *BK*, 33, 1975, 73-109.

29. Fragments méconnus du Lectionnaire géorgien, in *Le Muséon*, 88, 1975, 361-363.

30. Fragments sahidiques du panégyrique de Grégoire le Thaumaturge par Grégoire de Nysse, in *OLP*, 5/7,1975/6,555-568.

31. A propos de l'évangile apocryphe arabe attribué à S Jean, in *MUSJ*, 49, 1975/6 597-603

32. Saint Philotheos d'Antioche, in *AB* 94, 1976, 107-135.

33. La passion arménienne de S.Gordius de Césarée, in *AB* 94, 1976, 357-386.

34. Une forme inédite de la lettre du roi Ptolémée pour la trad. des LXX, in *Biblica* 57, 1976, 542-549.

35. Archéologie d'une homélie sur la Pâque attribuée à Chrysostome ou Épiphane de Chypre, in *Armenian and Biblical Studies*, ed. M.Stone, Jerusalem, 1976, 165-181. / 96.

36. Une chronique de Maurice à Héraclius dans un récit des sièges de Constantinople, in *BK* 34, 1976, 74-

37. Un témoin indirect de l'Histoire Euthymiaque dans une lecture arabe pour l'Assomption, in *PdO*, 6 / 7, 1975 / 6, 479-491.

38. Le ms. Érévan 993. Inventaire des pièces, in *REArm*, 12, 1977, 123-167.

39. L'histoire de Lydda dans deux textes géorgiens, in *BK*, 36, 1977, 109-131.

40. Abraham le Confesseur traducteur des Passions des martyrs persans, in *AB*, 95, 1977, 168-179.

41. Le résumé syriaque de l'Agathange, in *AB*, 95, 1977, 291-358.

42. Deux feuillets du sinaiticus 492 retrouvés à Leningrad, in *AB*, 96, 1978, 51-54.

43. Un feuillet oublié du codex arabe or.4226 à Strasbourg, in *AB*, 96, 1977, 383-384.

44. Deux homélies de Sévérien de Gabala conservées en géorgien, in *BK* 36, 1978, 71-91.

45. L'homélie sur les apôtres de Sévérien de Gabala en version géorgienne, in *BK*, 37, 1979, 86-110.

46. L'opuscule sur la Croix d'Alexandre de Chypre et sa version géorgienne. in *BK* 37. 1979. 102-132.

47. L'hymnaire de Michel Modrekili et son sanctoral. in *BK*. 38. 1980. 113-130.

48. La primauté de Pierre (Mth 16,16-19) et son contexte judaïque. in *Revue Théologique de Louvain*. 11. 1980. 310-324.

49. Un mravalthavi dans le palimpseste A-737. in Mravalthavi 7. Tbilisi 1980. 18-21.

50. Le ms. Géorg. Sin.34 et les publications de liturgie palestinienne. in *OCP*. 49. 1980. 125-141.

51. Une homélie archaïque sur la Transfiguration. in *OCP*. 49. 1980. 418-425.

52. *Pélagie la Pénitente. Métamorphoses d'une légende*. ed.P.Petitmengin. t.1(Paris 1980). 135-9.278-88 et 317-349

53. Le saint comme symbole. in *The Byzantine Saint*. ed.S.Hackel. Chester 1981. 128-140.

54 Le martirika du Catholicos Antoine Ier, in *AB*. 98. 1980. 411-421.

55. Les textes littéraires sur l'Assomption avant le Xe siècle. in F.Bovon, *Les Actes Apocryphes des apôtres. Christianisme dans le monde païen*. Genève 1981, 51-77.

56. Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի հայերեն կրկնագիրը (նոր շարք. թ.14), Բանբեր Մատենադարանի, հմր 13, Երևան, 1980, էջ 272-274.

57. Les mss de Jean Zosime sin.34 et Tsagareli 81, in *BK* 39, 1981, 63-75.

58. La diffusion orientale de la légende des saints Côme et Damien, dans *Hagiographie, Cultures et Sociétés IVe-XIIe siècles*, ed. P.Riché et E.Patlagean, Paris 1981, 61-77.

59. Amphiloque d'Iconium et Eunome : l'homélie CPG 3238, in *Augustinianum*, 21, 1981, 517-539.

60. Le résumé syriaque de l'Agathange et sa portée pour l'histoire du développement de la légende, in Հանդես Ամսօրեայ, 90, Վիեննա, 1976, col.493-510.

61. Col.2,11 : dans la circoncision du Christ, in *Gnosticisme et Monde hellénistique*, ed. J.Ries, Louvain-la- Neuve 1982, 229-235.

62. La légende romaine des SS Côme et Damien: 1. le texte grec, in *OCP*, 47 1981, 389-425.

63. La légende romaine des SS Côme et Damien: 2. le panégyrique géorgien, in *OCP*, 48, 1982, 29-64.

64. Legends about Constantine in Armenian, in *Classical Armenian Culture*, ed.T.Samuelian, University of Pennsylvania 1979, 79-101.

65. Bild und Begriff in der Transitus-Literatur: Der Palmbaum und der Tempel, in *Typus, Symbol Allegorie bei den östlichen Vätern und ihre Parallelen im Mittelalter*, ed.M.Schmidt, Eichstätt 1982, 333-351.

66. La notion d'accomplissement de l'écriture in *Lectures bibliques. Publications de l'Institutum judaicum*, Bruxelles 1981, 333-351.

67. Saint Épimaque de Péluse III, Les fragments coptes, in *AB* 100, 1982, 125-145.

68. Hésychius de Jérusalem. Sur les Coryphées en version slavonne, in *OCP*, 48, 1982, 371-405.

69. L'homélie d'Eustathe d'Antioche en géorgien, in *OC*, 66,1982, 189-214.

70. Remembrement d'un manuscrit arabe de 950, dans SAMIR *Actes I*, 135-147.

71. Église géorgienne au Moyen-Age, dans *BK*, 40, 1982, 186-199.

72. The Georgian inscriptions, in M.Stone, *The Armenian Inscriptions from the Sinai*, Harvard 1982, 171-179.

73. L'empereur Jean Tzimiscès dans le calendrier de Georges l'Athonite, in *BK* 41, 1983, 67-72.

74. Gli apocrifi georgiani, dans *Augustinianum*, 23, 1983, 145-149.

75. Leningradis palimp'sesturi mravalthavi, in Mravalthavi, 6, Thilisi 1979, 81-87.

76. Une courte homélie mariale de Proclus en arménien, in Բանբեր Մատենադարանի, 1978, էջ 717-727.

77. Homélie ephrémienne sur le bon larron en grec, géorgien et arabe, dans *AB*, 101, 1983, 327-362.

78. Deux listes d'apôtres conservées en syriaque, dans *IIIe Symposium Syriacum*, ed. R.Lavenant, Rome 1983, 15-24.

79. La naissance du culte de S.Barthélémy en Arménie, in *REArm*, 17, 1983, 171-195.

80. The Rise of St Bartholomew's Cult in Armenia from the Seventh to the Thirteenth Centuries, in *Medieval Armenian Culture*, ed. T.Samuelian and M.Stone, Chico 1984, 161-178.

81. Nouveaux fragments arméniens de Denys d'Alexandrie, dans *OCP*, 50, 1984, 18-40.

82. Jean II de Jérusalem et les cultes de S.Étienne, de la Sainte-Sion et de la Croix, in *AB* 102, 1984, 99-134.

83. Ագաթանգեղոսի բնագրի պատմությունից, Պատմա-բանասիրական Հանդես, Երեւան, 105, 1984, էջ 28-34 (ֆրանս. թարգմ. Ա. Սահակյանը).

84. Le "De Sectis" attribué à Léonce de Byzance dans la version géorgienne d'Arsène Iqaltoeli, in *BK* 42, 1984,35-42.

85. Le "De Fide" attribué à Hippolyte et ses rapports avec la Didascalie de Grégoire l'Illuminateur dans l'Agathange, in *AB*, 102, 1984, 321-328.

86. Témoignages littéraires sur la Mayr Ekeghec'i ou de l'origine de Zouart'noc', dans *Terzo Sinposio internazionale di Arte Armena*, ed. G.Ieni and G.Uluhogian, Venise 1984, 615-627.

87. Rome l'ancienne et constantinople vues de l'Arménie, in *La nozione di Romano tra cittadinanza e universalité*,ed. P. Siniscalco e P.Catalano, Rome 1984, 351-355.

88. Description du répertoire de l'homéliaire de Mush, in *REArm*, 18, 1984, 237-280.

89. L'origine de Pemeniay chez Anania Shirakatsi, in *REArm*, 18, 1984, 487-489.

90. La date et l'auteur du De Sectis attribué à Léonce de Byzance, in *After Chalcedon. Studies in Theology and Church History*, ed. C.Lago, Leuven 1987, 415-424.

91. Les Actes arméniens de saint Héraclide de Chypre, dans *AB*, 103, 1985, 115-162.

92. Agathangelos, in *Reallexikon für Antike und Christentum*, suppl.1/2, Stuttgart 1985, 239-248.

93. Albanien, in *Idem*, 257-266.

94. La structure de l'homéliaire de Mush, in *International Symposium on Armenian Linguistics*, Érévan 1984, 282-

95. L'homélie de Pierre de Jérusalem et la fin de l'origénisme palestinien, in *OCP*, 51, 1985, 33-59.

96. Version géorgienne de l'homélie eusébienne CPG 5528 sur l'Ascension, in *OCP* 51, 1985, 277-303.

97. Le sens de la liberté de l'homme éclairé par la foi chrétienne, in *IIIe rencontre Islamochrétienne. Droits de l'Homme*, Tunis 1985, 171-180.

98. La légende géorgienne de l'Ascète Nisime, dans *REGC*, 1 , 1985, 117-125.

99. Les programmes géorgiens de la Dormition, in *JÖB*, 35, 1985, 251-260.

100. Une lettre de Dorothée comte de Palestine à Marcel et Mari en 452, dans *AB* 91,1983, 35-75.

101. Les deux Testaments une même vie, in *Communio*, 11, 1986, 71-90.

102. Les sentences morales des philosophes grecs dans les traditions orientales, in *L'eredità classica nelle lingue orientali*, ed. M.Pavan e U.Cozzoli, Rome 1986, 11-23.

103. L'apport des version orientales pour la compréhension de l'Asclepius dans les Philosophica d'Apulée. *ibid.*, 27-35.

104. Le codex rescriptus Tischendorf 2 à Leipzig et Cyrille de Scythopolis en version arabe, in Samir *Actes II*, Rome 1986, 81-91.

105. Le substrat hagiographique de la mission khazare de Constantin-Cyrille, dans *AB*, 104, 1986, 337-348.

106. Un palimpseste géorgien de l'homélie 38de Grégoire de Nazianze, in *Le Muséon*, 99, 1986, 309-317.

107. L'homélie de Proclus CPF 5800 dans l'ancien Tõnakan arménien, in *REArm*, 19,1985, 49-53.

108. Who is Mari, the Adressee of Ibas' Letter ? In *The Journal of Theological Studies*, 1987, 129-135.

109. Verdwenen griekse hagiographie in oosterse vertalingen teruggevonden, in *De heiligenverering in de eerste eeuwen van het christendom*, ed. A.Hilhorst, Nijmegen 1986, 99-104.

110. Un court traité pseudo-basilien de mouvance aaronite conservé en arménien, in *Le Muséon*, 100, 1987, 385-395.

111. Jalons pour l'histoire de la transmission manuscrite de l'homélie de Proclus sur la Vierge, in *Text und Kritik*, ed. J.Dummer, Berlin 1987, 149-160.

112. Le soi-disant roman de Julien l'Apostat, dans *IVe Symposium Syriacum 1984*, ed. H.J.W.Drijvers, Rome 1987, 191-202.

113. Impact de l'Écriture sur le concile de Dwin en 555, in *AnHC*, 18, 1988, 301-318.

114. L'aspect cosmologique de la philosophie d'Eunome pour la reprise de l'Hexameron basilien par Grégoire de Nysse, dans *El Contra Eunomium en la produccion literaria de Gregorio de Nisa*, ed. L.F.Mateo-Seco, Pamplona 1988, 181-216.

115. Le culte de la Vierge à Constantinople aux 6e et 7e siècles, *Revue des Études Byzantines*, 46, 1988, 181-190.

116. La Vision de Vakhtang Gorgasali et sa signification, dans *Proceedings of the first international Symposium in Kartvelian studies*, ed. E. Khintibidze, Tbilissi 1988, 181-191.

117. Les Actes apocryphes de Thomas en version arabe, dans *PdO*, 14, 1987, 11-77.

118. Le dossier hagiograhique de saint Pancrace de Taormine, in *Storia della Sicilia e tradizione agiografica nella tarda antichità*, ed. S.Pricoco, Catania 1988, 155-171.

119. On the etymology of Georgian Bzoha : The Branch and the Box-tree in *Studia Caucasologica* I, ed. F. Thordarson, Oslo 1988, 42-50.

120. Athanase déguisé en pseudo.Denys dans le Tõnakan, in *REArm*, 20 1986/7, 167-173.

121. L'apôtre Thaddée et le roi Sanatruk, in *Atti del II Simposio internazionale Armenia-Assiria*, ed. M. Nordio and B. Zekiyan, Venise 1984, 83-106.

122. Une homélie de Zacharie le Catholicos sur l'Annonciation, in Հանդէս Ամսօրեայ, 101, 1987, 487-503.

123. Le ms syriaque nouvelle série 4 de Leningrad, in *Mélanges Guillaumont*, ed. E.Lucchesi, Genève 1988, 211 -219

124. Une propagande chalcédonienne du début du VIe siècle : l'histoire des saints Nisthéréon et Katianos, in *OC*, 72,1988, 136-167.

125. Arabische christl. Literatur and Armen. Lit., in *Marienlexikon*, ed.R.Bäumer, 1 (1988) 211-14 and 237-239.

126. Das Synodikon vom Jahre 843 in georgischer Übersetzung, in *AnHC*, 19, 1987, 300-313.

127. Saint Grégoire d'Arménie et sa Didascalie, in *Le Muséon*, 102, 1989, 131-145.

128. Georgien, in *Marienlexikon*, 2, 1989, 618-622.

129. Incidences des versions arabes chrétiennes pour la reconstitution des textes perdus, in *Traduction et traducteurs au Moyen-Âge*, Coll. Intern. du CNRS, ed. G. Contamine, Paris 1989, 133- 143.

130. La lettre sur le Dimanche descendue du ciel, in *AB* 107, 1989, 267-284.

131. Euthyme l'Hagiorite: le traducteur et ses traductions, in REGC, 4 1988, 73-107 [published 1990].

132. Sur quatre traités attribués à Grégoire et leur contexte marcellien, in *Studien zu Gregor von Nyssa und der christlichen Spätantike*, ed. H. Drobner, Leiden-New York 1990, 3-15.

133. Der von einem Bischof um 514 geschriebene Brief gegen das Christentum und die Verfolgung von seiten Dhu Nuwas, in *XXV. Deutscher Orientalistentag*, ed. W.Diem, Stuttgart 1988, 105-115.

134. The Credo of Gregory the Wonderworker and Its Influence through Three Centuries, in *Studia Patristica*, ed. E. Livingstone, XIX, Leuven 1989, 255-266.

135. La religion géorgienne préchrétienne, in *Aufstieg und Niedergang der römischen Welt*, ed. W.Haase, II. 18, 4, Berlin-New York 1990, 2694-2725.

136. La version géorgienne de deux commentaires d'Ammonius, in *Autori classici in lingue del vicino e medio oriente*, ed. G.Fiaccadori, Rome 1990, 55-64.

137. Une homélie arménienne sur la dormition attribuée à Chrysostome, in *OC*, 74, 1990, 199-233.

138. Ein georgischer liturgischer Kanon für Maria Himmelfahrt, in *Lingua restituta orientalis*. Festgabe für Julius Aßfalg, ed. R.Schulz and M. Görg, Wiesbaden 1990, 89-110.

139. Kopten, in *Marienlexikon*, 3, 1991, 641-645.

140. Une note de Sévère d'Antioche sur Juda Cyriaque, in *V Symposium Syriacum*, ed. R.Lavenant, Rome 1990 183-193.

141. L'homélie géorgienne de Sévérien de Gabala CPG 4216, dans *Le Muséon*, 104, 1990, 73-108.

142. Les signes des temps dans la littérature syriaque, in *Revue de l'Institut Catholique de Paris*, 39, 1990, 113-149.

143. Primauté, Patriarcats, Catholicossats, autocéphalies en orient, in *Il primato del Vescovo di Roma nel primo millenio*. Ricerche e testimonianze, ed. M. Maccarrone, Vatican 1991, 493-521.

144. Le contexte politique de la Vie de Pancrace de Tauromenium, in *Sicilia e Italia suburbicaria tra IV e VIII secolo*. Ed. S. Pricoco, F.Rizzo Nervo and T.Sardella, Soveria Mannelli 1991, 185-196.

145. La représentativité de la délégation arménienne à Florence : de Sargis de Caffa à Nagash d'Amid, in *AnHC* 22, 1990, 131-145.

146. Le manuscrit hébreu Paris 755 et l'histoire des martyrs du Nedjran, in *La Syrie de Byzance à l'Islam*, VII-VIII siècles, ed. P.Canivet et J.P. Rey-Coquais, Damas 1992, 25-30.

147. Deux homélies pseudo-basiliennes sur le Dimanche et le Vendredi, in Samir *Actes III*, 49-71.

148. La Dormition chez les Coptes, in *Actes du IVe Congrès Copte*, ed. K.Rassart-Debergh et J.Ries, t.2 (Louvain-la-neuve 1992), 436-445.

149. Peter the Iberian and Dionysius the Areopagite : Honigmann's thesis revisited, on *OCP*, 59 1993, 217-227.

150 Les Églises orientales non syriennes, in *Le Muséon*, 106, 1993, 97-117.

151. Les Č'inka, les Xrafstras et Loki in *Caucasologie et mythologie comparée*. Actes du colloque international du CNRS, IVe colloque de Caucasologie, ed. C.Paris, Paris 1992, 115-126.

152. Les Actes de Prochore en arménien: un nouveau témoin in *Armenian Tasks and Tools*, ed. H. Lehmann and J.S. Weitenberg, in *Acta Jutlandica* LXIX,1, Aarhus 1993, 86-91.

153. Une exégèse rare d'Isaïe 29, 11-12 conservée en arménien, in *Armenia and the Bible. Papers presented ... at Heidelberg July 16-19 1990*, ed. Chr. Burchard, Atlanta, Georgia 1993, 73-78.

154. Pierre l'Ibère et Denys l'Aréopagite, in *Proceedings of the second International Symposium in Kartvelian Studies*, ed. E. Khintibidze, Tbilissi 1993, 167-177.

155. Armenien und die Penthektê, in *AnHC*, 24, 1992, 78-94.

156. Neuf listes d'Apôtres orientales, in Augustinianum, 34, 1994, 109-199.

157. La Sagesse de Balavar à travers la tradition géorgienne, in R.Lebrun, *Sagesses de l'Orient ancien et chrétien*, Paris 1993, 229-242.

158. Un panégyrique de Théodore le Studite pour la fête liturgique des sièges de Constantinople, in EYLOGHMA, *Studia Anselmiana* 110, Rome 1993, 525-536.

159. Invention des reliques comme attribut impérial : la tunique du Christ à Moscou et son symbolisme, in *Roma fuori di Roma : Istituzioni e imagini (Roma 1985)*, ed. P.Catalano, Roma [1994], 225-243.

160. La lettre de Justinien pour la fête de l'Hypapante en 562, in *AB* 112, 1994, 65-84 .

161. Citations apollinaristes conservées en arménien dans la lettre de Sahak III Dzoroporetsi, in *OCP*,1994.41- 67.

162. La légende des sept dormants d'Éphèse selon le codex syriaque N.S.4 de Saint-Pétersbourg, in *VIe Symposium Syriacum*, ed. R.Lavenant, Rome 1994, 189-200.

163. Ein unbekannter Traktat ad Thalassium von Maximus dem Bekenner, in *XXV Deutscher Orientalistentag*, ed. C. Wunsch, Stuttgart 1994, 75-82.

164. La légende des apôtres Pierre, Jean et Paul a Antioche, in *OC*, 78, 1994, 64-85.

165. La question 66 du "Ad Thalassium" géorgien, in *Philohistôr*, ed. A.Schoors and P.van Deun, Leuven 1994, 329-337.

166. Syrien in *Marienlexikon*, 6 (1994), 344-349.

167. Le manifeste de Jean III le Nicéote en 505 dans le Livre des Lettres arménien, in *REArm*, 24, 1993, 27-46.

168. La portée politico-religieuse des visions pour la conversion des peuples, in *Revue de l'Institut Catholique de Paris*, 53, 1995, 87–104.

169. Le discours du Catholicos Sahak III en 691 et quelques dossiers annexes au Quinisexte, in *The Council in Trullo revisited*, ed. G.Nedungatt and M. Featherstone, Rome 1995, 323-454.

170. La Vie arabe de Théodose le Cénobiarque, dans *PdO*, 18, 1998, 45-73.

171. L'homélie "Արարիչ արարածոց", ses attributions et ses métamorphoses, *Հասկ հայագիտական*,Բեյրութ, Անթիլիաս, NS.6, 1994, 44-66.

172. Les Actes syriaques de Philippe à Carthagène en version arabe, dans *OC* 79. 1995, 120-145.

173. Bizancio visto desde Oriente : de Marciano a Mauricio, in *El Dialogo Fé-Cultura en la antiguëdad Cristiana*, ed. D. Ramos-Lisson, M.Merino and A.Viciano, Pamplona 1996, 227-238.

174. Die sogenannte Konziliengeschichte des Johannes von Odzun (717-728), in *AnHC* 26,1994 31-60.

175. Signification d'un court traité basilien conservé en arménien, in *The Second International Symposium on Armenian Linguistics. Proceedings*, ed. L.Hovsepian, T.2 (Yerevan 1993), 181-187.

176. Perpectives pour l'étude des Églises du Caucase, in *The Christian East*, ed. R.Taft, Rome 1996, 129–144.

177. Les versions syriaques du panégyrique de Grégoire le Thaumaturge, dans *A Festschrift for Dr. Sebastian Brock, Aram* 5, 1993, 537-553.

178. Udabnos mravaltavis shedgeniloba da struktura.- Udabnos mravaltavi, ed. A. Shanidze and Z. Dzhumburidze, Tbilissi 1994, 37-42 (Zveli qartuli enis katbedris shromebi, tomi 28).

179. Movses Xorenac'i et le Girk' Ēakac', in *REArm*, 25, 1994/5, 109-124.

180. Von welcher Kirche hängt die georgische Kirche geschichtlich ab ? in *Mitteilungen der Berliner Georgischen Gesellschaft* 5(1996), 1-12.

181. The Memra on the Parrot by Isaac of Antioch, in *The Journal of Theological Studies*, 47,1966,464-476.

182. Les trois formes de l'antichalcédonisme de 451 a 553 et ses répercussions dans le Caucase, in *Traditions and Heritage of the Christian East* / ed. A. Muraviev, D. Afinogenov Moscow 1996, 382-398.

183. Lazique, Mingrélie, Svanéthie et Aphkhazie du IVe au IXe siècle, dans *Il Caucaso: Cerniera fra culture dal Mediterraneo alla Persia*, 1 (Spoleto 1996), p.195-218 (= Settimane di studio ...XVLIII)

184. La Vie de saint Jean Higoumène de Saint-Serge par Joseph le Skeuophylax, dans *OC* 80,1996, 153-166.

185. La Vie de saint Martinianus en version syriaque, in *PdO*, 20, 1995, 237-269.

186. La postérité des villes fortifiées de Théodose, in *From Byzantium to Iran : in Honour of Nina Garsoïan*, ed. J.-P.Mahé and R.W.Thomson, Atlanta 1996, 361-378.

187. Le discours de Jean Damascene pour la Dédicace de l'Anastasis, in *OCP*, 63, 1997, 53-98.

188. La triple préface de Phocas, in *Denys l'Aréopagite et sa postérité en Orient et en Occident*, ed. Y. De Andia, Paris 1997, 167-186.

189. The Aphthartodocetic Edict of Justinian and Its Armenian Background, in *Studia Patristica*, XXIII, ed. E. Livingstone, Leuven 1997, 573-585.

190. Justinian II. im Synaxar und das Konzil in Trullo, in *AnHC* 27/8, 1995/6, 103-108.

191. L'Invention de la Croix sous l'empereur Héraclius, in *PdO*, 26, 1996, 21-46.

192. Բյուզանդիայի հայկական քաղաքականությունը սկսած Հուստինիանոս Բ-ից մինչև Լևոն Գ, «Էջմիածին», 1997, ԾԳ տարի, Զ-Է, էջ 170-180 (ֆրանս. թարգմ. Ա. Բոզոյանը) :

193. Le monachisme syriaque, in *Actes du colloque Patrimoine Syriaque V*, ed.M.Attallah, Antelias 1998, 71-80.

194. La légende d'Apa Jeremias et Apa Johannes et les fragments Chester Beatty Copte 829, in *Orientalia*, 67, 1998, 1-63.

195. L'opposition entre Pierre l'Ibère et Pierre le Foulon (482-491), in *Caucasica, The Journal of Caucasian Studies*, 1, 1998, 60-67.

196. Les trois croix dans le Kartlis Mokcevay, in *Caucasica*, 2, 1998, 70-76.

197. Conférence de M.Michel van Esbroeck, directeur d'études invité, in *Annuaire pratique de l'École des hautes Études*, 104, 1995/6, 379-382.

198. Actes syriaques d'André attribués à Éphrem, in *Symposium Syriacum VII*, ed. R.Lavenant. Rome 1998, 85-105.

199. Les relations entre Byzance et le Caucase, in *Acts. XVIIth International Congress of Byzantine Studies Moscow 1991*, ed. I.Ševčenko and G.Litavrin, vol. 2 (Shepherdtown, 1996) 148–159.

200. Die Legenden in der Geschichtschreibung, in *Georgien im Spiegel seiner Kultur und Geschichte*, ed. Br. Schrade and Th. Ahbe, Berlin 1998, 84–87.

201. Les versions orientales de la Bible : une orientation bibliographique, in *Interpretation of the Bible*, ed. J. Krašovec (Ljubliana, 1998) 399–509.

202. Les métamorphoses du Girk' Ēakac', in *REArm*, 26, 1996/7, 237-245.

203. Ein Jahrtausend antichalkedonischer Literatur, in *AnHC*, 39, 1998, 146-187.

204. La politique arménienne de Byzance de Justinien II à Léon III, in *Studi sull'Oriente Cristiano* 2 2, 1998, 111–120.

205. La Vie de saint Jean le Pauvre ou le Calybite en version géorgienne, in *OC* 82, 1998, 153-183.

206. La place de Jérusalem dans la conversion de la Géorgie, in T.Mgaloblishvili, *Ancient Christianity in the Caucasus*, Richmond 1998, p.59-74

207. Le martyre géorgien de Grégoire le Thaumaturge et sa date, dans *Le Muséon*, 112,1999, p.129-185.

208. Le discours dogmatique de Grégoire Vkayaser, dans *XB*, 1(7) 1999, 38-57.

209. Un discours inédit de saint Germain de Constantinople sur la Croix et les icônes, *OCP*,65, 1999, 15-51.

210. Les saints fous de Dieu, dans Actes du colloque - Patrimoine Syriaque VI, Liban 1999, 131-138.

211. A Ballad about Saint Andrew and the Cannibals. Attributed to Saint Ephraim, in *Hugoye*, vol.2, No.1. 1999, (*http://syrcom.cua.edu/Hugoye*)

212. Hélène à Édesse et la Croix, dans G.J.Reinink and A.C.Klugkist, *After Bardaisan*. Studies on Continuity and Change in Syriac Christianity in Honour of Prof. Han J.W.Drijvers, Leuven 1999, p.107-115.

213. Koptische Fragmente der Apa-Jeremias Legende, in St.Emmel & alii, Ägypten und Nubien in spätantiker und christlicher Zeit, 2 (Wiesbaden 1999), 114-116.

214. Une collection de 35 apocryphes apostoliques, in *PdO*, 24,1999, 179-199.

215. Vakhtang Gorgasali et l'évêque Mikael de Mtskheta, in Proceeding of the third international Symposium on Kartvelian Studies, ed. E.Khintibidze (Tbilisi 1999), p.9-23

216. Un Dialogue entre Basile et Gregoire conserve en georgien // Khristianski Vostok 2/7 (2000), 56-101.

217. Le dialogue fictif entre le Pape Célestin et Barsauma, Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, խմբ. Պ. Մուրադյան, Երևան 2000, էջ 163-168.

218. David Tserouni sur la hiérarchie ecclésiastique. Un traité arménien du VIIe siècle., in OCP 66(2000), p.89-117.

219. Le dossier de sainte Nino et sa composante copte. in G.Shurgaia, Santa Nino e la Georgia. Atti del I Convegno Internazionale di Studi Georgiani, Roma 30 Gennaio 1999, p.99-123.

220. Le couvent de Sainte-Croix de Jérusalem selon les sources géorgiennes. in Studi sull'Oriente Cristiano. 4.2(2000). p. 139-170.

221. Un dialogue entre Basile et Grégoire conservé en géorgien, dans XB. 2(VIII)2000, p.56-101.

222. La pomme de Theodose II et sa réplique arménienne, dans Novum Millenium. Studies on Byzantine History and culture dedicated to Paul Speck, ed. Cl. Sode and S. Takacs, Aldershot, 2000, pp.109-111.

223. La pénitence de Loth auprès d'Abraham au site de l'église géorgienne de la Croix, in Studi sull'Oriente Cristiano, 5,1 (2001), 57-92.

224. Le grand dieu svane Phusnabuasdia et saint Boa d'Hierapolis, in OC 84(2000),102-116.

225. Alexandre à Amasée: un épisode peu remarqué, Le Muséon, 114(2001) 141-151.

226. Zwei armenische Listen mit Konzilien bis zum Jahre 726, in AnHC 32, 2000, 264-302.

227. Peter the Fuller and Cyrus of Edessa, in Aram, 11-12(1999-2000), 467-474.

228. Y a-t-il eu un concile d'Ashtishat en 435 ? in REArm, 27(1999-2000), 393-398.

229. Die Stellung der Martyrerin Rhipsimè in der Geschichte der Bekehrung des Kaukasus. in W. Seibt, Die Christianisierung des Kaukasus, Wien, 2002, 171-179 . (Denkschriften der ÖAkdW 296).

230. Some Earlier Features in the Life of the Virgin, in Marianum 2001, 297-308. also in The Harp, t.15(2002), p.137-147.

231.Traité acéphale arménien sur les trois premiers Conciles et son attribution probable à Jean Mayravanetsi, in OCP 68 (2002), 89-174.

232.Georg in den frühen Texten der orientalischen Überlieferung, in E.Volgger, Sankt Georg und sein Bilderzyklus in Neuhaus-Böhmen, Marburg 2002, 69-79.

233. L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617), in OC 85(2001), 162-175.

234. Les sentences des philosophes grecs en géorgien, in G.Fiaccadori, Autori classici in lingue del vicino e medio oriente. Rome 2001, p.233-250.

235. Les Actes d'André d'après la tradition attribuée à Éphrem, in XB 3(2002), 106-151.

236. L'écorchement rituel aghouanais, in XB 3(2002), 389-402.

237. Origine et porte de l'attribut marial « Trapeza » dans la 3ème homélie surla Doremition de Jean Damascène (BHG 1089 & CPG 8063), in Ysabel de Andia/Peter Leander Hofrichter, Christus bei den Vätern, Innsbruck-Wien, 2003, 111-118.

238. Actes d'André d'après la tradition attribuée à Éphrem // *XB* 3/8 (2001), 106-151.
240. L'écorchement rituel aghouanais // *XB* 3/8 (2001), 389-402.

239. L'Alternance politico-religieuse de Justinian II a Leon III (paper delivered on the Byzantine Conference in Paris, 2001).

240. Le grand dieu svane Phusnabuasdia et saint Boa d'Hierapolis // OC 84 (2000) 101-116.

241. La Theotokos veritable arche d'alliance // Mother of God an International Conference National Hellenic research foundation Athens, 12-14 January 2001.

242. Die Stellung der Martyrerin Rhipsime in der Geschichte der Bekehrung des Kaukasus // Die Christianisierung des Kaukasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions

(Wien, 9. bis 12. Dezember 1999). Veroffentlichungen der Kommission fur Byzantinistik. Bd. IX. Hrsg. von W. Seibt (wien 2002).

243. Die Quelle der Himmelfahrt Muhammeds // XXVIII. Deutscher Orientalistentag (Bamberg. 26-30 März 2001).

244. Origines des église caucasiennes // Կովկասյան Եկեղեցիները և նրանց իրավունքը. Ծաղկաձոր. 2003 թ. սեպտեմբեր.

245. Sahak Dzoroporetsi et Sahask Mrut // Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները. Երևան, 2003 թ. սեպտեմբերի, 15-20.

## Գրքեր

I. Herméneutique Structuralisme et Exégèse, Paris 1968. (= Hermeneutik Strukturalismus und Exegese. München 1970).

II. Basile de Césarée. Homélies sur la Création de l'Homme. Paris 1970 (*SC* 160).

III. Les plus anciens homéliaires géorgiens (Louvain-la-Neuve 1975).

IV. Barsabée de Jérusalem, Sur le Christ et les Églises, Paris 1982 ( *PO* 41,2)

V. Épiphane de Chypre. Traité sur les poids et les mesures. Louvain 1984 (CSCO 460)

VI. Idem. Traduction (CSCO 461).

VII. Maxime le Confesseur, Vie de la Vierge, Louvain 1986 (CSCO 478)

VIII. Idem, traduction (CSCO 479)

IX. Aux origines de la Dormition de la Vierge, in *Variorum Reprints* ( Aldershot 1995).

## Հրապարակության հանձնված աշխատություններ

La Passion Égyptienne des Saints Côme et Damien, in Cahiers d'Orientalisme. 2002. 150 Seiten.

Le Martyre de Saint Luc, in Festschrift für den Heiligen Lucas, Padua 2002, 17 Seiten.

La première église de la Vierge batie par les apôtres, Festschrift Paul Devos, Genf 2002, 21 Seiten

The Origin of the Mravalthavi and the End of the Sixth Day. Proceedings of the Fifth congress on Karthvelian Studies, Tilflis 2002, 7 Seiten.

Was wissen wir über Gregor Lusaworitsch ?, in Symposium über Armenien. Halle 2002, 8 Seiten.

The Syriac version of the Panegyric of Gregory of Nyssa on Gregory the Wonderworker and of the life of the same, in Symposium Syriacum - Sydney 2000, Rom 2002 9 Seiten.

L'implication eucharistique dans le milieu antichalcédonien, in Konferenz über die Eucharistie Budapest, 8 Seiten.

Les traditions médicales Géorgiennes anciennes, in Publicazione delle accademie italiane, ed. G. Fiaccadori, 2002, 18 Seiten.

Mar Michael's Report on Cyprus and Benjamin in Egypt, in Conference about the holy Michael the Great – Damascus 2000, Hugoye 2002, 8 Seiten.

Un Apocryphe apocryphe sur les apôtres Pierre, Jean et Paul dans le ms. Mingana 40, Pièce 30, in Festschrift Samir Khalil, Leuven 2002, 14 Seiten.

The Graeco-arabic life of Gregor the Wonderworker, in Meltho , 2002, 35 Seiten.

Une notice antique sur la date des Évangiles, in Vizantiskij Vremmenik, 2002, 3 Seiten.

Der Ursprung der Gestalt des Priesters Johannes, in Zeitschrift für Missiologie, Rom 2002, 4 Seiten.

La Vierge comme véritable Arche d'Alliance, dans Colloque d'Athènes sur la Theotokos, 2002, Musée Benaki, 6 S.

The Forty Martyrs of Sebasteia in the Armenian tradition, in Symposium of the University of Belfast, 2002, S.53 S.

La légende arabe de sainte Hélene à Édesse, in Mélanges Nasrallah, 2001 Beyrouth.

Philologie des christlichen Orients : Ergebnisse und Perspektiven, in Münchener Konferenz zur Ehre von K. Krumbacher im J.1997, 13 Seiten, erscheint vermutlich im J.2001.

Sahakdoukht à Jérusalem et à Edesse, in Publication du Symposium en l'honneur du 80ème anniversaire de la fondation de l'Université Ivane Dzhavakhichvili à Tbilissi.

Die Quelle der Himmelfahrt Muhammeds vom Tempel in Jerusalem aus, in Deutscher Orientalistentag m Bamberg März 2002, dans Le Muséon 2003..

Le calendrier sacerdotal de 364 jours, XB 2003.

Caucasian parallels to China Cross Representations, in Monumenta Serica 2003/4.

Bemerkungen zur syrischen Transitusliteratur, Colloque de Bamberg juillet 2002.

The Three Marian Feasts according to the Syriac Church ans How it came that the Apostles founded them, Colloque de Septembre 2002 à Kottayam.

Nino, Theognosta et Eustathe : un dossier hagiographique oriental des IVe-Ve siècles, in XB 2004

## Գտնվում են գիտնականի արխիվում

| | |
|---|---|
| La Vie de la Vierge par Jean le Géomètre du Xème siècle. | 500 pp |
| La victoire de Jovien sur Julien en arabe chrétien du Xème siècle. | 400 pp |
| La Vie syro-géorgienne de Grégoire le Thaumaturge | 200 pp |
| Les oeuvres de mélèce d'Antioche en géorgien et arménien | 800 pp |
| Pierre et Paul dans l'Illyrikon | 800 pp |
| Le dossier de l'apôtre Barthélémy d'après tous les témoins | 1000 pp |

Die Geschichte der armenischen Konzilien pour Brandmüller. 2 volumes.

La passion de saint Luc

L'homélie de Sophrone pour l'Ascension, etc. etc.

*Կազմեց պրոֆ. Մ. ՎԱՆ ԷՍԲՐՈՒԿԸ.*
*լրացրեց՝ պ.գ.դ. Ա.Ա.ԲՈՂՋՈՅԱՆԸ*

*ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ*
*Բժիշկ*

# ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆԻ ԽՏԱՑԵԱԼ ՍԱԼԻԿԸ

Քաջ գիտնալով այսօրուան հայ մեներգիչներու երաժշտական կասկածելի ճաշակ ու անարժէք ներկայացնող երգերը, որոնք՝ ողողելով հրապարակը, կ'արժեզրկեն հայ երգը, անկասկած որ բացառիկ կարեւորութիւն ու տարողութիւն կը ստանայ Մկրտիչ Պօղոսեանի մեզի *ընծայած* այս ամփոփ սալիկը:

Անվերապահօրէն իր տեսակին մէջ միակն է՝ ոչ միայն գեղարուեստական հարուստ ծրագրով եւ բարձրաճաշակ երգերով, այլ նաեւ իր գաղափարի յղացումով, իր հրապուրիչ զանազանութիւններով: Արդարեւ Սիփան-Կոմիտաս երգչախումբը գեղեցիկ միտքը ունեցած է լոյս ընծայել՝ ի մի հաւաքելով երգիչին արձանագրած եւ հրատարակուած ու նաեւ քանի մը ոչ հրատարակուած երգերը:

Ունկնդիրը ոչ մէկ ակնթարթ պիտի փափաքի ընդհատել լսելու հաճոյքը, մեներգիչին տարիներու ընթացքին ժողովուրդին շռայլօրէն նուիրած մեծ վայելք ունեցող արձանագրութիւնները, մանաւանդ անոր մասնակից եղող, դաշնակի, համանուագախումբի, երգչախումբի նոխ մեկնաբանութիւններով փունջ մը սիրուած հայ գոհար երգերէն:

Մանուկ հասակէն՝ Մկրտիչ Պօղոսեան սիրած է երգել: Առաջին անգամ երգած է Թէաթրը տը լա Կէթէ ներկայացման մը ընթացքին, տակաւին զինուորական ծառայութեան շրջանին, երաժիշտ Աւետիս Մեսումենցի ղեկավարութեան տակ: 1955-ին մաս կազմած է Սիփան-Կոմիտաս երգչախումբին եւ 1956-ին վերոյիշեալ խումբին հետ մասնակցած է 3ème Congrès international de la musique sacrée Փալէ տը Շայոյի մէջ, ստանձնելով մեներգիչի բաժին մը:

Պէտք է խոստովանիմ թէ ընդհանրապէս մօտէն ճանչցողը չի տեսներ ամենաէականը, ամենայատկանշականը եւ հակում կ'ունենայ կորսուելու մանրամասնութիւններուն մէջ: Սակայն առանց տարակուսանքի՝ այս սալիկին դրական ընկալումը՝ պտուղն է հրաշալի համագործակցութեան մը, տաղանդաւոր երաժիշտ Կարպիս Ափրիկեանի եւ շնորհալի մեներգիչին միջեւ:

Մկրտիչ Պօղոսեանի երաժշտական դաստիարակութեան ուսուցիչը եղած է Կարպիս Ափրիկեան, որ ջանք ու եռանդ չէ խնայած: Շնորհիւ անոր ոչ արհեստավարժ Պօղոսեան, երգեց մաքուր, գերազանց նրբազգացութեամբ, մեկնաբանեց ստեղծագործութիւններ ճշմարիտ ու անկեղծ եղանակով: Ափրիկեան՝ օժտուած արտակարգ երաժշտական բնազդով եւ գիտելիքներով, հմուտ ու հոգեւոր զգացումներով, յղկեց, հսկեց երգիչին, անոր աստուածատուր բնածին տաղանդին մէջ պահուած կարողութիւնները արտահանեց, լոյսի բերաւ: Մկրտիչ Պօղոսեան, ամբողջ էութեամբ բարութիւն է, հետեւաբար անոր երգը բարի է, ազնիւ է: Ան կ'երգէ ինչպէս իր կեցուածքը պարզ, ոչ քռնազբօսիկ, միշտ բնական, հեռու երգչային որոշ «խորամանկութիւններէ»: Ունի գեղեցիկ հնչերանգ, ճկուն ձայն:

Խաչատուր Տարոնացիի *«Խորհուրդ խորին»* Ս. Պատարագի հանդերձի շարականը՝ Մկրտիչ Պօղոսեան կը մեկնաբանէ ընկերակցութեամբ արական խումբին, Կոմիտասի գեղեցիկ մշակումով: Այս շարականին մէջ կայ քնքշութիւն, թախիծ, խանդավառութիւն եւ աղերս: Հոս երգիչի ձայնը հետզհետէ վեհանալով եւ որուն արական երգչախումբը կու գայ ալ աւելի արժեւորելու անոր իւրայատուկ ձայնը, զմայլելիօրէն կը յառաջանայ դէպի *«անհաս անըսկիզբն»* գագաթնակէտը, ապա հանդարտօրէն աւարտելու համար:

Կոմիտասի *«Ով է որպէս»* սրբասացութիւնը - Ցինանց եւ Խաչի - որուն գողտրիկ երգէհոնային նուագակցութիւնը պատշաճեցուած է Կարպիս Ափրկիեան, պարզապէս ձայն պահելու նման, կը սկսի մեղմօրէն, զգացումի յաջող արտայայտչականութեամբ: *«Աստուած մեր»*ը փշաքաղող, սրտաբաց եւ ուժեղ դէպի երկինք բարձրացող, ապա կրկին աղաչական *«Խնայեցա վասն մեր»*ով: *«Եւ Յարեաւ»*ը յանկարծ կը ժայթքի, հզօր եւ վեհացող, արական ձայներու *նմանակումներով*, որ միանալով մեներգողին, յաջող կամուրջ մը կը նետէ յաջորդող «հաւատարիմ եղեւ»ի՝ մեղմ ընկերակցութեամբ քառաձայն երգչախումբին, հասնելու համար *շատ ուժգին (ֆորթիսիմօ) «Ընդ հրեշտակ երգեսցուք»*, սքանչելի երգչախմբային մեկնաբանութեամբ, կը ցնցէ ու մեծապէս կը տպաւորէ: Հակառակ անոր որ, բոլոր երաժշտական գիծերը զատ-զատ կ'իմանաք, անոնց ներդաշնակութիւնը պահուած է: «Սուրբ. Սուրբ»ով՝ խաղաղութեամբ կը մարին:

Այստեղ կ'ուզեմ մատնանշել գնահատելի մակարդակը ունեցող Կարպիս Ափրիկեանի «Հայ կրօնական երաժշտութեան Կոմիտասի սալիկ»ը: Յիշողութեանս մէջ այսպիսի այլ արձանագրութիւն չեմ լսած եւ հետաքրքիր անհամբերութեամբ կը սպասեմ Հայաստանի երիտասարդ տաղանդաւոր երաժշտական ղեկավարներուն մեզի խոստացած Կոմիտաս վարդապետի Պատարագի երկսեռ *երգչախմբի արձանագրութիւնները՝ ի՞նչ եւ որո՞ւ փոխադրութիւններով (թրասքրիփսիոն):*

Որքա՜ն փափաքելի է որ արական ձայնով՝ եկեղեցական երաժշտութեան երգեցողութիւնը՝ ունենար շոյող, թաւշային, նուրբ հնչողութիւն ունեցող Մկրտիչ Պօղոսեանի ոճը: Ան օժտուած է քնարական թենոր ձայնով եւ հոգեզմայլ զարգացումով կը յարմարի մեր սրբազան եկեղեցական երգեցողութեան:

Ըստ Ռ. Աթայեանի, Կոմիտասի առաջին շարքէն առնուած *«Հարսանեկան երգեր»*ու փունջէն՝ *«Այ հեւա սիրտս»* ամուրիութեան «վերջը» արտայայտող երգը՝ Մկրտիչ Պօղոսեան կ'երգէ առանց զարդարանքի, կարճ, սակայն որքա՜ն խորապէս յուզիչ: Ինչպէս միշտ արական խումբը տպաւորիչ կերպով աւելի կ'արժեւորէ իր նրբօրէն *հեւացող* հնչողութիւն ունեցող իւրայատուկ ձայնը:

*«Սանթուրի երգը»* ուղիղ արձանագրութիւն դաշնակի ընկերակցութեամբ: Հոս Մկրտիչ Պօղոսեանի ձայնը կը ստանայ նոր գունաւորում եւ նոր փայլ:

Կանաչեանի *«Պճինկօ»*ն եւ Կոմիտասի *«Առաւօտուն բարի լուս»*ը միշտ հաճելի, հարուստ՝ շնորհիւ բազմաձայն երգչախումբի ներկայութեան:

*«Անտունի»* Մկրտիչ Պօղոսեան կը մեկնաբանէ անմահ Կոմիտասի ստեղծագործութեան մարգարիտը, Կարպիս Ափրիկեանի դաշնակի զգայուն եւ երանգներու ճշգրիտ ընկերակցութեամբ: Անտունին մաս կազմելով հայկական տխուր երգերուն, հիւսուած է անոնց վշտի հառաչանքներէն եւ արտացոլումն է անոնց ճակատագիրին:

Հոս երգիչին մաքուր ու լուսատու ձայնը՝ բարձր եւ հեզասահ է. մերթ լայն ու աղաչական, վեհ ու ազատ, կարծես կուգայ սիրտին եւ հոգիին խորքերէն, որոնք յատկանիշներն են կոմիտասեան երգերուն:

*«Այլվարդի եռաձայն»* հոյակապ եւ ճարտար Կարպիս Աֆրիկեանի ինքնատիպ նուագախմբագրութեամբ՝ ներկայացուած է Կանաչեանի այս *աղերսերգը*: Մկրտիչ Պօղոսեան կ'երգէ ի յայտ բերելով ստեղծագործութեան խորութիւնը ու ժողովրդական մորմոքով թաթախուած նրբերանգները:

*«Ծիրանի ծառ»* պարերգէն վերջ՝ կրկին Կոմիտաս իր *«Լուսնակն անուշ»*-ով նուագակցութեամբ համանուագախումբի եւ երգչախումբի: Նուրբ մեկնաբանութեամբ որ կը թարգմանէ կրկին զգացական վերարտադրումը:

Այս առթիւ կը ցանկամ յայտնել որ Կարպիս Աֆրիկեանի «Լուսնակն անուշ»-ի վերջին նուագախմբագրութիւնը շատ աւելի ծաւալուն գործ մըն է եւ աւելի յաջող, սակայն մեներգիչը ... Մկրտիչ Պօղոսեանը չէ՛:

Եթէ Քրիստափոր Կարա Մուրզա եղած է հայ բազմաձայնային երաժշտութեան դպրոցի հիմնադիրը, եւրոպականացնելով հայ երգը, Կարպիս Աֆրիկեան կրնամ ըսել, իր կարգին դասականացուց հայ երգը, ժողովրդայինէն անցնելով նուագախմբային աւելի նոխ ու ծաւալուն երկերու:

Այս ժողովրդական երգ-երաժշտութիւնը ապացոյցն է այն շատերէն՝ ուր խորունկ հասկացողութիւն ունեցող երաժիշտը, իր ստեղծագործ երեւակայութեամբ, վերածած է երկաբաշունչ - պոէմայի՝ ***համանուագային դիւցազներգական վիպերգութեան*** փոքր գլուխ-գործոց մը, որուն ճաշակումը մեզ կը զարմացնէ եւ որ արժանի է յարմար առիթով մանրակրկիտ քննական վերլուծման:

«Պետոյի յիշատակին» ժողովրդական երգին մէջ կայ տխրութիւն, յուզում, խոր ցասում, պայքարի զգացում եւ ապստամբողական ոգի: Մեղեդիին ոչ մէկ տունը կը պարունակէ նոյն մեկնաբանութիւնը, ստեղծելով սքանչելի զանազանութիւն: Երգչախումբի թաւ ձայները *կ'արտայայտեն միտական երկխօսութիւն մը մայր եղանակին հետ*: Պոէման հետզհետէ կը ստանայ ծաւալ, հետեւելով երաժշտականօրէն՝ բանաստեղծութեան բնագրի իմաստին ու մեներգիչ Պօղոսեան, ողբերգական շեշտով, ուժով ու թախիծով *«Ես էլ ընկայ վիրաւոր»* կ'ալեկոծէ ու կը փոթորկէ հայու հոգին:

Կանաչեանի *«Նանօր»*-էն, զոր գործին նոր մաս մը յօրինած եւ աւելցուցած է Աֆրիկեան ու վերածած է *մեծ զանգուածի*, *«Մշո սուլթան»*-ի բաժինը կը մեներգէ Մկրտիչ Պօղոսեան բացառիկ յաջողութեամբ, հանդարտ, յստակ, անբիծ, աղաչական, խնկաբոյր աղօթքի նման: Եւ վերջապէս «Զիւտրի երգով»-ի հրդեհումներով կը ջերմացնէ մեր սրտերը ու կը փոխէ տրամադրութիւնները:

Կը խորհիմ որ նման խտացեալ սալիկ մը անհրաժեշտ էր թէ իր երգացանկին եւ թէ իր բարձրորակ կատարման համար: Ան արժանի է ***հետաքրքրելու, հարստացնելու*** ոեւէ երաժշտասէրի ձայնադարանը:

Շնորհաւորելի է Սիփան-Կոմիտաս երգչախումբի այս նախաձեռնութիւնը*, անոր փառանդաշատ ղեկավար Կարպիս Աֆրիկեան եւ վերջապէս մեր լաւոյն սիրտը խռոված Մկրտիչ Պօղոսեանի ձայնը:

---

* «Առ ի սիրոյ, յարգանքի եւ մաճառանդ գնահատանքի արտայայտութիւն մը հանդէպ մեներգիչին»:



ՕԾՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ «ՀՐԱԺԱՐՈՒՄԸ»



ԴԱՎԻԹ ՍՐԲԱԶԱՆԸ ՕԾՈՒՄ Է ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻՆ



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանի շրջանակներում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը: Հընթացս սրբազան արարողության ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր քահանայական ձեռնադրություն և օծում ստացան հինգ սարկավագներ:

Դեռ նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայրավանքում կատարվեց նորընծաների հավատո քննություն: Սարկավագների քահանայության կոչման արարողության ընթացքում խարտավիլակ Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին և նզովեցին հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել սուրբ առաքյալների և հայոց երանաշնորհ Հայրապետների լույս հավատքին:

Կիրակի, հրնթացս Ս. Պատարագի, ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Հովիկ սրկ. Հովհաննիսյանը վերակոչվեց Տ. Հայրիկ քահանա, Հակոբ սրկ. Հակոբյանը՝ Տ. Հակոբ քահանա, Արթուր սրկ. Պետրոսյանը՝ Տ. Տիրան քահանա, Արթուր սրկ. Հակոբյանը՝ Տ. Հովնան քահանա, Աշոտ սրկ. Վարդանյանը՝ Տ. Կյուրեղ քահանա: Դավիթ Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիհը՝ տալով նրանց պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Ձեռնադրությունից հետո Ավագ Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Գերաշնորհ Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորաօծ չորս քահանաների՝ Տ. Հայրիկի, Տ. Տիրանի, Տ. Հովնանի և Տ. Կյուրեղի վեղարի տվչության և աբեղայի օրհնության կարգը: Մայրավանքի միաբանության շարքերը համալրվեցին ևս չորս կուսակրոն քահանաներով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



### Տ. ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովիկ)

Ծնվել է 1975 թ. ապրիլի 1-ին Երևան քաղաքում:

1981-1989 թթ. սովորել է Երևանի Էրեբունու շրջանի թիվ 160 միջնակարգ դպրոցում:

1989-1993 թթ. ուսանել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Երևանի Սննդի արդյունաբերության տեխնիկումը:

1993-1995 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում, ապա ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ այն ավարտելով 2001 թ.:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսից, ուսումնառությունը ավարտելուց հետո, Վեհափառ հայրապետի բարձր տնօրինությամբ աշխատանքի է անցել նախ Մայր Տաճարի թանգարանում, ապա Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, որպես լուսարար:

2002 թ. սեպտեմբերից Նորին Սրբության օրհնությամբ նշանակվել է ՀՀ ԶՈՒ հոգևոր ծառայության առաջնորդի օգնական, որտեղ և ցայսօր իր ծառայությունն է բերում:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ժամանակակից սպիրիտուալիզմ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1981 թ. փետրվարի 23-ին Երևան քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է տեղի Ձերժինսկու անվան թիվ 20 միջնակարգ դպրոցում:

1997-2002 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002-2003 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. հունիսին Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնությամբ և հրամանով նշանակվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վերակացու:

Նույն թվականի հոկտեմբերի 4-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայաստանի ազատագրության մի ծրագիր XVIII դ. 60-ական թվականներին. Հովսեփ Էմին և Հովնան վարդապետ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ավազանի անունը՝ Աշոտ)

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 7-ին Էջմիածին քաղաքում:

1985-1993 թթ. սովորել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993-1997 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997-2003 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ աշխատամքի է անցել ՔԴԿ-ում, ապա Կաթողիկոսարանում որպես գործավար-քարտուղար:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Թվականության համակարգերը հայ մատենագրության մեջ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆ
(ավազանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1978 թ. մարտի 4-ին Գյումրի քաղաքում:

1985-1993 թթ. սովորել է տեղի Պետրոս Դուրյանի անվան թիվ 28 միջնակարգ դպրոցում:

1993-1997 թթ. ուսանել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1997-2003 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ աշխատանքի է անցել Կաթողիկոսարանում՝ որպես պարետ:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհան Օձնեցու արմատական բարեփոխումները հայոց Ճաշոց-տոնացույցում» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
(ավազանի անունը՝ Հակոբ)

Ծնվել է 1979 թ. հունվարի 30-ին Էջմիածին քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. ուսանել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսի 1-ին Վեհափառ Հայրապետի բարձր կնօրհնությամբ աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մկրտարանում:

2002 թ. հուլիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ Եկեղեցին և ԺՁ-ԺԷ դարերի հայ ազատագրական շարժումները» թեմայով:

Նույն թվականից ծառայության է անցել ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի արու զավակ:

# ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Այս սեպտեմբերն էլ իր աշնանային շնչով կրկին բացեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հյուրընկալ դռները՝ ազդարարելու նոր ուսումնական տարվա սկիզբը: Ծավալված նորոգությունների աշխատանքների պատճառով, սակայն, դասերը հետաձգվեցին մեկ ամսով և հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նոր ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությունը: Բազմամարդ հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ճեմարանցիներ, ինչպես նաև ամերիկահայ մեծանուն բարերարներ տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները, այլ հյուրեր:

Ուսումնական այս տարին Գևորգյան Հոգևոր Ճեմարանը սկսում է փոքր-ինչ ուշացումով: Փոխարենը՝ ճեմարանցիները կշարունակեն ուսումը հիմնովին վերանորոգված շենքում: Ամերիկահայ մեծանուն բարերարներ տեր և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների ազնիվ նվիրատվությամբ արդեն երկրորդ անգամ վերանորոգվում է հոգևոր կրթօջախի պատմական շենքը: Դեռևս 1997 թ., երբ Մայր Աթոռին վերադարձվեց Գևորգ Դ Կաթողիկոսի ջանքերով 19-րդ դարում հիմնված հոգևոր ճեմարանի շենքը, ազնիվ բարերարների հանձնառությամբ 80-ամյա ընդմիջումից հետո առաջին անգամ վերաբացվեցին ճեմարանի դռները: Այս անգամ Հովնանյան ընտանիքի բարերարությամբ ճեմարանը հիմնովին վերանորոգվեց արդի պահանջներին համապատասխան: Այսպիսով՝ եկող տարի ճեմարանն իր հիմնադրման 130-ամյակը կտոնի բոլորովին նոր պայմաններում:

Նոր ուսումնական տարում ճեմարանում հոգևոր բարձրագույն կրթություն կստանա 142 ուսանող: Նրանցից 30-ը առաջին լսարանցի են: Եվս չորս ուսանողներ, որ Մայր Աթոռ են ժամանել Իրանից, Կանադայից ու Գերմանիայից, կուսանեն ճեմարանի նախապատրաստական լսարանում:

Հանդիսությունն սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո երգչախումբը, գլխավորությամբ Ռ. Շաբաթյանի, կատարեց Հայաստանի Հանրապետության և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմները: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի բացման խոսքից հետո, ներկաներին ողջունեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քահանա Սարգսյանը:

*«Վեհափառ և Շնորհազարդ Հայրապետ Հայոց,*

*Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ հոգևոր եղբայրներ, Հովնանյան գերդաստանի պատվարժան Գևորգ և Սիրվարդ ամուսիններ, սիրելի դասախոսներ, ուսանողներ և ներկաներ:*

*Այսօր Մայր Աթոռի և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի համար տոնական օր է. որովհետև արդեն 58-րդ անգամ այսպես հանդիսավոր պայմաններում ծանու-*

ցում ենք նվիրական այս կրթօջախի ուսումնական նոր տարվա սկսվելու մասին: Ճիշտ է, օբյեկտիվ պատճառներով այն հետաձգվեց շուրջ մեկ ամսով, և այս հանգամանքը ոմանց մոտ կասկած է հարուցում, որ այս ուսումնական տարվա ծրագրերը կարող է չհասցնենք ավարտել: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ սեպտեմբերյան արձակուրդային այս բացթողումը կլրացնենք ուսումնական տարին մեկ ամսով երկարացնելով:

Ինչպես գիտեք, Մայր Աթոռի բարերարներ Գևորգ և Սիրվարդ Հովհաննիսյանների առատաձեռն նվիրատվությամբ, ազգիս սրբազնագույն Հայրապետի օրհնությամբ, հիմնովին վերանորոգվեց լույսի և հույսի մեր կրթօջախը: Մենք, որպես զավակները մեր ազգի, հպարտ ու երախտապարտ ենք, որ Դուք, սիրելի բարերարներ, հրաշալի գիտեք բարեգործության հսկայական դերը ազգերի կյանքում, մանավանդ մեզ նման աշխարհասփյուռ և նոր վերաշինվող անկախ Հայրենիքի և Եկեղեցու պայմաններում:

Գիտենք, սիրելի բարերարներ, որ Ձեր նյութական միջոցներով նորոգված ուսումնական մեր հաստատության արմատները հասնում են մինչև Ե դար՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ժամանակները: Հենց այս պատմական Վաղարշապատ մայրաքաղաքում էր, ուր հիմնադրվեց քրիստոնեական առաջին ազգային հոգևոր դպրոցը, որտեղ, ինչպես Ս. Մեսրոպի կենսագիր Կորյուն վարդապետն է ասում, «ի կողմանց եւ ի գաւառաց Հայաստան աշխարհի յորդեալ եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւր գիտութեան Աստուծոյ»:

Վեհափառ Տեր,

Մենք համոզված ենք, որ Ձերդ Սրբության Հայրական սերը և Հայրապետական բարձր ուշադրությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նկատմամբ նպատակամղված են մեզ հանձնված աստվածաբանական համալսարանը տանելու հոգևոր և մշակութային այն ուղիով, որով ընթացել են Սահակ-Մեսրոպյան ժամանակներից մեր հոգևոր կրթարանները, որոնք հսկայական լուսավոր հետք են թողել մեր հոգևոր-մշակութային կյանքում: 130-ամյա մեր հաստատությունը միայն անցյալի իր շքեղ փառքով չի ապրում: Եվ մենք անմնացորդ նվիրումով, Ձերդ Սրբության իմաստուն ղեկավարությամբ ուսումնառության և կարգապահական գործն աշխատում ենք ավելի կատարյալ դարձնել:

Վեհափառ Տեր,

Այսօր եկել ենք հավաստիացնելու, որ մենք պատրաստ ենք Ձեր առաջնորդությամբ աշխատել հավատքով, համոզվածությամբ և բարձր պատասխանատվությամբ, որպեսզի լույսի, հույսի և մեր բոլորի հպարտության տունը՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որպես գլխավոր դարբնոցը հայ եկեղեցականների պատրաստման, որակապես էլ ավելի կատարելագործվի, որպեսզի ուսումնական տարեշրջանները լինեն ավելի պտղաբեր ու արդյունաշատ՝ ի փառս մեր Ս. Եկեղեցու, հուրախություն և ի մխիթարություն Ձերդ Սրբության:

Մաղթենք և աղոթենք, որ 2003-2004 ուսումնական տարին լինի պտղաբեր: Բարի երթ քեզ, սիրելի Գևորգյան Հոգևոր Ճեմարան»:



ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՏԵՍՈՒՉ ՏԵՐ ՀԱՅՐԸ՝
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԻՐ ՍԱՆԵՐՈՎ

Տեսուչ Տեր Հոր խոսքից հետո Զ լսարանի սան Էդիկ սրկ. Հակոբյանը հանդես եկավ «Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս» երգի կատարմամբ, որից հետո Դ լսարանի սան Արսեն դպիր Հարությունյանն արտասանեց Համո Սահյանի «Հայաստան» բանաստեղծությունը, ապա երգչախումբը կատարեց «Առաւօտ լուսաբեր» երգը և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Այնուհետև ներկաներին իր օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը.

*«Գերաշնորհ Սրբազաններ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, մեծարգո բարերարներ՝ պրն և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյաններ, սիրելի մանկավարժներ, սաներ և ներկաներ,*

*Ուրախություն և բերկրանք է տիրում այս պահին մեր հոգիներում: Արդար է և ճշմարիտ: Ամենքս ուրախ ենք. ամենքիս հոգում լավատեսության զգացումն է իշխում, որովհետև Աստծո ողորմած կամքով վերստին բացվում են Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դռները և սկսվում է նոր ուսումնական տարի:*

*Նոր ուսումնական տարին նշանակում է, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ իբրև սիրտը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, ինչպես բնորոշել է երջանկահիշատակ մեր նախորդ Հայրապետը, շարունակելու է բաբախել, և նորահաս շրջանավարտ սերնդով շարունակելու է արյուն մատակարարել Հայ Եկեղեցու մարմնին, որ լինի այն կենսունակ ու գործող: Մեր օրերում, երբ այնքան մեծ է կարիքը հոգևոր սպասավորների, բնականաբար, առավել կարևորվում է ուսումնական տարեմուտի այսօրվա խորհուրդը:*

*Մենք հավատում ենք, որ Ճեմարանի ավանդաշատ հարկից ներս կրթվելով, մեր ապագա հոգևորականները՝ լավագույնս պատրաստված, իրենց երիտասարդ հոգու ողջ ավյունով ու նվիրումով պիտի գան շարունակելու փառավոր ընթացքը մեր հայրերի և Սուրբ Եկեղեցու, պիտի գան՝ հոգևոր արժեքներով նոր դաստիարակություն ջամբելու մեր ժողովրդին, որպեսզի վերստին հայությունն իր կյանքը լուսավորի առ Քրիստոս հավատով, ապրի համաձայն Ավետարանական պատվիրանների ու պատգամների, հարազատության ջերմ ու ամուր թելերով շաղկապվի նախնյաց ավանդներին ու սրբություններին: Նայելով ձեզ, սիրելի սաներ, Մենք հավատում ենք, որ Հայ Եկեղեցին պիտի համալրվի բազմաթիվ ու բազմակողմ, ազնվասիրտ ու ծառայասեր եկեղեցականներով և աղոթում ենք առ Աստված, որ զորացնի ձեր միտքն ու հոգին և ուղեկից լինի ձեզ այսօր՝ ուսման մեջ, վաղը՝ մեր ժողովրդին ծառայության:*

*Այս ուրախ և հանդիսավոր առիթով Մեր գնահատանքն ենք բերում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությանը և դասախոսներին, նաև ողջունում ենք այն դասախոսներին, ովքեր ուսումնական այս տարում հրավիրված են դասավանդելու Ճեմարանում:*

*Ուսումնական նոր տարին, ինչպես արդեն նշվեց, սկսվում է մեկ ամիս ուշացումով, բայց թերևս այս էլ նախախնամաբար է, քանզի բացման հանդիսությանը այսօր ներկա են Սուրբ Էջմիածնի մեծագնիվ բարերարներ պրն և տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները: Աստծուց տրված պարգև է մեզ համար, որ այս տո-*

*նական օրը սիրելի բարերարները մեզ հետ են: Նրանց մեծամեծ նվիրատվությամբ է, որ իրականացվում են Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հիմնովին նորոգման աշխատանքները: Այսօր նրանք այստեղ են՝ իրենց հոգու սերը, բարեմաղթանքն ու աղոթքը միախառնելով այս հանդիսավոր օրվա քաղցր. հուսալի և երջանիկ մթնոլորտին:*

*Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, մեծարգո բարերարներ, Հանուն Հոգևոր Ճեմարանի տեսչության, պաշտոնեության և սանուց՝ բերում ենք Ձեզ Մեր շնորհակալ զգացումներն ու մաղթանքները: Ձեր շնորհիվ բարենորոգ պայմաններում ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ պիտի կազմակերպվի. և ուսանողներն ավելի նախանձախնդրությամբ ու բարձր գիտակցությամբ պիտի հետևեն դասընթացներին՝ իրենց հայացքի առջև ունենալով միշտ Ձեր ազգասեր ու եկեղեցասեր նկարագիրը:*

*Փառք և գոհություն Բարձրյալին, որ մեր Եկեղեցին պատմության մեջ միշտ ունեցել և այսօր ևս ունի արժանավոր բարերար զավակներ, ովքեր գիտեն իրենց արդյար վաստակից զոհաբերել՝ ի շինություն ու պայծառություն Եկեղեցու, և այսպիսով զորակից լինել նրա առաքելությանը մեր ժողովրդի կյանքում: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կենսագրության նոր շրջանը՝ ի դեմս Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների, ունեցավ այդպիսի նվիրյալ բարերարներ: Նրանց ազնիվ նվիրատվությամբ հնարավոր եղավ հասպատությունը նորոգել հինգ տարի առաջ և կրկին նորոգել այս տարի, որպեսզի կրթօջախը պայծառ ու բարեկարգ իր դռները բանա մեր սանուց և մեր մանկավարժների առջև: Այս է նրանց փափագը և մեծ սիրո վկայությունը առ Աստված, առ մեր Սուրբ Եկեղեցին ու ազգը: Աղոթք ենք բարձրացնում երկինք, որպեսզի Տերը իր սիրո ու հանապազ խնամքի ներքո միշտ առողջ ու երջանիկ պահի մեր սիրելի բարերարներին՝ պարգևելով կյանքի երկար ու օրհնյալ տարիներ: Թող Գևորգյան Հոգևոր Ճեմարանը բազմիցս ողջույնով ընդունի նրանց իր լուսաբաղձ հարկից ներս: Թող նրանք տեսնեն իրենց նվիրատվության բարի արդյունքները՝ ի դեմս ճեմարանական շրջանավարտների և գոհունակ սրտով Աստված փառաբանեն:*

*Թող Աստված օրհնի Ձեզ, սիրելի բարերարներ, թող Աստված արդյունավետ ուսումնառություն պարգևի Գևորգյան Ճեմարանի ուսանողությանը 2003–2004 ուսումնական տարում:*

*Այս առիթով Մեր գնահատանքն ենք բերում նաև շինարարներին, ովքեր ջանքեր չխնայելով ընդամենը երեք-չորս ամսում փորձեցին հնարավոր պայմաններ ստեղծել, որպեսզի, չնայած շարունակվող նորոգությանը, ընթանա ուսումնական գործընթացը»:*

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանի ծառայությունները Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հանդեպ՝ Արժանապատիվ Տեր Հոր ծննդյան 75 և քահանայական գործունեության 50-ամյակի առիթով պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ ի մասնավորի ասելով.

*«Մենք նաև մեկ այլ հաճելի պարտականություն ունենք այսօր կատարելու. որովհետև ուսումնական այս տարում լրանում են Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի ծննդյան 75 և քահանայագործության 50-ամյա հոբելյանները: Ուստի սրտով շնորհավորում ենք. Մեր բարեմաղթանքն ու լավագույն ցանկությունները, Մեր աղոթքն ու օրհնությունն ենք բերում Մեր սիրելի Տեր Հորը, ով հակառակ իր տարիքին, ջանասիրությամբ և եռանդով իրականացնում է իր տեսչական պարտականությունները: Եվ որպես գնահատանք իր երկարամյա ծառայության Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում, ի նշանավորումն իր կյանքի հոբելյանական տարեդարձերի, զարդարում ենք իր կուրծքը մեր Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով»:*

Մաշտոցաշունչ այս հաստատության վերամուտի հանդիսությունն ավարտվեց Հայրապետական օրհներգով և Վեհափառի «Պահպանիչ»-ով :

*ԱՐԱՄ ՄՐԿ. ՍԻՄՈՆՅԱՆ*
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Զ լսարանի սան*

# «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցությամբ տեղի ունեցավ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի 4-7-րդ դասարանների դասագրքերի շնորհանդեսը: Շնորհանդեսին ներկա էին ՀՀ և ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրեր, մտավորականներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, հյուրեր:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ կառավարության միջև մեկ տարի առաջ ստորագրված համաձայնագրով, այս տարվա սեպտեմբերից «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան դասավանդվում է ՀՀ և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 4-5-րդ դասարաններում: 6-7-րդ դասարանների դասագրքերը դեռևս փորձնական են:

Դասագրքերը կազմվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի բարեփոխումների կենտրոնի մասնագետների ու Հայ Եկեղեցու մի խումբ հոգևորականների ջանքերով: Դասագրքերը հրատարակվել են ազգային բարերար տիկ. Լուիզ Մանուկյան Սիմոնի հովանավորությամբ՝ ի հիշատակ իր ծնողների՝ երախտաշատ բարերարներ տեր և տիկ. Ալեք և Մարի Մանուկյանների: Դասագրքերի պատրաստման աշխատանքներին իրենց նպաստն են բերել նաև Իրմա և Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերը և Հարություն Աղա-Սարգսյանը:

Բացելով հանդիսությունը՝ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն անդրադարձավ դասագրքերի ստեղծման աշխատանքներին ու դրանց կարևորությանը: «Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է, և Հայ Եկեղեցու պատմությունը մեր ազգի պատմության անբաժանելի մասն է: Այս Եկեղեցին ստեղծել է ժողովուրդը, և այս Եկեղեցին ժողովրդի մի մասնիկն է: Քրիստոնեությունը մեզ չի պարտադրվել և այսօր էլ չի պարտադրվում, սակայն հայ քրիստոնյան հայի ազգային նկարագրի ամենաբնորոշ դրսևորումն է».- նշեց Սրբազան Հայրը:

Հանդիսության ընթացքում բոլոր ելույթ ունեցողներն ընդգծեցին նոր առարկայի կարևորությունը՝ որպես նոր սերնդի ազգային-հոգևոր դաստիարակության հիմք:

«Այո՛, սա միայն Հայոց Եկեղեցու պատմության դասագիրք չէ, սա նաև մեր իշխանությունների, Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերաբերմունքն է իսկապես մի կարևոր գործի, որ կոչվում է հայեցի դաստիարակություն: Հայեցի դաստիարակությունը մեզանից ոչ ոք չի պատկերացնում առանց այն դաստիարակության, որը մեզ պետք է տա և տալիս է 1700-ամյա ակունքներ ունեցող Հայ Առաքելական Եկեղեցին»,- նշեց ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը:

«Մենք այս գրքերը պատրաստել ենք ոչ միայն հայ դպրոցի, այլև՝ հայ ընտանիքի համար: ...Սա կարոտի կանչ է դեպի մեր արմատները, սա նաև փորձ է հայ մարդու հոգեբանության մեջ եղած ճեղքերը լցնելու, սա փորձ է մեր քրիստոնեական նկարագրին ավելի

մոտ բերելու, սա փորձ է մարդու մեջ սերն ավելի խորացնելու»,- նշեց Կրթական բարեփոխումների կենտրոնի փնօրեն Վիկտոր Մարտիրոսյանը:

Ելույթ ունեցան նաև ԼՂՀ կրթության նախարարի փեղակալ Սլավիկ Ասրյանը և բանասփեղծ Ռազմիկ Դավոյանը:

Վերջում ամենքին իր Հայրապեփական գնահափանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապեփը:

«Այս գրքերը լոկ կրոնական մի կառույցի պատմություն չէ, որ ներկայացնում են: Այս գրքերը ներկայացնում են պատմությունը մեր ազգի, մեր մշակույթի, մեր ավանդույթների, մեր սովորույթների, մեր լինելության, մեր գոյության, մեր ինքնության... Ես հույս ունեմ, որ հայ մանուկը պիտի սիրի այս դասագիրքը, պիտի սիրի ու պիտի կրթվի այս դասագրքով՝ որպես ազնիվ քաղաքացի մեր հայրենիքի, որպես արժանավոր զավակ իր ազգի»,- նշեց Նորին Սրբությունը:

4-րդ դասարանի ձեռնարկներն աշակերտներին ծանոթացնում են Հին և Նոր Կտակարաններին: 5-րդ դասարանի դասագրքերում ներկայացված են քրիստոնեական Եկեղեցիները, հարանվանությունները, ուղղություններն ու խորհուրդները, ազգային-եկեղեցական տոները: 6-8-րդ դասարաններում աշակերտները ծանոթանալու են Հայ Եկեղեցու պատմությանը՝ առաքելական շրջանից մինչև մեր օրերը: Մինչև 2005 թ. «Հայոց Եկեղեցու պատմություն» կդասավանդվի նաև 8-10-րդ դասարաններում: Այս դասարաններում կուսուցանվի քրիստոնեական բարոյագիտություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչության, հանձին տեսուչ Տ. Գարեգին աբեղա Հարությունյանի, և կրթօջախի հոգեբանության դասախոս Կամո Վարդանյանի նախաձեռնությամբ, սույն թվականի նոյեմբերի 16-ին դպրանոցում «Անձի հոգևոր խորհուրդը և հոգեբանական էությունը» թեմայով կազմակերպվել էր աստվածաբանական-հոգեբանական գիտաժողով՝ նվիրված զույգ բնագավառների արդիական մի շարք հարցերի: Գիտաժողովին զեկուցումներով իրենց մասնակցությունը բերեցին Վազգենյան Հոգևոր Դպրանոցի, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, ԵՊՀ-ի, Մաշտոցի անվան համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի 10 ուսանողներ:

Այս սեմինարը դպրանոցի՝ աշխարհիկ ուսումնական հաստատությունների հետ առաջին համատեղ ձեռնարկն էր, որ նպատակ ուներ համանման խնդիրների նկատմամբ տարբեր տեսանկյուններից իրենց դիրքորոշումներն ունեցող երիտասարդներին շփվելու և կարծիքներ փոխանակելու առիթ ընձեռել, որով և հնարավորություն էր ստեղծված առնչակից մի շարք խնդիրներ դիտել ապագա աշխարհական գիտնականի ու հոգևոր սպասավորի աչքերով միաժամանակ, ինչպես նաև զեկուցումների ընթացքում ծագող հարցերի պատասխանները ստանալ զեկուցողներից և ներկա փորձառու հոգևորականներից ու հոգեբաններից:

Աստվածաբանական-հոգեբանական գիտական նստաշրջանը, որ նվիրված էր Հայաստանի քրիստոնեացման և Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման հոբելյաններին, բացվեց միասնական աղոթքով, որից հետո դպրանոցի «Լուսավորիչ» երգչախումբը հանդես եկավ հոգևոր երգերի կատարմամբ: Բացման խոսքում տեսուչ Հայր Սուրբն ասաց.

*«Սիրելի ուսանողներ և հարգելի հյուրեր,*

*Ողջունում ենք ձեզ Սևանի Վազգենյան Հոգևոր մեր այս Դպրանոցի հարկից ներս և ի սրտե բարի գալուստ մաղթում բոլորիդ:*

*Մեծ ուրախություն է մեր դպրանոցի ուսանողության և ղեկավարներիս համար այսօր, այս չափազանց հետաքրքրական գիտական նստաշրջանի առթիվ հյուրընկալելու ձեզ Սևանա վանքի այս կրթօջախում: Մեր ուրախությունը կրկնապատկվում է այն հանգամանքով, որ առաջին անգամ լինելով Վազգենյան Հոգևոր Դպրանոցում տեղի է ունենում հոգևոր և աշխարհիկ բուհերից ժամանած ուսանողների միացյալ գիտաժողով, որն անդրադառնալու է մարդու հոգևոր խորհրդին և հոգեկան էությանը:*

*Սա իսկապես մեծ իրադարձություն է մեզ համար, քանի որ ապագա հոգեբանները և հոգևորականներն ահա այսպես միասնաբար պետք է դիտարկեն և լուսաբանեն մարդ արարածին առնչվող զանազան հիմնախնդիրներ:*

*Այսօր, առավել քան երբեք, մեր Հայրենիքում և առհասարակ ողջ աշխարհում ցանկացած անհատի համար անհրաժեշտ է գտնել, հասկանալ և ըմբռնել մարդու բուն կոչումն այս կյանքում: Թերևս երբեք չի եղել նման դարաշրջան, որ այսքան*

*մեծ թվով տարատեսակ ուղղություններ և այնչափ իրարից տարբերվող ու նույնիսկ իրար հակասող գաղափարախոսություններ միևնույն ժամանակ մի երկրում տարածված լինեին: Եթե մեկ հպանցիկ հայացք նետենք այսօրվա հասարակությանը, ապա պետք է տեսնենք, որ գնալով նահանջում է ընդհանրականության ըմբռնումը. ոմանք հետևում են տարբեր կուսակցությունների, մյուսներն աղանդավորական խմբակների ազդեցության տակ են, կան մարդիկ, որոնք ավանդական մեր հայ մշակույթն են պաշտում, իսկ կան ուրիշներ, որոնք արևմտյան ազատամտության երկրպագուներ են, և այլն, և այլն...*

*Հստակ է մեկ բան, որ մարդկությունն այսօր իր առջև չունի մեկ օբյեկտիվ ուղղություն: Եվ երիտասարդ սերնդից շատերը դրական են համարում նման «անսահմանափակ» իրավիճակը, քանի որ ազատորեն կարողանում են դրսևորել իրենց անհատականությունը: Իսկ ի տարբերություն երիտասարդության՝ ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերն ավելի զգուշավորությամբ են վերաբերվում այս խնդրին և հարց են բարձրացնում, թե կարո՞ղ է արդյոք այս տեսակ բացարձակ ազատությունը և անհատականության պաշտամունքը մարդուն լիարժեք երջանկության հասցնել: Բնականաբար, իրենց առջև ունենալով Արևմուտքում ազատամտության պատճառով առկա դառը փորձառությունները, անվստահորեն են նայում ներկայիս բազմամշակութային իրավիճակին և պահանջում են ավանդական համընդհանուր գաղափարախոսության վերականգնում:*

*Այս մասին որպես քրիստոնյա հոգևորական կարող ենք ասել հետևյալը.*

*ա. Անշուշտ, իբրև անհատականություն դրսևորվելը շատ լավ երևույթ է, սակայն այն երբեք չպետք է սանձարձակ, սուբյեկտիվ քմահաճության վերածվի:*

*բ. Նույնպես հարկ է նշել, որ համընդհանուր բարոյական և հասարակական արժեքներն անհրաժեշտ են՝ օգնելու մարդկությանը կյանքում ճիշտ ուղղությամբ շարժվելու, սակայն դրանք երբեք չպիտի վերածվեն մարդկային զանգվածների կողմից գործադրվող գորշ բռնապետության:*

*Փառք Աստծո, մեզ բոլորիս բախտ է վիճակվել ապրելու մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ուղղակիորեն տեսանք մեր երկրի ազատագրումը խորհրդային կաշկանդիչ համակարգից: Այժմ անցել են այն ժամանակները, երբ աստվածպաշտությունը խավարամտություն էր համարվում, իսկ հոգեվերլուծությունը և հոգեթերապիան՝ բուրժուական արժեքներ: Այժմ, սիրելի ունկնդիրներ, տեղի է ունենում հարացույցի փոփոխություն: Դառնալով հոգեբաններ, հոգևորականներ կամ այլ գիտությունների մասնագետներ՝ Դուք պետք է ինքներդ ուղղություն ցույց տաք խորհուրդ փնտրող անձանց և չափանիշներ սահմանեք ապագայում հասարակական կյանքի համար, որպեսզի այն հաջող ընթանա:*

*Եվ դրան հասնելու համար ցանկացած հոգևորական և հոգեբան պետք է նախևառաջ իր համար հստակ կերպով սահմանած լինի. ո՞վ է առհասարակ մարդ արարածը. ո՞րն է նրա կյանքի խորհուրդը և որո՞նք են նրա ներքին, էական հատկանիշները: Մարդու մասին այս հիմնական գիտելիքն անհրաժեշտ է մեզ բոլորիս, որպեսզի այդ հիմքի վրա կարողանանք կառուցել մեր այսօրվա անհատական և հասարակական կյանքը:*

*Ես վստահ եմ, որ այսօրվա մեր համեստ գիտաժողովն իր դրական ազդեցությունը պետք է ունենա, այն առումով, որ հոգեբանության արդի ձեռքբերումները և շուրջ 2000 տարիների ընթացքին եկեղեցական հայրերի կողմից մշակված աստվածաբանությունը՝ մեր հոգևոր և աշխարհիկ ուսումնական հաստատությունների սաներին հարուստ զինանոց են փոխանցելու»:*

Նիստի Ա բաժնում, որը վարում էր դպրաբժշկական հոգեբան, դպրանոցում հոգեբանության դասախոս Կամո Վարդանյանը, ընթերցված առաջին թեման էր՝ «Աստծո պատկերը և նրա շեղումն անձի հոգեկանում»: Բանախոսը՝ դպրանոցի Դ լսարանի սան Էդգար դպիր Թադևոսյանը, ցույց տվեց մարդու մեջ Աստծո պատկերի ձևավորման ընթացքը և կարևորությունը, դրա շեղման պատճառներն ու հետևանքները, որոնցից մեկը մանկական տարիքում երեխայի մեջ Աստծո պատկերի անհստակ ձևավորումն է, ինչը, ցավոք, մեծ չափով բնորոշ է մեր հասարակությանը՝ պայմանավորված նախկին քաղաքական համակարգի գաղափարախոսությամբ:

Երկրորդ զեկուցման թեման էր՝ «Նպաքքրքրությունների դերը անձի հոգեկանում», որը ներկայացրեց Մաշտոցի անվան համալսարանի հոգեբանության ֆակուլտետի IV կուրսի ուսանողուհի Սոնա Գրիգորյանը: Զեկուցողն առանձնապես կարևորեց մարդու հետաքրքրությունների դերը հատկապես ապագայի ծրագրերի և ստեղծագործական ունակությունների դրսևորման ժամանակ:

Հաջորդը Վազգենյան Հոգևոր Դպրանոցի Դ լսարանի սան Ստեփան դպիր Սահրադյանի «Հույզերը և զգացմունքները մարդու հոգեկանում» զեկուցումն էր, որում փորձ արվեց ներկայացնելու քրիստոնեական երեք մեծագույն առաքինություններով՝ հավատով, հույսով ու սիրով լցված մարդու հոգեկան կեցվածքը և այդպիսի մարդու դիրքորոշումը կյանքի բազմազան հանգամանքների հանդեպ:

Չորրորդ բանախոսությունը խորագրված էր «Միջանձնային հարաբերություններն ու կոնֆլիկտները»: Ըստ ընդունված տեսության՝ դասարանում բարձր առաջադիմություն հնարավոր է միայն կոնֆլիկտների լիակատար բացակայության դեպքում, սակայն զեկուցողը՝ ԵՊՀ-ի հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայի I կուրսի ուսանողուհի Արմինե Օհանյանը, տարբեր դասարանների աշակերտների շրջանում իր կատարած դիտարկումների հիման վրա հանգել էր այն եզրակացության, որ հնարավոր է նաև հակառակը՝ կոնֆլիկտների առկայության դեպքում բարձր և բացակայության դեպքում նաև ցածր առաջադիմության առկայությունը:

Ա բաժնի վերջին զեկուցման թեման էր՝ «Հիպնոսը որպես հոգեթերապիայի յուրահատուկ մեթոդ»: Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի IV կուրսի ուսանողուհի Հայկուհի Ավետիսյանն ուրվագծեց որոշ մեթոդներ և սկզբունքներ, որ կիրառում են հոգեբուժության այս ուղղության մասնագետները՝ օգնելու հիվանդին կամ այցելուին:

Բ բաժնի առաջին զեկուցումն էր՝ «Ինքնասպանության հոգեբանական ասպեկտները»: Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի V կուրսի ուսանողուհի Անյուտա Մարգարյանը ներկայացրեց այն հիմնական պատճառները, որ վերաճելով հիվանդագին ապրեմանի՝ անհատին մղում են իրեն զրկել Աստծո մեծագույն պարգևից: Նյութը պատրաստվել էր ազատազրկվածների շրջանում ուսանողուհու կատարած ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Նույն երևույթի հոգևոր կողմին էր անդրադարձել դպրանոցի Դ լսարանի սան Սամվել դպիր Հարությունյանը՝ «Ինքնասպանության հոգևոր ասպեկտները» վերնագրված բանախոսության մեջ: Քրիստոնեական վարդապետությունն ինքնասպանությունը համարում է ստվածընդդեմ, ուստի որքան էլ փորձենք, միևնույն է՝ ինքնասպանին արդարացնելու լուրջ ու համոզիչ փաստարկներ չեն գտնվի: Հուսահատության այս ծայրագույն աստիճանին հասած անձինք կորցնում են ինքնավերահսկումը և կամավոր կերպով զրկվում անդենականում շնորհվելիք վարձից՝ իբրև խաղուցում այսրաշխարհային փառասպանքները և դժվարությունները հաղթահարելու: Այդպիսի մարդկանց վրա արգելված է կարգ կատարելը, ինչպես նաև հոգեհանգստյան աղոթքով Աստծո ողորմությունը հայցելը:

«Անհատական խոստովանողի հոգևկան ապրումները» թեմայով զեկուցում կարդաց Վազգենյան Հոգևոր Դպրանոցի Դ լսարանի սան Վարդան դպիր Սարոյանը: Մեր Եկեղեցին, ինչպես հայտնի է, մեղքերի հավաքական խոստովանությունից զատ ունի նաև անհատական, առանձին, այսպես կոչված՝ «ականջին ասվող խոստովանության» ավանդույթը: Թե ինչպիսի ապրումներ է ունենում մարդը, որ իր հոգին բացում է հոգևորականի առաջ, փորձ արվեց ներկայացնել այս բանախոսության մեջ:

Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի V կուրսի ուսանողուհի Արմինե Բաղդասարյանի «Երևակայությունը որպես բարձրագույն իմացական գործընթաց» զեկուցման մեջ շեշտվեց այն միտքը, թե մարդկության առաջընթացը թերևս չունենար այն թափը, եթե մարդը զուրկ լիներ իր այս հատկությունից: Անձնական մակարդակի վրա ևս երևակայությունը խթանիչ ներգործություն ունի, եթե այն առողջ է, և մարդը չի դարձել իր երևակայության «բնակիչը»:

Վերջին բանախոսությունը՝ «Ստիգմաների (վիրանշանների) մասին. Աստվածաբանական-հոգեբանական համառոտ ակնարկ», նվիրված էր մի հարցի, որին մեր եկեղեցական մատենագրությունը գրեթե չի անդրադարձել: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանի սան Արտյոմ դպիր Անանյանը, օգտվելով Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիների արձանագրած դեպքերի հիշատակություններից, ներկայացրեց Քրիստոսի ունեցած այդ վիրանշանների՝ ջերմեռանդ հավատացյալների վրա հայտնվելու փաստերը, ստիգմաների տեսակներն ու դրանք կրողների ապրած հոգեվիճակը:

Նստաշրջանի ավարտին իրենց ամփոփիչ խոսքն ասացին բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոստանդին Դանիելյանը և բժշկական գիտությունների թեկնածու Թելման Վանունին: Հարգարժան հյուրերն արձանագրեցին հոգևոր կրթօջախների հոգեբանական գիտելիքների գոհացուցիչ մակարդակը և հետագայում այսպիսի առիթների վերստին ընձեռումով զույգ բնագավառների ուսանողությանը ինքնադրսևորման հնարավորություն տալու օգտակարությունը: Այս կարգի հավաքները հնարավոր են դարձնում հոգեկանի և հոգևորի հետ կապված որևէ խնդրի երկկողմանի վերլուծությունը, որը կարևոր է հարցի համակողմանի պարզաբանման հայեցակետից:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*
*Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Զ լսարանի սան*

# ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր ճեմարանի չորս շրջանավարտների ավարտական թեզերի պաշտպանության:

Գերազանց գնահատվեց Տ. Մեսրոպ աբղ. Պարսամյանի ավարտական թեզը՝ «Առ և ի նախնիներն՝ իմաստային առումները ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանի» թեմայով (ղեկ.՝ բ. գ. թ. Պ. Բեդիրյան):

Հաջողությամբ իրենց ավարտաճառերը պաշտպանեցին նաև Արթուր սրկ. Քարտաշյանը՝ «Գանձասարի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի կյանքը, գործունեությունը և պատմագիտական ժառանգությունը» (ղեկ.՝ պ. գ. թ. Գ. Գրիգորյան), Արթուր սրկ. Պետրոսյանը՝ «Հայաստանի ազատագրության մի ծրագիր 18-րդ դարի 60-ական թվականներին. Հովսեփ Էմին և Հովնան վարդապետ» (ղեկ.՝ պ. գ. թ. Պ. Հովհաննիսյան), և Մհեր սարկավագ Ղահրամանյանը՝ «Ամուսնաընտանեկան իրավունքը միջնադարյան Հայաստանում ըստ կանոնական սովորութային և աշխարհական իրավունքի նորմերի» (ղեկ.՝ պ. գ. դ. Ռ. Վարդանյան):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ




ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԾԱԳՐԵՐԸ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գահակալության 4-րդ տարեդարձի օրը, մեկնեց Արարատի մարզ՝ կատարելու Մասիս քաղաքում կառուցվող Ս. Թադեոս եկեղեցու հիմքերի օրհնությունը: Հայոց Հայրապետի շքախմբում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, հոգեշնորհ հայրեր, սարկավագներ:

Արարողությանը մասնակցեցին նաև ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, ԱԺ պատգամավորներ, Արարատի մարզպետ Ալիկ Սարգսյանը, ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Մասիսի քաղաքային իշխանության ներկայացուցիչներ և բազմաթիվ մասիսցիներ:

Ս. Թադեոս եկեղեցու հիմքերը դրվել են դեռևս 1991 թ.՝ այն ժամանակ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի օրհնությամբ: Այսօր արդեն Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ վերասրբագործվեցին եկեղեցու հիմքերը՝ ազդարարելով ընդհատված շինարարական աշխատանքների սկիզբը: Ս. Թադեոս եկեղեցին, որը կլինի Հայաստանի ամենամեծ եկեղեցիներից մեկը, կառուցվելու է տեր և տիկին Հրանտ Վարդանյանների բարերարությամբ՝ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջոցով: Եկեղեցու ճարտարապետներն են բարեհիշատակ Արթուր Թարխանյանն ու նրա դուստրը՝ Անահիտ Թարխանյանը:

Հավարտ օրհնության հավատացյալ ժողովրդին իր հայրապետական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձր գնահատելով նաև բարերարների եկեղեցասիրությունը:

«Եկեղեցաշինությունը հայրենաշինություն է: Որովհետև 1700 տարիներ շարունակ մեր ժողովրդի զավակունք կարողացել են պաշտպանել հողը հայրենի շնորհիվ լուսավորչահաստատ մեր հավատքի: Կարողացել են դիմագրավել ամեն փորձություն շնորհիվ ուռ Աստված ունեցած հավատքի: .... Մենք գոհություն ենք վերառաքում երկինք, որպես Հայրապետ Հայոց, որ Տերը արժանի դարձրեց Մեզ կատարել վերասրբագործումը այս եկեղեցու Հովվապետական Մեր գահակալության 4-րդ տարում: Աղոթք ենք առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը իր օրհնության ներքո խաղաղ և անվրդով պահի ազգս հայոց», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով ներկաներին հավատարիմ մնալ մեր հայրերի սուրբ հավատքին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՕԾՎԵՑ ՎԱՐԴԵՆԻԿ ԳՅՈՒՂԻ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 8-ին տեղի ունեցավ Գեղարքունյաց թեմի Վարդենիկ գյուղի Ս. Հրեշտակապետաց նորակառույց եկեղեցու օծումը: Օծման արարողությունը կատարեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը՝ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանի և Մնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Տ. Գարեգին աբղ. Հարությունյանի մասնակցությամբ:

Գյուղի 14-րդ դարի Ս. Աստվածածին եկեղեցին ավերվել էր խորհրդային տարիներին, և արդեն մի քանի տասնամյակ 11 հազար բնակչություն ունեցող Վարդենիկը չուներ իր աղոթատունը: Երկու տարի առաջ վարդենիկցի բարերար Միքայել Միքայելյանի հովանավորությամբ և համագյուղացիների ջանքերով սկսվեցին նոր եկեղեցու կառուցման աշխատանքները: Այսօր արդեն հին եկեղեցու տեղում վեր է խոյանել նորակառույց եկեղեցին: Ճարտարապետ Սամվել Դերձյանի մտահղացմամբ նոր եկեղեցին կառուցվել է խոնարհված եկեղեցու վրա՝ Ս. Հրեշտակապետաց եկեղեցու ներքնահարկում պահպանելով հնամենի եկեղեցու Սուրբ խորանը:

Օծման արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն: Շնորհավորելով վարդենիկցիներին նոր եկեղեցու կառուցման առթիվ՝ Առաքել Սրբազանն ընթերցեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որով, ի գնահատություն եկեղեցաշեն գործունեության, Միքայել Միքայելյանը պարգևատրվեց Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս էջ 34):



ՎԱՐԴԵՆԻԿԻ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՆՈՐԱՕԾ ԵԿԵՂԵՑԻՆ



ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԸ,
ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԱՐԱՄՅԱՆԸ
ՀԱՎԱՔՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ԿԻՍՈՒՄ ԵՆ ՕԾՄԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

# ՍԱՄԱՐԱՅՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԽԱՉ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 16-ին Սամարա քաղաքում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանն օծեց Ս. Խաչ նորակառույց եկեղեցին:

Եկեղեցին կառուցվել է Սամարայի հայ համայնքի նախագահ Արթուր Մարտիրոսյանի բարերարությամբ, ինչպես նաև համայնքի այլ բարերարների մասնակցությամբ: Հայոց նոր աղոթատունը վեր է խոյանում 400-ամյա քաղաքի կենտրոնում: Եկեղեցու բակում կառուցվել է նաև 1915 թ. Մեծ եղեռնի և 1988 թ. երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթող, որին կից հետագայում կառուցվելու է հայկական դպրոց ու մշակութային կենտրոն:

Ձեռամբ Սրբազան Հոր օծվեցին Ս. Խաչ եկեղեցու գլխավոր և չորս փոքր գմբեթների խաչերը, ապա եկեղեցու օծման սրբազան արարողության ընթացքում գինով ու ջրով լվացվեցին և Սուրբ Մյուռոնով օծվեցին եկեղեցու Ավագ Խորանը, բոլոր սյուներն ու մկրտության ավազանը: Նույն օրը տեղի ունեցավ նաև հուշակոթողի բացումը:

Հանդիսավոր արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել բազմահազար հայորդիներ, որոնց թվում Ռուսաստանում ՀՀ դեսպանության և Ռուսաստանի հայերի միության ներկայացուցիչներ, ռուսահայ այլ համայնքների պատվիրակներ, ինչպես նաև քաղաքային ու համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ՝ քաղաքապետ Գեորգի Լիմանսկու և Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Կ. Տիտովի գլխավորությամբ: Հրավիրյալների թվում էին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևորականներ՝ Ռուս Եկեղեցու Սամարայի և Սիզրանսկի առաջնորդ Սերգի արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, ներկայացուցիչներ կաթոլիկ և լյութերական Եկեղեցիներից, իսկ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացմանը՝ նաև հրեական համայնքի հոգևոր այրեր:

Արարողության ավարտից հետո եկեղեցու կառուցման առթիվ ներկաներին ողջունեցին ու շնորհավորանքի խոսքեր ուղղեցին առաջնորդ Սրբազան Հայրը, Սերգի արքեպիսկոպոսը, Սամարայի քաղաքապետը և այլ հրավիրյալներ, ովքեր ընդգծեցին Եկեղեցիների դերը ժողովրդի կյանքում և կարևորեցին հայ և ռուս երկու ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամությունը:

Արարողության ավարտին տեղի ունեցավ տոնական համերգ՝ երգի-պարի ազգային համույթների մասնակցությամբ:

# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Հոկտեմբերի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոբելյանական փարվա հերթական կիրակի օրը, Ս. Էջմիածինը հյուրընկալել էր ավստրիահայ ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակությունն ընդգրկում է Ավստրիայի և Շվեդիայի հոգևոր հովվությունները՝ կազմավորման առաջին իսկ տարիներից, ավելի քան քսան տարի, առաջնորդ ունենալով Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանին: Մայր Տաճարի օծման 1700-ամյա տարեդարձի առիթով Սրբազան Հոր գլխավորությամբ ուխտի էին եկել մի խումբ հավատացյալներ՝ առավելապես Ավստրիայից: Նրանց էին միացել նաև մի շարք ավստրիացիներ:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ապա ուխտավորներին իր պատգամն ուղղեց Մեսրոպ Սրբազանը (տե՛ս էջ 46):

Ս. Պատարագից հետո ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Ս. Էջմիածինը հյուրընկալել էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Ապա ուխտավորներին իր պատգամն ուղղեց Եզրաս Սրբազանը (տե՛ս էջ 49):

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ա. Դրյուկովը, Համաշխարհային հայկական կազմակերպության նախագահ Արա Աբրահամյանը և բազում ուխտավորներ Մոսկվայից, Սանկտ Պետերբուրգից, Վոլգոգրադից, Եկատերինբուրգից, Տվերից, Դոնի Ռոստովից, Պերմից, Մոլդովայից, Մերձբալթյան երկրներից ու Միջին Ասիայից:

Ս. Պատարագից հետո Վեհարանում ուխտավորներին ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը:

# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 26-ին՝ խաչի վյուտի տոնին, Ս. Էջմիածինը հյուրընկալել էր Կանադայի հայոց թեմի ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Ապա ուխտավորներին իր պատգամն ուղղեց Բագրատ Սրբազանը (տե՛ս էջ 60):

Հավարտ Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1999 թ. հոկտեմբեր 27-ին ՀՀ Ազգային ժողովում կատարված ոճրագործության զոհերի՝ ԱԺ Նախագահ Կարեն Դեմիրճյանի, Վարչապետ Վազգեն Սարգսյանի, Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Հենրիկ Աբրահամյանի, Արմենակ Արմենակյանի, Միքայել Քոթանյանի և Լեոնարդ Պետրոսյանի:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ և ուխտավորներ Կանադայից:

Ս. Պատարագից հետո Վեհարանում Կանադահայոց թեմի շուրջ հիսուն ուխտավորներին ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը:

# ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՓԱՐԻԶԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳՅՈՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԸ

Նոյեմբերի 2-ին Ս. Էջմիածինը հյուրընկալել էր փարիզաբնակ հայ ուխտավորներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին և հյուրերին ողջունեց Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության և հայ հավատացյալների շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ՝ մաղթելով Նորին Սրբությանը կենաց արևշատություն և գահակալության բեղուն օրեր: Ապա ուխտավորներին իր պատգամը հղեց Գյուտ Սրբազանը՝ անդրադառնալով Ս. Էջմիածնի առաքելությանը հայ ժողովրդի կյանքում և աղոթելով առ Աստված Միածնաէջ Սուրբ Աթոռի անսասանության ու հարատևության համար (տե՛ս էջ 63):

Հավարտ Ս. Պատարագի, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման չորրորդ տարեդարձի առթիվ, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Սրբազան արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, թեմակալ առաջնորդներ, միաբան հայրեր, Մայր Աթոռի բարերարներ և ուխտավորներ Փարիզից:

## ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Նոյեմբերի 9-ին Ս. Էջմիածինը հյուրընկալեց բրազիլահայ ուխտավորներին: Մայր Տաճարում Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը: Այնուհետև ուխտավորներին իր պատգամն ուղղեց Տաթև Սրբազանը (տե՛ս էջ 67)՝ ի մասնավորի ասելով. «Մենք այսօր երբ Ուխտի Սուրբ Պատարագ կը մատուցանենք, կը բերենք մեզի հետ Սուրբ Էջմիածնի պանդուխտ զաւակներուն ցաւերն ու փառապանքները, եւ կը խնդրենք մեր հաւատքի Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութիւնը առ Միածին Որդին Աստուած, որ պահպանէ հայ մարդը իր հաւատքին մէջ, ուր որ ալ գտնուի ան: Փրկէ զանոնք օտար հոսանքներէ, որոնք կը հեռացնեն մեր սիրասուն որդիները իրենց հարազատ մօրմէն, արմատներէն, Մայր Հայրենիքէն եւ Առաքելահիմն Աստուածակերտ մեր Մայր Եկեղեցիէն եւ Սուրբ Էջմիածնէն»:

## ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆ Տ. ԱՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇՅԱՆԸ

Նոյեմբերի 16-ին Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, հերթական Ուխտի Ս. Պատարագը մատուցվեց: Պատարագիչն էր Կ. Պոլսի հայոց Պատրիարքության միաբան Տ. Արամ եպս. Աթեշյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ուխտավոր Սրբազան Հորը ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Ս. Պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Արամ Սրբազանը:

«1700 տարիներ ի վեր մեր Երանաշնորհ Հայրապետներն աղոթեցին մեզ համար, որպեսզի Աստված անսասան պահի իր իսկ ձեռքով հիմնած այս սուրբ եկեղեցին, Հայրապետներն աղոթեցին իրենց տառապած ժողովրդի համար:...Աղոթում ենք մեր բոլորի սիրելի արժանընտիր ու պատվական Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Կաթողիկոսի համար: Թող Աստված առողջությամբ և հաջողությամբ պսակյալ երկար կյանք պարգևի Նորին Սրբությանը, լիակատար հաջողություն իր աստվածահաճո գործունեության մեջ: Եվ թող Հիսուս Քրիստոս անսասան պահի իր իսկ հիմնած Ս. Էջմիածնի եկեղեցին»,- նշեց Սրբազան Հայրը (տե՛ս էջ 70):

Ս. Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ. Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*Լուրեր Վրաստանի հայոց թեմից*

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԸ ԱԽԱԼՑԽԱ

Հոկտեմբերի 5-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը հովվական այցելություն կատարեց Ախալցխայի փարածաշրջան: Ախալցխա քաղաքում Սրբազան Հորը դիմավորելու էին եկել Ախալցխայում Վրաստանի նախագահի նորանշանակ լիազոր ներկայացուցիչ Գեյա Կվարացխելիան, շրջանային վարչության նախագահ Դավիթ Մեփրևելին, շրջանային վարչության նախագահի փեղակալ Արամ Պողոսովը, քաղաքապետ Թամազ Պեփրեաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գոչա Գվարամաձեն, շրջանի հոգևոր հովիվներ Տ. Ռուբեն և Տ. Շմավոն քահանա Սաղոյանները, հասարակական ու երիտասարդաց միության ներկայացուցիչներ:

Նույն օրը, առավոտյան, առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց տեղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Պատարագի ընթացում դիմելով ներկաներին՝ Սրբազան Հայրը մասնավորապես նշեց. «Եկեղեցին միայն այս քարե շինվածքը չէ, այն կենդանանում և շնչավորվում է ձեզանով, ձեր հոգեբուխ աղոթքներով, ձեր լռիկ ներկայությամբ: Հայրենիքից դուրս մենք հայ ենք մնացել և մնում ենք միայն մեր հայրերի ավանդած հավատքով, մեր Եկեղեցիով և մեր մշակույթով»:

Պատարագի ավարտին առաջնորդ Սրբազան Հայրը տեղի Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդարանում եղբայրական ջերմ հանդիպում ունեցավ եպիսկոպոս Թեոդորեի հետ:

Այնուհետև Ախալցխայի թիվ 3 միջնակարգ դպրոցի դահլիճում առաջնորդ Սրբազան Հայրը հանդիպեց քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների և երիտասարդների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին շրջանի հայության հուզող որոշ խնդիրներ:

Երեկոյան Սրբազան Հորը ջերմագին խանդավառությամբ հյուրընկալեցին Մեծ Պաման գյուղի բնակիչները, որտեղ և տեղի Սուրբ Խաչ եկեղեցում հոգևոր սպասավորները Գերաշնորհ Վազգեն եպիսկոպոսի մասնակցությամբ հանդիսավոր կերպով կատարեցին երեկոյան ժամերգություն և վերադարձան Թբիլիսի:

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԸ ՋԱՎԱԽՔ

Սեպտեմբերի 27-ին՝ Սուրբ Խաչի տոնին, հովվական անդրանիկ այցով Ջավախք մեկնեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը: Մարդաշատ էր Ախալքալաքի փոխառաջնորդանիստ Սուրբ Խաչ եկեղեցին: Սրբազան Հորը դիմավորելու և օրհնությունն ստանալու էին եկել Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի փոխառաջնորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը, Ախալքալաքի շրջանային վարչության նախագահի տեղակալ Մխիթար Խուդիկյանը, քաղաքապետ Նաիրի Իրիցյանը, Ախալքալաքի հոգևոր հովիվ Տ. Սամվել քհն. Թորոսյանը, ծխական խորհրդի և Երիտասարդաց ու Տիկնանց միության անդամներ, մանկավարժներ, դպրոցականներ և հավատացյալներ: Նույն օրը Սրբազան Հայրը հանդիպում ունեցավ տիկնանց միության անդամների հետ:

Սեպտեմբերի 28-ի առավոտյան եկեղեցին վերստին լեփ-լեցուն էր: Հավատացյալներ էին եկել նաև հարևան գյուղերից՝ մասնակցելու Ս. Պատարագին, լսելու առաջնորդ Սրբազան Հոր քարոզը, որի ընթացքում Սրբազանը մասնավորապես ասաց. «Տիրոջ խաչափայտը գերությունից վերադարձվելիս ժամանակավորապես հանգրվանել է Կարին քաղաքում, որտեղից 1828 թ. գաղթել են այսօրվա ախալքալաքցիներից շատերի նախնիները, և պատահական չէ, որ այս եկեղեցին անվանվել է «Սուրբ Խաչ»:

Պատարագի ավարտին Սրբազան Հայրը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արագվա գյուղ, ուր և այցելեց տեղի Սուրբ Գևորգ և Սուրբ Կուսանաց եկեղեցիներ: Այնուհետև վերադառնալով Ախալքալաք՝ հանդիպեց Ջավախեթիի մարզամշակութային միության անդամների և ռադիոկայանի աշխատակիցների հետ: Նույն օրը, երեկոյան, Վիրահայոց թեմի առաջնորդը գնաց նաև Նինոծմինդայի շրջանի Խոջաբեկ գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցի, ուր 1895 թ. հունիսի 15-ին այցելել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, որտեղ նրան դիմավորեցին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եղիա ավագ քհն. Թազայանը, ծխական խորհրդի, տիկնանց բարեսիրաց ընկերության և երիտասարդաց միության անդամներն ու հավատացյալ ժողովուրդը: Առաջնորդ Սրբազան Հայրը և հոգևոր դասը Սուրբ Սարգիս եկեղեցում կատարեցին երեկոյան ժամերգություն:

Սեպտեմբերի 29-ին Գերաշնորհ Սրբազան Հայրը հանդիպեց Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ Արտուշ Համբարձումյանին: Վարչության նախագահը բարձր գնահատեց շրջանում փոխառաջնորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի ծավալած գործունեությունը: Սրբազան Հայրն իր գոհունակությունը հայտնեց շրջանային վարչությանը՝ եկեղեցուն և հոգևոր առաջնորդին աջակից լինելու համար, և նվիրեց «Հայ Եկեղեցու Սրբազան Պատարագը» գիրքը:

Նույն օրն առաջնորդ Սրբազան Հայրը քաղաքապետարանում հանդիպեց նաև քաղաքապետ Նաիրի Իրիցյանի և աշխատակիցների հետ: Հովվական այցի ավարտին Վիրահայոց թեմի առաջնորդն այցելեց Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոց և մասնակցեց Սրբոց Թարգմանչաց նվիրված միջոցառմանը:

Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան այցի ընթացքում Տ. Վազգեն եպս. Միրզախանյանին ուղեկցում էին Տ. Նարեկ քհն. Ղուշչյանը և Էմիլ դպիր Սահակյանը:

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԸ ԲԱԹՈՒՄԻ

Հոկտեմբերի 18-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, ուղեկցությամբ Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո Քարթլիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանի և Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հուսիկ քհն. Հարությունյանի, հովվական այցելություն կատարեց Բաթումի:

Աջարիայի Ինքնավար Հանրապետության սահմանագծում հոգևոր հայրերին դիմավորեցին Աջարիայի հայերի «Վերածնունդ» միության նախագահ պարոն Արմեն Գևորգյանը, Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հակոբ քահանա Սարոյանը և բաթումահայ համայնքի պատվարժան ներկայացուցիչներ: Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում միասնական փոքրիկ աղոթքից հետո տեղի հոգևոր հովիվ Տ. Հակոբ քահանան հանդես եկավ բարիգալստյան խոսքով, որից հետո բաթումահայ հավատացյալներին իր օրհնության խոսքն ուղղեց առաջնորդ Սրբազանը:

Նույն օրը, երեկոյան, Գերաշնորհ Սրբազան Հայրը հանդիպում ունեցավ Սուրբ Փրկիչ եկեղեցու ծխական խորհրդի անդամների հետ, որտեղ քննարկվեցին եկեղեցուն և համայնքին հուզող մի շարք հարցեր:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 19-ին, Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը Ս. Պատարագ մատուցեց տեղի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Ս. Պատարագին ներկա էին բազմաթիվ հավատավոր հայորդիներ: Հրնթացս Ս. Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրն իր խոսք-քարոզում խոսեց Եկեղեցու ազգանորոգ ու փրկարար առաքելության մասին՝ ընդգծելով, որ հայկական դպրոցները հայապահպանման հիմնասյուներն են հայրենիքից դուրս, և հորդորեց ներկաներին՝ ապրել ազգային-եկեղեցական ավանդական կյանքով՝ մնալով իրենց երկրի օրինապահ քաղաքացիները:

Առաջնորդ Սրբազան Հայրը գոհունակության և գնահատանքի խոսք ուղղեց և մի Առաքելական... թագիրը նվիրեց Բաթումիի հոգևոր հովիվ Տ. Հակոբ քհն. Սարոյանին, ով նվիրվածությամբ և պատասխանատվությամբ կրում է իր վրա դրված դժվարին, բայց նաև ազգանվեր առաքելությունը: Սրբազան Հայրը գոհունակությամբ հիշեց նաև նախկին հոգևոր հովիվ Տ. Աբգար աբղ. Հովակիմյանին, ում ջանքերի շնորհիվ վերականգնվել է տեղի միակ հայկական եկեղեցին: Սրբազան Հայրը ապա գնահատանքի և երախտագիտության խոսք ուղղեց և մի գեղեցիկ սրբանկար նվիրեց նաև Բաթումիի հայերի «Վերածնունդ» միության նախագահ պարոն Արմեն Գևորգյանին, ով իր նյութական և բարոյական օժանդակությամբ, որպես մշտարթուն բարերար և բոլորանվեր ու եկեղեցասեր հավատավոր հայորդի, շարունակաբար կանգնած է ազգախնամ Մայր Եկեղեցու կողքին:

Հավարտ Ս. Պատարագի հոգևոր հայրերը մի խումբ բաթումահայերի հետ այցելեցին տեղի գերեզմանատուն, որտեղ Աջարիայի հանրապետության նախագահ տիկար Ասլան Աբաշիձեի վաղամեռիկ տիկնոջ՝ ազնվագութ բարերար և հասարակական գործիչ Մագուլի Գոգիկիձե-Աբաշիձեի շիրմին կատարեցին հոգեհանգստյան արարողություն: Այնուհետև

տեղի ունեցավ հանդիպում Բաթումիի հեռուստատեսության հայկական բաժնի լրագրողների հետ:

Նույն օրը առաջնորդ Սրբազան Հայրը հանդիպեց նաև բաթումահայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը հաջորդեց համայնքի կողմից հայրենիքից հրավիրված հայ երաժիշտների համերգ-կատարումը, որից հետո Սրբազանը, ուղեկցությամբ Արմեն Գևորգյանի և Աջարֆոտոյի տնօրեն Մյասն Բարոյանի, հանդիպեց Աջարիայի Ինքնավար Հանրապետության նախագահ տիար Ասլան Աբաշիձեին: Հանդիպմանն ավելի ուշ միացավ նաև Վրաստանի խորհրդարանի «Վերածնունդ» խմբակցության նախագահ պարոն Ջեմալ Գոգիտիձեն:

Հանդիպման ընթացքում Սրբազանը երախտագիտություն հայտնեց տեղի հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող ջերմ վերաբերմունքի ու աջակցության համար: Սրբազանը շնորհակալություն հայտնեց նաև Աջարիայի հեռուստաընկերությունում հայկական բաժին բացելու համար: Իր գնահատանքը նախագահին ուղղեց և արծաթե արծիվ հուշանվեր նվիրեց նաև հայ համայնքի նախագահ Արմեն Գևորգյանը: Պատասխան խոսքում տիար Աբաշիձեն նշեց, որ նույն պատրաստակամությամբ կշարունակի աջակցել հայ համայնքին, և իր ջերմագին ողջույնները փոխանցեց ազգիս Վեհափառ Հայրապետին:

Հաջորդ առավոտյան առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Փրկիչ եկեղեցում հանդիպում ունեցավ Բաթումիի հայկական դպրոցի ուսուցչական կազմի հետ: Հանդիպման ընթացքում խոսվեց դպրոցի առջև ծառացած կարևորագույն մի քանի խնդիրների մասին: Ուսուցչական կազմն իր առանձնակի շնորհակալությունն ու գնահատանքն ուղղեց պարոն Արմեն Գևորգյանին նյութական օժանդակությունների և բազմաբնույթ աջակցությունների համար, նրանք բարձր գնահատեցին նաև տեղի հոգևոր հովիվ Տ. Հակոբ քհն. Սարոյանի պարբերական այցելությունները դպրոց: Փոխադարձաբար առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց հայ կրթօջախի դպրության մշակներին և մանկական-կրոնական գրականություն նվիրեց դպրոցի աշակերտությանը:

Նույն օրը առաջնորդ Սրբազանը փոխառաջնորդ Հոր ուղեկցությամբ վերադարձավ մայրաքաղաքի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցի:

# ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի հայկական դպրոցների մանկավարժների համար Ուսուցչի օրը նշանավորվեց մի հաճելի անակնկալով: Առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում նրանց շնորհավորեցին մասնագիտական տոնի առիթով, և շնորհավորանքն ուղեկցվեց նվերներով, որոնք տրվեցին Վիրահայոց թեմի կողմից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի օժանդակությամբ: Իսկ միջոցառումը նախաձեռնվել և կազմակերպվել էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Խոսրոևի և Վրաստանի կրթության նախարարության ազգային ծրագրերի փոխկապակցման վարչության պետ Նորայր Բաղդասարյանի նախաձեռնությամբ.

Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը շնորհավորանքի իր խոսքում առանձնապես շեշտեց սփյուռքահայ կրթօջախների պահպանման կարևորությունն ազգապահպանության գործում:

- Մեր նպատակն է քաջալերել մեր ուսուցիչներին և գոնե այս կերպով գնահատել նրանց ազգապահպան աշխատանքը: Հորդորել, որ այսուհետև ևս շարունակեն իրենց նվիրյալ ծառայությունը հանուն հայ մանուկների հայեցի դաստիարակության:

Իր լինելության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին հանդես է եկել նաև ազգապահպան առաքելությամբ, ուստի պատահական չէր Սուրբ Գևորգ եկեղեցում կատարվածը. գեղեցիկ իրադարձությունը հայ դպրության մշակների հայրենանվեր աշխատանքի գնահատման մի փոքրիկ արտահայտություն էր:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*
*Ուսուցչուհի*

*Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս*

# ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊՍ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԷ ՔԻՐԻԼ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ

Մոսկուայի Ռուսական Պատրիարքարանի Արտաքին Յարաբերութեանց Բաժանմունքի նախագահ եւ Սմոլենսքի ու Քալինինկրատի Մետրոպոլիտ Քիրիլ Նիւ Եորք ժամանած էր՝ մասնակցելու համար Ռուս Ուղղափառ Սէյնթ Նիքլըս Տաճարի հարիւրամեակի հանդիսութեանց:

Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Հինգշաբթի, Նոյեմբեր 13-ին, նախաճաշ-ընդունելութիւն մը կազմակերպեց ի պատիւ Ռուս Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականին:

Այս ընդունելութեան հրաւիրուած էին նաեւ Արեւելեան Ուղղափառ եւ Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր, որոնց կարգին Մերքիւրիոս Եպիսկոպոսը, որ այս ափերուն կը ներկայացնէ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Պատրիարք Ամեն. Տ. Ալեքսին:

Ս. Վարդան Մայր Տաճարի մուտքին առաջնորդ Սրբազան Հայրը դիմաւորեց պաշտօնական հիւրերը, որոնք Մայր Տաճարին մէջ գոհաբանական աղօթք մատուցին եւ ապա բարձրացան Առաջնորդարանի դահլիճը, ուր տեղի ունեցաւ հիւրասիրութիւնը:

Այս ընդունելութեան ներկայ էին նաեւ Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան, Գերշ. Տ. Անանիա արքեպս. Արապաճեան, Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան, Հոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆինտըքեան, Հոգշ. Տ. Սիմէոն աբղ. Օտապաշեան, Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ մնայուն դեսպան Տիար Արմէն Մարտիրոսեան:

Բացման աղօթքէն ետք թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան կատարեց բարիգալստեան խօսքը: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, որ ընդառաջելով իր հրաւէրին ներկայ կը գտնուէին այս ընդունելութեան: Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ իր կողմէ բարի գալուստ մաղթեց Քիրիլ Մետրոպոլիտին: Ըսաւ, որ երկու շաբաթ առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կը գտնուէր եւ այս ընդունելութեան մասին տեղեկացուցած էր Նորին Սրբութեան, որուն յարաբերութիւնը Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Պատրիարք Ամեն. Տ. Ալեքսիի հետ ջերմ եւ բարեկամական է: Երկու շաբաթ ետք, պատասխանելով Ալեքսի Պատրիարքի հրաւէրին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը պիտի այցելէ Մոսկուա՝ հանդիպում ունենալու համար Վրաց Իլիա Կաթողիկոսին եւ Ատրպէյճանի Շէյխ-Էլ Իսլամին հետ:

Սրբազան Հայրը ըսաւ նաեւ, որ պատիւ ունեցած է Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ ողջունելու Ալեքսի Պատրիարքը, ինչպէս նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետը: «Հայ ժողովուրդը մեծ յարգանք ունի Ռուս Եկեղեցւոյ հանդէպ, որովհետեւ Ռուս Եկեղեցին իր ժողովուրդին եկեղեցին է, ինչպէս Հայց. Եկեղեցին իր ժողովուրդին Եկեղեցին է:

Աստուծոյ կամքով, նոր հազարամեակը մեզի բնծայած է նոր պայմանութիւններ՝ մեր կապերն աւելի սերտացնելու եւ միասնաբար դիմագրաւելու մեր ժողովուրդներուն բոլոր աշխարհի մարտահրաւէրները: ... Կ'աղօթենք, որ Տէրը Ձերդ Սրբազնութեան պարգեւէ աւանդ իմաստութիւն եւ ուժ՝ շարունակելու համար ձեր առաքելութիւնը»:

Իր խօսքի աւարտին առաջնորդ Սրբազան Հայրը Քիրիլ Մետրոպոլիտին նուիրեց Մայր Տաճարի Ս. Վարդան պատկերով մեդալը:

Քիրիլ Մետրոպոլիտ նախ շնորհակալութիւն յայտնեց իր բարեկամ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին՝ կազմակերպուած հիւրասիրութեան համար, եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք միասնաբար համարակալ դժուարին պատմութիւններ ունեցած ենք: Սակայն այդ դժուարին ժամանակներու ընթացքին իսկ մենք հաստատած ենք զօրաւոր յարաբերութիւններ: ... Այս պատմական յարաբերութիւնները եւ հոգեկան կապը մեծ ուժ ներկայացնելով՝ օգնեցին, որպէսզի միանանք քաղաքական մեծ դժուարութիւններու ժամանակ: Երկու Եկեղեցիներու յարաբերութիւնը կարեւոր ազդակ մը եղած է, որպէսզի երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող կապը զօրանայ»: Եւ իր խօսքը ուղղելով առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին՝ ըսաւ. «Դուք իսկական եկեղեցական ղեկավար մըն էք՝ ոչ միայն Հայ Եկեղեցւոյ, այլ նաեւ Ուղղափառ Եկեղեցիներու մէջ եւ բոլոր քրիստոնեաներուն համար»:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 35-ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱՒ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՇՈՒՔՈՎ

Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ, անմիջական դրացիութեամբ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Կեդրոնին եւ նշանաւոր «Էմփայր Սթէյթ Պիլտինկ»ի, կառուցուած է գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարը, որուն օծումը կատարեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1968 թուականին:

Տարիներու երազ մըն էր, որ իրականացաւ շնորհիւ թեմակալ առաջնորդներու եւ հաւատաւոր ու նուիրեալ անհատներու անխոնջ ու յարատեւ աշխատանքին եւ առատաձեռն նուիրատուութեան: Այսօր Ս. Վարդան Մայր Տաճարը Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան թեմի Առաջնորդարանն ու Մշակութային Կեդրոնը հիացմունքին առարկան են բոլոր այցելուներուն եւ հայ ու ոչ հայ զբօսաշրջիկներուն:

**Տարեդարձի Համերգ**

Ս. Վարդան Մայր Տաճարի 35-ամեակի հանդիսութիւնները սկիզբ առին Ուրբաթ, Նոյեմբեր 14, Մայր Տաճարին մէջ կազմակերպուած համերգով մը՝ մասնակցութեամբ ծանօթ արուեստագէտներու:

Բացման խօսքն արտասանեց Մայր Տաճարի Լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Ջիւեան, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ բացատրեց օրուան հաւաքոյթին շարժառիթը: Հետեւեալ արուեստագէտները բերին իրենց մասնակցութիւնը. Մայր Տաճարի դպրաց դասի մենակատարուհիներ Մարօ Փարթամեան, Սոլանժ Մերտինեան, Անահիտ Զաքարեան, Յասմիկ Մէյխանեճեան, Անուշ Պարզի, ինչպէս նաեւ Ճան Վարդան, Երուանդ Քիւչիւքեան, Սամի Մերտինեան, Դաւիթ Ալահվերտեան, Ալեքսանդր Նազարեան, Կարինէ Ուզունեան եւ միջազգային համբաւ վայելող երգեհոնահար Պերճ Ժամկոչեան եւ Մայր Տաճարի «քառեակ»ը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի:

Այս շատ յաջող համերգի վերջաւորութեան՝ գնահատական արտայայտութիւններով փակման խօսքը կատարեց թեմակալ առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան:

**Սարկաւագական ձեռնադրութիւն**

Կիրակի, Նոյեմբեր 16, առաւօտուն, նախքան Ս. Պատարագի մատուցումը, առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան կատարեց սարկաւագական ձեռնադրութիւն: Մայր Տաճարի Լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Ջիւեանի խնդրանքով՝ Ս. Խորանին սպասարկող չորս կիսասարկաւագներ՝ Մանուէլ Ռազումեան, Լեւոն Ալթըփարմաքեան, Արման Գալստեան եւ Նուրհան Էգիք, սարկաւագ ձեռնադրուեցան:

**Տարեդարձի հանդիսաւոր Ս. Պատարագ**

Այս ձեռնադրութիւնէն ետք՝ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գեր. Տ. Նաւասարդ եպս. Կճոյեան: Ս. Պա-

պարագի երգեցողութիւնը կապարեց Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի: Երգեհոնահարներն էին Պերճ Ժամկոչեան եւ Ֆլորանս Աւագեան:

Ս. Պատարագին ներկայ էին ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն ներկայացուցիչ դեսպան Տիար Արմէն Մարտիրոսեան եւ իր ազնիւ Տիկինը, շրջանի հոգեւորականները, Մայր Տաճարի եւ Մշակութային Կեդրոնի կնքահայրերու եւ Շինութեան Կեդրոնական Յանձնախումբի անդամներու հարազատները եւ յոգնախուռն հաւատացեալներ:

Օրուան քարոզիչն էր թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ նախ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետին, որ այս հանդիսաւոր առիթով Իր Հայրապետական պատգամը յղած էր, եւ Նորին Սրբութեան մաղթեց քաջառողջ եւ երկար կեանք եւ յաջողութիւն Իր առաքելութեան: Սրբազան Հայրն իր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ Պատարագիչ Գերշ. Տ. Նաւասարդ եպս. Կճոյեանին եւ ողջունեց ներկայութիւնը դեսպան Արմէն Մարտիրոսեանի՝ ըսելով, որ Հայաստանի Հանրապետութեան այս ներկայացուցիչները կ'ամրացնեն արտասահմանի կապը Հայրենիքի եւ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ: Իր քարոզին բնաբան ընտրած էր «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: Ըսաւ, որ 35 տարիներ առաջ բացառիկ դէպք մը պատահեցաւ Նիւ Եորք քաղաքի մէջ, ուր օծուեցաւ Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ առաջին Մայր Տաճարը՝ ձեռամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի եւ նախաձեռնութեամբ խումբ մը տեսլապաշտ հայերու: 1700 տարի առաջ Ս. Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ կառուցուած էր առաջին քրիստոնեայ եկեղեցին՝ Ս. Էջմիածին, որուն յաջորդած էին բազմաթիւ եկեղեցիներ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ՝ շարունակելով քրիստոնէական հաւատքի արտայայտութիւնը հանդիսացող աղօթքի տուներ կառուցանելու աւանդութիւնը: Նորին Սրբազնութիւնը կոչ ըրաւ, որ մենք բոլորս, հետեւելով մեր նախահայրերուն, ըլլանք «լուսոյ խորան» կառուցողներ:

Յաւարտ Ս. Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրը, պատարագիչ Սրբազանը, ներկայ եկեղեցականները եւ պաշտօնական հիւրերը թափօրով ուղղուեցան Մայր Տաճարի բակը, ուր Տաճարի արտաքին պատին վրայ զետեղուած էր մարմարեայ յիշատակարան մը, որուն վրայ արձանագրուած էին Մայր Տաճարի եւ Մշակութային Կեդրոնի գլխաւոր բարերարներուն եւ Կեդրոնական Յանձնախումբի անդամներուն անունները: Առաջնորդ Սրբազան Հայրը մասնաւոր արարողութեամբ օրհնեց զայն:

**Տարեդարձի ճաշկերոյթ**

Աւելի քան 350 հոգի մասնակցեցան տարեդարձի ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գավուքճեան շքեղ հանդիսասրահին մէջ:

Պատրաստուած յիշատակի գրքոյկին մէջ տպուած էին պատգամները Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարքին եւ Թեմակալ Առաջնորդին:

Վեհափառ Հայրապետը կ'ըսէր. «. . . Գոհութիւն եւ Փառք Աստուծոյ, տասնամեակներ շարունակ Սուրբ Վարդան եկեղեցին կենտրոնն ու առատաբուխ ակունքն է հոգեւոր եւ ազգային Ձեր կեանքի, որի ներշնչուն կամարների ներքոյ Բարձրեալ Տիրոջ կենարար շնորհներով զօրացած համայնքային Ձեր կեանքն էք կառուցում՝ ամուր կապուած մեր հայրերի

սուրբ հաւատքին եւ հայրենեաց նուիրական աւանդներին: Մենք սիրով ենք յիշում Հայրապետական Մեր անդրանիկ այցելութիւնը Սուրբ Վարդան եկեղեցի, երբ Տիրոջ կամքով առիթ ունեցանք Ձեզ հետ միասին Մեր աղօթքը մէկտեղել՝ ի շինութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն աշխարհասփիւռ Ազգիս Հայոց: Մենք գոհունակութեամբ ականատես դարձանք Ձեր նուիրումի ու հաւատքոյ գործերին եւ ուրախ ենք նշելու, որ Նիւ Եորքի մեր «փոքր ածուն»՝ Սուրբ Վարդան եկեղեցու Քրիստոսասէր համայնքը, յաջողութեամբ շարունակում է ազգային եւ եկեղեցական իր կեանքը՝ նոր էջեր յաւելելով համայնքային իր պատմութեանը:

Սիրելիներ, յոբելենական հանդիսութիւնները ինքնաճանաչման եւ ինքնանորոգման խորհուրդն ունեն իրենց մէջ: Այսու Մեր մաղթանքն է, որ Սուրբ Վարդան եկեղեցու կառուցման յիշարժան փարեդարձը համայնքային Ձեր կեանքի նախընթաց փասնամեակների վերարժեւորմամբ Ձեզ համար լինի նոր խրախոյս՝ Ձեր համայնքում առաւել զօրացնելու ու ամրացնելու եկեղեցասիրութեան, ազգասիրութեան ու հայրենասիրութեան ոգին: Հաւատքի իր զաւակներով է շէն ու պայծառ մեր Սուրբ Եկեղեցին, որ լուսոյ ճանապարհներով ընթացող Աստուած է առաջնորդում ի սփիւռս աշխարհի մեր ժողովրդին»:

Պատրիարք Սրբազան Հայրը կը գրէր. «... Ս. Վարդան Մայր Տաճարի կառոյցը հաւատացեալներու հեփաքրքիր ու խանդավառ աչքերուն առջեւ քար առ քար բարձրացաւ՝ բովանդակ աշխարհին ծանուցանելու, թէ Հայ ժողովուրդը մեռած չէ, այլ կենդանի է համակուած եռանդով ու կորովով, եւ այդ կառոյցը հաւատքի նոր բոց մը արծարծեց իւրաքանչիւր ամերիկահայու սրտին մէջ:

Այսօր, երբ դուք կը յիշատակէք Մայր Տաճարի օծման 35-րդ տարեդարձը, արդարացի պատճառ ունիք հպարտանալու, որովհետեւ անիկա մեր եկեղեցւոյ հանդէպ անսահման սիրոյ ձեր արտայայտութիւնն է:

Այս հոյակապ կառոյցը կոչուած է ազգային հերոս եւ սուրբ Վարդան Մամիկոնեանի անունով, որովհետեւ ինչպէս որ ան կը հանդիսանայ անմահ խորհրդանիշը մեր վճռակամութեան՝ պաշտպանելու համար մեր հաւատքը, նոյնպէս ալ Ս. Վարդան Մայր Տաճարը եղած է արդի խորհրդանիշը ձեր վճռակամութեան՝ պաշտպան կանգնելու ձեր հաւատքին եւ զայն փոխանցելու ձեր զաւակներուն եւ թոռներու:

Մենք լաւ կը յիշենք այն ոգեւորութիւնը, որ համակեց համայնքը, երբ կը զետեղուէր Մայր Տաճարի հիմնաքարը եւ երկարատեւ ծրագիրը վերջապէս սկիզբ կ'առնէր: Մենք կը յիշենք նաեւ փքնաջան աշխատանքն ու դժուարութիւնները կառուցման սկզբնական շրջանին: Բայց այս բոլոր դժուարութիւնները յաղթահարուեցան շնորհիւ մեծ ու փոքր կամաւորներու հաստատ նուիրումին ու համոզումին: Անոնք չէին կրնար աւելի թանկագին աւանդ մը ձգել ապագայ սերունդներուն՝ քան մնայուն խորհրդանիշը հաւատքի եւ քաջութեան»:

Առաջնորդ Սրբազան Հայրը կ'ըսէր. «... Ս. Վարդան Մայր Տաճարը իրականութեան վերածուեցաւ շնորհիւ անոնց կամքին եւ ծանր զոհողութեան այն անձնուէր անհատներուն, որոնք զայն համարեցին որպէս շօշափելի ապացոյցը Հայ ժողովուրդի նպաստին աշխարհի քաղաքակրթութեան եւ մեր մնայուն ներկայութեան արդի դարաշրջանին մէջ: Անոնք կառուցին Մայր Տաճարը որպէս ազգային փառք եւ ուխտատեղի, որ պիտի հարստացնէր մեր հոգեւոր կեանքը եւ պիտի տարածէր մեր կրօնական-մշակութային-ընկերային աւանդութիւնները: Վերապրած ըլլալով ջարդերէն, երկու համաշխարհային պատերազմներէ

նւ այլ նեղութիւններէ, այս Տաճարը, որ կը յիշեցնէ Հին Աշխարհի հայկական շքեղ յուշարձանները, պիտի դառնայ նոր ծննդավայրը հոգիին, ինչպէս բանաստեղծ Վահան Թէքէեան գրած է՝ ամենուացնելով եւ վերակենդանացնելով կեանքերը եւ բաղձանքները հայերուս ամենուրեք:

Այսօր, երեք փասամեակներ ետք, Ս. Վարդան Մայր Տաճարը որպէս պատմական կոթող կը ներկայանայ Ամերիկայի մէջ՝ պարփակելով մեր ներկայութիւնը եւ յաւերժացնելով մեր արժէքները: Գաղափարը յղացուած ըլլալով մէկ սերունդի կողմէ եւ իրագործուած յաջորդ սերունդին միջոցաւ, Մայր Տաճարը դարձած է փունը մեր երիտասարդ սերունդին: Ս. Գրիգոր Լուսաւորիչի վիրապէն բերուած «լոյս»էն, որով եզրափակուեցան 1700-ամեակի հանդիսութիւնները 2001 թուականին, մինչեւ ներկայ 35-ամեակի փօնախմբութիւնը՝ երիտասարդ սերունդը ապանձնած է գործօն եւ պատասխանատու դեր Մայր Տաճարի առաքելութեան մէջ:

Այս ընելով անոնք կ՚ընդառաջեն «ծառայելու կոչ»ին՝ եկած իրենց նախնիքներէն: Այսպէսով անոնք կ՚իրագործեն Ս. Վարդան Մայր Տաճարին կառուցման նպատակը: ... Այսօրուան երիտասարդ ամերիկահայերը հաւաստիքը կու տան, թէ նոյն իտէալներով պիտի ապրին եւ պիտի ներշնչեն իրենց յաջորդները»:

Օրուան հանդիսավարն էր Թեմական Խորհուրդի փոխգանձապահ Տիար Ճէյմս Գալուստեան, որ հրաւիրեց Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեանը, որպէսզի բացման աղօթքն ու սեղանի օրհնութիւնը կատարէ: Մայր Տաճարի եւ Մշակութային Կեդրոնի կնքահայրերու անունով բաժակ առաջարկեց Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Հայկ Տատուրեան, որ իր խօսքին մէջ ըսաւ, որ Ս. Վարդան Մայր Տաճարը հայկական ճարտարապետութեան իր իւրայատուկ ոճով եւ ոսկեայ գմբէթով կը ճանչցուի բոլորին կողմէ՝ ներկայացնելով Հայ Եկեղեցին եւ ժողովուրդը:

Տիար Ճէյմս Գալուստեան իր բարեգալստեան խօսքին մէջ ըսաւ, որ Մայր Տաճարին կառուցումը երազի մը իրականացումն էր, հաւատքով, զոհողութեամբ եւ աշխատանքով այդ երազը իրականութեան վերածուեցաւ, սակայն այդ իրականութիւնը սկիզբն է միայն, նոյն ոգիով ու ջանասիրութեամբ պէտք է շարունակել աշխատանքը՝ նոր բարձունքներու հասնելու համար: Ապա խնդրեց, որ կնքահայրերու եւ Կեդրոնական Յանձնախումբի անդամներու ընտանիքներու ներկայացուցիչները ոտքի կանգնին: Երկարատեւ ծափահարութեամբ ներկաները իրենց շնորհակալութիւնը յայտնեցին անոնց:

Ս. Վարդան Մայր Տաճարի Լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան ըսաւ, որ այսօր երկու առիթներ ունինք ուրախանալու համար. առաջինը Ս. Վարդան Մայր Տաճարի 35-ամեակն է եւ երկրորդը սարկաւագներու ձեռնադրութիւնը: Նոր ձեռնադրուած սարկաւագները ներկայացուց եւ զանոնք հրաւիրեց, որպէսզի առաջնորդ Սրբազան Հօրմէ ստանան յուշանուէրներ:

Օրուան պատուոյ եւ նոյն ատեն յուզիչ անակնկալն էր Արեւելեան թեմի նախկին առաջնորդ եւ այժմու Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեանի հեռաձայնային պատգամը, որ բարձրախօսներու միջոցաւ լսելի դարձաւ հանդիսասրահին մէջ: Ամենապատիւ Պատրիարք Հայրը իր ողջոյնները յղեց Սուրբ Երկիրէն, շնորհաւորեց թեմակալ առաջնորդն ու Թեմական Խորհուրդը, ըսաւ, որ Մայր Տաճարը միայն քար ու շաղախ չէ, այլ՝ ոգի, հաւատք, հանճար, քաջութիւն: «1915 թուականի ցեղասպանութենէն



ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս.ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ



Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

վնրապրողներուն ջարդարարներուն տուած պատասխանն էր կառուցումը Մայր Տաճարին, որուն իւրաքանչիւր քարը հայ ժողովուրդի վերապրելու վճռակամութեան արտայայտութիւնն է: Մայր Տաճարը արդիւնքն է մեր հաւատքին եւ յոյսին. առանց հաւատքի յոյս չկայ, եւ առանց յոյսի կեանքը անիմաստ կը դառնայ»,- ըսաւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Այս առիթով ցուցադրուեցաւ 15 վայրկեան տեւողութեամբ տեսանիւթ մը՝ ներկայացնելով Մայր Տաճարի կառուցման եւ օծման տեսարանները:

Փաստաբան Եդուարդ Չաքեան, որ երկար տարիներ որպէս Թեմական Խորհուրդի եւ զանազան յանձնախումբերու անդամ ծառայած է Հայ Եկեղեցիին եւ քաջածանօթ է Առաջնորդարանի պատմութեան, շատ ամփոփ կերպով ըրաւ պատմականը Մայր Տաճարի կառուցման եւ զայն կոչեց «34-րդ պողոտայի հրաշքը»:

Փակման խօսքը կատարեց թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Հայ հոգեւորականութեան յաւագոյն ներկայացուցիչներէն մէկը» հանդիսացող Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին, Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեանին, Գերշ. Տ. Նաւասարդ եպս. Կճոյեանին, Մայր Տաճարի կնքահայրերու եւ Կեդրոնական Յանձնախումբի անդամներու հարազատներուն, Լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեանին, Մայր Տաճարի դպրաց դասի անդամներուն եւ խմբավար Խորէն Մէյխանէճեանին, երգեհոնահար Պերճ Ժամկոչեանին, Առաջնորդարանի պաշտօնեաներուն եւ մասնաւորաբար օրուան Կարգադիր Յանձնախումբի համատենապետներ Տէյվիտ Գասպարեանին եւ Կրեկըրի Նաճարեանին եւ անոնց գործակիցներուն: «Ամերիկայի մէջ Մայր Տաճար մը ունենալու երազն ու տեսիլքը խանդավառած էր մեր նախորդ սերունդը. ինչպէս որ ազատ ու անկախ Հայրենիք մը ունենալու եւ մեր ազգային դրօշի ծածանումը ՄԱԿ-ի միւս երկիրներու դրօշներու կողքին տեսնելու երազը մեր ժողովուրդի կեանքին նպատակը եղած էր: Ուրախ եւ հպարտ ենք որ այդ երազները այսօր ամբողջութեամբ իրականութեան վերածուած են. Ս. Վարդան Մայր Տաճարն ու մշակութային կեդրոնը բոլորին հիացմունքին առարկան է. ունինք ազատ ու անկախ Հայրենիք մը, որուն դրօշը մաս կը կազմէ աշխարհի միւս ազգութիւններու դրօշներու ընտանիքին: Սակայն երազներու եւ տեսիլքներու իրականացումը վերջաւորութիւն մը չէ. այլ պէտք է ծառայէ նոր երազներու եւ տեսիլքներու որպէս սկիզբը. եւ ես շատ ուրախ եմ, որ այսօր մենք ունինք տեսլապաշտ նոր ու երիտասարդ սերունդ մը, գիտակից իր ինքնութեան ու հաւատքին, եւ անոնց ընդմէջէն ես կը տեսնեմ մեր պայծառ ապագան».- ի մէջ այլոց ըսաւ առաջնորդ Սրբազան Հայրը: Խօսքը աւարտելէ ետք կատարեց փակման աղօթքը:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԱՐԺՇ. Տ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»-Ի Դ. ՀԱՏՈՐԻ Գ. ԳԻՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ուրբաթ, Նոյեմբեր 21, երեկոյեան ժամը 7.30-ին, Առաջնորդարանի համալիրին մէջ տեղի ունեցաւ շնորհահանդէս՝ թեմի հոգեւորականաց դասու անդամներէն Արժշ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեանի «Ազգապատում»ի Դ. Հատորի Գ. Գիրքի հրատարակութեան առիթով:

Երեկոյթը, որ կը վայելէր Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի նախագահութիւնը, կազմակերպուած էր Առաջնորդարանի Գրիգոր եւ Գլարա Զոհրապ Տեղեկատուութեան Կեդրոնին կողմէ: Ներկայ էին շրջանի հոգեւորականները եւ գրասէր հասարակութիւն մը:

Բացման խօսքը կատարեց Տեղեկատուութեան Կեդրոնի վարիչ Հոգշ. Տ. Գրիգոր ծ. վրդ. Մաղաքեան, որ ըսաւ, թէ Տէր Զաւէնի աշխատասիրութեան այս վերջին գիրքը արդէն իսկ սկսած է տարածուիլ եւ ամէն կողմէ բարձր գնահատական ստանալ, քանի որ բացառիկ տեղ մը ունի ան մեր այս շրջանի պատմագրութեան մէջ: Հայերէն լեզուով բազմաթիւ պատմական աշխատասիրութիւններ կէս մնացած են, ըսաւ Հայր Սուրբը, եւ թուեց կարգ մը կիսատարտ կարեւոր գործեր: Հայր Գրիգոր իր ուրախութիւնը յայտնեց, որ այսօր գնահատանք պիտի յայտնուի Տ. Զաւէն ա. քահանային, որ կրցաւ ամբողջացնել ժամանակակից պատմութեան նուիրուած այս կարեւոր գործը: Աւելցուց նաեւ, որ բոլոր ժողովուրդները չէ, որ պատմագրութիւն ունին, օրինակ՝ եսկայ հնդիկ ժողովուրդը, որ իր պատմութիւնը չէ փոխանցած, քիչ է թիւը այն ժողովուրդներուն, որոնք պատմութիւն գրած են. պատմագրութիւնը ժողովուրդի մը տրուած երկնառաք նուէր մըն է, եւ մեր ժողովուրդը այդ քիչերէն մէկն է, որ հաւանաբար քրիստոնէութեան անմիջական ազդեցութեան ներքեւ Ե. դարէն սկսեալ մշակած է իր յատուկ պատմագրութիւնը:

Ապա ելոյթ ունեցաւ Ռիճմոնտ Փէնսիլվանիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարեան:

Հայր Հայկազուն ըսաւ, որ «Ազգապատում»ի Գ. Գիրքը հրատարակուած է Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանի «Զգօն եպս. Տէր-Յակոբեան» հիմնադրամին կողմէ՝ որպէս Ս. Վարդան Մատենաշարի հրատարակութիւն: Անդրադառնալով գիրքի բովանդակութեան՝ ըսաւ, որ 360 էջերէ բաղկացած այս հրատարակութիւնը նուիրուած է երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի՝ մօտ քառասուն տարիներու հայրապետական գործունէութեան եւ ժամանակակից անցքերուն: Գիրքը կը վերջանայ Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի կառուցմամբ, որ երազը եղած էր Վազգէն Ա. Հայրապետին: Տէր Զաւէն օգտագործած է 87 աղբիւրներ: Ներկայացուած շրջանը (1955-1995 թթ.) շատ իւրայատուկ շրջան մըն է՝ բազմաթիւ դէպքերով եւ հետաքրքրական դէմքերով, որոնք այդ հատորին մէջէն մեր դիմաց կը տողանցեն: Ինչպէս նախորդ հատորներու պարագային՝ հեղինակը այս գիրքին մէջ եւս ջանացած է Օրմանեան Սրբազանի

գրելակերպին հետևիլ՝ շարունակելով պատմութիւնը։ Պէտք է ըսել նաեւ, որ Օրմանեան Սրբազանի շրջանէն եւ մանաւանդ Եղեռնէն ետք Սփիւռքը կազմուած էր, եւ հետեւաբար գիտնական մեր Տէր Հայրը կրցած է աղբիւրներ գտնել եւ նկարագրել Սփիւռքի պայմաններուն մէջ զարգացող եւ գործող մեր թեմերու պատմութիւնը։

Երկրորդ խօսողը՝ Պէյսայտ Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վահան վրդ. Յովհաննէսեան իր խօսքը ներկայացուց անգլերէն լեզուով։

Հայր Սուրբը նախ ներկայացուց երեք հատորներու բովանդակութիւնը. ա) Տ. Տ. Գէորգ Ե. Սուրէնեան (1911-1930), բ) Տ. Տ. Խորէն Ա. Մուրատբէգեան եւ Տ. Տ. Գէորգ Զ. Չէօրէքճեան (1930-1955), գ) Տ. Տ. Վազգէն Ա. Պալճեան (1955-1994)։ Անդրադառնալով Օրմանեան Սրբազանի «Ազգապատում»ներուն՝ ըսաւ, որ մինչեւ 20-րդ դարու առաջին փասնամեակը Հայ Եկեղեցւոյ պատմութեան լաւագոյն աղբիւրները կը հանդիսանան, իսկ 20-րդ դարու պատմութիւնը կը փրուի, դարձեալ երեք հատորով, Արժշ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեանի քաջարի եւ յանդուգն աշխատասիրութեամբ։

Նախքան օրուան մեծարեալ Տէր Հայրը հրաւիրելը, հանդիսավարը ըսաւ, որ երբ Տէր Հօր առաջին հատորը լոյս փեսաւ «Ազգապատում» խորագրով, ոմանք քիչ մը վերապահութիւններ ունեցան այս մասին, բայց այդպիսիք կարեւոր է, որ յիշեն, թէ Ե. դարէն սկսեալ մեր բոլոր պատմագիրներուն գործերը որպէս խորագիր ունին «Պատմութիւն Հայոց», եւ այդ փիփղոսը մէկը միւսէն առնելով՝ շարունակած են յաւերժացնել։ Տէր Զաւէն ալ «Ազգապատում» խորագիրը օգտագործելով ցոյց կու փայ, որ կը շարունակէ կարեւոր աշխատասիրութիւն մը, եւ երկրորդ՝ կ՚ոգեկոչէ կարեւոր հեղինակ մը, իսկ մենք այսօր զինք պատուելով կ՚ոգեկոչենք նաեւ հանգուցեալ մեծանուն Մաղաքիա արքեպս. Օրմանեանը, որուն աշակերտներուն աշակերտներուն աշակերտեց Տէր Հայրը Անթիլիասի Դպրեվանքի իր ուսանողութեան շրջանին։ Կենսագրական անհրաժեշտ տեղեկութիւններ փալէ ետք՝ հրաւիրեց Արժշ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեանը՝ որպէսզի իր խօսքը ըսէ։

Տէր Զաւէն նախ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ին, որ «Օրհնութեան Գիր» շնորհած էր իր աշխատասիրած Գ. Գիրքի հրատարակութեան առիթով, առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին, որ կարգադրութիւններ ըրած էր որպէսզի երեք հատորներն ալ հրատարակուին Առաջնորդարանի «Զգօն եպս. Տէր-Թակորեան Հիմնադրամ»ին կողմէ, ինչպէս նաեւ երկու բանախօսներուն։ Յիշելով անուններ՝ ան ըսաւ, որ մեր պատմութեան իւրաքանչիւր շրջանը ունեցած է իր պատմագիրը, եւ 20-րդ դարը փարբեր չէր կրնար ըլլալ միւս դարերէն։ «Գ. Գիրքը ընդգրկող պատմութեան ականատես վկան եւ նաեւ մասնակիցը եղած եմ»,- ըսաւ Տէր Հայրը, եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ կարելիութիւնը ունեցած է աւարտելու եւ փպագրութեան յանձնելու վերջին աշխատասիրութիւնը։ «Աղբիւրներու հարցը շատ կարեւոր է, աղբիւրներու ընտրութիւնը կատարելու ընթացքին շատ զգոյշ պէտք է ըլլալ. անոնց վաւերականութիւնը շատ կարեւոր է։ Ուրախ եմ, որ Սովետական իշխանութեան օրերու Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, պատմական փաստաթուղթերէն եւ վաւերագիրներէ քաղուած, վեց հատորներով հրատարակուեցան, այդ գիրքերը մեծապէս օգտակար հանդիսացան Բ. Գիրքի պատրաստութեան շրջանին»։ Շնորհակալութիւն յայտնեց նաեւ այն եկեղեցական առաջնորդներուն, որոնք ընդառաջելով իր խնդրանքին՝ ղրկած էին իրենց գաղութ-

ներու պատմութեան վերաբերեալ թղթակցութիւններ եւ փաստաթուղթեր: Տէր Զաւէն իր մեկնաբանութիւնը ներկայացուց Վազգէն Ա. Կաթողիկոսի ընտրութեան պարագաներուն մասին, թէ ինչպէս աստուածային միջամտութեամբ եւ նախախնամութեամբ անկրօն Սովետական Միութեան ու Հայաստանի Կառավարութեան միաձայնութեամբ ճիշդ անձը ընտրուեցաւ որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս: «Վազգէն Վեհափառ իմաստութիւնն ու դիւանագիտութիւնը ունեցաւ Հայ Եկեղեցին ծանօթացնելու աշխարհին եւ աշխարհը դէպի Էջմիածին առաջնորդելու» խօսքերով Արժ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեան վերջացուց իր խօսքը:

Թեմակալ առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր փակման խօսքին մէջ ըսաւ. «Մեզի համար ուրախութիւն եւ պարծանք է հաստատել, որ Օրմանեան Սրբազանի գրած «Ազգապատում»ի երեք հատորներուն շարունակութիւնը, դարձեալ երեք հատորներով, գրելու յանդգնութիւնը, քաջութիւնն ու «սրբազան խենթութիւնը» ունեցած է մեր թեմի աւագ եկեղեցականներէն մէկը, յանձինս Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեանի, որ ծանօթ է իր գրական վաստակով՝ նախընթաց գործերու թարգմանութիւններով, ուսումնասիրութիւններով եւ հովուական արդիւնքներով: Իսկ «Ազգապատում»ի յաւելուածական երեք կոթողական հատորներու հրապարակութիւնով ան իրապէս արժեցուց տարիներ առաջ Քոլոմպիա Համալսարանէն իր ստացած Տոքթորայի աստիճանը:

«Անվարան կերպով կրնանք վկայել, որ Տէր Զաւէն յաջողած է պատմութիւնը արձանագրել անաչառ եւ առարկայական կերպով: Եւ այդ աշխատանքին արդիւնքը փոխանցած է ընթերցողին հաղորդական, բայց ոչ հասարակ, այլ վերամբարձ ոճով մը, որ վայել է եկեղեցական պատմագրութեան:

Օրմանեան Սրբազան չկրցաւ վայելել իր «Ազգապատում»ի Գ. Հատորի հրապարակումը: Ուրախ ենք, որ մեր սիրելի Տէր Զաւէնը այդ բախտը ունեցաւ, եւ մենք այսօր հաւաքուած ենք միասնաբար շնորհաւորելու զինք եւ հրապարակաւ մեր գնահատանքը յայտնելու իրեն:

Վարձքդ կատար, Արժ. Տ. Զաւէն ա. քհնյ. Արզումանեան»:

Երեկոյթի աւարտին ներկաները առիթ ունեցան շնորհաւորելու հեղինակ Տէր Հայրը եւ մակագրել տալու գիրքերը:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

*Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս*

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Շաբաթ, Հոկտ. 1-ին, երեկոյեան ժամը 8.30-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան, որպէս Պատուոյ հիւր նախագահեց Պոլսահայ Միութեան Հիմնարկութեան 27-րդ տարեդարձի ճաշկերոյթին, Կլէնտէյլի Պրենտ Վիու Քոյնքշըն սրահի: Ներկայ էր նաեւ քաղաքս հիւրաբար գտնուող Հայաստանի Արմաւիրի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն եպս. Ադամեան:

Բարեխնամ առաջնորդ Սրբազան Հայրը Տիար Սիմոն Աճըլյաչօղլուի եւ Տոքթ. Մարք Քէօշկէրի առաջնորդութեամբ, իւրաքանչիւր պոլսահայու հետ մօտէն ծանօթանալու համար, առանձին-առանձին այցելեց 28 սեղանները եւ գնահատեց անոնց՝ Հայ Եկեղեցւոյ տածած նուիրեալ ծառայութիւնը:

Պոլսահայ Միութեան ատենապետ Տիար Սիմոն Աճըլյաչօղլու բարի գալուստ մաղթեց զոյգ Սրբազաններուն, բոլոր ներկաներուն եւ ըսաւ. «Արեւմտեան թեմէն ներս, շնորհիւ առաջնորդ Սրբազան Հօր փայլուն, առողջ եւ թարմ ծրագիրներուն, հայ համայնքը պիտի ապրի իր զարթօնքի օրերը»: Այնուհետեւ Պրն Աճըլյաչօղլու Վարչութեան խօսքը կարդալէ ետք բեմ հրաւիրեց առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Սրբազան Հայրը նախ ներկայացուց Արմաւիրի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Սրբազանը, շնորհաւորեց ներկաները, իր գոհունակութիւնը յայտնեց Պոլսահայ մեծ ընտանիքին հետ ըլլալու առիթով եւ ըսաւ. «Մարդ է որ գործէ զերկիր». մարդն է, որ երկիրը կը կառուցէ: Դուք էք որ ձեր ընտանիքներով կառուցած էք այս ընտանիքը եւ ձեր զաւակներուն կը ներշնչէք հայու ոգին, սէրը մշակոյթին եւ Եկեղեցիին հանդէպ: Ես կ՚ուզեմ այս առիթով որպէս Եկեղեցիի սպասաւոր շնորհակալութիւնս յայտնել ձեզի եւ բոլոր անոնց, որոնք հիմնած են Պոլսահայ Միութիւնը եւ 27 տարիներ շարունակ յամառ աշխատանքով պահած-պահպանած՝ այս ընտանիքը, որպէսզի անիկա շարունակէ մնալ աղբիւր հոգեւոր սնունդի եւ ազգային դաստիարակութեան:

Սրբազան Հայրը անգլերէնով ալ խօսելէ ետք, յաջողութիւն մաղթեց Միութեան Վարչութեան եւ յարակից բոլոր յանձնախումբերուն, իրենց ապագայ ծրագիրներուն համար:

# ԴԱՏԱՒՈՐ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՏԻԿԻՆ ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ Ս. ԳԱՅԻԱՆԷ ՎԱՆՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գոհունակութեամբ կը փափաքինք յայտարարել, թէ Պատուարժան Դատաւոր Արմանտ Արապեան եւ Տիկինը՝ Նէնսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին տուած իրենց խոստումը կատարելով, հարիւր հազար տոլարի նուիրատուութիւն մը կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ի նպաստ Սուրբ Գայիանէ վանքի նորոգութեան:

Դատաւոր Արապեան վերջերս ուխտաւորաբար եկաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպում մը ունեցաւ Վեհափառ Հայրապետին հետ: Նորին Սրբութիւնը գնահատելով Հայց. Եկեղեցւոյ իր մատուցած ծառայութիւնը եւ յատկապէս Սուրբ Գայիանէ վանքի նորոգութեան բարերարութիւնը ստանձնելը, զինք պարգեւատրեց «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով (տե՛ս «Էջմիածին», Է, էջ 5):

Արդարեւ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմէ, շքանշանի պարգեւատրման արարողութիւնը տեղի ունեցաւ Յուլիս 23-ին, Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ մէջ՝ ձեռամբ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի, մասնակցութեամբ հոգեւորականներու եւ ի ներկայութեան յատկապէս հրաւիրուած հիւրերու:

Կը փափաքինք նաեւ յայտնել, թէ հանգստեան կոչուած Պատուարժան Դատաւոր եւ Տիկին Արապեան նիւթապէս օժանդակած են Արեւմտեան թեմին, ինչպէս նաեւ կահաւորած են Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ «Հարսին Սենեակ»ը եւ զետեղել տուած են Հայաստանի Հանրապետութեան դրօշը եկեղեցւոյ մուտքին: Տիկին Նէնսի Արապեան Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամ ըլլալով, տարիներէ ի վեր օգտակար կը հանդիսանայ Առաջնորդարանին:

# ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՇՆՈՐՀՈՒՄ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՍԹ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Կիրակի, Հոկտ. 12-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան Սրբոց Թարգմանչաց տօնի առթիւ Սուրբ Պատարագ մատոյց Իսթ Լոս Անճելըսի Ս. Սարգիս Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ:

Առաւօտեան ժամերգութենէն ետք, «Խաչատուրեան» դպրաց դասի կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան սրկ. Կէօզիւմեանի եւ երգեհոնահարութեամբ Գէորգ Կիւլօղլեանի, սկսաւ Սուրբ Պատարագի արարողութիւնը:

Սուրբ Պատարագի ընթացքին Սրբազան Հայրը առընթերակայութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Նարեկ աւագ քհն. Մատարեանի եւ Արժ. Տ. Ստեփան քհն. Տէր-Գէորգեանի, սարկաւագ ձեռնադրեց Յակոբ Ծերունեանը, Թորոս Մկրտիչեանը եւ Տէնիս Թաքեսեանը: Կիսասարկաւագ ձեռնադրեց Սիմոն Աճիլաճօղլուն եւ Վրամ Ծերունեանը եւ ապա դպիր Աւետիս Թէքօյեանը, Գէորգ Կիւլպէնկեանը, Կարպիս Աֆլասօղլուն, Սարգիս Տանաճեանը, Արի Օհաննեանը, Ասատուր Չիլինկիրեանը, Հրայր Կէօպէլը, Տիգրան Գուրեանը, Յովսէփ Եփրեմեանը, Մասիս եւ Արարատ Աբիկները, Յովսէփ Արփքշը, Գաբրիէլ Յակոբեանը, Վահան Պահարեանը, Գէորգ Մատարեանը եւ Կարօ Կուրտիկեանը:

«Հայր մեր»-էն առաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի շնորհած Կոնդակներու ընթերցումէն ետք, առաջնորդ Սրբազան Հայրը *«Ս. Ներսէս Շնորհալի»* շքանշաններով զարդարեց Բրշ. Յակոբ Ծերունեանի, Տոքթ. Արթօ Էրսան Խաչերեանի եւ Տիար Սեպուհ Թոմասեանի կուրծքերը:

Սրբազան Հայրը շնորհաւորեց Ձեռնադրեալները եւ յանձնարարեց անոնց Քրիստոսի լոյսը տարածել հաւատացեալներուն մէջ, յատկապէս երիտասարդները ներգրաւել հոգեւոր կեանքի՝ Սուրբ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, եւ անսակարկօրէն ծառայել Աստուծոյ Տունը կեանքի մնայուն վիճակի մէջ պահելու:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց Ս. Սարգիս Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Նարեկ աւագ քհն. Մատարեանի ծառայութիւնը եւ այդ առթիւ իրեն նուիրեց Քրիստոսի 12 աշակերտները պատկերող սրբապատկեր մը:

Սուրբ Պատարագի աւարտին եկեղեցւոյ Մամուլեան Սրահին մէջ Սրբազան Հօր կատարած սեղանի օրհնութեամբ սկսաւ ճաշկերոյթ-յայտագիրը: Օրուան հանդիսավար, Ծխական Խորհուրդի եւ դպրաց դասի ատենապետ Բրշ. Յակոբ սրկ. Ծերունեան, դպրաց դասի վարիչ Բրշ. Ստեփան սրկ. Կէօզիւմեան եւ երգչախումբի ատենադպիր Ասատուր Չիլինկիրեան սրտի խօսքերով հանդէս եկան՝ շնորհակալութիւն յայտնելով բոլորին ծառայութեանց եւ զօրակցութեան համար:

Գեղարուեստական յայտագրին մաս կազմեցին ասմունքող Օր. Ժսլիտ Չեփքինեան իր պարզ եւ տպաւորիչ ելոյթով եւ Տէր եւ Տիկին Մանուէլ եւ Սիւզաննա Եփրեմեաններ՝ իրենց Աստուածատուր ձայնով քանի մը երգ կատարելով: Յայտագրի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ յուշանուէրներու բաշխում: Արժ. Տ. Նարեկ աւագ քհն. Մատարեան իր շնորհակա-

լութիւնը յայտնեց Սրբազան Հօր օրհնաբեր այցելութեան, քաջալերանքին, ինչպէս նաեւ դպրաց դասին եւ բոլոր մասնակիցներուն, անոնց՝ Աստուծոյ Տան բերած նուիրուածութեան համար:

Առաջնորդ Տ. Յովնան արքեպս. իր եզրափակիչ խօսքով գնահատեց բոլորին նուիրեալ ծառայութիւնը, եկեղեցաշէն աշխատանքը եւ ըսաւ. *«Ձեր նուիրուածութեան մէջ կը պեսնեմ գաղութի հոգեփոխութիւնը, որ կ'առաջնորդէ մեզ փնտռելու եւ գտնելու մեր սրտի խորքը եղած հաւատքը, որ մեզ առաւել եւս կը զօրացնէ Աստուծոյ փառքը հիւսելու եւ մեր ժողովուրդին հոգեւոր կարիքներուն հասնելու: Վարձքերնիդ կատար. Աստուած ձեր հետ ըլլայ»:* Ամէն:

## «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹԸ

Հոկտեմբեր 23-ին, երեկոյեան ժամը 8.00-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան մասնակցեցաւ Ս. Պետրոս եկեղեցւոյ «Կոմիտաս» երգչախումբի անդամներու տարեկան աւանդական հաւաքոյթին:

Ներկայ էին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քհնյ. Տէմիրճեան եւ երէցկինը, Արժ. Տ. Զաւէն աւագ քհնյ. Տէմիրճեան եւ երէցկինը, Ծխական Խորհուրդի ատենապետ Տիար Ժագ Տէրտէրեան, երգչախումբի ատենապետ Տիար Վարդան Վարդանեան, ղեկավար Տիար Մելիք Կապրիէլով, վարչակազմը եւ անդամները իրենց ընտանիքներով:

Տ. Շնորհք քահանայ ողջունեց բոլորին ներկայութիւնը եւ յատկապէս Սրբազան Հօր օրհնաբեր այցելութիւնը:

Ընթրիքի ընթացքին կարճ յայտագրով հանդէս եկան երգչախումբի ղեկավարը՝ դաշնամուրի վրայ քանի մը ժողովրդական երգերով, նաեւ Օրիորդ Իրեն Կապրիէլով եւ Օրիորդ Թանիա Թուրաճ՝ երգով:

Տիար Արէթ Վարժապետեան իր հեր ...իւն ողջունեց Սրբազան Հօր ներկայութիւնը եւ քաջալերանքը հանդէպ երգչախումբին: Անդրադարձաւ 20 տարուան կեանք ունեցող երգչախումբի գործունէութեան եւ յետագայի ծրագիրներուն մասին:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց դպրաց դասը, Պոլսահայերու աւանդապահութիւնը, հաւատքը եւ նուիրեալ ծառայութիւնը Հայց. Առաք. Եկեղեցւոյ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ. *«Կոմիտաս Վարդապետի կեանքի մէջ իրական ներկայութիւն կը դառնաք դուք՝ ձեր Աստուածահաճոյ նուիրուածութեամբ թէ՛ Եկեղեցւոյ եւ թէ՛ ձեր ընտանիքներու հիմքը կը զօրացնէք, կանգուն եւ պայծառ պահելով Աստուծոյ Տունը, որ ձեր երկրորդ կարեւոր տունն էք դարձուցած: Օրհնեալ ըլլաք եւ վարձքերնիդ կատար»:* Ապա մօտ վեցամսեայ գործունէութեան եւ ապագայի ծրագիրներու մասին արտայայտուեցաւ եւ, Սրբազան Հայրը *«Պահպանիչ»* աղօթքով օրհնեց ներկաները:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Կիրակի, Հոկտ. 26-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան մասնակցեցաւ Ֆրէզնոյի Ս. Պօղոս Հայց. եկեղեցւոյ Հայկ Պէրպէրեան սրահին մէջ Ղարաբաղի Վսեմաշուք Նախագահ Տիար Արկադի Ղուկասեանի ի պատիւ տրուած ճաշկերոյթին:

Երեկոն կազմակերպուած էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ֆրէզնոյի Յանձնախումբին կողմէ:

Դրօշակակիրներու եւ սկաուտներու թափօրով Նախագահին դէպի սրահ պաշտօնական մուտքէն, Միացեալ Նահանգներու, Ղարաբաղի եւ Հայաստանի քայլերգներէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց սեղաններուն օրհնութիւնը, ողջունեց Ղարաբաղի Վսեմաշուք Նախագահ Ղուկասեանի ներկայութիւնը եւ ըսաւ.

*«Մեծարգոյ Պրն Նախագահ, Ձեր ներկայութիւնը այստեղ կը խորհրդանշէ հայրենական ներկայութիւնը ու բոլորիս մէջ կ'արթնցնէ Հայրենիքով լեցուելու հոգեւոր վերազարթօնքի ոգին: Յստակ է մեզի համար, որ այստեղ՝ արտասահմանի մէջ մեր կեանքը կը իմաստաւորուի ծառայութեամբ, որ իր միասնութեամբ կը կեդրոնացնէ վերանկախացեալ Մայր Հայրենիքի եւ Արցախի վրայ: Իւրաքանչիւր հաւաք ուխտի հրաւէր մըն է հայ մարդուն համար: Հետեւաբար այսօրուան հաւաքը մեր մէջ կը վերահաստատէ մեր ուխտը Հայրենիքի եւ Արցախի սուրբ հողի հանդէպ որ նուիրականացած է մեր հերոսներու արեամբ»:*

Օրուան հանդիսավար՝ Հիմնադրամի փոխատենապետ Տիար Վարուժան Տէր-Սիմոնեան ողջունեց Ղարաբաղի Նախագահը եւ ներկաները: Բարեշնորհ Եղիա Արք. Ճէնտիան յատուկ բաժակաճառով ողջունեց Արցախի ազատատենչ ժողովուրդը եւ անոր ղեկավար՝ Նախագահ Արկադի Ղուկասեանը:

Արեւմտեան Ամերիկայի շրջանի նախագահ Պրն Թոմիկ Ալեքսանեան ներկայացուց Հիմնադրամի վերակացու Նայիրա Մելքումեանը, որ իր հերթին խօսեցաւ Հիմնադրամի անցեալի, ներկայի եւ ապագայի ծրագիրներու եւ ժողովուրդի անյետաձգելի ներդրումի մասին:

Լոս Անճելըսի մէջ Հայաստանը ներկայացնող Գլխաւոր Հիւպատոս Տիար Գագիկ Կիրակոսեան հանգամանօրէն ներկայացուց Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Արկադի Ղուկասեանը:

Յարգարժան Նախագահը բնութագրեց 1988-ի Արցախեան շարժումը եւ անոր յաջորդող վիճակը ու շեշտեց Գորիս-Ստեփանակերտ ճանապարհաշինութեան հրամայականը.

*«Կռուի դաշտի մէջ մենք յաղթեցինք, սակայն պատերազմը չէ աւարտած: Տնտեսական նոր պատերազմ ենք սկսած, զոր եթէ կորսնցնենք, զինուորական ռազմավարութիւնն ալ կրնանք կորսնցնել»:*

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ

Շաբաթ, Նոյեմբեր 1-ին, երեկոյեան ժամը 6.00-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեան հազիւ վերադարձած Հայաստանէն, մասնակցեցաւ Ամերիկայի Հայկական Համագումարի տարեկան ընդունելութեան եւ յայտագրին՝ Փայմ Սփրինկզի Մըրիէթ պանդոկին մէջ: Արժ. Տ. Մուշեղ քհնյ. Թաշճեան սեղանի օրհնութիւնը կատարեց:

Այս ձեռնարկին ներկայ էին շուրջ 500 անձեր, ամերիկացի յայտնի դէմքեր, հիւրեր:

Ելոյթ ունեցան Տիար Հրայր Յովնանեան, «Արարատ» ֆիլմի յայտնի դերասանուհի Արսինէ Խանճեան, ճանչցուած ամերիկահայ գրող, *«Այրող Տիգրիս»-ը* գրքի հեղինակ Փիթըր Պալաքեան եւ ուրիշներ:

Ձեռնարկին պատուոյ հիւր՝ Ղարաբաղի Վսեմաշուք նախագահ Տիար Արկադի Ղուկասեան կոչ ուղղեց ներկաներուն, յառաջիկայ Գոհաբանութեան օրուան թելէթոնին, Նոյեմբեր 27-ին օժանդակելու Արցախի Հարաւ-Հիւսիս ճանապարհի շինութիւնը աւարտելու աշխատանքին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ իր անունով ողջունեց նախագահ Ղուկասեանը, Տէր եւ Տիկին Հրայր Յովնանեանները, Ժոզէֆ Ճոյս Սթայնները, ներկաները, շնորհաւորեց պատասխանատուները եւ ըսաւ.

*«Այսու մեծ գոհունակութեամբ կ՚ողջունեմ Ձեզ յանուն մեր սիրելի Վեհափառին՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ձեզ կը յղէ բարեմաղթութիւնները, Աստուածահաճոյ ձեր առաքելութեան եւ Հայրենիքի եւ Ամերիկայի ձեր բերած վերածաղկումի ներդրումին:*

*Հայկական Համագումարը ամենաներշնչող կազմակերպութիւններէն մէկն է Ամերիկահայ համայնքին, երկրի ամբողջ տարածքին, որ մարդկային ծառայութեան լաւագոյնին ձգտելու տեսլականով ներգրաւուած է երիտասարդութիւնը, ընդհանրապէս ամէն մակարդակի եւ յատկապէս քաղաքական ցիտնի վրայ:*

*Այս երեկոյի հաւաքը կը նորոգէ մեր հոգիները եւ կը հրաւիրէ մեզ որպէս քաղաքացիներ Ամերիկայի առաւել չափով մեր նպաստը բերելու եւ իրագործելու նաեւ հայերուս երազանքը: Հրաւէր մըն է այս բոլորիս ուղղուած Ամերիկահայ կեանքի մէջ Համագումարի հիմերը առաւել եւս ամրացնելու՝ որպէս մեզ առաջնորդող կազմակերպութիւն:*

*Հայկական Համագումարը խոր համոզումով ներշնչած է մեզ բոլորս թէ՝ Ամերիկեան բարքերու եւ սովորութիւններու հետ մեր միաձուլումը ոչ միայն անհրաժեշտութիւն է, այլ նաեւ մեր բարոյական պարտաւորութիւնն է այդ, նուիրուելու եւ ներդնելու մեր բաժինը երկրի մը, որուն օրհնութիւնը եւ բարիքը կը վայելենք մենք՝ որպէս հայ քրիստոնեաներ մեր ինքնութիւնը պահպանելով»:

# ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍԱՆ ԼՈՒԻՍ, ՕՊԻՍՓՕ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ուրբաթ, Հոկտեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 6-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան հովուական իր երկրորդ այցելութիւնը տուաւ Սան Լուիս Օպիսփոյի հայ համայնքին՝ անդրանիկ Ս. Պատարագը մատոյց եւ յատուր պատշաճի քարոզեց: Սուրբ Խորանին կը սպասարկէին Լոս Անճըլըսէն Սրբազան Հօր ընկերակցող Բարեշնորհ Մայիս սրկ. Շահպազեան, դպիր Կարէն Վարդանեան եւ Բարեշնորհ Սթիվըն սրկ. Ափամզ՝ Ֆրէզնոյէն:

Ս. Պատարագէն ետք սուրճի հիւրասիրութեամբ մտերմիկ հանդիպման ընթացքին, Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիկին Մարկօ Վարդանեան ողջունեց Սրբազան Հայրը եւ ներկաները: Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց համայնքի համեստ ծառայողներուն նուիրումը, յորդորեց զանոնք յաճախակի նման հանդիպումներ կազմակերպել, շակըցնել հաւատացեալներու թիւը եւ հասնիլ շրջանի հայութեան եւ յատկապէս երիտասարդութեան հոգեւոր կարիքներուն:

# ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻՒ ՀԵՂԻՆԱԿ ՓԻԹԸՐ ՊԱԼԱՔԵԱՆԻ

Նոյեմբերի 5-ին Արեւմտեան թեմի Առաջնորդարանը, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի, գրական երեկոյթով մը պատուեց ***«Ճակատագրի Սեւ Շունը»*** գրքի հեղինակ Փիթըր Պալաքեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ պատուոյ հիւրը, գնահատութեան իր ջերմ զգացումները արտայայտեց Դրն Պալաքեանին, իր կատարած ազգօգուտ եւ շնորհակալ աշխատանքին համար: Տիկին Սինտի Նորեան հակիրճ կենսագրական գծերով աւելի քան 300 ներկաներուն ծանօթացուց անգլիագիր հայ գրող Պալաքեանը: Ձեռնարկին ներկայ էին նաեւ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան, Առաջնորդարանէն ներս ծառայող հոգեւորականները եւ երիտասարդներու պատկառելի թիւ մը:

Դրն Պալաքեան ներկայացուց գրական իր նոր աշխատանքը՝ ***«Վառուող Տիգրիս»*** ***("The Burning of Tigris")***՝ հատուածներ ընթերցելով անկէ: Անդրադարձաւ պատմութիւն գրելու իր հակումներուն, որ փարիններու փքնաջան պրպտումներու եւ ուսումնասիրութիւններու արգասիքն է: այս գիրքը, որ կը պարունակէ նաեւ ջարդին նկարահանուած իսկական պատկերներու պատճէնը՝ կոտորածի զոհերուն եւ ջարդարարներուն: Հեղինակը նկարագրեց նաեւ թուրք կառավարութեան, Համաշխարհային Առաջին պատերազմի առիթի օգտագործմամբ, հայը բնաջնջելու իր անմարդկային ծրագրին, Ամերիկայի եւ ընդհանրապէս աշխարհի անտարբեր կեցուածքը հանդէպ 1915-ի մեծ կոտորածին: Ձեռնարկն աւարտեցաւ գիշերուան 9.15-ին, որմէ ետք Դրն Պալաքեան մինչեւ ժամը 10.45 մակագրեց մօտ 200-ի հասնող հերթի կանգնած անհատներուն գրքերը, որոնց մէջ վառ էր Հայու Ոգին:

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՉՈՐՍ ՕՐՈՒԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան Նոյեմբերի առաջին շաբաթավերջին չորս օրուան հովուական այցելութիւն մը տուաւ Կեդրոնական Գալիֆորնիոյ շրջանը:

Նոյեմբերի 7-ին, առաւօտեան, Սրբազան Հայրը հանդիպեցաւ թեմի Տիկնանց Կազմակերպութեան Կեդրոնական Մարմնին հետ, Ֆրեզնոյի Ս. Պօղոս Հայց. եկեղեցւոյ մէջ: Ժողովին նիւթեր արծարծուեցան Հայց. Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան ունեցած դերին մասին:

Կէսօրէ ետք Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ հոգեւորականներու ուսման եւ պատրաստութեան համար նշանակած յանձնախմբին հետ: Շեշտուեցաւ ամբողջ թեմը վերակազմակերպելու, նոր ծուխեր հաստատելու եւ պատրաստուած եկեղեցականներ հրաւիրելու հարցը: Այդ ժողովին կը մասնակցէին նաեւ Արժ. Տ. Արշէն աւագ քհնյ. Այվազեան, հոգեւոր հովիւ Ս. Պօղոս եկեղեցւոյ, Արժանապատիւ Հայրեր՝ Տ. Գէորգ աւագ քհնյ. Առաքելեան, Տ. Շնորհք քհնյ. Տէմիրճեան, Տ. Սարգիս քհնյ. Փեթոյեան եւ Բրշ. Պարոյր սրկ. Տէր-Մկրտիչեան:

Նոյն օրը, երեկոյեան, Ս. Պօղոս եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի եւ յարակից մարմիններու ժողովին նախագահեց Սրբազան Հայրը, ուր արծարծուեցան Ծուխի անցեալի իրագործումները, ապագայի ծրագիրները եւ Հայ Եկեղեցին մտահոգող տեղական եւ ընդհանուր հարցեր:

Շաբաթ, Նոյեմբեր 8-ի առաւօտուն, Կիրակնօրեայ Վարժարաններու Կեդրոնական Մարմնի ժողովին կարճ այցելութեամբ իր օրհնութիւնը տուաւ Սրբազան Հայրը:

Վերոյիշեալ Մարմինը նշանակուած էր Հոկտեմբեր 4-ին, 2003, Կեդրոնական Գալիֆորնիոյ շրջանի մէջ, առաջնորդ Սրբազան Հօր կողմէ մասնակցութեամբ եւ օժանդակութեամբ Երիտասարդաց Առաքելութեան Կեդրոնի վարիչ-տնօրէն Արժ. Տ. Վազգէն քհնյ. Մովսէսեանի, որ կը վարէր այս երկրորդ ժողովը:

Ժողովի գլխաւոր նիւթն էր Կիրակնօրեայի դասացուցակի եւ ուսուցմունքի միօրինակութիւն ստեղծել թեմին մէջ եւ ուսուցիչներու վերապատրաստման ծրագիրներ մշակել յետագայ աշխատանքներուն առնչութեամբ:

Այդ օր Սրբազան Հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի, Կեդրոնական եւ Հիւսիսային Գալիֆորնիոյ ծխական հովիւներու եւ ատենապետներու համատեղ Ժողովին, ընդհանուր առմամբ քննարկելու համար թեմին եւ Եկեղեցւոյ հարցերը: Աւելի ուշ Սրբազան Հայրը ժողով ունեցաւ նաեւ Ս. Պօղոս եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին հետ: Երեկոյեան ճաշկերոյթ կազմակերպուեցաւ, որուն ընթացքին Սրբազան Հօր ձեռամբ դպրութեան աստիճան ստացան Արի Ափամզ, Միքայէլ Գրիգորեան, Գէորգ Իչեան, Տիգրան Խրտանեան, Քրիստափոր Հոգոզեան, Մատթէոս եւ Պատրիկ Մարգարեան, Լօրէն Չարտուքեան, Գոննըր Չոլըճեան, Աննա Լեքսի եւ Յովսէփ Պօղիկեան, Ղուկաս եւ Փիլիպպոս Տէր-Մկրտիչեան եւ Շանթ Փարսախեան:

Ձեռնադրութենէն նոյք ընդունելութիւն մը սրուեցաւ Սրահին մէջ: Արքազանը շնորհաւորեց նուիրեալ դպիրները, օրհնեց եւ խրախուսեց զիրենք Քրիստոսի սիրով, աստուածային սիրով եւ իմաստութեամբ առաջնորդուած ծառայելու համայնքի հոգեւոր կարիքներուն:

Կիրակի, Նոյեմբերի 9-ի առաւօտուն, բարեխնամ առաջնորդ Տ. Յովնան Արքազան Ս. Պատարագ մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց Ս. Պօղոս Հայց. եկեղեցւոյ մէջ, որուն ընթացքին հետեւեալ վեց կիսասարկաւագներ ձեռնադրեց. Տիմոթէ Այվազեան, Յովիկ Արթինեան, Արման, Նարեկ եւ Վիգէն Գալեմքերեան եւ Արլեն Կորճեան:

«Հայր մեր»-էն առաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի յղած գնահատանքի կոնդակներու ընթերցումէն ետք, Արքազան Հայրը «Ս. Ներսէս Շնորհալի» պատուոյ շքանշաններով զարդարեց Բրշ. Եղիա սրկ. եւ Տիկին Ռոզմէրի Ճենտեան եւ Բրշ. Վարուժան սրկ. եւ Տիկին Լենա Ալթըպարմաքեանի կուրծքերը: Պատուակալ զոյգ սարկաւագները այ երկար տարիներէ ի վեր կը ծառայեն թէ՛ որպէս ծխական անդամ փեղուոյն եկեղեցւոյ եւ թէ՛ թեմական պաշտօններու յանձնառութեամբ:

Արքազան Հայրը շնորհաւորեց նորընծայ սարկաւագները եւ Պատուոյ շքանշան ստացողները, գնահատեց անոնց տարիներու նուիրեալ ծառայութիւնը յատկապէս վերջին երկուքին եւ ըսաւ. «Տարիներ Աստուածահաճոյ աշխատանք տարած էք դուք Հայ Եկեղեցիէն ներս, զոհելով երբեմն ձեր ընտանիքներու անմիջական ժամանակի տրամադրութիւնը, նուիրուածութեամբ Աստուծոյ Տան շունչ ու ոգի տուած էք ձեր հոգիի բարութեան ճառագայթումը գործնական աշխատանքի վերածելով: Երկար եւ առողջ ապրիք դուք եւ ձեր ընտանիքը Աստուածային շնորհներով եւ բարիքներով լեցուած: Նորընծայ ձեռնադրեալներ, եկած է ժամանակը, որ Դուք նոյն նուիրուածութեամբ եւ հոգածութեամբ պահպանէք Եկեղեցւոյ նուիրականութիւնը, առաքելութիւնը հայ հաւատացեալներու, հասնելով երիտասարդներու հոգեւոր կարիքներուն»:

Հոգեւոր հովիւ Տ. Արշէն սսաց քհնյ. Այվազեանի տարիներու նուիրեալ ծառայութիւնը գնահատեց Արքազան Հայրը եւ անոր նուիրեց հայկական ոճով խաչուառ մը: Մօտ 350 հաւատացեալներ, ձեռնադրեալներու, շքանշաններ ստացողներու ընտանիքներուն անդամները եւ յարգելի հիւրերը հրաժեշտ առին հոգեպէս լեցուած այս տօնական մթնոլորտէն:

Երեկոյեան Թըրլաքի հայ համայնքին առաջին հովուական այցելութիւնը տուաւ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքազան, ուր ութսունէ աւելի հաւատացեալներ լաւ կազմակերպուած ընդունելութեամբ հաւաքուած էին Արքազան Հօր պատգամը եւ բարի խորհուրդները լսելու՝ անոր շնորհաբեր այցելութեան, շրջանի նոր Ծուխին հաստատման համար:

Երկուշաբթի, Նոյեմբեր 10-ի առաւօտուն, դարձեալ Ֆրէզնոյի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ Արքազան Հայրը ժողով ունեցաւ Հիւսիսային եւ Կեդրոնական Գալիֆորնիոյ շրջաններուն մէջ ծառայող հոգեւորականներու հետ համատեղ: Քննարկուեցան ընթացիկ հարցերը, մտահոգութիւններ եւ ապագայի ծրագիրներ:

Ապա ժամը 4-ին Տ. Յովնան Արքազան Հովուական առաջին այցելութիւնը տուաւ նաեւ Րիպըն Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցւոյ համայնքին յիսունէ աւելի հաւատացեալներուն, խօսեցաւ ընդհանուր ծրագիրներու մասին, գնահատական եւ քաջալերանքի խօսքեր ուղղեց՝ Աստուծոյ եւ հայ համայնքին ծառայողներուն եւ բարեմաղթանքներն ու Օրհնութիւնը տուաւ բոլորին:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# Ս. ՂԱԶԱՐ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՏՕՆԵՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ 1700-ԱՄԵԱԿԸ

Երեքշաբթի, 25 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 6-ին, վանքի կամրջակին վրայ միաբանութիւնը կ'ընդունէր Վենետիկի Ամենապատիւ Պատրիարքը. Ծիրանաւոր Անճելօ Սքոլա եւ շքեղօրէն զարդարուած Մայր եկեղեցի առաջնորդուելով, ուր հրաւիրեալներ տեղ բռնած էին արդէն. սկիզբ կ'առնէր պաշտօնական հանդիսութիւնը:

Իտալերէն լեզուով ՀԱՅՐ ՄԵՐԻ արտասանութենէն անմիջապէս յետոյ, Գարեգին Յովսէփեան շքեղ պարիթոնը Գերմանիայէն, փշաքաղեց ներկաները ՈՒՐԱԽ ԼԵՐ Ս. ԵԿԵՂԵՑԻ շարականով:

Շարականներու հատուածաբար ընթերցումներ կատարուեցան իտալերէնով (Այսօր ցնծան դասք առաքելոց - Շինող էիցս համայնից... - Լերինք ամենայն այսօր ցնծացէք... - Պայծառացան այսօր Սուրբ Եկեղեցիք), որոնք ընդմիջուեցան Գարեգինի մեներգներով՝ «Էջ Միածինն ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ նմա...», «Ամէն հայի սրտից բխած լսիր այս ձայն ով Աստուած...»:

Առաջին խօսք առնողը եղաւ Միաբանութեան Ընդհանրական Աբբայ Հ. Եղիա Վրդ. Քիլաղպեան որ հայերէնով խօսքն ուղղելով Սիւնիքի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչեանին, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի ներկայացուցիչ, ըսաւ.

«Ի խորոց սրտի իմ եւ բոլոր Միաբանութեան կողմէ շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձեզի եւ Ձեր միջոցով Վեհափառ Հայրապետին, որ լաւագոյն ձեւով ուզեց ոչ միայն հայոց քրիստոնէութեան 1700-ամեակը վերապրեցնել մեր ժողովուրդին, այլ նաեւ այս տարի նոյնքան սրտամօտ առիթ ընծայեց վերաշխուժացնելու համար հայոց հաւատքը եւ քրիստոնէական վկայութիւն մը տալու ամբողջ աշխարհին... «Էջ Միածինն ի Հօրէ...» իսկապէս Միածինն իջաւ քրիստոնեայ հայու սրտին մէջ եւ լոյսով ողողեց հայու գողգոթայի ճանապարհը... հանդիպեցաւ հայուն, եկեղեցականին, զօրականին, քաղաքացիին, գեղջուկին, որու յուշարձանն է Էջմիածնի Մայր Տաճարը, որմէ ընձիւղեցան մեր հազարաւոր մատեանները, խաչքարները, վանքերը որ առնելով Ս. Էջմիածնի լոյսը տարածեցին ամբողջ աշխարհին:

Մեր ցուցահանդէսը, նուիրուած Ս. Էջմիածնին, կ'ուզէ փոքր նպաստ մը բերել ի նպաստ համամարդկային եւ քրիստոնէական արժէքներու»:

Ապա խօսքը իտալերէնով ուղղելով Ամենապատիւ Ծիրանաւոր-Պատրիարքին եւ ներկայ հաւատացեալներուն, շարունակեց.

«Ան, որ չի յիշեր իր հարազատ պատմութիւնը, չի յարգեր իր ընտանիքին հիմնական թուականները, իր ժողովուրդին, մշակոյթին եւ հաւատքին գլխաւոր դարեդարձները, դատապարտուած է մարդկութեան պատմութենէն վերջնականապէս ջնջուելու... Այս ցուցահանդէսով մենք կը ջանանք մեր բաժինը բերել պատմական այնպիսի կարեւոր դէպքի մը, որով լոյս ծագեցաւ Հայոց երկրին վրայ եւ այսօր ալ, երբ մարդկութիւնը կը տառապի կրօնական ընդհանուր գաղջութեան մէջ, մեզի կու տայ նոր եռանդ եւ խանդ՝ արծարծելու Լուսաւորչեան մեր հաւատքը»:

Այս ցուցահանդէսը նշան մըն է նաեւ, թէ ինչպէս փոքր ժողովուրդ մը կրցած է պահել իր հաւատքի խորհրդանիշներն ու փաճարները, հակառակ բոլոր տեսակի հալածանքներու եւ կոտորածներու...:

Վենետիկի Ծիրանաւոր-Պատրիարքը՝ Անճէլօ Սքօլա, Ծիրանաւոր Ռացինկէրէն մէջբերում մը ընելով ԵԿԵՂԵՑԻԻ մասին որպէս արարողութեան ծառայութիւն մատուցող կառոյց, աւելցուց.

«Այս իմաստով առնուած, փօնել Էջմիածնի Մայր Տաճարին 1700-ամեակը՝ մենաշնորհեալ առիթ մըն է շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, հայ ժողովուրդի քրիստոնեայ հաւատքին հանդէպ ունեցած հաւատարմութեան համար:

Տաճարին խորհուրդով հոն ներկայ է այն ժողովուրդը, որ իր հաւատքը կը մատուցանէ. եւ հայերը անցեալին, ինչպէս ներկայիս, նահատակութեան ապիճան հաստատապէս կը վկայեն, թէ ինչպէս իրենց քրիստոնեայ հաւատքը կը կերպարանափոխէ մարդկային իրականութիւնները՝ նոր ինքնութիւն մը տալով անձին եւ ժողովուրդին:

Վենետիկ իր հեռատես քաղաքականութեամբ 1700-ական թուականներուն սիրայօժար ընդունեց Ձեր Վանական Հաստատութիւնը, իր հարուստ աւանդութիւններով այսօր Ս. Ղազարի կղզին թանկագին քարի մը նման կը փայլի ոչ միայն հայութեան մէջ, այլեւ մեծ նուէր մըն է Վենետիկի հասարակութեան եւ Եկեղեցիին:

Իմ մաղթանքներս յատկապէս ուղղուած Գերաշնորհ Աբրահամ Սրբազանին՝ Միւնիքի առաջնորդին, պատուիրակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Միխիթարեան Միաբանութեան եւ ձեզի ամէնուդ, կը քաղեմ Յովհաննէս Պօղոս Բ. Պապի առաքելական նամակէն ուղղուած հայ ժողովուրդին Քրիստոնէութեան 1700-ամեակի առիթով. «Հայերը խաղաղութեան եւ ջանասիրութեան դեսպաններ, աշխարհը շրջեցան եւ իրենց բազուկներու ծանր աշխատանքով, թանկագին նպաստ մը բերին՝ բարեփոխելու եւ աւելի մօտեցնելու Հօր Աստուծոյ սիրոյ ծրագիրին: Քրիստոնեայ աշխարհը երջանիկ է, որ հայ ազգը կայ եւ կ՚ապրի վեհանձնօրէն եւ հաւատարմօրէն եւ կը մաղթէ, որ ամենուրեք գտնէ հասկացողութիւն եւ համակրանք...»:

Պատմական այս խառնաշփոթ օրերուն ոչ միայն քրիստոնեաները, այլեւ համայն մարդկութիւնը պէտք ունի հայ քրիստոնեայ ժողովուրդի վկայութեան...»:

Հուսկ խօսք առաւ Աբրահամ եպս. Մկրտչեան, առաջնորդ Միւնեաց թեմի եւ ներկայացուցիչ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի:

«Մեծ ուրախութեամբ կը հաղորդեմ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայրապետական ողջոյնները Վենետիկի Ծիրանաւոր-Պատրիարքին, Միխիթարեան Միաբանութեան Աբբահօր եւ մեծարգոյ Հայրերուն, ինչպէս նաեւ բոլոր ներկաներուն:

Էջմիածինը կը հանդիսանայ քրիստոնեայ Հայաստանի առաջին սրբավայրին, Մայր Եկեղեցին, կրակարան մըն հաւատքին, ուր իջաւ Միածին Որդին՝ արեգակնային լոյսի փայլքով լուսաւորելու հայութիւնը Աւետարանի ճշմարտութիւններով եւ ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Թադէոս-Բարդուղիմէոս Առաքեալներէն ժառանգութիւն ստացած Աւետարանի կայծը վերածեց հրդեհի, հրդեհելով ոչ միայն հայութիւնը, այլ անոր միջոցով մարդկութիւնը հաւատքով ստեղծած իր մշակոյթով... Եւ դարեր շարունակ պետականութիւնը կորսնցուցած հայ ժողովուրդը մնաց անսասան իր հաւատքին մէջ, հաւատարիմ իր նախնիքներուն, կառչած իր Եկեղեցիին կրցաւ դարերու արհաւիրքներէն անսասան պահել իր հաւատքը՝

շնորհիւ իր Եկեղեցիին, որուն սրբարար աւիշը կու գայ հեռուներէն՝ Միածնաէջ Ս. Խորանէն...:

Ներկայ ցուցահանդէսը. մեր սրտին սիրելի է. ան թէեւ փոքր հայ ազգին մշակոյթի մէկ ցոլացումն է, բայց մեր սրտին շատ խարազատ է, հոն պատկերուած է համեստ չափերով մեր քրիստոնեայ հաւատքին հզօրութիւնը»:

Վերջին խօսք առնողը եղաւ Հ. Յարութիւն վրդ. Պզտիկեան (իտալերէն) բացայայտելով Էջմիածնի Մայր Տաճարին դերը ոչ միայն հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ, այլ առ հասարակ քրիստոնեայ ճարտարապետութեան՝ մէջբերելով քրիստոնեայ արուեստի պատմութեան դասախօս իր փրոֆէսորին, Քիրշպաումի խօսքերը.

«Գմբէթը ծնած Էջմիածնի Մայր Տաճարին վրայ, Միքելանճելոյի մը հանճարով կրցաւ փառաւոր կերպով բազմիլ Ս. Պետրոսի Մայր տաճարի գագաթին...: Այդ զոյգ գմբէթներու միջեւ ծնաւ դարաւոր բարեկամական կապ մը ծիրանի գօտիի նման, անցեալի տարանումներէ եւ մոռացումներէ վերջ, երկու Եկեղեցիներն ու եկեղեցականները եղբայրական ջերմ կապերով օրինակ կրնան հանդիսանալ արեւելեան եւ արեւմտեան Եկեղեցիներու միջեւ քրիստոնէական հոգիով գործակցութեան: Յարգոյ վարդապետը խօսեցաւ նաեւ հայկական ճարտարապետական կոթողներու պարզութեան եւ կառոյցային տեսանկիւնէն ստացած գիտարուեստական բարձր մակարդակին՝ ըլլալով հիմնականօրէն քարի ճարտարապետութիւն եւ երկրաշարժային աւանդական գօտիի մը վրայ գտնուելով, ստեղծած է շինարարական այնպիսի հնարքներ, որոնք հետագային օգտագործուելով արեւմտեան ճարտարապետներէն՝ կարելի եղած է բարձրացնել հսկայածաւալ «գաթէտրալներ», ռօմանէ եւ գոթական զոյգ ոճերով»:

Աբբահայրը օրուան զոյգ բարձրաստիճան հիւրերը եւ ներկայ բազմութիւնը հրաւիրեց ցուցահանդէսը այցելելու, վանքին կամարակապ քարայատակի երկայնքին սփռուած մօտ 80 տպագիր եւ լուսանկարչական արտադրութիւններ, Ս. Ղազարի դիւանէն եւ հնատիպ գիրքերէն քաղուած, ներկաները ստացան գոհացուցիչ բացատրութիւն իւրաքանչիւր նկարի առջեւ, եւ Ծիրանաւոր-Պատրիարքը, խանդավառուած Հայաստանի եւ Ս. Էջմիածնի տեսարժան վայրերու կուսական գեղեցկութենէն, ջերմ փափաք յայտնեց ՈՒԽՏԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՑ ՏԱԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ:

Ստեփան Սրապեան սրահին մէջ հիւրերն անակնկալի եկան՝ ցուցադրուած տեսնելով Ֆրանչեսքօ Ծունիոյի հրաշալի իւղանկարը Ս. Գրիգոր Լուսաւորիչի, 300 տարեկան պաստառը Տրդատի մկրտութիւնը ներկայացնող... Եւ գեղարուեստական հրատարակութիւններու փունջ մը նուիրուած Ս. Էջմիածնի եւ հայ եկեղեցական ճարտարապետութեան, խնամքով ներկայացուած:

Հուսկ տեղի ունեցաւ ինքնածառայական յոտնկայս ընթրիք մը բոլոր ներկաներուն մասնակցութեամբ, ուր Անճէլօ Սքօլա՝ Ծիրանաւոր-Պատրիարքը, բաժակը բարձրացուց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, անոր ներկայացուցիչ Աբրահամ Սրբազանին, Մխիթարեան Միաբանութեան եւ հայ ժողովուրդին կենաց մաղթելով հաւատարմութիւն Ս. Գրիգորի հաւատքին. Քրիստոսի Եկեղեցիին եւ երջանիկ ապագա Հայաստանի նորաստեղծ Հանրապետութեան:

*ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՊԶՏԻԿԵԱՆ*
*Միաբան Մխիթարեան Միաբանութեան*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍՊԱՆԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Իսպանիայի նորանշանակ դեսպան խոսե Մարիա Ռոբլես Ֆրագային (նստավայրը՝ ք. Մոսկվա)՝ Իսպանիայում և Պորտուգալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Խոջոյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով նորանշանակ դեսպանի անդրանիկ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, գոհունակություն հայտնեց, որ Իսպանիայի իշխանությունները հնարավորություն են ընձեռում հայ ժողովրդի զավակներին ապրել այդ երկրում և կազմակերպել իրենց ազգային-եկեղեցական կյանքը:

«Ուրախ ենք, որ բարեկամական ջերմ կապեր են հաստատվում մեր ժողովուրդների միջև, որոնք, անտարակույս, պիտի բարիքներ պարգևեն և՛ Հայաստանին, և՛ Իսպանիային, և՛ այնտեղ ապրող մեր ժողովրդի զավակներին»,- իր խոսքում շեշտեց Նորին Սրբությունը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Իսպանիայի դեսպանն իր հերթին մեծապես կարևորեց Հայ Եկեղեցու դերը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ աշխարհում բնակվող հայորդիների կյանքում: Պրն Ռոբլես Ֆրագան անդրադարձավ նաև Իսպանիայում հաստատված հայ համայնքի գործունեությանը՝ նշելով, որ «Հայ համայնքը ևս մեծապես նպաստում է Իսպանիայի զարգացմանը՝ իր ծառայությունը բերելով կյանքի տարբեր ոլորտներում»:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև եկեղեցական կյանքի զարթոնքի, ինչպես նաև քույր Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու հարաբերությունների մասին:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լիբանանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ժեբրայիլ Ժասսրային փիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց նորանշանակ դեսպանի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն՝ վստահությամբ, որ նա նույն նախանձախնդրությամբ շարունակելու է իր նախորդների աշխատանքը՝ ի շահ հայ-լիբանանյան հարաբերությունների ամրապնդման:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ու դեսպանն անդրադարձան երկու երկրների և ժողովուրդների բարեկամական կապերին: Նորին Սրբությունը նշեց, որ Լիբանանն այն երկրներից է, ուր ապաստանած բազմաթիվ հայորդիք մշտապես վայելում են երկրի իշխանությունների հոգատար վերաբերմունքը:

«Ես չեմ պատկերացնում Լիբանանն առանց հայերի: Նրանք Լիբանանի կյանքի անքակտելի մասն են».- շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ ասաց պրն դեսպանը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն արդյունավետ ծառայություն մաղթեց դեսպանին՝ հայտնելով նրան նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աջակցությունը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈՔՍԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսի գլխավորությամբ Հայաստան և Արցախ ժամանած մի խումբ ուխտավորների: Խմբի մեջ ընդգրկված տարբեր երկրների քրիստոնյաներ բարոնուհու ուղեկցությամբ արդեն եղել են Արցախում՝ Բերձորում, Շուշիում և Գանձասարում:

Վեհափառ Հայրապետը ողջունելով հյուրերին՝ ուրախությամբ նշեց, որ Ս. Էջմիածինը Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական այս տարում հյուրընկալում է աշխարհի տարբեր ծայրերից ժամանած հայ և օտար ուխտավորների: «Մեր օրհնությունն ու գնահատանքը ձեզ, որ եկել եք ձեր աղոթքը միահյուսելու հայ ժողովրդի աղոթքներին՝ հայցելով խաղաղություն աշխարհի և մասնավորապես այս տարածաշրջանի համար»: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև բարոնուհուն՝ Հայաստանին և Արցախին մատուցած ծառայությունների համար:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը, ի պատասխան հյուրերի հարցումների, անդրադարձավ Հայ Եկեղեցու առաքելությանն ու ներկա խնդիրներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցին: Վերջինիս առիթով Նորին Սրբությունն ասաց. «Մենք խորապես գիտակցում ենք մեր առաքելությունը խաղաղության հաստատման գործում և կարելիության սահմաններում փորձում ենք մեր նպաստը բերել այդ մթնոլորտի ձևավորմանը»:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ և լիազոր դեսպան Խալիֆա Շահին Ալ Մրրիին (նստավայրը՝ Թեհրան): Դեսպանին ուղեկցում էր Իրանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գեղամ Ղարիբջանյանը:

Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման առնչությամբ՝ վստահությամբ նշելով, որ դրանք պետք է ծառայեն հայ-արաբական բարեկամության ամրապնդմանն ու երկրների զորացմանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, դեսպանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով: Խալիֆա Շահին Ալ Մրրին նշեց նաև, որ իր երկրում մեծագույն ակնածանքով են վերաբերվում հայ ժողովրդին:

Հանդիպման ընթացքում խոսվեց կրոնների միջև երկխոսության կարևորության մասին: «Անչափ ուրախ ենք, որ այսօր առկա է փոխհասկացողություն և նաև փոխհամագործակցություն քրիստոնյա և իսլամ կրոնների միջև, որովհետև ներկայիս անհանգիստ աշխարհը միահամուռ ջանքերով միայն կարող ենք փրկել ավերումից ու զանազան վտանգներից: Այդ առումով կարևոր դերակատարություն ունեն կրոններն ու նրանց սպասավորները»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ նկատելով, որ ասվածի լավագույն ապացույցը է այն, որ արաբական աշխարհում բազմաթիվ հայորդիք ապրում են խաղաղ ու ապահով կյանքով:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԻ

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երևանի ճարտարագիտական համալսարանի 70-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված «Ինժեներական կրթությունը և գիտությունը» գիտաժողովին մասնակից մի խումբ օտարերկրյա գիտնականների՝ համալսարանի ռեկտոր Յուրի Սարգսյանի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց հյուրերին՝ նշելով, որ նրանց մասնակցությունը հոբելյանական տոնակատարություններին համալսարանի նորընթաց վերելքի ու ծրագրերի հաջողության լավագույն վկայությունն է: Նորին Սրբությունը շնորհավորեց պրն Սարգսյանին համալսարանի հոբելյանի առիթով և բարձր գնահատեց ճարտարագետների ներդրումը երկրի զարգացման գործում:

Դասավիրակության անունից շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պրն Սարգսյանը նշեց, որ Հայ Եկեղեցին մշտապես աջակից է եղել գիտության և կրթության գործին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու ներկայիս առաքելությանն ու խնդիրներին:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏԻՆՈՎԻՆ

Նոյեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովին և նրա գլխավորած պատվիրակությանը: Նախարարին ուղեկցում էին Բելառուսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սուրեն Հարությունյանը, Հայաստանում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարինա Դոլգուպոլովան, պաշտոնատար այլ անձինք:

Հանդիպման ընթացքում խոսվեց Եկեղեցի-պետություն հարաբերությունների, Հայ Առաքելական և Բելառուսի Ուղղափառ Եկեղեցիների առաջ ծառացած մարտահրավերների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց նաև երկու երկրների միջև առկա եղբայրական հարաբերությունները:

«Մեր գնահատանքն ենք հայտնում Բելառուսի իշխանություններին այն ուշադիր և բարյացակամ վերաբերմունքի համար, որ դրսևորում են հանդեպ մեր ժողովրդի զավակները, որոնք ապրում են Բելառուսում: Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված, որպեսզի Տերը պահի և պահպանի իր հովանավոր Աջի ներքո խաղաղության, սիրո, համագործակցության և եղբայրության մեջ աշխարհը համայն և մնայուն առաջընթաց պարգևի մեր երկու պետություններին, որպեսզի ապահովվեն մեր ժողովուրդների համար երջանիկ ու բարօր կյանք»,- ասաց Նորին Սրբությունը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պրն Մարտինովը կարևորեց պետության և Եկեղեցու դերն ազգային-հոգևոր և մշակութային արժեքների պահպանման գործում: Բելառուսի արտգործնախարարը Վեհափառ Հայրապետին հայտնեց նաև իր շնորհավորանքը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երևանում կայանալիք «Տարածական պլանավորում և լանդշաֆտ» առաջին արտագնա սեմինարի առիթով Հայաստան ժամանած պատվիրակությանը՝ Եվրախորհրդում Եվրոպական լանդշաֆտի կոնվենցիային միացող և ստորագրող պետությունների կոնֆերանսի նախագահ Էնրիկո Բուերգի գլխավորությամբ:

ՀՀ քաղաքաշինության փոխնախարար Ռուզան Ալավերդյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կոնֆերանսի հրավիրման նպատակը:

«Մեզ, որպես Եկեղեցի, շատ մոտ ու հարազատ է առաքելությունը, որ իրականացնում եք դուք: Էական ու կարևոր է շրջակա միջավայրի պահպանությունը, որի մեջ կերտվում է մարդ անհատը: Մենք էլ նախանձախնդիր ենք Աստծո արարչագործությունն անխաթար պահելուն ու մեր ջանքերն ի գործ ենք դնում, որ ներդաշնակության մեջ լինեն բնական ու բարոյական արժեքները: Այս իմաստով մենք դիտում ենք մեզ և ձեզ գործակիցներ»,- ասաց Նորին Սրբությունը՝ հաջողություն մաղթելով հյուրերին իրենց աշխատանքում:

Հանդիպման ընթացքում կարևորվեց Եկեղեցիների դերն ու ազդեցությունը շրջակա միջավայրի պահպանման գործում:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հոկտեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության ժամանակավոր գործերի նորանշանակ հավատարմատար Ստեփան Դիմիտրովին:

Բարի գալուստ մաղթելով Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու երկրների, ինչպես նաև Հայ Առաքելական և Բուլղար Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա բարեկամական հարաբերություններին՝ հույս հայտնելով, որ դրանք գնալով էլ ավելի պիտի ամրանան ու զորանան:

«Մենք անհուն գոհունակություն ենք ապրում, որ մեր երկու պետությունների միջև հարաբերությունները զորանում և առաջընթաց են ապրում, որը արդյունավետ անդրադարձներ պիտի ունենա մեր երկու ժողովուրդների կյանքի վրա»,- ասաց Նորին Սրբությունը:

Ստեփան Դիմիտրովը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ վստահեցնելով, որ Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալուց հետո, առավել ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ պիտի կատարի իր պարտականությունները՝ հանուն մեր երկրների և երկու Եկեղեցիների զորացման:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի քարտուղար Վլադիմիր Ռուշայլոյին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ՊՆ փոխնախարար Միքայել Գրիգորյանի և Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Վ. Ռուշայլոյի այցը հայոց հոգևոր կենտրոն, ուրախություն և գոհունակություն հայտնեց երկու երկրների և ժողովուրդների միջև դարավոր եղբայրության ամրապնդման և բարեկամական կապերի սերտացման համար:

Իր հերթին պրն Ռուշայլոն, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար, կարևորեց Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների դերը ժողովուրդների բարեկամության զորացման գործում: Ապա պրն Ռուշայլոն ՌԴ անվտանգության խորհրդի պատվո նշան շնորհեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Հանդիպմանը ներկա էր բանակի հոգևոր ծառայության պատասխանատու Տ. Արշեն աբղ. Սանոսյանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲՈՒՇ ԴՅՈՒ ՌՈՆ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով հյուրերին՝ գոհունակությամբ նշեց Բուշ դյու Ռոն նահանգի և Մայր Աթոռի միջև ստեղծված ջերմ հարաբերություններն ու օգտավետ փոխգործակցությունը՝ իբրև հայ-ֆրանսիական բարեկամության իրական վկայություն:

Հանդիպման ավարտին Վնհարանում Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և ֆրանսիական «Altitude 5165» (Մարսել) բարեգործական կազմակերպության ներկայացուցիչ Կլոդ Հարությունյանը ստորագրեցին համաձայնագիր, որով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը 1902 թ. Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց Հայրապետի կողմից կառուցված Մայր Աթոռի նախկին հիվանդանոցի շենքը և կից տարածքը տրամադրում է վերոգրյալ կազմակերպությանը՝ Էջմիածին քաղաքում ատամնաբուժարան հիմնելու համար: Ատամնաբուժարանը, որ կսպասարկի շրջակա բնակչությանը, կառուցվելու է Ժան-Նոել Գերինիի հովանավորությամբ:

Այս փարվա հունիսին, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ և Ժան-Նոել Գերինիի մասնակցությամբ, Էջմիածին քաղաքում տեղի էր ունեցել նաև ատամնաբուժական կենտրոնի օրհնության կարգ և հուշաքարի բացում:

«Մեր աղոթքն է, որ Տերը պահի ու պահպանի մեր երկու ժողովուրդների միջև հաստատված եղբայրությունը և բարեկամությունը՝ ամրացնելով համագործակցության ոգին: Բարեգործության պտուղներից օգտվում են մեր զավակները, սակայն բարեգործությամբ առավել եք զորանում եք դուք՝ այն սիրով, որ դրսևորում եք կարիքի մեջ եղող ձեր նմանի նկատմամբ».- դիմելով հյուրերին՝ նշեց Նորին Սրբությունը:

Նույն օրը համագործակցության համաձայնագիր ստորագրեցին նաև Ժան-Նոել Գերինին և Էջմիածնի քաղաքապետ Հրաչ Աբգարյանը՝ պարտավորվելով սատարել ատամնաբուժարանի հիմնադրմանը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՕԼԵԳ ԵՍԱՅԱՆԻՆ

Նոյեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի ուղեկցությամբ:

«Անչափ ուրախ ենք տեսնել ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Վեհարանի հարկի ներքո, և վստահեցնել մեր Եկեղեցու զորակցությունը: Մեր աղոթքներում միշտ ունենք Արցախ աշխարհը, և Մեր հայցն է, որպեսզի Տերը խաղաղության մեջ պահի ու պահպանի ազգը համայն, Հայաստան երկիրը մեր, Արցախը և նրա հերոսական ժողովուրդը»,- հյուրերին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ գոհունակությամբ նշելով Հայաստանի և Ղարաբաղի խորհրդարանների սերտ փոխգործակցությունը: Հայոց Հայրապետը բարձր գնահատեց նաև Ղարաբաղի իշխանությունների հոգածությունը Հայ Եկեղեցու և մասնավորապես Արցախի թեմի հանդեպ, որի արտահայտությունն է Ստեփանակերտի կենտրոնում վեր խոյացող նոր եկեղեցին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, ԼՂՀ խոսնակ Օլեգ Եսայանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության այցի արդյունքները, որոնք նպատակամիտված են Հայաստանի և Արցախի խորհրդարանական կապերի առավել զորացմանը:



## ՀԱՆԳԻՍՏ Տ. ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Սույն թվականի նոյեմբերի 19-ին ի Տեր հանգչավ Կոտայքի թեմի Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր Տ. Եղիշե քահանա Աբրահամյանը, ով ավելի քան 37 տարի ծառայել է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցում:

Համեստ էր, խոնարհ, նվիրված, ժողովրդասեր: Անմնացորդ սիրում էր եկեղեցին և ըստ կարի յուրում ծառայեց ժողովրդին:

Տեր Եղիշեն ծնվել է 1923 թ. Հրազդանի շրջանի Բջնի գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1966-68 թթ. մասնակցել է Ս. Էջմիածնում կազմակերպված քահանայից պատրաստման դասընթացներին: 1966 թ. օգոստոսի 2-ին, ձեռամբ Տ. Վահան արքեպս. Տերյանի, ձեռնադրվել է քահանա: 1976 թ. լանջախաչ կրելու իրավունք է ստացել:

Հանգուցյալ Տեր Հոր հոգևոր ծառայությունը գնահատվել է և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Հանգուցյալ քահանայի աճյունը դրվեց Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցում, ուր նոյեմբերի 22-ին մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի, կատարվեց վերջին օծման կարգը:

Դամբանականում Սրբազան Հայրը մասնավորապես նշեց. «Հանձնարարությամբ ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի եկել ենք փոխանցելու Բջնիի ողջ համայնքին Վեհափառ Հայրապետի վշտակցությունը, քանզի Տ. Եղիշե քահանան իր կյանքն անմնացորդ նվիրեց Աստծուն, Եկեղեցուն և ժողովրդին, որի համար նա սիրված էր բոլորի կողմից...: Հոգևոր երախտագիտությամբ, հարգանքով ու աղոթքով ենք նրան ճանապարհում դեպի Երկնքի Արքայություն»:

Հանգուցյալ Տ. Եղիշե քահանայի աճյունն ամփոփվեց Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու բակում:

*ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հոկտեմբերի 5-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Էջմիածին նաւ փրկութեան, քան զՆոյի մեծին տապան» (Ղազար Ջահկեցի) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

***Հոկտեմբերի 12-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Հովհ. Ա 1) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 49):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Հոկտեմբերի 19-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Հայոց բանակի Ռեխփի Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 57):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Արցախյան պատերազմում նահատակված հայորդյաց հոգիների խաղաղության համար:

***Հոկտեմբերի 26-ին, կիրակի. - Է. կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս. այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ» (Մատթ. ԻԴ 27) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 60):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Նոյեմբերի 2-ին, կիրակի. - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «...մեծի

ղորմութեամբ ուժս ուսամբ բախեցիր զխորս անդնդոց լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցիր զՄայր Աթոռն մեր զՍուրբ Էջմիածին...» (Ժամամուտ Ս. Էջմիածնի) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 63):

Հավարտ Ս. Պատարագի. հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի. կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբության օծման չորրորդ տարեդարձի առիթով:

***Նոյեմբերի 8-ին, շաբաթ. - Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն:***

Այսօր Մայր Տաճարի զանգակատան Ս. Հրեշտակապետաց Խորանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 65):

***Նոյեմբերի 9-ին, կիրակի. - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 67):

Պատարագի սրբազան խորհրդակատարությունից հետո, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Նոյեմբերի 16-ին, կիրակի. - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արամ եպիսկոպոս Աթաշյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր որ յերկինս...» (Տերունական աղոթք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 70):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 21-ին, ուրբաթ. - Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամացն ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Անձն իմ ի ձեռս քո յամենայն ժամ» (Սաղմ. ՃԺԸ 109) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 73):

***Նոյեմբերի 23-ին, կիրակի. - Ա. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը: Սրբազան արարողության ընթացքին պատարագիչ Սրբազան Հայրը նաև Ձեռնադրության խորհուրդը կատարեց, որից հետո «Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայս» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 76):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 29-ին, շաբաթ. - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հայրապետունք այգոյն հրեղէն պարիսպք եւ բարձր աշտարակք» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 78):

***Նոյեմբերի 30-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (Октябрь-Ноябрь 2003 г.)


1. Собор епископов в Первопрестольном Святом Эчмиадзине, 28-29 октября 2003 г. (с. 3-4).
2. Епархиальное консультативное собрание в Первопрестольном Святом Эчмиадзине, 31 октября 2003 г. (с. 5-7).
3. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на епархиальном консультативном собрании, 31 октября 2003 г. (с. 8-17).
4. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – Встреча духовных лидеров России, Армении, Грузии и Азербайджана в Москве, 26 октября 2003 г. (с. 18-24).
5. Обращение миротворческой встречи религиозных лидеров России, Армении, Грузии и Азербайджана, 26 октября 2003 г. (с. 25-27).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Высокопреосвященству архиепископу Месропу Григоряну по случаю его награждения орденом «Св. Саак – Св. Месроп», 3 октября 2003 г., № 193 (с. 28-29).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, преподобному протоиерею Егише Саргсяну по случаю его награждения орденом «Св. Нерсес Шнорали», 1 октября 2003 г. (с. 30-31).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, дьяконисе Рипсиме Сасунян по случаю ее награждения орденом «Св. Нерсес Шнорали», 4 ноября 2003 г., № 198 (с. 32-33).
9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Микаэлу Микаэляну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 4 ноября 2003 г., № 200 (с. 34-35).
10. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Патрику Деведжяну по случаю его награждения орденом «Св. Саак – Св. Месроп», 24 октября 2003 г., № 201 (с. 36-37).
11. Слово благословения Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Варужану Бурмаяну, 20 октября 2003 г., № 197 (с. 38-39).
12. Патриаршие награды (пожалование в октябре-ноябре 2003 г. энциклик, орденов «Св. Нерсес Шнорали», благословений и чести старшинства Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской церкви) – (с.40).
13. Слово соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, семье г-на Роберта Мависакаляна, 31 октября 2003 г. (с. 41).

14. Литургия Обета Армянской Армии в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 19 октября 2003 г. (с. 42-43).
15. Церемония, посвященная 50-летию хиротонии Его Высокопреосвященства архиепископа Месропа Григоряна, Святой Эчмиадзин, 30 октября 2003 г. (с. 44).
16. Армянский Круглый стол Всемирного совета церквей будет впредь служить благотворительным фондом (ежегодное собрание Центральной комиссии Армянского Круглого стола ВСЦ в Первопрестольном Святом Эчмиадзине, 6-8 октября 2003 г. (с. 45).

## ПРОПОВЕДИ

17. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Месропа Григоряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 5 октября 2003 г. (с. 46-48).
18. Проповедь Его Преосвященства епископа Езраса Нерсисяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 12 октября 2003 г. (с. 49-51).
19. Проповедь Преподобного иеромонаха Нарека Авакяна в церкви Св. Месропа Маштоца в Ошаканс на первую Литургию, 12 октября 2003 г. (с. 52-56).
20. Проповедь Преподобного иеромонаха Аршена Саносяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета Армянской Армии, 19 октября 2003 г. (с. 57-59).
21. Проповедь Его Преосвященства епископа Баграта Галстаняна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 26 октября 2003 г. (с. 60-62).
22. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Гюта Нагташяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 2 ноября 2003 г. (с. 63-64).
23. Проповедь Преподобного иеромонаха Вардана Навасардяна на Праздник Архангелов с алтаря колокольни Кафедрального собора Святого Эчмиадзина, 2 ноября 2003 г. (с. 65-66).
24. Проповедь Его Преосвященства епископа Татева Гарибяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 9 ноября 2003 г. (с. 67-69).
25. Проповедь Его Преосвященства епископа Арама Атешяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 16 ноября 2003 г. (с. 70-72).
26. Проповедь Преподобного иеромонаха Нарека Авакяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 21 ноября 2003 г. (с. 73-75).
27. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Давида Саакяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 23 ноября 2003 г. (с. 76-77).
28. Проповедь Преподобного иеромонаха Вардана Навасардяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 29 ноября 2003 г. (с. 78-79).

## ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

29. ЕПИСКОП НОРВАН ЗАКАРЯН – Необходимость собора епископов в настоящее время и пределы его компетенции (доклад, прочитанный на соборе епископов) – (с. 80-84).

## РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

30. ПРЕПОДОБНЫЙ ИЕРЕЙ АДАМ МАКАРЯН – Душа и жизнь (Анализ 25-ой строки 6-ой главы Евангелия от Матфея) – (85-90).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

31. **КНАРИК ТЕР-ДАВТЯН** – Сборники «Изречения мудрецов» в армянской средневековой литературе (научное исследование) – (с. 91-98).
32. **АНАИТ МХИТАРЯН** – Один эпизод свадебного обряда (научное исследование) – (с. 99-101).
33. **Р. К. САКАПЕТОЯН** – Религиозно-церковные и обрядовые слова в западно-армянском языке (научное исследование) – (с. 102-107).
34. **МАРИ АННА ШЕВАЛЬЕ** – Германская стратегия Левона Великого. Обстоятельства обоснования тевтонов в Киликии (научное исследование, переведенное с французского Варужаном Погосяном) – (с. 108-117).
35. **АШОТ АЙРУНИ** – Неизменно поучительная миссия (научное исследование, посвященное истории организации «Германская миссия на востоке», основанной Иоганнесом Лепсиусом) – (с. 118-127).
36. **ОВАНЕС АЙВАЗЯН** - В средоточии конфликта между эгоизмом и совестью (научное исследование, посвященное произведениям Дереника Демирчяна) – (с. 128-133).

### Искусствоведение

37. **ЛЕВОН ЧУГАСЗЯН** – Аршак Фетваджян. Армянский художник между Западом и Востоком (научное исследование) – (с. 134-146).
38. **АЗАТ БОЗОЯН** – Профессор Мишель ван Эсбрук (1934-2003) – (научное исследование, посвященное памяти Мишеля ван Эсбрука. Помещен библиография изданных и неизданных книг, исследований и статей ученого) – (с. 147-161).
39. **ЛЕВОН МОМДЖЯН** – Компакт-диск Мкртича Погосяна (комментарий к компакт-диску, выпущенному М. Погосяном во Франции) – (с. 162-164).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

40. Возведение в сан священников в Первопрестольном Святом Эчмиадзине (помещены также биографии иеромонахов Айрика Оганесяна, Тирана Петросяна, Кюрега Варданяна, Оннана Акопяна и священника Акопа Акопяна), 23 ноября 2003 г. (с. 165- 170).
41. **ДЬЯКОН АРАМ СИМОНЯН** – Церемония начала учебного года в Духовной семинарии Геворкян, 4 октября 2003 г. (с. 171-175).
42. Презентация учебников по «Истории Армянской Церкви» в Первопрестольном Святом Эчмиадзине, 3 ноября 2003 г. (с. 176- 177).
43. **РИЗЕНОСЕЦ ОГАНЕС ГРИГОРЯН** – Научная конференция в Духовной семинарии Вазгенян, 16 ноября 2003 г. (с. 178- 181).
44. Защита дипломных работ в Первопрестольном Святом Эчмиадзине, 4 октября 2003 г. (с. 182).
45. Освящение фундамента церкви Св. Тадеоса в г. Масисе Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 4 ноября 2003 г. (с. 183).
46. Освящение нововозведенной церкви Св. Архангелов в селе Варденик, 8 ноября 2003 г. (с. 184).
47. Освящение нововозведенной армянской церкви Сурб Хач в Самаре, 16 ноября 2003 г. (с. 185).

48. Прием в Первопрестольном Святом Эчмиадзине паломников Центральной Европы под предводительством Патриаршего нунция архиепископа Месропа Григоряна, 5 октября 2003 г. (с. 186).
49. Прием в Первопрестольном Святом Эчмиадзине паломников из Ново-Нахичеванской и Российской епархии, 12 октября 2003 г. (с. 186).
50. Прием в Первопрестольном Святом Эчмиадзине паломников из армянской епархии Канады, 26 октября 2003 г. (с. 187).
51. Литургию Обета прослужил Патриарший нунций Западной Европы, предводитель армян Парижа архиепископ Гют Нагташян, 2 ноября 2003 г. (с. 187-188).
52. Прием в Первопрестольном Святом Эчмиадзине паломников из армянской епархии Бразилии, 9 ноября 2003 г. (с. 188).
53. Литургию Обета в Первопрестольном Святом Эчмиадзине прослужил член Конгрегации Константинопольской армянской патриархии епископ Арам Атешян, 16 ноября 2003 г. (с. 188-189).
54. Пастырский визит предводителя армянской епархии Грузии в Ахалциху, 5 октября 2003 г. (с. 190).
55. Пастырский визит предводителя армянской епархии Грузии в Джавахк, 27 сентября 2003 г. (с. 191).
56. Пастырский визит предводителя армянской епархии Грузии в Батуми, 18 октября 2003 г. (с. 192-193).
57. ДЖУЛИЕТА БАДАЛЯН – Маленькое проявление признания патриотического труда (празднование Дня учителя в армянской церкви Св. Геворка в Тбилиси) – (с. 194).

## В армянской восточной епархии США

58. Визит Митрополита Кирилла к Предводителю Его Высокопреосвященству архиепископу Хажаку Парсамяну, 13 ноября 2003 г. (с. 195-196).
59. Празднование 35-летия освящения епархиального Кафедрального собора Св. Вардана, 14-16 ноября 2003 г. (с. 197-201).
60. Презентация 3-ей книги IV тома «Азгапатума» («Национальной истории»), изданной Преподобным протоиереем Завеном Арзуманяном, 21 ноября 2003 г. (с. 202-204).

## В армянской западной епархии США

61. Предводитель епархии председательствовал на праздновании 27-ой годовщины основания Общества армян Константинополя, 1 октября 2003 г. (с. 205).
62. Дар в 100.000 долларов США судьи Арманда Арапяна и его супруги для обновления монастыря Св. Гаянэ в Эчмиадзине, 23 июля 2003 г. (с. 206).
63. Вручение наград и хиротония в армянской Апостольской церкви Св. Саркиса в Ист Лос Анджелесе, 12 октября 2003 г. (с. 207).
64. Ежегодное собрание певцов хора «Комитас», 23 октября 2003 г. (с. 208).
65. Прием в честь Президента Нагорного Карабаха, 26 октября 2003 г. (с. 209).
66. Участие Предводителя епархии на ежегодном собрании Армянского Конгресса Америки, 1 ноября 2003 г. (с. 210).
67. Пастырский визит и Литургия в Сан Луис Обиспо (Калифорния), 24 октября, 5 ноября 2003 г. (с. 211).

68. Вечер чествования в честь писателя Питера Палакяна, 5 ноября 2003 г. (с. 211).
69. Четырехдневный визит Предводителя епархии в Центральную Калифорнию, 7-10 ноября 2003 г. (с. 212-213).

70. **АРХИМАНДРИТ ОТЕЦ АРУТЮН ПЗТИКЯН** – Празднование 1700-летия освящения Кафедрального собора Святого Эчмиадзина на острове Святого-Лазаря (Венеция), 25 ноября 2003 г. (с. 218).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

71. Аудиенция у Его Святейшества Гарегина II новоназначенного посла Испании в Армении г-на Хосе Марии Роблес Фраги, 11 октября 2003 г. (с. 217).
72. Аудиенция у Его Святейшества Гарегина II новоназначенного посла Ливана в Армении г-на Жебраила Жаары, 15 октября 2003 г. (с. 218).
73. Аудиенция у Его Святейшества Гарегина II баронессы Киролайн Кокс, 15 октября 2003 г. (с. 218).
74. Аудиенция у Его Святейшества Гарегина II посла Объединенных Арабских Эмиратов в Армении г-на Халифа Шаин ал-Мари, 16 октября 2003 г. (с. 219).
75. Аудиенция у Его Святейшества Гарегина II группы инженеров, 16 октября 2003 г. (с. 219).
76. Аудиенция у Его Святейшества Гарегина II министра иностранных дел Республики Беларусь г-на Сергея Мартынова, 17 октября 2003 г. (с. 220).
77. Аудиенция у Его Святейшества Гарегина II делегации Совета Европы, 22 октября 2003 г. (с. 220).
78. Аудиенция у Его Святейшества Гарегина II временного поверенного в делах Болгарской Республики г-на Степана Димитрова, 24 октября 2003 г. (с. 221).
79. Аудиенция у Его Святейшества Гарегина II Секретаря Совета безопасности Российской Федерации г-на Владимира Рушайло, 4 ноября 2003 г. (с. 221).
80. Аудиенция у Его Святейшества Гарегина II делегации областного совета области Буш-дю-Рон Франции, 16 ноября 2003 г. (с. 222).
81. Аудиенция у Его Святейшества Гарегина II председателя Национального собрания Нагорного-Карабаха г-на Олега Есаяна, 22 ноября 2003 г. (с. 223).

82. Кончина Преподобного священника Егише Абрамяна, 19 ноября 2003 г. (с. 224).

83. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Первопрестольном Эчмиадзине в течение октября-ноября 2003 г. (с. 225-227).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN
## (October-November 2003)


1. Conference of Bishops in the Mother See of Holy Etchmiadzin, October 28-29, 2003 (p. 3-4).
2. Meeting of the Diocesan Representatives in the Mother See of Holy Etchmiadzin, October 31, 2003 (p. 5-7).
3. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the Meeting of the Diocesan Representatives, October 31, 2003 (p. 8-17).
4. **GAYANE ALEXANIAN** – Meeting of Russian, Armenian, Georgian and Azerbaijanian Spiritual Leaders in Moscow, October 26, 2003 (p. 18-24).
5. Joint Appeal from the Meeting of Russian, Armenian, Georgian and Azerbaijanian Spiritual Leaders in Moscow, October 26, 2003 (p. 25-27).


## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Mesrob Krikorian on the occasion of his decoration with the Order of "Saint Sahak – Saint Mesrop", October 3, 2003, no. 193 (p. 28-29).
7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Rev. Fr. Archpriest Yeghishe Sargsian on the occasion of his decoration with the Order of "Saint Nerses Shnorhali", October 1, 2003 (p. 30-31).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Deaconess Hripsime Sassunian on the occasion of her decoration with the Order of "Saint Nerses Shnorhali", October 4, 2003, no. 198 (p. 32-33).
9. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Mikael Mikaelian on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", November 4, 2003, no. 200 (p. 34-35).
10. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Patrick Devedjian on the occasion of his decoration with the Order of "Saint Sahak – Saint Mesrop", October 24, 2003, no. 201 (p. 36-37).
11. Message of Blessing of His Holiness Karekin II. Catholicos of All Armenians, to Mr. Varujan Burmayan, October 20, 2003, no. 197 (p. 38-39).
12. Pontifical Awards (Encyclicals, Orders of "Saint Nerses Shnorhali", and messages of blessing granted in October-November 2003 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 40).

13. Message of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the family of Mr. Robert Mavissakalian, October 31, 2003 (p. 41).
14. Celebration of the Divine Liturgy of Oath of the Armenian Army in the Cathedral of Holy Etchmiadzin, October 19, 2003 (p. 42-43).
15. Ceremony dedicated to the 50th Anniversary of His Eminence Archbishop Mesrob Krikorian's Ordination, Holy Etchmiadzin, October 30, 2003 (p. 44).
16. Yearly Meeting of the WCC Armenian Round Table Central Commission in the Mother See of Holy Etchmiadzin, October 6-8, 2003 (p. 45).

## SERMONS

17. Sermon delivered by His Eminence Archbishop Mesrob Krikorian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath; October 5, 2003 (p. 46-48).
18. Sermon delivered by His Grace Bishop Yezras Nersissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath, October 12, 2003 (p. 49-51).
19. Sermon delivered by Rev. Father Narek Avagian in the Saint-Mesrop Mashtots Church of Oshakan during the celebration of his inaugural Divine Liturgy, October 12, 2003 (p. 52-56).
20. Sermon delivered by Rev. Father Arshen Sanossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the Celebration of the Divine Liturgy of Oath of the Armenian Army, October 19, 2003 (p. 57-59).
21. Sermon delivered by His Grace Bishop Bagrat Galsdanian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath, October 26, 2003 (p. 60-62).
22. Sermon delivered by His Eminence Archbishop Kiud Nakkashian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath, November 2, 2003 (p. 63-64).
23. Sermon delivered by Rev. Father Vardan Navasardian on the Feast of Archangels from the Belfry of the Cathedral of Holy Etchmiadzin, November 8, 2003 (p. 65-66).
24. Sermon delivered by His Eminence Archbishop Datev Gharibian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath, November 9, 2003 (p. 67-69).
25. Sermon delivered by His Grace Bishop Aram Ateshian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath, November 16, 2003 (p. 70-72).
26. Sermon delivered by Rev. Father Narek Avagian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, November 21, 2003 (p. 73-75).

27. Sermon delivered by His Eminence Archbishop David Sahakian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of his Divine Liturgy of Oath, November 23, 2003 (p. 76-77).
28. Sermon delivered by Rev. Father Vardan Navasardian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, November 29, 2003 (p. 78-79).

## ECCLESIASTICAL STUDIES

29. **BISHOP NORVAN ZAKARIAN** – Necessity of the Council of Bishops in Modern Times (Report presented to the Conference of Bishops) - (p. 80-84).

## RELIGIOUS STUDIES

30. **REV. FR. ADAM MAKARIAN** – Soul and Life (Analysis devoted to the 25th Verse of the 6th Chapter of the Gospel of Matthew (p. 85-90).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

31. **KNARIK TER-DAVTIAN** – The Collections entitled "Words of Wisdom" in Armenian Medieval Literature (investigation) – (p. 91-98).
32. **ANAHIT MKHITARIAN** – One Episode of the Nuptial Rite (investigation) – (p. 99-101).
33. **R.K. SAKAPETOYAN** – Religious, Ecclesiastical and Liturgical Words in Western Armenian Language (investigation) – (p. 102-107).
34. **MARIE-ANNE CHEVALIER** – The German Strategy of King Levon the Great; Circumstances of Teutones' Settlement in Cilicia (investigation translated from French by Varujan Poghossian) – (p. 108-117).
35. **ASHOT HAYRUNI** – A Mission Worthy of Study (investigation devoted to the History of the "German Mission in the East" Organization founded by Johannes Lepsius) – (p. 118-127).
36. **HOVHANNES AYVAZIAN** – At the Heart of the Conflict between Ego and Conscience (investigation devoted to some works of Derenik Demirjian) – (p. 128-133).

## Art Review

37. **LEVON CHUGASZIAN** – Arshak Fetvajian, an Armenian Painter between East and West (investigation) – (p. 134-146).
38. **AZAT BOZOYAN** – Professor Michel van Esbroeck (1934-2003) – (investigation devoted to the memory of Michel van Esbroeck with a list of the scientist's published and unpublished books, investigations and articles) – (p. 147-161).

39. **LEVON MOMJIAN** – The CD of Mkrtich Poghossian (Commentary on the CD recorded by M. Poghossian in France) – (p. 162-164).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

40. Ordination of Priests in the Mother See of Holy Etchmiadzin (Biographies of Rev. Fr. Hayrik Hovhannissian, Rev. Fr. Tiran Petrossian, Rev. Fr. Kuregh Vardanian, Rev. Fr. Hovnan Hakobian and Rev. Fr. Hakob Hakobian), November 23, 2003 (p.165-170).
41. **DEACON ARAM SIMONIAN** – Opening Ceremony of the new school year beginning at the Gevorkian Theological Seminary, October 4, 2003 (p.171-175).
42. Presentation of the "History of the Armenian Church" textbook in the Mother See of Holy Etchmiadzin, November 3, 2003 (p.176-177).
43. **STOLE-BEARER HOVHANNES GRIGORIAN** – Scientific Conference in the Vaskenian Seminary of Sevan, November 16, 2003 (p.178-181).
44. Defense of graduating theses in the Mother See of Holy Etchmiadzin, October 4, 2003 (p.182).
45. Blessing of the foundations of the Saint Thaddeus Church in Masis by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, November 4, 2003 (p.183).
46. Consecration of the newly-built Church of the Holy Archangels in the village of Vardenik, November 8, 2003 (p.184).
47. Consecration of the newly-built Armenian Church of the Holy Cross in Samara, November 16, 2003 (p.185).
48. Pilgrims of Central Europe, headed by Pontifical Legate His Eminence Archbishop Mesrob Krikorian, welcomed in the Mother See of Holy Etchmiadzin, October 5, 2003 (p.186).
49. Pilgrims of the Armenian Diocese of Nor-Nakhijevan and Russia welcomed in the Mother See of Holy Etchmiadzin, October 12, 2003 (p.186).
50. Pilgrims of the Armenian Diocese of Canada welcomed in the Mother See Holy Etchmiadzin, October 26, 2003 (p.187).
51. The Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by Pontifical Legate His Eminence Archbishop Kiud Nakkashian, Primate of Paris, November 2, 2003 (p.187-188).
52. Pilgrims of the Armenian Diocese of Brazil welcomed in the Mother See of Holy Etchmiadzin, November 9, 2003 (p.188).
53. The Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Grace Bishop Aram Ateshian, member of the Brotherhood of the Armenian Patriarchate of Constantinople, November 16, 2003 (p. 188-189).
54. Pontifical visit of the Primate of Georgian Armenians to Akhaltsikha, October 5, 2003 (p.190).

55. Pontifical visit of the Primate of Georgian Armenians to Javakhk, September 27, 2003 (p.191).
56. Pontifical visit of the Primate of Georgian Armenians to Batumi, October 18, 2003 (p.192-193).
57. **JULIETTA BADALIAN** – A Mark of Appreciation for Patriotic Works (Celebration of Teacher's Day in the Saint Gevork Armenian Church of Tbilisi) – (p. 194).

## In the Eastern Diocese of the Armenian Church of North America

58. Visit of Metropolitan Cyril to Archbishop Khajag Barsamian, Primate. November 13, 2003 (p.195-196).
59. Celebration of the 35th Anniversary of the consecration of the Diocesan Cathedral of Saint Vartan, November 14-16, 2003 (p.197-201).
60. Presentation of the 3rd Book of Volume IV of M. Ormanian's "Azgapatum" ("National History") published by Rev. Fr. Archpriest Zaven Arzoumanian, November 21, 2003 (p.202-204).

## In the Western Diocese of the Armenian Church of North America

61. Primate presided during the ceremony dedicated to the 27th Anniversary of the foundation of the Association of Constantinople Armenians, October 1, 2003 (p.205).
62. $100.000 donated by Judge and Mrs. Armand Arabian for the renovation of the Saint Gayane monastery in Etchmiadzin, July 23, 2002 (p.206).
63. Granting of Orders and Ordinations in Saint Sarkis Armenian Church of East Los Angeles, October 12, 2003 (p.207).
64. Annual meeting of members of the "Komitas" Choir, October 23, 2003 (p.208).
65. Reception in honor of the President of the Republic of Nagorno Karabagh, October 26, 2003 (p.209).
66. Participation of the Primate to the annual meeting of the Armenian Assembly of America, November 1, 2003 (p.210).
67. Visit of the Primate and Divine Liturgy in San Luis Obispo (California), November 5, 2003 (p.211).
68. Evening of tribute in honor of writer Peter Balakian, November 5, 2003 (p.211).
69. Four-day visit of the Primate to Central California, November 7-10, 2003 (p.212-213).

70. **REV. FATHER HARUTIUN ARCHIMANDRITE PZTIKIAN** – Celebration in San Lazarro (Venice), of the 1700th anniversary of the Etchmiadzin Cathedral consecration. November 25, 2003 (p.214).

# AUDIENCES AT THE MOTHER SEE

71. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Jose Maria Robles Fraga, newly appointed Ambassador of Spain to Armenia, October 11, 2003 (p.217).
72. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Jebrail Jaara, newly appointed Ambassador of Lebanon to Armenia, October 15, 2003 (p.218).
73. Audience granted by His Holiness Karekin II to Baroness Caroline Cox, October 15, 2003 (p.218).
74. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Khalifa Shahin al-Mari, Ambassador of the United Arab Emirates to Armenia, October 16, 2003 (p.219).
75. Audience granted by His Holiness Karekin II to a group of architects, October 16, 2003 (p.219).
76. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Sergei Martinov, Minister of Foreign Affairs of Belarus, October 17, 2003 (p.220).
77. Audience granted by His Holiness Karekin II to the delegation of the Council of Europe, October 22, 2003 (p.220).
78. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Stephan Dimitrov, Chargé d'Affaires of the Republic of Bulgaria in Armenia, October 24, 2003 (p.221).
79. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Vladimir Rushaylo, Secretary of the Security Council of the Russian Federation, November 4, 2003 (p. 221).
80. Audience granted by His Holiness Karekin II to the delegation of the Council of Bouches-du-Rhône (France), November 16, 2003 (p. 222).
81. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Oleg Yessayan, President of the National Assembly of Nagorno Karabagh, November 22, 2003 (p. 223).

82. Death of Rev. Fr. Yeghishe Abrahamian, November 19, 2003 (p. 224).

83. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during October-November 2003 (p. 225-227).

# "ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (Octobre-Novembre 2003)


1. Réunion épiscopale au Saint-Siège d'Etchmiadzine, 28-29 octobre 2003 (p. 3-4).
2. Reunion consultative des représentants des diocèses au Saint-Siège d'Etchmiadzme. 31 octobre 2003 (p. 5-7).
3. Intervention de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la réunion consultative des représentants des diocèses, 31 octobre 2003 (p. 8-17).
4. **GAYANE ALEXANIAN** – Rencontre des Primats de la Russie, de l'Arménie, de la Géorgie et de l'Azerbaïdjan à Moscou, 26 octohre 2003 (p. 18-24).
5. Appel de la rencontre pacifiste des Primats de la Russie, de l'Arménie, de la Géorgie et de l'Azerbaïdjan, 26 octohre 2003 (p. 25-27).


## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION


6. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Son Emmence l'archevêque Mesrop Grigorian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Sahak – Saint Mesrop », 3 octobre 2003, no. 193 (p. 28-29).
7. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, au Révérend archiprêtre Eghiché Sargsian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Nerses Chnorhali », 1er octobre 2003 (p. 30-31).
8. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la diaconesse Hripsimé Sassounian, à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Nerses Chnorhali », 4 novembre 2003, no. 198 (p. 32-33).
9. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Mikaél Mikaélian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 4 novembre 2003, no. 200 (p. 34-35).
10. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Patrick Dévédjian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Sahak – Saint Mesrop », 24 octohre 2003, no. 201 (p. 36-37).
11. Message de bénediction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Varoujan Bourmayan, 20 octobre 2003, no. 197 (p. 38-39).
12. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres « Saint Nerses Chnorhali », messages de bénédiction et honneurs accordés par Sa Sainteté Garéguin II. Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne aux mois d'octobre et de novembre 2003) – (p. 40).

13. Message de condoléances de Sa Sainteté Garéguin II. Catholicos de tous les Arméniens, à la famille de M. Robert Mavissakalian, 31 octobre 2003, no. 201 (p. 41).
14. Sainte-Messe du Vœu de l'Armée arménienne à la Cathédrale de Saint Etchmiadzine, 19 octobre 2003 (p. 42-43).
15. Cérémonie consacrée au cinquantenaire de l'ordination de Son Eminence l'archevêque Mesrop Grigorian, Saint Etchmiadzine, 30 octobre 2003 (p. 44).
16. La Table Ronde d'Arménie du Conseil International des Eglises fonctionnera désormais comme Fonds de bienfaisance (Réunion annuelle de la Commission centrale de la table Ronde d'Arménie du CIE au Saint-Siège d'Etchmiadzine, 6-8 octobre 2003) – (p. 45).

## SERMONS

17. Sermon de Son Eminence l'archevêque Mesrop Grigorian à la Cathédrale de Saint Etchmiadzine a la Sainte Messe du Vœu, 5 octobre 2003 (p. 46-48).
18. Sermon de Son Eminence l'archevêque Ezras Nersissian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 12 octobre 2003 (p. 49-51).
19. Sermon du Révérend Fr. Narek Avakian à la première Messe servie à l'église Saint Mesrop Machtots d'Ochakan, 12 septembre 2003 (p. 52-56).
20. Sermon du Révérend Fr. Archen Sanossian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu de l'Armée arménienne, 19 octobre 2003 (p. 57-59).
21. Sermon de Son Eminence l'évêque Bagrat Galstian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 26 octobre 2003 (p. 60-62).
22. Sermon de Son Eminence l'archevêque Gute Naggachian à la Cathédrale de Saint Etchmiadzime à la Sainte Messe du Vœu, 2 novembre 2003 (p. 53-64).
23. Sermon du Révérend Fr. Vardan Navassardian, prononcé de l'Abside du clocher de la Cathédrale de Saint Etchmiadzine à la Fête des Archanges, 8 novembre 2003 (p.65-66).
24. Sermon de Son Eminence l'archevêque Tathev Gharibian à la Cathédrale de Saint Etchmiadzime à la Sainte Messe du Vœu, 9 novembre 2003 (p. 67-69).
25. Sermon de Son Eminence l'évêque Aram Atéchian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 16 novembre 2003 (p. 70-72).
26. Sermon du Révérend Fr. Narek Avakian à la Cathédrale de Saint Etchmiadzime à la Sainte Messe du 21 novembre 2003 (p. 73-75).
27. Sermon de Son Eminence l'archevêque David Sahakian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 23 novembre 2003 (p. 76-77).
28. Sermon du Révérend Fr. Vardan Navassardian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du 29 novembre 2003 (p.78-79).

## ETUDES ECCLESIASTIQUES

29. **EVEQUE NORVAN ZAKARIAN** – La nécessité du Conseil épiscopal dans la realité actuelle et les limites de sa compétence (exposé présenté au Conseil épiscopal) – (p.80-84).

## ETUDES RELIGIEUSES

30. **REVEREND ADAM MAKARIAN** – Ame et vie (Analyse du 25ᵉ vers du 6ᵉ chapitre de l'Evangile selon Matthieu) – (p. 85-90).

## ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

31. **KNARIK TER-DAVTIAN** – Les recueils dits « Paroles de sagesse » dans la littérature médiévale arménienne (recherche scientifique) – (p. 91-98).
32. **ANAHIT MEKHITARIAN** – Un épisode du rite nuptial (recherche scientifique) – (p. 99-101).
33. **R.K. SAKAPETOYAN** – Les termes religieux, ecclésiastiques et rituels de l'arménien occidental (recherche scientifique) – (p. 102-107).
34. **MARIE-ANNE CHEVALIER** – La stratégie allemande de Lévon le Grand. Les circonstances de l'installation de l'Ordre des Teutons en Cilicie (recherche scientifique traduite du français par Varoujan Poghossian) – (p. 108-117).
35. **ACHOT HAYROUNI** – Une mission digne d'être étudiée (recherche scientifique consacrée à l'histoire de l'organisation « Mission allemande en Orient » fondée par Johannes Lepsius) – (p. 118-127).
36. **HOVHANNES AYVAZIAN** – Au cœur du conflit de l'égoïsme et de la conscience (recherche scientifique consacrée aux œuvres de Dérénik Démirdjian) – (p. 128-133).

## Critique d'art

37. **LEVON TCHOUKASZIAN** – Archak Fetvadjian, un peintre arménien entre l'Orient et l'Occident – (recherche scientifique) – (p. 134-146).
38. **AZAT BOZOYAN** – Le professeur Michel van Esbroeck (1934-2003) – (Recherche scientifique consacrée à la mémoire de M. van Esbroeck. Longue liste des livres, recherches et articles publiés et inédits du savant) – (p. 147-161).
39. **LEVON MOMDJIAN** – Le CD de Mekertitch Poghossian (commentaire sur le CD enregistré en France par M. Poghossian) – (p. 162-164).

## AU SAINT- SIEGE ET DANS LES DIOCESES


40. Ordination de prêtres au Saint-Siège d'Etchmiadzine (Biographies des Frères Hayrik Hovhannissian, Tiran Pétrossian, Kuregh Vardanian, Hovhan Hacobian et du Révérend Hacob Hacobian), 23 novembre 2003 (p. 165-170).
41. **DIACRE ARAM SIMONIAN** – Cérémonie de la rentrée au Séminaire Guévorkian, 4 octobre 2003 (p. 171-175).
42. Présentation du manuel « Histoire de l'Eglise Arménienne » au Saint-Siège d'Etchmiadzine, 3 novembre 2003 (p. 176-177).
43. **PORTE-ETOILE HOVHANNES GRIGORIAN** – Conférence scientifique au Séminaire Vazguénian de Sévan, 16 novembre 2003 (p. 178-181).
44. Soutenance de thèses de fin d'études au Saint-Siège d'Etchmiadzine, 4 octobre 2003 (p. 182).
45. Bénédiction des fondations de l'église St.-Thaddée de Massis par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, 4 novembre 2003 (p. 183).
46. Bénédiction de la nouvelle église des Saints-Archanges du village de Vardénik, 8 novembre 2003 (p. 184).
47. Bénédiction de la nouvelle église arménienne Sainte-Croix de Samara, 16 novembre 2003 (p. 185).
48. Accueil au Saint-Siège des pèlerins d'Europe Centrale, menés par Son Eminence l'archevêque Mesrop Grigorian, Nonce patriarcal, 5 octobre 2003 (p. 186).
49. Accueil au Saint-Siège des pèlerins du Diocèse arménien de Nor-Nakhidjévan et de Russie, 12 octobre 2003 (p. 186).
50. Accueil au Saint-Siège des pèlerins du Diocèse arménien du Canada, 26 octobre 2003 (p. 187).
51. Sainte Messe du Vœu servie par Son Eminence l'archevêque Gute Naggachian, Nonce patriarcal et Primat des Arméniens de Paris, 2 novembre 2003 (p. 187-188).
52. Accueil au Saint-Siège des pèlerins du Diocèse arménien du Brésil, 9 novembre 2003 (p. 188).
53. Messe du Vœu servie au Saint-Siège d'Etchmiadzine par Son Eminence l'évêque Aram Atéchian, membre de la Congrégation du Patriarcat arménien de Constantinople, 16 novembre 2003 (p. 188-189).
54. Visite pastorale du Primat des Arméniens de Géorgie à Akhaltsikha, 5 octobre 2003 (p. 190).
55. Visite pastorale du Primat des Arméniens de Géorgie au Djavakhk, 27 septembre 2003 (p. 191).
56. Visite pastorale du Primat des Arméniens de Géorgie à Batoumi, 18 octobre 2003 (p. 192-193).

57. **JULIETA BADALIAN** – Une petite marque d'estime pour une œuvre patriotique (cérémonie à l'occasion du Jour des enseignants à l'église arménienne St.-Guévork de Tbilissi) – (p. 194).

## Au Diocèse Oriental de l'Eglise arménienne d'Amérique du Nord

58. Visite du Métropolite Cyrilie à Son Eminence l'archevêque Khajak Parsamian, Primat du Diocèse, 13 novembre 2003 (p. 195-196).
59. Somptueuse célébration du 35^e^ anniversaire de la benediction de la Cathédrale diocésaine Saint-Vardan, 14-16 novembre 2003 (p. 197-201).
60. Présentation du livre 3 du IV^e^ tome de « Azgapatoum » (« Histoire nationale ») de M. Ormanian, publié par l'archiprêtre Zaven Arzoumanian, 21 novembre 2003 (p. 202-204).

## Au Diocèse Occidental de l'Eglise arménienne d'Amérique du Nord

61. Le Primat préside la réunion consacrée au 27^e^ anniversaire de la fondation de l'Association des Arméniens de Constantinople, 1^er^ octobre 2003 (p. 205).
62. Donation de cent mille Dollars du juge Armand Srapian et de son épouse pour la rénovation du monastère Sainte-Gayané d'Etchmiadzine, 23 juillet 2003 (p. 206).
63. Remise de distinctions et ordination à l'église apostolique arménienne St.-Sarkis de East Los Angeles, 12 octobre 2003 (p. 207).
64. Réunion annuelle des chanteurs du chœur «Komitas», 23 octobre 2003 (p. 208).
65. Réception en l'honneur du Président de la République d'Artsakh, 26 octobre 2003 (p. 209).
66. Participation du Primat à la réunion annuelle du Congrès arménien d'Amérique, 1^er^ novembre 2003 (p. 210).
67. Visite pastorale et Sainte Messe à San Louis et Obispo (Californie), 24 octobre, 5 novembre 2003 (p. 211).
68. Soirée d'hommage en l'honneur de l'écrivain Peter Palankian, 5 novembre 2003 (p. 211).
69. Visite de quatre jours du Primat en Californie centrale, 7-10 novembre 2003 (p. 212-213).

70. **ARCHIMANDRITE PERE HAROUTIUN PZTIKIAN** – Somptueuse célébration du 1700^e^ anniversaire de la Cathédrale de Saint Etchmiadzine à Saint-Lazare (Venise), 25 novembre 2003 (p. 214).

## AUDIENCES AU SAINT-SIEGE

71. Audience accordée par Sa Sainteté Garégum II à M. José Maria Robles Fraga, Ambassadeur d'Espagne nouvellement nommé en Arménie, 11 octobre 2003 (p. 217).

72. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Jébraïl Jaara, Ambassadeur du Liban nouvellement nommé en Arménie, 15 octobre 2003 (p. 218).
73. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à la Baronne Caroline Coxe, 15 octobre 2003 (p. 218).
74. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Khalifa Chahin al-Mari, Ambassadeur des Emirats Arabes Unis, 16 octobre 2003 (p. 219).
75. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à un groupe d'architectes, 16 octobre 2003 (p. 219).
76. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Serguei Martynov, Ministre des Affaires étrangères de la Biélorussie, 17 octobre 2003 (p. 220).
77. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à la délégation du Conseil de l'Europe, 22 octobre 2003 (p. 220).
78. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Stépan Dimitrov, Chargé d'Affaires de la République de Bulgarie en Arménie, 24 octobre 2003 (p. 221).
79. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Vladimir Rouchaïlo, Secrétaire du Conseil de Sécurité de la Fédération de Russie, 4 novembre 2003 (p. 221).
80. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à la délégation du Conseil départemental des Bouches-du-Rhône de la France, 16 novembre 2003 (p. 222).
81. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Oleg Essayan, Président de l'Assemblée nationale du Haut-Karabagh, 22 novembre 2003 (p. 223).

82. Décès du Révérend Eghiché Abrahamian, 19 novembre 2003 (p. 224).

83. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine aux mois d'octobre et de novembre 2003 (p. 225-227).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ